

Գիրքը յուսադատճեհահանվել է  
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

Library

ՄԱՅՑՈՒՄ ԿԱՐՆԱԿԱՆ ԵՄ ԶԵՐ ԼՈՐՄԻՆՈՒՄ ԸՆԴՈՒՄ ԸՅՅԱՅԱՍ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ  
ԼՈՒՄԻՆՈՍԿԵԼԱՆՆԵՐԻ ԳՐԵՐ:

ՔՐՈՅՆ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆԸՄԱՆՆԵՐԸ ԿԱՐՆԱԿԱՆ  
ԻՄՈՒՄ "ՇԱՄԱՆՅԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԵՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՑՔԻՑ

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԵՆԴՐՈՒՄ ԵՎ ՈՐԳԱՆՈՒՄ ԵՄ ՄՏԵՐ ԿՈՑՔԻՑ  
ՏՆՎԱԿՈՒՄ ԵՎ ԶԱՇԽՈՒ ԸՆԹԵՐՏՈՒՆԻՑՈՒՄ:



ԳՐԵՐ ՄԻՋ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

ԱՋՆԱՎՈՒՐԸ

ԱՋՆԱՎՈՒՐԻ ՄԱՍԻՆ

# ԱՋՆԱՎՈՒՐԸ ԱՋՆԱՎՈՒՐԻ ՄԱՍԻՆ

792.7

Ա 25

**Քարգամանությունը՝ ՍՈՒՐԵՆ ԲՈՒՐՍԱԿՑԱՆԻ**

Ա  $\frac{70803 (3093)}{701 (01) 75}$  292 76 «Տ»

*Բնագիրը լույս է տեսել մինչև 1973 թ. մայիսի 27-ը.*

© «Հայաստան» հրատարակչություն, Քարգամանված է հայերեն, 1976

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Իմ ճանապարհը հեշտ ու հանգիստ չի եղել: Ծառ դառնություններ են ճաշակել այդ ճանապարհին՝ երեսիս փակված դռներ, հեզնանքով ու արհամարհանքով լի ժպիտներ, կատակի տակ քողարկված չարախոսություններ. «Մի համառեք», «Ոչինչ չունենք ձեզ համար», «Թողեք ձեր հասցեն, կգրենք», «Ամեն պատահական մարդու վրա ժամանակ չունենք կորցնելու»... Այս և նման այլ արտահայտություններ: Ես ճաշակել եմ այդ բոլորը:

Ծառերի նման կույ են տվել թուքս, զսպել են արցունքներս ու կույ եկել:

Ծառերի նման մտածել եմ, որ գուցե ավելի լավ կլիներ ոչինչ չասել:

Ծառերի նման զայրույթից պոռթկացել եմ երբեմն, կոպտել եմ, կոպտել եմ ինձ:

Կասկածն ու հուսահատությունը, չհասկացված լինելու ու բախտ չունենալու պզտոկությունը հաճախ եմ գետնել ինձ: Բայց ցավս թաքցրել եմ, քաշվել եմ պատշաճիս մեջ և ուժ հավաքել դիմանալու, պաշտպանվելու համար:

Քաղցր, ցուրտը, հոգնածությունը, զսպված արցունքը իմ ճանապարհի անբաժան ընկերներն են եղել:

Կանայք, որոնց միշտ ամեն ինչից վեր եմ դասել, սիրել եմ ինձ, խաբել, պաշտել, լքել: Բայց հեռանալուց առաջ երջանկության պատրանքներ են տվել ինձ:

Ուստի, ես ինձ ո՛չ զոհ եմ համարում, ո՛չ էլ սուրբ: Հաճախ ես նույնն եմ փոխհատուցել նրանց, քանի որ, ես էլ մյուսների նման, մարդ եմ: Ես էլ իմ հերթին, հաճախ եմ նրանց արցունքների մեջ թողել: Գնահատել չիմանալով իսկական սերը, վազել եմ վաղանցիկ սերերի ետևից:

Խաբել եմ, նախքան կխաբեին ինձ, այսպիսով խաբել եմ ինքս ինձ... Ի՛նչ արած, այդ է կյանքը, այդ է սերը...

Բայց այդ մասին չէ, որ ուզում եմ խոսել, ու պատճառն այն չէ, հավատացեք ինձ, որ ուզում եմ թաքցնել կյանքիս մութ անկյունները, ո՛չ: Ես պարզապես չեմ ուզում ձեզ մասնակից դարձնել իմ հույզերին ու տխրություններին: Հաջողության հասած մարդը չպետք է իր անցած ծանր օրերի սրտանմլիկ նկարագրությունն անի:

Անչափ շնորհակալ եմ աստծուց, որ ինձ անցկացրեց այդ բոլոր փորձությունների միջով, երազելու և այդ երազն ապրելու հնարավորություն տվեց ինձ:

Ի վերջո, դժվար կյանքս ու խաբված սերերս են, որ ինձ դարձրին այն, ինչ կամ, ու համարձակվում եմ ասել, թող սա ինքնագովություն չթվա, ես ինձ դուր եմ գալիս:

Եթե ինձ վիճակվեր կրկին ապրել, ապա այդ բոլորը նորից կապրեի նույնությամբ:

— Ի՞նչ անուն եք տալիս սրան,— ասում է մանկաբարձուհին, գրկելով դժժացող երեխային:

— Ծահնուր,— անսահման քնքշությամբ շշուշում է մայրս:

— Ծահ... Ի՞նչ,— աչքերը լայն բացած հարցնում է մանկաբարձուհին:

— Ծահնուր,— կրկնում է մայրս:

Հիմա բացատրեմ.

Ծահնուր ասելու համար հարկավոր է լավ արտասանել «ն»-ի առջևի «հ»-ն, այնպես, կարծես «Ծահ»-ին հաջորդելիս լինի «աա՛հհ» բացականչությունը, որն արտաբերում են ախորժալի կարկանդակ տեսնելիս: Հեշտ չէ արտասանել, ընդունում են: Վերջապես շատ մի տանջեք ձեզ այդ անունը սովորելու համար, որովհետև, գտնելով, որ Ծահնուր անունը այնքան էլ հեշտ չէ արտասանել, մանկաբարձուհին ինձ տալիս է Ծարլ անունը:

Վերջին հաշվով «Ծարլը» «Ծահնուրից» այնքան էլ հեռու չէ:

Եվ այսպես, 1924 թվականի մայիսի 22-ին, Փարիզի ծննդատներից մեկի մանկաբարձուհին, չտիրապետելով օտար լեզուների հնչյունաբանությանը, իր վրա է վերցնում որոշելու Քնար և Միշա Ազնավուրյանների միակ մանչ ներկայացուցչի անունը:

Ո՛ւֆ, բախտս բերել է:

Այն երեխան, որին խնամել են, բարուրել, կաթ սովել, քիթը մաքրել, օրորել, ինձ անծանոթ է մնում, որովհետև հիշողությունս մինչև այնտեղ չի հասնում: Այդ երեխայի մասին գիտեմ միայն այն, ինչ լսել եմ ծնողներիցս, որոնք իմ ներկայությամբ երկարբարակ պատմել են իրենց բարեկամներին ու մտերիմներին, գովել այդ երիտասարդի խելքը, համեստությունն ու աշխուժությունը:

— Չափազանց ճարպիկ էր փոքրիկ Ծարլը,— ասում էին ծրնողներս,— պատկերացրեք, որ նա իր առաջին քայլերն արեց ըն-



դամենը ինն ամսական հասակում: Լա՛վ, առաջին քայլը, բայց այդ քայլը այնքա՛ն գեղեցիկ էր, այնքա՛ն հուզիչ, այնքա՛ն խիզախ, անգամ ոտքերը չծալվեցին: Փոքրիկ Ծարլը իր այդ քայլով ողջ ընտանիքը տակնուվրա արեց: Էլ չենք խոսում նրա միմիկայից ու խորամանկ չարանճիություններից, որոնք արդեն վկայում էին նրա դերասանական տաղանդը:

Փոքրիկ Ծարլի կյանքը՝ իմը, լուսաբանվում է շատ ավելի ուշ: Իմ կյանքի առաջին ինը տարիների մասին ոչինչ չգիտեմ, բացի մի քանի աղոտ հուշերից, որոնց համար ավելի շատ պարտական եմ ուրիշների պատմածին, քան հիշողությանս: Ես ձեզ կասեմ միայն այն, ինչ կարողացել եմ հիշել մորս պատմածներից: Մայրերը ամեն ինչ գեղեցկացնելու առանձնահատուկ ձիրք ունեն: Ծնորհիվ նրանց, և հաճախ միայն նրանց համար, ծնված օրվանից մենք դառնում ենք առասպելական անձնավորություններ:

Ինը տարի ապրել եմ առանց ինքնաճանաչման: Մանկության ինը տարիներ, որ սիրով գեղեցկացրել են ականատեսները: Աչնուամենայնիվ, անկախ այն բանից, թե ինչ են ասում մյուսները, ինձ թվում է, թե մի սուկալի փոքրիկ Ծարլո եղած կլինեմ, մի ժանգոտ լակոտ, որ յուրայինների երևակայության ու սիրո շնորհիվ մեղր է դարձել:

Ուրեմն, թող իր մշուշի տակ մնա ծծապտուկի, շիլայի, խոզուկի, մանկապարտեզի այդ շրջանը, ուր, ինչպես բոլոր երեխաները, փայլում էի պարզունակ վարժությունների մեջ, ինչպիսիք են ուղիղ գիծ քաշելը, երկաթալարի մեջ օղակներ անցկացնելը... Թողնենք շրջանը ինքնագոհ ժպիտների, մանկական վշտերի, փչացրած կահկարասիի, ջարդուփշուր եղած հուշանվերների, խեղկատակությունների ու լուցկիների, որոնք մեր ձեռքում դառնում էին հրդեհի ահեղ միջոցներ:

Այս բոլորին ավելացնենք անվերջ կոնիվներս քրոջս՝ Աիդայի հետ. ինչպես բոլոր նրանք, ովքեր տաքարյուն են, շարունակ կրո՛վում էինք:

Հեռավոր տարիներին հիշողության մեջ ամենապարզորոշը քրոջս՝ Աիդայի, կերպարն է ուրվագծվում: Թեպետ նա ինձանից շատ քիչ էր մեծ, սակայն ինձ խնամում էր փոքրիկ մոր պես: Նրա նվիրական իղձը ինձ չաղացնելն էր:

Այնինչ բավականին թմբլիկ էի: Վկա՛ այդ շրջանի իմ լուսանկարները: Գունատ, բայց լիքը այտերով, հետաքրքրասեր ու կլոր աչքերով, կարճ կտրած մազերով և փոքրիկ, բայց դեպի առաջ թռիչքի պատրաստվող քթով այդ երիտասարդը ես եմ: Նրա ու իմ միջև որպես ընդհանուր գիծ մնացել է բերանի դժգոհ արտահայ-

տությունը միայն ու մեկ էլ ծալված շրթները: Մայրս չէր կարողանում առանց թախծի նայել իմ մանկության լուսանկարներին:

— Ի՞նչ լավն էիր,— ասում էր ինձ:

Այո՛: Լավիկն էի: Նշանակում է՝ արդեն չեմ: Ինչ վերաբերում է Աիդային, ինձ չաղացնելու նպատակով, այն ամենը, ինչ ընկնում էր ձեռքը, խցկում էր բերանս՝ կոնֆետ, մսի կտորներ, մետաղադրամ (Աիդան շատ հարուստ չէր), տաբատի կոճակներ, այն ժամանակ, երբ գրեթե ասում չունեի: Անժխտելի է, որ նա դեռ իրազեկ չէր իրերի սնուցիչ արժեքներին: Հաճախ վազելվազ հասնում էր բժիշկը, ու մինչ մայրս լաց էր լինում, նա զարմացած կանգնում էր ջղակծկումներով ցնցվող փոքրիկ մարմնիս առաջ:

— Ի՞նչ է կույ տվել:

Ամեն անգամ Աիդան մի տարօրինակ իրի անուն էր տալիս ու հպարտությամբ ավելացնում. «դուրն եկավ»: Եվ ամեն անգամ բժիշկը ճգնում էր հասկացնել նրան, որ ստամոքսը աղաց չէ: Աիդան սև աչքերը թերահավատությամբ հառում էր նրան ու չէր համոզվում: Հիմնականում ինձ մի լավ լուծողական էին տալիս, գալարվում էի, կույ տված իրը վերադարձնում ու կյանքի գալիս: Իսկ Աիդան շարունակում էր.

«Կե՛ր, աղբարիկ», իսկ ես պատասխանում էի. «Այո, աղբարիկ»,— համոզված, որ եթե նա ինձ «աղբարիկ» է ասում, ուրեմն ես էլ նրան «աղբարիկ», «փոքր եղբայր» պիտի ասեմ:

Եթե շարունակում էի բացել բերանս, պատճառն այն էր, որ Աիդան այնպիսի լրջությամբ ու սիրով էր կատարում իր դերը, որ ես նրան ուղղակի ոչինչ չէի կարողանում մերժել: Մեր միջև տարաձայնություններ չկային: Երբ մեզ կարկանդակներ էին տալիս, առաջինը ես էի ընտրում՝ բնավորության մի գիծ, որի դեմ հետագայում շատ ուժեղ պայքարեցի, բայց միշտ չէ, որ հաղթանակում էի: Կոնֆետներից, իհարկե, ամենամեծն էի վերցնում: Իսկ երբ պատահմամբ մեզ տալիս էին երկու բացարձակ իրար նման կոնֆետներ, երկար զննելուց հետո վերցնում էի մեկը, կիսով չափ ծծում ու տալիս Աիդային, որից հետո հանգիստ կրծում էի երկրորդը:

Աիդան ինձ տվել է այն ամենը, ինչ կարելի է ուտել: Չկան յուղի ժամին իր բաժին ձկան յուղը կույ էի տալիս, հետո՝ իմը: Կույ էի տալիս նաև նրա համար նշանակված բոլոր դեղերը: Ու քանի որ Աիդան ոչ մի դեղ չէր սիրում, ուստի իր կորուստը այնքան էլ մեծ չէր լինում: Իսկ ես մի հարվածով երկու նապաստակ էի սպանում: Միաժամանակ երկուսս էլ գոհ էինք մնում: Չնայած փոքր հասակիս, ընտանիքում ամենաշատը ես էի ուտում: Ես ու

Ահդան գրեթե նույն տարիքին էինք, նույնն էին՝ նաև մեր ճաշակները, մտքերը: Երբ նա մազերին ժապավեն էր կապում, ես էլ էի ուզում: Երբ ես ծովայինի գգեստ էի հագնում, ինքն էլ էր ուզում: Մեր ծնողները միշտ համաձայնվում էին:

Ահդան ու ես իրար լավ էինք հասկանում: Կատարյալ դավադիրներ էինք: Երբեք չէինք մատնում իրար: Մեկիս գործած մեղքի համար երկուսիս հավասար էին պատժում, ու կարևորն այն էր, որ ոչ մեկս մյուսին չէր կշտամբում, քանի որ, վերջին հաշվով, նույնն էր ստացվում. ինձ պատժում էին նրա մեղքի համար, նրան՝ ինձ: Չորս ուսերի վրա բաժանած պատիժը շատ ավելի թեթև էր լինում: Սակայն երբ մտածում եմ, զգում եմ, որ մեր ծնողները երբեք էլ կարգին չեն պատժել մեզ: Հիշում եմ, թե ինչպես մի օր, երբ անզգուշաբար պատռեցի հորս թմբուկի թաղանթը, մայրս ասաց.

— Սպասիր, մի հայրդ գա, տես թե ինչ կանի քեզ:

Հայրս աշխատանքից ուշ էր վերադառնում: Ահդան ու ես, մինչև նրա գալը, արթուն էինք մնում, բայց այդ օրվանից սկսած, ամեն երեկո, վախենալով հանդիպել հորս, սովորականից շատ շուտ էի մտնում անկողին: Իսկ առավոտյան հայրս ասում էր.

— Այսօր չքնես, սպասիր մինչև գալս և պատրաստվիր: Ես քո դասը կտամ:

Այդ փոքրիկ խաղը տևեց ութ օր, հետո ոճիրս մոռացվեց:

Մենք բնակվում էինք Մոնսիելյոր-լը-Պրենս փողոցի 36 տանը: Եթե հիշողությունս չի դավաճանում, տանտերերը մայր և մահրամ Մատյուններն էին: Առանց հարմարությունների, միջին չափի մի սենյակ էր դա: Սենյակից վարագույրով բաժանված անկողնախորշում իրար վրա դարսված էին մի մեծ մահճակալ, մեկ ուրիշ երեխայի մահճակալ, պահարան և հոգնած զսպանակներով, խուճացած մուգ կտորով ծածկված մի բազմոց-անկողին: Վերջապես, սենյակի մի անկյունում տնկված մի վառարան կար, որի վրա ճաշ էինք եփում ու ձմռանն էլ տաքանում: Մեկ այլ անկյունում դրված էր կարի մեքենան (հայերը միշտ մեկն ունեն): Հայրս, մայրս, մորս մեծ մայրը (մորս կողմից գաղթի ճամփաներում միակ կենդանի մնացածը, որին շատ աղոտ եմ հիշում), Ահդան ու ես վատ պայմաններում էինք ապրում, ինչպես գաղթական հայերի մեծ մասը այդ ժամանակ, երբեմն նույնիսկ անկարող էինք լինում վճարել բնակարանի վարձը: Երբ մայրս սկսում էր կար աճել, տանը ձեռվածք էր լինում, ու մեզ ողարկում էին խաղալու հարթակի վրա, ուր բազմած էր մի մեծ ու հին նստարան, որը Մատյունները իրենց

ռեատորանից էին բերել: Նատորանի զսպանակները պատռել էին խունացած աստառը ու դուրս պրծել:

Հայրս աշխատում էր իր հոր մոտ, որը «Կովկաս» ռեատորանի տերն էր: Մայրս աշխատում էր գիշեր-ցերեկ, օգնում հորս, որի երազն էր ունենալ իր սեփական ռեատորանը:

— Ուզում եմ ինքս իմ գլխի տերը լինել,— ասում էր նա:

Վա՛տ էինք ապրում: Բոլոր դեպքերում, ինչ խոսք, լավ չէինք ապրում: Բայց դա ի՞նչ կարևոր էր, քանի որ համերաշխ էինք: Եթե մինչ օրս ես աշխույժ եմ, լավատես, հույսով-հավատով լի, այդ ծընողներին, նրանց ուրախ բնավորությանն եմ պարտական: Երբ անսպասելի մի ծանր հարված էր իջնում մեր ընտանիքի գլխին, ապա իրեն քաջալերելու համար հայրս երգել էր սկսում, մայրս էլ երգի խոսքերն էր հուշում:

**Չեղբ-ձեղքի տված**

**Ընդդիմացել ենք ճակատագրին:**

**Չեղբ-ձեղքի տված՝**

**Հարցեր ենք լուծել**

**Ե՛վ ստամոքսի, և՛ գրկանքների:**

**Պատրանքներով ենք մենք սնվել միայն,**

**Քեզ բավ էր այն էլ, որ սիրում էի:**

Մեր ընտանիքում բացարձակ ներդաշնակություն էր տիրում: Միայն վաղեմի մի քեմ, երբեմն մորս՝ Քնարին, հակադրում էր հորս: Մայրս ծնվել էր Թուրքիայի Իզմիր քաղաքում: Նրա աղջկական ազգանունը Բաղդասարյան էր: Բայց անձնագրի վրա Բաղդասարյանը տեղի էր տվել Փափագյանին: Այդ սխալի միակ մեղավորը հայրս էր: Անձնագրային սեղանի մոտ կանգնած, նա մի պահ մոռանում է մորս ազգանունը ու ստիպված ասում է առաջին ազգանունը, որը միտքն է գալիս: Ողջ կյանքում մայրս, արցունքներն աչքերին, մեղադրում էր հորս այդ սխալի համար:

— Ծնողներիս, եղբայրներիս, քույրերիս, բոլորին կորցրի ջարդի ժամանակ, երբ 15 տարեկան էի: Այդ օրվանից նրանց չեմ տեսել: Ոչինչ չգիտեմ նրանց մասին: Միակ բննը, որ մնում էր ինձ, մեր ազգանունն էր: Իսկ քո անփութության պատճառով իմ կորած հարազատներին երկրորդ անգամ ջնջեցիր իմ կյանքից:

**...Եվ ինձ կթաղի էլի մեկ անգամ:**

Հայրս՝ Միշա Մամիկոնի Ազնավուրյանը, ծախսարար ու դյուրահավատ մի մարդ, ծնվել է Վրաստանում, Թիֆլիսի մոտակայքում: Քույրս՝ Աիդան, ծնվել էր Սալոնիկում, գաղթի ճանապարհին:

Մենք մի գաղթական հայ ընտանիք էինք, ու, ինչպես բոլոր գաղթական հայ ընտանիքները, կապված էինք մեր լեզվին, սովորություններին ու եկեղեցուն: Զուսպ, քաշված, համեստ էր մեր ընտանիքը: Հավասար չափով զգայուն էր ն՛ հումորի, ն՛ դժբախտության նկատմամբ: Մենք սիրում էինք ծիծաղել, երգել, պարել և արտասվել: Այո՛, և արտասվում էինք, որովհետև հայը շատ զգացմունքային է ու հեշտությամբ է լաց լինում: Նա լաց է լինում ն՛ կնունքին, ն՛ պսակին, ն՛ թաղմանը:

Հայը սիրում է լավ սեղանն ու լավ գինին: Այո՛, գինին, որն ազգային խմիչք է, հայը նույնքան է սիրում, որքան ֆրանսիացին: Տոնը առանց ճոխ սեղանի, առանց գինու, առանց երգի, տոն չէ հայի համար:

Սովորության համաձայն, ամեն ճաշից առաջ թամադա է ընտրվում՝ մարդ, որը կոչված է սեղանը ղեկավարել: Առանց նրա թույլտվության ոչ մի պատառ հաց չի ուտվում, ոչ մի խոսք չի ասվում: Հյուրերից ոչ մեկը, բացարձակապես ոչ մեկը, չի կարող խմել կամ որևէ բան ասել առանց նախօրոք թամադայի թույլտվությունը վերցնելու: Պետք է ասել, որ խմիչքը չէ, որ խոսեցնում է հային, այլ խոսքն է խմեցնում նրան: Այդ նույն բանն է, կասեք դուք: Ո՛չ: Ամենահին:

Այստեղ մի նրբություն կա: Որքան թամադան մտքերով հարուստ է, այնքան ավելի շատ խմելու առիթ կա: Երևակայությունից զուրկ թամադայի ղեկավարած ճաշկերույթը չորս, հինգ, նույնիսկ ութ ժամ տևելու փոխարեն, կավարտվեր կես ժամում: Մի բան, որ անմիտ է, եթե հաշվի առնենք ուտելիքի առատությունն ու շշերի քանակը:

Նախ մեկ առ մեկ խմում են ներկաների կենացը, գովաբանելով նրանց արժանիքները: Իհարկե, յուրաքանչյուր բաժակաճառ ծաղկեցվում է երգով, պարով, արտասանությամբ, անեկդոտներով, հետո խմում են բացակաների կենացը, հետո՝ մեռածների: Այս վերջինների հոգու հանգստության համար գինու մեջ մի կտոր հաց են թաթախում, դնում ափսեի եզրին ու մի քանի կաթիլ արցունք թափում կորածների համար: Հետո ծիծաղում են, վերհիշելով նրանց կյանքից զավեշտական արարքներ, որից հետո այլ առիթներ են փնտրում արմուկները բարձրացնելու համար:

Արմուկ բարձրացնելը մի արվեստ է, որին պետք է տիրապետել: Որովհետև հենց որ թամադան բաց է անում բերանը, բոլոր սեղանակիցները պետք է բարձրացնեն իրենց բաժակներն ու պահեն դեմքին հավասար: Ու քանի որ որոշ բաժակաճառեր կարող են տևել տասը-տասնհինգ րոպե, ուստի անհրաժեշտ է ունենալ ամուր ու մկանուտ թևեր, ձեռքերը ցած չիջեցնելու համար: Դուք չեք կարող պատկերացնել, թե որքան դժվար բան է վեր բարձրացրած բաժակը երկու- երեք րոպե օդում պահելը: Ապա մի պատկերացրեք տասնհինգ րոպե...

Քանի որ հայրս ուրախ բնավորություն ուներ, միշտ պատրաստ արմուկը վեր բարձրացնելու ու խոսքն էլ թեթև էր, պատկերավոր, քնարերգական, միշտ նա էր ղեկավարում հայկական սեղանները: Հաճախ սկսում էր այսպես.

— Հիշում եմ, 1903 թվականն էր...

— Բայց, հայրիկ, 1903 թվին դու ընդամենը վեց տարեկան էիր:

Հայրս միշտ խառնում էր տարեթվերն ու հատուկ սեր ունեւր հանդեպ 1903 թիվը: Փորձեցեք հասկանալ, թե ինչու:

Ափսեաները գալիս գնում են, շէերը դատարկվում, հուշերն իրար հաջորդում, երգերը երգվում, ու բաժակաճառերը շարունակվում:

— Հարավային Ամերիկայում գտնվող հորեղբորս կենացը:

— Հունական նավի կենացը, որ մեզ բերեց Ստամբուլից:

— Ֆրանսիական կառավարության կենացը, որը մեզ լավ հշուրընկալեց:

— Ֆրանսիական ժողովրդի կենացը, որի ներկայացուցիչներից մի քանիսն այսօր գտնվում են մեր սեղանի շուրջը:

— Փայտյա կամրջի ու երկաթյա կամրջի կենացը:

Մի օր, աղջկաս՝ Պատրիցիայի կնունքի պատվին տրված ճաշկերույթին, սեղանը ինը ժամ ղեկավարելուց հետո հայրս ըստաովեց: Բայց շէերը դեռ չէին դատարկվել: Ուստի, չուզեճալով կես ճամփին կանգնել, առաջարկեց հետևյալ երեք կենացները.

— Ջրի, գազի, էլեկտրականության կենացը:

**Ինձ թունդ գինի բերեք,**

**Փրկություն է գինին:**

**Լցրեք, լցրեք անվերջ,**

**Արբենալ եմ ուզում:**

Եթե որևէ հայի խելքին փշի անդամահատել իր ազգանվան վերջին երեք տառերը, միննույնն է, դրանից ոչինչ չի փոխվի, ծագումը կմնա նույնը, պարզապես Բալթազարյանը կդառնա Բալթազար, ինչպես Ազնավորյանը դարձավ Ազնավոր: Բայց նման բան գրեթե երբեք չի լինում: Ծատ քիչ հայեր են ձգտում վերամշակել իրենց ազգանունները: Ոչ մի «օլիմպազություն», ոչ մի ամոթ: Այդ անունը նախնիներից է գալիս, ուստի պետք է պահպանել որպես մասունք:

Իսկ ինչո՞ւ եմ ես հակառակն արել: Իմ անունը հիմա հեշտ չէ արտասանել ու հիշել: Կարիերայիս սկզբին իմ ազգանունը հեշտությամբ դառնում էր «Աբնավոր», «Անգատոր»: Իսկ հիմա պատկերացրեք «Ազնավորյանը», ու դեռ դրանից առաջ էլ «Ծարլ»: Ծատ երկար կլինեք աֆիշի համար: Դեռ լավ է, բախտս բերել է: Ի՞նչ կասեիք «Ծահնոր Ազնավորյանի» մասին: Պատկերացնո՞ւմ եք, դեռ չսկսած կարող էի կործանել կարիերաս:

Իսկ ինչո՞ւ հենց աֆիշի վրա: Դե, պարզապես միշտ էլ հարցից դուրս է եղել, որ ես ուրիշ մասնագիտություն կունենամ: Ես ծնվել եմ, որպեսզի... Կան կոչումներ, որոնք կաշում են մարդուն դեռ չծնված:

**Թափառաշրջիկ դերասան եմ ես՝  
Իր ամբողջ շքեղությամբ:  
Ծնվել եմ միայն խաղալու համար:  
Դուք ինձ բեմ տվեք, թեկուզև՝ անշուք,  
Կտեսնեք ինչեր կարող եմ անել:**

Լինում էին երեկոներ, երբ աչքերը լայն բացած, կարագահացը ձեռքին, փոքրիկ Ծարլը տեսնում էր, որ ծնողների բարձր տրամադրությունը հանկարծ ընկնում է, և նրանք դառնում են փուրկոտ, անհանգիստ ու մտահոգ:

Սրանք այն հազվադեպ պահերն էին, երբ երեկոյան, թողնելով իրենց աշխատանքը, ուրիշ սիրող դերասանների հետ փորձեր էին անում: Բնականաբար, իրենց ստոգանության ու մանավանդ ֆրանսերենին լավ չտիրապետելու պատճառով հայերեն էին խաղում: Պետք է ասեմ, որ ծնողներս նախ արտիստ էին, հետո՝ սպիտակեղեն կարող կամ խոհարար:

Իրենց գաղթական բարեկամ-բարեկամուհիների հետ ծնողներս խաղում էին հաճույքի համար: Ոչ մի օգուտ չունեին, ընդհակառակը:

Պատկերացրեք, տասնհինգ օր փորձում էին, մեկ անգամ խաղում: Տոմսերի գինը շատ չնչին էր: Ծատերն էլ մտնում էին առանց տոմսի: Յուրաքանչյուր դերասան իր մասնակցությունն էր բերում ըստ իր հնարավորությունների: Բեմական զգեստները կարում էին տանը, տղամարդիկ ռեկվիզիտն էին պատրաստում, իսկ կանայք՝ ուտելիքը: Չգիտեմ ինչու, գաղթական հայերի բեմադրած պիեսների ութսուն տոկոսի մեջ ճաշկերույթ էր լինում:

Վերջապես հասնում է ներկայացման երեկոն: Նախօրոք հայտարարված ժամը 9-ի փոխարեն վարագույրը բացվում է 10-ին: Քանի որ հանդիսատեսները ժամանել էին ժամը 9 անց կեսին: Ասեմք ուշանում էին նաև դերասանները: Ծատ հաճախ նրանք ժամանակ կամ փող չէին ունենում տանը ընթրելու ու բեմադրության համար պատրաստված սեղանի մոտով անցնելիս մի երկու կտոր բան էին գցում բերանները, այնպես որ ներկայացման ժամանակ ուտելու գրեթե բան չէր մնում, և ուտելու գործողությունը ստիպված աֆեկտիվ էին կատարում:



Կուլիսներում ինչ-որ մեկը ոտքերը զետնին է զարկում, ոռնում է, մազերը պոկոտում. բեմադրող-ռեժիսորն է: Որովհետև հաճախ խաղով տարված, դերասանները փոխում, հնարում կամ մոռանում են իրենց ռեպլիկները:

Գլուխը կորցրած հուշարարը այն աստիճանի բարձրաձայն էր հուշում, որ հանդիսատեսները ավելի շուտ էին լսում նրան, քան դերասանները: Ներկայացումից հետո, մինչ կանաչք զգեստները կհավաքեն, կարգի կբերեն, տղամարդիկ զբաղված են օրվա եկամուտը հաշվելով:

— Այսքան մուտք կա,— ասում է մեկը,— այնինչ այսքան տոմս ես վաճառել:

— Ապա մի հաշվի՛ր, թե այսինչ դերասանը որքան մարդ է ներս թողել,— պատասխանում էր գանձապահը:

Ի վերջո, վնասով էին դուրս գալիս, քանի որ դերասանը, որին հանձնարարված էր տոմս վաճառել, իր երեխաներին սնելու համար օգտվել էր ընդհանուր դրամարկից:

Անեծքը, բողոքը, սպառնալիքը, հայհոյանքը իրար էին խառնըվում ու այդ բոլորը վերջանում էր նրանով, որ յուրաքանչյուր դերասան երդվում էր այլևս երբեք գործ չունենալ թատրոնի հետ: Ընդմիջտ խոռված բաժանվում էին իրարից: Բայց այդ տևում էր ամենաշատը 48 ժամ: Երկու օր անց, դերասաններից մեկն ու մեկը խմբի անդամներից յուրաքանչյուրին առանձին-առանձին այցելում էր, առաջարկելով մի նոր պիես. «Այս անգամ ամուր հիմքերի վրա»: Փորձերը վերսկսվում էին, ու ամեն ինչ նորից էր կրկնվում:

Ես սիրում էի այդ մարդկանց, որոնք բեմ էին բարձրանում իրենց ծանր կյանքը մի քիչ թեթևացնելու համար: Մի քանի ժամով նրանք դառնում են թագավորներ, արքայորդիներ, իշխաններ...

**Լոկ ոտքերիս տակ բեմը զգայուց,  
Հանդիսատեսին տեսնելուց միայն,  
Թայրտում է սիրտս ուրախությունից:  
Ո՛չ, ինձ չեն օգնել, հաջողակ չեմ ես,  
Բայց սրտիս խորքում համոզված եմ միշտ,  
Որ տաղանդ ունեմ:**

Աչդտեղ է, որ ես տեսա ու սովորեցի, նրանց մեջ է, որ ես հասկացա և իմը դարձրի նրանց չիրականացված բոլոր երազներն ու հույսերը:

Ես սիրում եմ նրանց:

Հայրս, վերջապես, ունի իր ռեստորանը:

— Մենք այն կանվանենք «Կովկաս»,—ասաց նա,—ու ռուսական ճաշեր կմատուցենք: Փարիզը գերված է սլավոնների հըմայքով: Ռուս տաքսու վարորդները մեքենան գծի պես են վարում, այնպես, ինչպես նրանց ծառաները նախկինում իրենց «տրոյկա»-ները: Նրանք գրեթե բոլորն էլ նախկին կոմսեր են, իշխաններ, դուքսեր: Նրանք իմ ռեստորանը կբերեն հետաքրքրասեր հաճախորդներին, որոնք կուզենան իսկական ռուսական մթնոլորտ տեսնել: Ու հենց իրենք էլ, վստահ են, սիրով կնստեն համեղ «բորշչ»-ի, «շաշիկ»-ի ու «վոդկա»-ի առաջ, կնայեն ռուսական կյանքը պատկերող որմնանկարներին ու կվերհիշեն իրենց ցոփ անցյալը:

Հորս երազը իրականացնելու համար մերոնք ստիպված էին շատ ծանր աշխատանք տանել: Ծախեցին զարդերը ու ընտանիքի քիչ թե շատ արժեք ներկայացնող բոլոր հուշանվերները: Այսպիսով, ձեռք բերվեց բավականին շոշափելի գումար, որը մեզ հնարավորություն տվեց տեղափոխվել մեկ այլ, ավելի հարմարավետ բնակարան:

Վերջապես ապրում ենք կահավորված մի բնակարանում՝ Սեն-Ժակ փողոցում: Ունենք հյուրասենյակ, երկու ննջասենյակ ու մուրօ մի խոհանոց՝ հինգերորդ հարկում:

Պատուհանից երևում է Սորբոնի համալսարանն ու տրամվայը, որը շատ կտրուկ շրջադարձով անցնում է նրա կողքով: Մի օր աննկարագրելի աղմուկով տրամվայը կողքի շուռ եկավ: Այդ օրը, այդ վայրկյանին, ես ստացա իմ կյանքի առաջին մեծ հարվածը, ապրեցի առաջին մեծ հուզմունքը:

Մինչ հավաքված ժողովուրդը օգնում էր դժբախտ ուղևորներին, դիմացի պատուհանին նկատեցի փոքրիկ մի աղջկա, որը կը-

ուսցած դիտում էր այդ բոլորը: Նրա գեղեցկությունը շլացրեց ինձ: Դժբախտաբար շատ բան չեմ կարող ասել այդ «Վեներայի» մասին, որովհետև ո՛չ նրա մազերի գույնն եմ հիշում, ո՛չ էլ աչքերի: Մի բան հաստատ գիտեմ. ես սիրահարվեցի, ութ տարեկան երեխայի ողջ ուժով ու քնքշությամբ:

Ամեն օր, ժամեր շարունակ, քիթս ապակուն դեմ արած, անթարթ նայում էի նրա պատուհանին, գեթ մի վայրկյան տեսնելու հույսով: Ու երբ հանկարծ երևում էր նա, տերևի նման դողալ էի սկսում: Մի օր նկատեցի, որ քայլում է փողոցում մոր հետ: Թղթի կտորի վրա արագ «Ես ձեզ սիրում եմ» գրեցի, պատուհանից ցած նետեցի ու սպասեցի նրա պատասխանին: Նա իհարկե չպատասխանեց:

Մանուկ հոգիս ամբողջությամբ կլանված էր նրանով: Այդ տարիքում մենք անպաշտպան ենք լինում: Այդ տարիքում կյանքի հոգսերը դեռ չեն կարողանում շեղել մեզ սիրո վշտերից:

**Կյանքի շեմին բացվող կանաչ տարիներից,  
Տարիներից, որոնք ապրում են  
Ու շնչում մեղմ կրակով խոհերիս շղթայում:**

Մինչ ես թախծում էի, հալումաշ լինում, հաչքս սնանկացալ: Իհարկե, պատճառը հաճախորդների պակասը չէր: Ռեստորանը միշտ էլ լիքն էր հաճախորդներով. դրամարկդն էր գրեթե միշտ դատարկ լինում, երկու պատճառով. նախ հաչքս խեղճի պես էր սիրում հունգարական երաժշտությունը ու Բուդապեշտից հատուկ հրավիրված տասնամեկհոգանոց նվագախումբ էր պահում: Դեռ ավելին, նա վարձել էր նաև երկու ուսմին կարողների, որոնց շատ թանկ էր վճարում:

«Կովկասի» տապալման երկրորդ պատճառը ապառիկ առևտուրն էր: Գրեթե ոչ ոք կանխիկ չէր վճարում: Հաճախորդները՝ մեծ մասամբ ուսանողներ, արտիստներ, պնակալեզներ ու անթիվ անհամար ընկերներ, բարեկամներ, կուշտ ու կուռ ուտում-խմում, ստորագրում ու անհետանում էին:

Մի օր հորս հին բարեկամներից մեկը կշտամբեց նրան.

— Այդպես դու կսնանկանաս...

— Կարող է պատահել, — ընդհատեց մայրս, — բայց եթե մենք չօգնենք այդ մարդկանց, հապա ո՞վ է օգնելու:

— Մի օր այդ երիտասարդները կդառնան բժիշկներ, փաստաբաններ, ինժեներներ կամ գեներալներ (երագում էր հաչքս) ու կգան կնուժեն իրենց պարտքը:

— Աստված մե՞ծ է ու գթառատ,— եզրափակեց մայրս,— նա կօգնի մեզ, երբ ժամանակը գա:

Անկասկած աստված գտել էր, որ Ազնավորյանների ընտանիքին օգնելու ժամանակը դեռ չէր եկել, քանի որ 1930 թվականին տնտեսական ճգնաժամի ու վատ դեկավարման հետևանքով, երկար հոգեվարքից հետո, «Կովկասը» հոգին ավանդեց:

Ռեստորանի փակման օրը, մինչ հայրս զբաղված էր հավաքելով այն ամենը, ինչ կարելի էր տուն տանել, նրան մոտենում են եթովպիացի երկու ուսանողներ, որոնք եկել էին վճարելու իրենց պարտքը:

— Նեղություն մի քաշեք, երեխեք,— ասում է հայրս,— գնացեք քե՛ֆ արեք:

Ուսանողները պնդում են ու, թողնելով փողը, հեռանում: Հարյուրավորների մեջ սրանք միակն էին, որոնք արդարացրին հորս վատահոյությունը: Ու այդ էր պատճառը, անկասկած, որ հայրս երկար ժամանակ երազում էր գնալ շրջել Ադիս-Աբեբայում:

«Կովկասից» մնացին միայն խոհանոցի դանակները: Մնացածը չնչին գումարով վաճառվեց, լիկվիդացվեց:

— Ռե՛, շտապիր, Վաղուշ,— ասում է մայրս (իմ երկրորդ անունը Վաղինակ է):

Վերջին անգամ նայում եմ դիմացի պատուհանին: Նա այնտեղ է՝ փոքրիկ, ժպտուն ու ինձ է նայում: Սիրտս ուժեղ խփում է: Էլ չեմ տեսնելու նրան:

Ձեռքիցս բռնած, մայրս դեպի դուռն է քաշում ինձ:

— Ծտապի՛ր, բավական է երկինք նայես:

Մենք տեղափոխվում ենք, թողնելով այն բնակարանը, որն արդեն շատ էր թանկ մեզ համար: Էլ փող չունենք, գիտեմ, բայց այդ բողբոջից էլ չի սարսափեցնում ինձ: Ընդհակառակը, ինչ-որ տեղ նույնիսկ հրճվում եմ: Կգնամ, կմորթամ Աիդայի հետ ու էլ դպրոց չեմ գնա,— ասում եմ ինքս ինձ:

Այդ ուրախ հեռանկարն իհարկե չիրականացավ: Չգիտեմ ինչպես, հայրս նորից աշխատանք ճարեց մեր նոր, մութ ու խոնավ բնակարանին կպած ինչ-որ գիներտանը:

Կատաղությամբ իմացա, որ ուղիղ մեր տան դիմացն է գտնվում մադամ Մարշալի ու մայր Ռոնոյի կողմից դեկավարվող «Կոմեդի Ֆրանսեզի» թատերական այն դպրոցը, ուր պետք է հաճախեի:

— Այս դպրոցն էս գնալու,— ասաց հայրս:

Մոսկայի էր: Առավոտյան մի մայթից մյուսը պետք է անցնեի ու բանտարկվեի ինչ-որ տուփի մեջ: Հետո պետք է նույն փողոցն

անցնելի հակառակ ուղղությամբ ու բանտարկվելի այս անգամ  
տանը: Թափառելու, փողոցները չափչփելու, ուշանալու էլ հնար  
չկար: Փոքրիկ Շարլը իրեն զգում էր անհուսորեն թակարդն ըն-  
կած: Բայց երբ մտածեցի, որ դպրոցը կոչված է ապագա դերա-  
սաններ պատրաստելու, ամեն ինչ փոխվեց, ու ես սկսեցի ոգե-  
վորությամբ հանախել:

Սկզբում հորս գինետան հաճախորդները սակավ էին: Մեկ ուրիշը լինեք նրա տեղը, կնվնվար: Բայց ոչ հայրս:

Երբեմն էլ վաճառասեղանի հետևում ծվարած, հաճախորդներին սպասելուց հոգնած, միայնակ, մանավանդ մեկի հետ զրուցելու հնարավորությունից զրկված՝ հայրս հանկարծ իջեցնում էր վերնաշապկի թևքերը, հագնում բանկոնն ու ասում.

— Ծտապի՛ր, վազի՛ր տուն, հագնվի՛ր: Կինո ենք գնում:

Ահդային ու ինձ կանոնավոր կերպով շաբաթը երկու անգամ կինո էր տանում: Այն էլ միշտ «Օդեոն» կամ «Սեն Միշել» կինոթատրոնները:

Բոլորովին չեմ հիշում այն առաջին ֆիլմը, որ դիտել եմ: Անգամ չեմ հիշում հնչուն, թե համր էր այն: Բայց լավ եմ հիշում, որ ինձ համար կատարյալ հայտնություն էր: Խոսք չեմ գտնում արտահայտելու այն շլացումն ու ոգևորությունը, որ ապրեցի Էկրանի վրա տեսնելով Չարլի Չապլինին, Դուգլաս Ֆերբենքսին, Իվան Մոզժուխին, Մերի Պիկֆորդին...

Էկրանի առաջ նստած, կոնֆետ ծծելով, կախարդված դիտում, ապրում եմ միզանցեճով, բեմական զգեստներով, երածըլտությամբ ու դերասանների խաղով: Չեմ համարձակվում այդ մասին որևէ բան ասել հորս. գիտեմ, որ դա նրան ցավ կպատճառի: Բայց ինքս ինձ մտածում եմ, որ սա այլ բան է՝ հայերի խեղճ ու կրակ բեմադրություններից բոլորովին տարբեր:

Այդ տարիներին է, որ իմ մեջ իսկապես արմատացավ արտիստ դառնալու ցանկությունը: Մինչ այդ մանկական երևակայություններով էի տարված:

Ինչե՛ր չէի ուզում դառնալ:

Ուզում էի գաղութարարի սաղավարտ հագնել ու գնալ կովեյ աֆրիկյան բանակում: Ուզեցի հրուշակագործ դառնալ, երբ մեր

հարևան հունգարացի Զուազը կրեմ պատրաստել սովորեցրեց ինձ: Ուզում էի անհիվավոր չմշկավազքի չեմպիոն դառնալ, բայց երբ շանս սովորեցրի պարզել թաթն ու գդալից կաթ խմել, միտքս փոխեցի, որոշեցի գազան վարժեցնող դառնալ:

Այդպես էլ հայրս գաղութարարի սաղավարտ չգնեց ինձ համար և ուսումնականությունն էլ աստիճանաբար չքացավ: Ո՛չ հրուշակագործ դարձա, ո՛չ մշկավազքի չեմպիոն, ո՛չ էլ գազան վարժեցնող: Բայց արտիստ դարձա:

Հայրս քարտեսիրտ մարդ էր: Ուրախ բնավորություն ուներ. պաշտում էր երաժշտությունը, խելագարվում էր տանգոյի համար ու անթիվ գիշերներ էր անցկացնում գինետներում ու խաղատներում:

Իշխանավայել թեյափողերը, հրավերքները, այցելությունները մեծ ժողովրդականություն էին բերում նրան: Ու երբ ինչ-որ մի երգ շատ էր հավանում, փող էր տալիս, նորից պատվիրում: Ի վերջո մեծ գումար տալով, գնում էր այդ երգի նոտան ու տուն բերում:

Հայրս իր ամեն ինչը կիսում էր մեզ հետ՝ շատախոսությունները, սնունդը, վշտերը և ուրախությունները: Երբ գիշերները ուշ էր վերադառնում, բոլորիս զարթնեցնում էր, Աիդային նստեցնում դաշնամուրի մոտ և ընտանյոք ձայններս գլուխներս գցած երգում էինք նրա սիրած երգերը: Հետո մայրս էր նստում դաշնամուրի մոտ, նվագում-երգում էր: Իհարկե, մեր հաճախակի «աղմուկ-աղաղակները» հարևաններին դուր չէին գալիս, բայց մենք հո չէինք կարող բոլորին դուր գալ:

Ահա թե ինչու Աիդան ու ես շատ երգեր գիտեինք, որոնք կատարում էինք հայկական հավաքույթներում: Աիդան երգում էր, ես պարում էի, իսկ հայրս հայ բանաստեղծ Սայաթ-Նովայի երգերն էր երգում ու լացացնում հայ գաղթականներով լի դահլիճը:

Աիդան ու ես մեր ելույթների համար փող չէինք ստանում, պարզապես պրակտիկա էինք անցկացնում ծանրակշիռ մի հասարակության առաջ, որը մեզ տաղանդավոր էր համարում, քանի որ հանդիսատեսը, ինչպես և մենք՝ հայեր էինք:

Եվ այսպես, հավաքույթից հավաքույթ, տոնից տոն (իսկ նրանք շատ էին) աստիճանաբար սկսեցի ավելի համարձակ դառնալ, այն աստիճան, որ մի օր խիզախություն ունեցա նամակ գրելու «Փոքրիկների թատրոնի» դիրեկտորին, խնդրելով լսել ինձ: Հրավերը չուշացավ: Մորս ընկերակցությամբ գնացի: Ահա այդ օրն էր, որ առաջին անգամ հանդիպեցի «հրաշք երեխաների» ծրնողներին, որոնք հիմարության ու սնապարծության մի զգվելի խառնուրդ են: Անտանելի են հատկապես այդ երեխաների մայրե-

րը, որոնք իրենց երեխաների միջոցով ուզում են փայլել այն ասպարեզում, որի մասին թաքուն երազել են:

Այնտեղ կալին կինոաստղերի նման գուգված-զարդարված աղջնակներ, տղաներ՝ հազմված հանրաճանաչ երգիչների կամ պարողների նման: Ոմանք աչքի տակով իրար էին զննում, արտրանում ու ծամածոություններ անում: Ուրիշները կովում կամ լաց էին լինում: Այս անտանելի աղմուկի մեջ մայրերը գովերգում էին իրենց «հրաշք երեխաների» տաղանդն ու արժանիքները:

Իսկ խեղճ մայրս, այս աղմուկի մեջ կորած, վախեցած կանգնած էր մի անկյունում ու լուռ, բայց սիրով ինձ էր նայում: Ես տարբերվում էի մյուս երեխաներից: Ես կիրակնօրյա զգեստներ չէի հագել, որովհետև չունեի: Բացի այդ, Ազնավուրյանների համար կիրակի օրը սովորական մի օր էր մյուս բոլոր օրերի նման: Ծաբաթվա բոլոր օրերը նրանք աշխատում էին ծայրը ծայրին հասցնելու համար:

Մայրերն ինձ նայում էին արհամարհանքով: Իսկ երեխաները՝ ինքնագոհությամբ:

— Հաջո՛րդը,— սանձարձակ ամբոխի աղմուկի մեջ լավելու համար բղավում էր մեկը:

Ու ամեն անգամ, իրար հրելով, ատամների արանքից իրար անպատվելով, բոլորը միասին վազում էին դեպի դուռը, իրենց երեխաների համար մի պայմանագիր, մի դեր կամ մի խոստում պոկելու հույսով:

Մայրս ու ես, այս աղմուկից հեռու, կծկված կանգնած ենք մի անկյունում: Ժամերն անցնում են ու արդեն զղջում են, որ եկել են այստեղ: Վերջապես բոլոր մայրերը իրենց «փոքրիկ գանձերով» եղան դիրեկտորի մոտ: Դիրեկտորը բացեց դուռն ու ասաց.

— Ո՞վ մնաց:

Լռություն: Հետո երկչոտ ասացի.

— Ես:

— Ի՞նչ ընդունակություն ունես:

— Պարում եմ:

Գրպանիցս հանեցի դեղնած ու ճմրթված պարտիտուրաս ու մեկնեցի դաշնակահարին:

Մայրերի հեզնոտ հայացքների տակ, առանց համարձակվելու որևէ մեկին նայել, կատարեցի ռուսական մի պար:

— Մենա՞կ ես եկել:

— Ո՛չ, մայրիկիս հետ:

— Ու՞ր է նա:



Տույց տվի: Մայրս մոտեցալ: Ասելու, գովելու, ծախելու ո-  
չինչ չունէր: Մյուս բոլոր մայրերից տաբերվող այս հեզ ու խո-  
նարհ մորը դիրեկտորը սասց.

— Թողէք ձեր հասցեն, մենք ձեզ կգրենք:

Քանի որ ստիպված էինք անվերջ խնայողություն անել, այդ  
երեկո ոտքով տուն վերադարձանք: Ծանր էր մորս համար, իսկ  
ես ինձ շատ նվաստացած էի զգում. կյանքումս առաջին անգամ:

Երկու օր հետո նամակ ստացա: Ընդունված էի:

**Այ, դա մի վաստակ է,**

**Այ, դա մի հրաշք է,**

**Դա բախտի շնորհ է**

**Եվ մի գորություն է աստծո ամպրոպի:**

Տասնմեկ-տասներկու տարեկան եմ: Ավելի հասուն ու համար-  
ձակ երևալու համար կուլիսներում ծխել սկսեցի: Ծուխը ներս չէի  
քաշում, փստացնում էի, շրջապատս լցնելով էժանագին ծխախո-  
տի զգվելի հոտով: Ես երջանիկ էի: Բեւ էի ուզում բարձրանալ.  
ահա բեմի վրա եմ: Հրճվում եմ: Լինելով երկչոտ (միշտ էլ երկչոտ  
եմ եղել), առավել էի կարիք զգում ցուցադրել ինձ: Ծնողներիցս  
թաքուն, սենյակում առանձնացած, պարում էի հայելու առաջ, ինչ-  
որ դերեր էի խաղում, գրիմ էի անում ու երևակայական հանդիսա-  
տեսի ծափերից շլացած վեհասքանչ և հաղթական գլուխ էի տա-  
լիս: Այո՛, արդեն այդքան հեռուն էի տեսնում:

**Ես ինձ տեսնում էի արդեն ամեն ազդի վերևում:**

Առաջին դերս ստացա թատերական դպրոցում: Չնայած ա-  
մաչկոտությանս, շուտ ընտելացա ու դերի մեջ զգացի ինձ: Մենք  
կարող էինք դասի նստել առավոտները կամ կեսօրից հետո, մի  
բան, որ մեզ հնարավորություն էր տալիս փորձերին գնալ: Հաջորդ  
օրը կարող էինք ուշ գալ դպրոց, եթե նախորդ օրը երեկոյան  
ներկայացման էինք մասնակցել: Երբեմն դասի ժամանակ հնչում  
էր դպրոցի զանգը, ընդհատելով ամեն ինչ: Ուրախ ու անձկալի  
իրարանցում էր համակում մեզ՝ ապագա դերասաններիս, ու իրար  
հրմշտելով, սանդուղքն ի վար թավալվոր բակն էինք նետվում:

Երբ զանգը դասի ժամանակ էր հնչում, նշանակում էր, որ դրպ-  
րոց է եկել ինչ-որ բեմադրող-ռեժիսոր, իր ապագա պիեսի կամ  
ֆիլմի համար դերակատար ընտրելու: Դեռ երեխա էինք, սակայն

արդեն զգում էինք աչքի ընկնելու ազան ցանկությունն ու նախանձի սուր խայթ, երբ ընտրությունը ընկնում էր հարևանի վրա:

Կարծես կենդանիների շուկա լինէր: Լուռ շարք ենք կանգնել: Այցելումն դանդաղ, հանգամանորեն զննում էր մեզ, այնպես, ինչպես ձիու վաճառականը ձիերին:

Ժամանակ առ ժամանակ նույն հարցն էր տալիս:

— Դու ի՞նչ կարող ես անել:

— Ես ակորդեոն եմ նվագում, պարոն:

Մի քանի քայլ ես:

— Իսկ դո՞ւ:

— Ե՛ս, պարոն:

— Այո՛, դու:

— Ես երգում եմ, պարոն:

Դեռ նոր էի սովորում դպրոցում, երբ ինչ-որ ռեժիսոր աշակերտներին մի քանի հարց տալուց հետո եկավ տնկվեց դեմս.

— Իսկ դո՞ւ:

— Ես ռուսական պարեր եմ կատարում:

— Ուրիշ ոչ ի՞նչ:

Աստված իմ, էլ ի՞նչ ասեմ: Ուղեղս լւրած, տենդագին մըտածում եմ, թե էլ ինչ կարող եմ առաջարկել այս մարդուն հմայելու համար:

— Ես կարող եմ առողջանություններ նմանակել,— անձկալի ձայնով ասացի ես:

— Նեգրի նման կարո՞ղ ես խոսել:

— Այո՛, պարոն:

Հիշեցի Բամբուլային, սևամորթ մի դպրոցականի, որն ինձանից մի քիչ մեծ էր: Երբ դեռ Սեն-Ժակ փողոցում էինք ապրում, ամեն առավոտ նա սպասում էր ինձ մեր դարպասի առաջ: Սկզբում ինձ ընկերակցում էր մինչև Սեն-Սևերեն եկեղեցին, որտեղի երգչախմբում էր երգում: Թեպետ լուսավորչական կրոնին էի պատկանում, սակայն, իմ նախաձեռնությամբ, կաթոլիկ եկեղեցի էի հաճախում: Դա զվարճացնում էր ինձ, ու ծնողներս էլ չէին արգելում:

Քահանան շատ էր սիրում ինձ: Ու քաջալերելու համար ամեն առավոտ մի մեծ բաժակ շոկոլադ էր տալիս: Գուցե հենց այդ բաժակ շոկոլադն էր ինձ ձգում դեպի Սեն-Սևերեն եկեղեցին:

Հետո եկեղեցուց դուրս էի թռչում, ու սևամորթ ընկերոջս հետրոնում դպրոցի ճամփան: Դպրոց մտնելուց առաջ մտնում էինք նկարավաճառի խանութը, ու այն մի քանի սանտիմը, որ ամեն առավոտ տալիս էր մայրս, ծախսում էինք քաղցրավենիքի վը-

րա, որը և հավասար կհսում էինք ընկերոջս հետ: Ընկերոջս Բամբուլա մականունն էի տվել, որը նա շատ տարօրինակ էր գտնում:

Ես գվարճանում էի, կապկելով նրա առողջանությունը ու բաց թողնում բառերի «ո» տառը: Բամբուլան պայթում էր ծիծաղից: Ինձ այնքան էր դուր գալիս փոքրիկ նեգրի նման խոսելը, որ ի վերջո դա մոլագարություն դարձավ ու սկսեցի ամեն տեղ այդպես խոսել: Ուսուցչուհիս՝ օրիորդ Ժաննան (որին ես էլ էի սիրահարված, ինչպես մյուս բոլոր աշակերտները), և ծնողներս դժկամությամբ էին ընդունում իմ նոր խաղը:

— Եթե կարծում ես սրամիտ է, սխալվում ես, — ասում էր Աիդան՝ նշարդայնացած:

Սրամիտ չէր, բայց հիմա մեծ օգուտ բերեց ինձ:

Ռեժիսորն ինձ առաջարկեց փոքրիկ նեգրի դերը «Ծանգեփզեփ» ստուդիայում: Կարճ ասած, ինչպես շատերը, ես դարձա մի փոքրիկ գիտուն կապիկ: Սովորում էի, խաղում ու աշխատավարձս տուն բերում: Աիդան էլ իր հերթին տուն էր բերում երգով, պարով վաստակած դրամը: Ու քանի որ հորս գործերը փայլուն չէին, մեր վաստակած փողը ջերմ ընդունելություն էր գտնում: Բայց չէր բավականացնում:

Հորս գինետունը ուղիղ գծով դեպի քայքայում էր գնում, թեպետ կարճ ժամանակում նա արդեն ձեռք էր բերել մշտական հաճախորդների մի ստվար խումբ: Դրանք անհագ ծարավիներ էին, ուրախ-գվարթ մարդիկ, որոնք իրենց օրն անց էին կացնում գինու բաժակի ընկերակցությամբ, հորս հետ աշխարհը վերափոխելիս: Հայրս նրանց խենթի պես էր սիրում: Նրանց, մանավանդ, գնահատում էր այն բանի համար, որ անվերջ լսել գիտեին, առանց իրեն ընդհատելու կամ հակաճառելու:

Ամեն ինչ կյանքում փոխհատուցվում է: Բնականաբար հորս նոր բարեկամները թանկ պիտի նստեին ինձ վրա: Եվ իրոք, սկսվեց այն աղետաբեր սխալը, որը «Կովկասն» հասցրեց կործանման: Նա սկսեց ապառիկ խմիչք բաց թողնել, ու ամեն մի չնչին առիթով ճաշկերույթներ սարքել իր հաշվին: Հայրս նորից սնանկացավ: Աիդան ու ես այդ մասին իմացանք այն ժամանակ միայն, երբ հայրս սեղանի շուրջը, երկու պատառ հացի արանքում հայտարարեց.

— Վաղը տեղափոխվում ենք:

Մայրս փնթիկթաց մի քիչ: Այդքանը: Նա պետք է նորից կապեր ճամպրուկներն ու բաժանվեր մեր թաղի խանութպաններից, որոնց նա արդեն սովորել էր: Նման դեպքերում, երբ ամեն ինչ փուլ է գալիս, երբ չքավորությունը դարանակալ սպասում է, մարդ-

կանց դեմքերը մոայլվում են: Ում-ում, քայց Ազնավորյաններին դա չէր վերաբերում:

Մենք տեղափոխվեցինք շատ ցածր առաստաղով մի մութ բնակարան, որի պատերին կանաչ թուղթ էր քաշած: Բնակարանը գտնվում էր Փարիզի հրեական թաղամասի ճիշտ կենտրոնում: Բոլոր ընկերներս հրեաներ էին, ու քանի որ այդ ցեղը նույնքան հյուրասեր է, որքան հայերը, հաճախ իրար ճաշի էինք հրավիրում: Մի նոր երաժշտություն գրավեց իմ ուշադրությունը՝ ռուսականին բավականին մոտ, հայկականից՝ ոչ շատ հեռու: Իմ կարծիքով այդ նմանությունը գալիս է թախիժից, ուրախ դրամատիզմից: Ես ինձ կատարյալ լավ եմ զգում այդ ինքն իր վրա կուշ եկած շրջապատում, ուր սովորույթները, նույնիսկ խոհանոցը մեզ շատ մոտ է:

Մինչ հայրս դեսուդեն էր ընկնում իր ֆինանսական գործերը կարգավորելու, մայրս հարևանների համար կար էր անում::

Աիդան ընդունվեց պարոն Պրիորի խումբը:

Իսկ ես «Հանրի 4-րդ» պիեսի գործողություններից մեկում հանդես եմ գալիս որպես Հանրի 4-րդը՝ մանուկ հասակում: Հետո համր մի դեր տարա «Ոչնչից մեծ աղմուկ» պիեսում, որից հետո «Օդեոն» թատրոնում դեր ստացա: Հետո, դարձյալ պայմանագիր չունեմ: Աիդայի օգնությամբ մի քանի երգ պատրաստեցի ու «Պրտի Կազինոյից» ունկնդրություն խնդրեցի:

Մերժեցին. շատ էի երիտասարդ:

Աիդայի հետ շարունակում էինք հաճախել թատերական դրայ-  
րոցը, բայց հետզհետե նվազող եռանդով:

Մեր ծնողները կարծում էին, թե ամբողջ օրը դպրոցում ենք  
անցկացնում, այնինչ իրականում նախաճաշի փողը տալիս էինք  
կինոյի: Առավոտյան ժամը 10-ին հաց ու շոկոլադ էինք գնում,  
մտնում կինո ու մնում բոլոր սեանսներից մինչև դասերի վերջը:  
Մեծ մասամբ նախընտրում էինք երաժշտական կինոնկարները:  
Մեզ հատկապես գրավում էին Ֆրեդ Աստերն ու Ջինջեր Ռո-  
ջերսը:

Մի օր Աիդան առաջարկեց ինձ ներկայանալ պարոն Պրիո-  
րին, որը երեխաների մի խումբ էր ղեկավարում: Տղաներից մեկը  
հեռացել էր խմբից ու ազատ տեղ կար:

Բրոջս դրդումով, «Մադլեն և Մարիոյի» ու «Շանգելիզեի»  
թատրոններում ունեցած հաջողություններից ոգևորված, գնացի  
քննություն տվի և ընդունվեցի:

Պարոն Պրիորն ու իր կինը՝ Միան, ինձ ընդունցին որպես  
երգիչ: Իրան գուգահեռ Չարլի Չապլինին և Մայլիս էի նմանա-  
կում: Վերջինս եկավ մի օր, ձեռքով երեսիս տմբտմբացրեց ու ա-  
սաց.

— Լավ է, փոքրիկս, շարունակիր այդպես:

Ինչպիսի՞ հիասթափություն, Մայլ...

Լուսանկարի մեջ նրբակազմ մարդ էր, շեկ մազափնջով: Բայց  
հիմա դեմս կանգնած է գլաքարի պես կլոր, գեթ ու ճաղատ մի  
անձնավորություն:

Ահա ես Պրիորների մոտ եմ ու ապրում եմ նրանց ընտանի-  
քում: Նրանք մեզ շոյում էին, հանդիմանում, պատժում, վարձատ-  
րում՝ ապացույց այն բանի, որ մենք օտար չէինք նրանց տանը:

Բնականաբար, ողջ օրը, առավոտից իրիկուն, Արանց տանն ենք: Առավոտյան բոլորս միասին մաքրում ենք, կարգի բերում տունը, հետո միասին նախաճաշում ենք ու փորձերը սկսում: Երբեմն եռուզեռ էր սկսվում: Պրիորները երաժշտական հրատարակչություն ունեին, ու պատահում էր, որ պետք էր շատ շտապ պարտիտորներ ուղարկել Ֆրանսիայով մեկ ցրված նվագախմբերի ղեկավարներին:

Ողջ թատերախումբը լուրջ աշխատանքի էր անցնում: Պետք էր փաթեթավորել նոտաները, թղթերը փակցնել ու հասցեան գրել: Յուրաքանչյուրն ուներ իր որոշակի աշխատանքը: Ես դրոշմաթղթեր էի կպցնում... Ինչպիսի՜ զգվանք. բերանիս մեջ նողկալի համ էր մնում ու կոկորդս չորանում էր:

Ծանրոցներն ուղարկելուց հետո մադամ Պրիորի աչալուրջ հայացքի տակ վերսկսում էինք փորձերը, որից հետո աղջիկները կարկատում էին բեմական զգեստները, արդուկում, մինչ տղաները մաքրում էին երաժշտական գործիքները, փայլեցնում ու պատրաստում զամբյուղներն ու ճամպրուկները:

Համերգների մեկնելիս մեզ քաղաքից քաղաք էր տեղափոխում մի փոքրիկ քաչքաչված ավտոբուս:

Առջևի նստարաններին, իրար վրա դարաված, լուռ, ձգված, դողալով, աչքներս ուղիղ ճանապարհին հառած, ճանապարհորդում էինք: Երբեմն մեկն ու մեկը բղավում էր.

— Զգո՛ւյշ, Տոնտոն, հալը:

Մադամ Պրիորը արագություն չէր սիրում, մայր Պրիորն էլ չէր սիրում, երբ մեքենա վարելիս խոսում էին իր վրա: Նրանք կողք-կողքի են նստած: Մենք՝ երեխաներս, լցված ենք ետևում: Սկսվում են վարորդի տատապանքները:

— Պիերո, շատ արագ ես քշում:

— Մի՛նա, ախր 40-ի վրա եմ գնում:

— Դա մե՞ծ արագությունն է: Դու կսպանես մե՞զ:

— Ի սեր աստծո, Մի՛նա, հանգիստ թող ինձ:

Մադամ Պրիորի ճակատին ճարպե ուռուցք կար, ու ամեն անգամ, երբ ուզում էր հուզել ամուսնուն, հայտարարում էր, որ ջավում է ուռուցքը:

— Զգույշ, Պիերո, աջ դարձի՛ր... ձախ դարձի՛ր... առաջ քրճի՛ր... արգելակի՛ր...

Եվ այսպես շարունակ:

— Զայնդ կտրիր, Մի՛նա: Դու ինձ նշարդայնացնում ես: Դու անտանելի ես, էլ չեմ կարող այսպես արքել...

— Վա՛խ, ուռուցքս...

Եվ ակափում էր... Պիեռոն կանգնեցնում էր մեքենան ու ներողություն խնդրում:

— Ներիր ինձ, Մինա: Դու պետք է հասկանաս, թե ինչ է նշանակում ավտոմեքենա վարել: Նյարդերդ ձգված են լինում:

Մինան հանդարտվում էր, ու մենք նորից էինք ճանապարհ ընկնում: Ինչ խոսք, որ նման տեսարանները կրկնվում էին ողջ հյուրախաղերի ընթացքում:

**Չափազանցնում ես,**

**Չափը անցնում:**

**Ահա թե ինչու**

**Չկարողացա երբեք իմանալ,**

**Թե քեզ մոտ իրոք**

**Որն է արժանիք, որը թերություն:**

**Աչքբան, որ նրանք խառն են ու շփոթ:**

Մայր Պիեռը հարավից էր ու գալստական երգեր էր երգում: Ներկայացման առաջին մասը ապահովված էր երեխաների կողմից: Նրանք պարում էին, երգում, սկետչներ խաղում երաժշտական գործիքներով:

Մեր շապիկն ու տաբատը սպիտակ էին, բաժանված ֆլանելե կարմիր գոտիով: Բրունոն՝ նվագախմբի ղեկավարը, ակորդեոն էր նվագում, նրա քույրը՝ քսիլոֆոն, իսկ Տոնի Օվյան կիթառ էր նվագում ու երգում Տինո Ռոսիի նման:

Իհարկե, համերգներին մասնակցում էր նաև Աֆդան: Նա երգում, պարում ու դաշնամուր էր նվագում: Ես էլ նմանակումներ էի անում ու նվագում մետալոֆոնի վրա:

Մեզ հետ էր նաև թատերախմբի «աստղ» մայր Պրիորի սիրեցյալ՝ Հարրի Սկանլոնը, որը երգում էր Մորիս Շելպայեի նման:

Ընդամիջումից հետո մի-մի գործիք էինք վերցնում ու նվագակցում մայր Պրիորի երգերը: Այսպես ութ ամիս շրջեցինք «Կոդ Դազուրից» «Բելգիա», անցնելով Փարիզի միջով:

Պրիորները շատ լավ մարդիկ էին: Նրանք սիրում ու պահում էին մեզ իրենց հարազատ երեխաների պես:

Ամռանը չէինք աշխատում: Պիոներները «Բասս-Ալբերում» տուն էին վարձում, ուր ողջ թատերախումբը հանգստանում էր:

Ամեն տարի ձրի մասնակցում էինք գյուղի տոնակատարությանը: Մնացած ժամանակը տնտեսությամբ էինք զբաղվում, զամբյուղներ գործում ու քիչումիչ փորձ անում: Կիրակի օրերը պատարագ էինք լսում, ու չափաֆաս դարձած աղջիկները իրենց առաջին հաղորդությունն էին անում:

Ինձ համար դա հիանալի կյանք էր, բացի մի մանրուքից՝ չէի կարող նմանակել Մորիս Ծեվալլեին, քանի որ Հարրի Սկանլոնը նրա նման էր երգում:

Ես նրան ամեն տեսակի մանկական հիվանդություններ էի մաղթում իրեն փոխարինելու համար: Անօգուտ էր. երկարյա առողջություն ուներ:

Մի տխուր առավոտ, արցունքներն աչքներիս, բաժանվեցինք Պրիորներից: Նրանք ստիպված էին ցրել խումբը, որովհետև թանկ էր նստում: Տպավորությունը այնպիսին էր, կարծես հարազատ ընտանիքից էի հեռանում:

Սկսեցի ինքնավստահ դառնալ: Պրիորների մոտ աշխատելու ընթացքում բազմաթիվ երգեր սովորեցի, իհարկե, մեր խմբում երգելու համար չէ, որ սովորում էի դրանք, այլ հաճույքի:

Հետևաբար ինձ համար շատ հեշտ էր համերգային երգացանկ կազմել: Հետո իմացա, որ պրոֆեսիոնալ արտիստները իրենց հարմար ռեպերտուարը ձեռք են բերում երաժշտական հրատարակչություններից:

Ես էլ նույնն արեցի, չէ՞ որ ես էլ էի պրոֆեսիոնալ, չնայած որ տասներկու տարեկան էի:

Նույնիսկ համարձակություն ունեցա գնալ Վեներա Սկոտտոյի մոտ. փոքրիկ, մութ, շատ ցածր առաստաղով մի սենյակում նստած երաժշտություն էր գրում: Նա ինձ ընդունեց, ինչպես մյուս արտիստներին ու պարտիտուրների մի կապոց տվեց:

Գնացի «Ալկազար»՝ Հանրի Վառնայի մոտ ու երգեցի: Երանորհիվ մարսելցու առողջանությանս, որ Պրիորների մոտ էի սովորել, ինձ դեր առաջարկեցին Բերկալի ղեկավարած «Կեցցե՛ Մարսելը» ռեպյուում: Աշխատեցի երեք ամիս:

Այնուհետև Աիդան ու ես երգեցինք «Բար՛ դը Վդեդում», ուղիղում: Հետո Մաքս Բլոկն ինձ առաջարկեց երգի մրցույթին մասնակցել «Բուլվար դը Ստրասբուրգի» մեծ սրճարանում:

Ուրեմն ես ընդունա՞յ եմ մասնակցել երգի մրցույթներին... Փարիզը լի էր մրցույթներով. դրանք մոդայի մեջ էին: Որոշեցի փորձել:

Ռադիոյով հաղորդվող մրցույթները ինձ անմատչելի էին: Իայց սրճարանում ընդունում էին ինձ: Առաջին անգամ ելույթ ունեցա գարեջրատանը:

Հայրս հետս էր:

Հիմնական դժվարությունը այն էր, որ արձանագրվել կարող



Էինք միմիայն խափշք պատվիրելուց հետո: Հայրս սուրճ պատվիրեց, իսկ ես աշխատելով ավելի փոքր երևալ, քան կայի, մի անկյուն խցկվեցի այդ պարտավորությունից խուսափելու համար: Մրցանակները հետևյալ կերպ էին բաշխված. առաջին մրցանակ — 50 ֆրանկ, երկրորդ մրցանակ — 30 ֆրանկ, երրորդ մրցանակ — 10 ֆրանկ: Ավելորդ է ասել, որ մրցույթը շատ մեծ էր: Բայց հայրս ու ես վստահ էինք հաջողությանս ու արդեն ծրագրեր էինք կազմում:

Եթե շահե՞նք 50 ֆրանկը, կգնանք գրավատնից կվերցնենք մեր ինքնատը:

Ախ, այդ գրավատունը. ինչեր չի տեսել նա՝ մեր ուսիցընդունիչը, ինքնատը, մորս մատանին, հորս երաժշտական գործիքները... հանձնում էինք, երբ սնանկանում էինք, իսկ երբ մի քանի սու էր ընկնում ձեռքներս՝ վազում, ետ էինք վերցնում մեր գանձերը:

Ամեն օր երգի մրցույթներ կային, ամեն օր էլ գրանցվում էի: Այնքան վստահ էի իմ հաղթանակին, որ նույնիսկ կրկնականչի երգեր էի պատրաստել: «Տվեք ինձ Ձեր ձեռքը, օրիորդ»-ը անժխտելիորեն հանդիսացավ այն երգը, որն ինձ ճանապարհ բացեց դեպի երգարվեստը: Բանը ինքնին երգի մեջ չէր, այլ հեղինակի: Այդ տարիներին հնարավորություն կար մի փոքրիկ մետաղադրամով լսել ամենավերջին մոդաիկ երգը: Օրինակ, «Սեն-Միշել» հրապարակի վրա, կինոթատրոնի մոտ: Պատկերացրեք պատեֆոնների մի երկար շարան, ականջակալները փակցնում ես ականջներիդ, ու երաժշտությունը հոսում է մեջդ մի քիչ չոր, բայց շարերար: Այս ձևով է, որ ավելի մոտիկից ճանաչեցի Մորիս Ծեվալյեին, որը իրենից անկախ դարձավ իմ կուռքը և ուսուցիչը: Բնականաբար, այդ երգը մտքի ռեպերտուարիս մեջ: Բոլոր առաջին մրցանակները ես շահեցի՝ ի մեծ ուրախություն հորս, որին տալիս էի շահած փողը, նախօրոք մի քիչ վերցնելով անձնական ծախսերիս համար: Ծահեցի բոլոր մրցանակները, բացի մեկից, որտեղ երկրորդ տեղը գրավեցի... Ինձ հաղթեց հուժկու ձայնով մի տիպ, որը կատարեց «Երազն անցնում է» երգը: Տուն վերադառնալիս, իհարկե ոտքով, հորս ասացի.

— Տեսնո՞ւմ ես, հայրիկ, ֆրանսիացիք ձայնով երգիչներ են սիրում, իսկ ես ձայն չունեմ, ավելի ճիշտ, ձայնս փոքր է:

Այդ միտքն ինձ երկար տանջեց:

Լյուսյենն ու Մորիսը («Մոշե»՝ այսպես էին անվանում ծնողները) այն տղաներից էին, որոնց Փարիզի փողոցներում պատարար հանդիպում ես ու դառնում անբաժան ընկերներ:

Սրանք սիրում էին կիրակի օրերը հաճախել Մառնի ափերին տեղի ունեցող պարահանդեսները: Իսկ շաբաթվա մյուս քուրքերեկները գնում էին «Դիմոյի» կամ «Տուրքիյունի» մոտ գաճազան պարեր սովորելու:

Սրանք զգայուն սրտով երկու սուտ «սրտապիճ» տղաներ էին, որոնք ձևացնում էին, թե աղջիկները պետք են իրենց միայն սրունքներից վեր: Այնինչ անվերջ սիրահարվում էին: Վերին շուրթը հազիվ սևացնող բարախիկ բեղեր էին թողել. այնքան նոսր էին մազերը:

Այնքան հանդիպեցինք միմյանց, որ սկսեցի հագնվել, քայլել, շարժվել նրանց նման: Ուղղակի սիրահարվել էի նրանց: Ես էլ նրանց պես այտամորուք ու անտեսանելի բեղեր թողեցի, որոնք տեսանելի դարձնելու համար սև մատիտով ներկում էի:

Հորեղբորս տղան՝ մի իսկական հայ տղա, դերձակ մորաքրոջ տղա ուներ, որն ինձ համար երկգույն, տամայի տախտակ հիշեցնող, շատ էֆեկտավոր մի տաբատ կարեց՝ անչափ կոր գուլպատեղով, նեղ ծնկներով ու փղի թաթերի նման լայն փողքերով, որոնք քայլելիս մաքրում էին փառահեղ սուրբիթ կոշիկներս: Յուրաձ, փայլեցրած մազերս գանգիս փակցրած՝ քայլում էի կուրծքըս դուրս ու երկչոտությունս թաքցնելու համար ինձ լկտի էի պահում աղջիկների մոտ և նրանց հետ խոսում էի միայն ժարգոնով, որը մեր հաճախած հաստատությունների միակ լեզուն էր:

Երբ տնից դուրս էի գալիս քրոջս հետ, նա չէր ուզում քայլել իմ կողքով, փոխում էր մայթը:

— Ծիծաղելի տեսք ունես,— ասում էր նա մյուս մայթից:

Թե ի՞նչ էին մտածում մերոնք իմ տեսքի մասին, քիչ էր հետաքրքրում ինձ: Միակ նպատակս ընկերներիս նմանվելն էր: Կրպանումս շոյում էի անհրաժեշտ իրը՝ դանակը: Իհարկե, դանակը մեծ չէր, բայց հանդգնություն, ուժ էր տալիս ինձ: Նույնից ունեին նաև ընկերներս:

Պարահանդեսներում ամեն առիթով հանում էինք դրանք ու՝ «կլա՛կ», բացում բերանները: Բայց պետք է ասեմ, որ սրանով էլ վերջանում էր դրանց դերը:

Իհարկե, երբեմն աղջկա համար կոիվ էինք անում: Երեք անգամ փողոցում դանակներով կոիվ սարքեցինք: Հետևանքը՝ մի քանի քերծվածք, որոնք իսկույն սպիացան. ոչ մի լուրջ բան: Հաճախ հաշիվներս մաքրում էինք ոտքի, բոունքքի և այլ արգելված ու կեղտոտ հարվածների շարքով:

**Այն թաղում, ուր իմ ջահելությունն անցավ,  
Պետք էր հարվածներից պաշտպանվել գիտե՞նալ:  
Ինքնապաշտպանության գիրքերում ապրելով,  
Հաճախ և մտածված խուժան ձևանալ:**

Հաճախ էի տուն վերադառնում արյունոտված թաշկինակով, աչքիս տակ կապտած, մի քիչ պատառոտված, բայց վերքերովս՝ հպարտ:

Մի երեկո ընկերներիս դրդմամբ բեմ մագլցեցի ու երգեցի փոքրիկ նվագախմբի ընկերակցությամբ: Հայտնագործություն... նկատեցի, որ երգելիս աղջիկներն ինձ առավել խոնավ հայացքով ու կիսաբաց շրթներով են նայում, քան երբ կովարար հերոսի դեր եմ խաղում:

Իսկույն որոշեցի՝ վերջ կովարարի իմ կարիերային:

Ընդամենը տասնհինգ-տասնվեց տարեկան էի, բայց հասկացա, որ եթե երկայնահասակ, հսկա, կապուտաչյա, շեկ մի տղա շեւ, այլ ընդհակառակը՝ փոքր ես, թուխ, միհարիկ, այնպիսի քրթով, որը կարող է մի ամբողջ որբանոց խնչեցնել, պետք է անվանի լինես, եթե ուզում ես դուր գալ կանանց:

Այստեղ մի փոքրիկ դեր, այնտեղ կինոնկարահանում մասսայական տեսարաններում. այսպես կամաց-կամաց օրվա հացն եմ վաստակում: Ամեն երեկո ընթրիքի ժամին զզվեցնում եմ ծնողներիս ու լացակումամ աւում.

— Ես ուզում եմ դերասանություն սովորել, պարել ու երգել սովորել:

Մերունք ցանկություն ունեին, բայց փող չունեին, ուստի հայրըս ինձ բավարարելու համար դիմեց մի հարուստ հայի, խնդրելով թոշակ նշանակել ինձ:

— Թոշակ արտիստի համա՞ր... Դուք խելագարվե՞լ եք, ի՞նչ է... Դա սագական չէ հային: Մեր ազգը ծնված է արհեստի կամ առևտրի համար: Եթե ձեր տղան համաձայն է լուրջ ուսում առնել, ես պատրաստ եմ նրան օգնել: Բայց եթե համառի «սոված արտիստ» դառնալու իր որոշման մեջ, ոչ մի սու չեք ստանա:

Ծնողներս ենթարկվեցին, մտածելով, որ վերջին հաշվով վատ չէր լինի, եթե մի արհեստ ձեռք բերեմ: Եվ այսպես, զրկվելով թոշակից, մի առավոտ ներկայացա կենտրոնական արհեստավորական դպրոց, որտեղ սկսեցի բարեխղճությամբ, բայց զզվանքով աշխատել:

Աիդան սիրով օգնության էր հասնում ինձ: Նա վարպետու-  
թյամբ կեղծում էր ծնողներին անուագիրը ու մի երկտող գրում  
դպրոցի դիրեկցիային, խնդրելով բաց թողնել ինձ: Ես նրան ըն-  
կերակցում էի «Տեսար դը վարիետետում», ուր դասընթացներ էր  
աւանդում ու խաղում Ժան Տիսսիեի հետ, կամ շանսոնյեի կարարե-  
ներում, ուր խաղում էր Ռեմոն Սուպլեքսի հետ:

Անհիծում էի թոշակն ու արհեստավորական դպրոցը և մտա-  
ծում, թե ո՞վ է փրկելու ինձ:

Այս գործը իրենց վրա վերցրին գերմանական բանակները:

1939 թվական: Պատերազմ: Թերթերն այդ մասին են գրում: Ռադիոն ծանրաբարո է: Մարդիկ միանգամից փոխվել են: Բողոքը մի տեսակ ճզմված տեսք ունեն:

Խանութների առաջ հերթեր գոյացան: Ոչ մի բանի պակաս չենք զգում, բաց լուրեր են շրջում, որ շուտով յուզը, շաքարը, սուրճն ու մյուս մթերքները կտրվեն միայն քարտերով:

Մայրս, հայրս, Աիդան ու ես պատուհանների ապակիները կապույտ ներկեցինք: Հեռավոր պայթյուններից ապակիների ամբողջունը ապահովելու համար խաչաձև թերթեր կպցրեցինք: Ռուսացողական ահազանգերը լսելուն պես ներխուժում էինք նկուղները, որ սկսվեց մի հետաքրքիր կոլեկտիվ կյանք:

Ամենուրեք գերմանացիների գազանությունների մասին են խոսում.

— Ասում են, որ գերմանացիք փոքր երեխաների ձեռքերը կտրում են, որպեսզի նրանք հետագայում չկարողանան գեներ քարձրացնել:

— Ասում են, որ «Սենկիեմ կոլոններ» ամեն տեղ լրտեսներ ունի:

Իրար կասկածանքով ենք մայրս: Գուցե այդ լրտեսներից մեկը այստեղ է, մեր մեջ, այս նկուղում: Ապաստարանի պատին կպցրած հայտարարությունը ազդարարում է. «Լոկեցեք, զգուշացեք, թշնամու ականջները ձեզ են լսում»: Լոում ենք, զգուշանում. օդը լի է կասկածանքով:

Փողոցից եկող ամենաչնչին աղմուկի դեպքում անգամ մեկը, որ իրեն գիտակ է համարում, ասում է.

— Տվին: Իմ կարծիքով «Լա Ծապելը» կամ «Հալ-օ-Վենը»<sup>\*</sup> նմբակոծեցին:

— Ձե, չե, հուսով եմ, որ «Հալ-օ-Վենին» չի կայել, — ասում է եղևակի նման կարմիր քթով մի մարդ:

Մեկ ուրիշ անգամ մի կին ներս վազելով թղավում է:

— Գա՛գ... գազի ոռոմբեր բաց թողեցին:

Բոլորը նետվեցին դեպի իրենց հակազազերը: Հանկարծ կանանցից մեկը սկսեց լաց լինել:

— Ես հակազազ չունեմ, ի՞նչ կլինի իմ վիճակը:

Մեկը ինքնավստահ ասաց.

— Ոչինչ, ձեզ մի կոտորեք: Ես կդասավորեմ: 14-ի պատերազմի մասնակից եմ: Այդ բոլորն ինձ ծանոթ է:

Մի մեծ կտոր բամբակ հանեց պայուսակից ու մեկնեց թըշվառ կնոջը.

— Վերցրեք սա, պինդ հպեք ձեր քթին ու էլ վախժեճադու բան չունեք:

Մի օր տուն վերադառնալով, կես-հպարտ, կես-վշտոտ ձայնով հայրս ասաց.

— Հավաքագրվեցի:

Բոլորիս աչքերին արցունքներ երևացին, նույնիսկ հորս:

— Ինչո՞ւ արեցիր այդ, — հարցրեց Աիդան:

— Քեզ ո՞վ էր խնդրում, — ասաց մայրս:

— Ոչ ոք, ճիշտ է, բայց այս երկիրը լավ վերաբերվեց մեզ: Միտով ընդունեց և ապրելու հնարավորություն տվեց: Գլխներիս վրա ծածկ ունեմք, երեխաները դպրոց են գնում... Դժվար ժամանակներին է, որ պետք է երախտահատույց լինենք մեր նոր հայրենիքին: Բացի այդ, ես կամաչեի առոք-փառոք ման գալ մի քաղաքում, որտեղ ոչ մի տղամարդ չի մնացել:

Ու մի օր էլ կեսօրից հետո ծանուցագիր եկավ: Բոլորս իրար անցանք: Հայրս հավաքեց ճամպրուկն ու վերցրեց իր գործիքը. աստերազմ լինեք, թե չլինեք, միևնույնն է, նա չէր ուզում բաժանվել իր թառից:

Գորշ ու ճնշող մի երեկո մենք նրան ճանապարհ դրինք մինչև կայարան:

Գնացքը վաղուց էր անհետացել, իսկ մենք դեռ կանգնած էինք լուռ, անշարժ, շքմած:

Թեպետ Ֆրանսիայում էի ծնվել ու մինչ այդ երբեք ինձ օ-

\* Գինու մառաններ:

տար չէի զգացել, բայց այդ օրը ստաջին անգամ զգացի, թե ինչ  
բան է գաղթական լինելը:

**Պատերազմի մանուկները**

**Արյան, քարի ու երկաթի տարիք ունեն:**

**Մանուկներ չեն նրանք բնավ.**

**Նրանք աչք են բացել**

**Մոր արցունքոտ հայացքի տակ:**

Ապրում ենք առանց հայրիկի, աչքներս փոստատարի ճամ-  
փին: Վերջապես լուր ստացանք:

Հայրս լավ է, նամակները հանգատացնում են մեզ: Ստեպ-  
ֆորդը օտարազգի զինվորների հավաքակալան է: Այստեղ կան  
հրեաներ, ռուսներ, ռումինացիներ, հույներ և հայեր: Հայրս որ-  
պես շեֆ-խոհարար աշխատում է խոհանոցում: Իմանալով, որ  
զինվորները մեծ մասամբ արևելքից են, սովորական խառնակե-  
րի փոխարեն, հուրախություն բոլորի, պատրաստում է մի քիչ  
հրեական, մի քիչ ռուսական, մի քիչ էլ հայկական ճաշեր: Իսկ  
երեկոները այս երեք ժողովուրդների երգերն է նվագում թառի  
վրա ու երգում: ❖

Պետք է ասել, որ հայրս շատ ընդունակ է լեզուների հար-  
ցում: Նա կատարելապես տիրապետում է ռուսերենին, վրացերե-  
նին: Բավականին լավ է արտահայտվում թուրքերենով ու հունա-  
րենով: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս նրան զը-  
րուցել օտարազգի զինվորների հետ, որոնք հորս հետ խոսելիս  
իրենց մի տեսակ տանն են զգում:

— Ո՞ր ես գնում, Ծարլ,— ասաց մայրս:

— Աշխատելու:

Գնացի մի կապոց թերթ վերցրեցի, որը պետք է վաճառեի  
փողոցներում վազվզելով ու «Էնտրա՛ն» աղաղակելով, քանի որ  
ո՛չ ծախելու հատուկ նշան ունեի, ո՛չ էլ կրպակ:

— Գնեցե՛ք «Էնտրա՛ն»... վերջին լուրեր...

Ձայնս կատարելապես համընկնում էր իմ աշխատանքին:  
Երթուղին միշտ նույնն էր: Մինչև տեղ էի հասնում, հիմնակա-  
նում բոլոր թերթերը վաճառված էին լինում: Հաջորդ կապոցը  
վերցնելու համար կախվում էի բեռնատար մեքենաներից ու ըն-  
թացքից ցած թռչում այնտեղ, որտեղ ինձ պետք էր: Թերթերի  
նոր կապոցը լռելիս տակ, նորից ճամփա էի ընկնում: Սուկալի  
հոգնեցուցիչ աշխատանք էր, բայց այն միտքը, որ իմ ուժերով

Էի վաստակում օրվա հացը և օգնում մորս, ինձ բավականություն  
էր պատճառում: Բացի այդ, թերթ վաճառելիս երազում էի թատ-  
րոնի, արտիստների մասին: Երբեմն հանդիպում էի նրանց ու  
աշխատում թերթ վաճառել:

Ժորժ 5 պողոտայի և «Ծանգելիզեի» անկյունում, երես առ  
երես, հանդիպեցի զինվորականի հագուստ հագած իմ սիրած  
երգիչներից մեկին, որի ձայնադասկներից բավականին մեծ քա-  
նակությամբ ունեի տանը: Նրան մեկնեցի մի լրագիր ու թղթի մի  
կտոր, ինքնագրի համար: Վերցրեց լրագիրը, ստորագրեց թղթի  
վրա ու ձեռքը տարավ գրպանը: Ես նրան կանգնեցրի:

— Ո՛չ: Լրագիրը նվիրում եմ ձեզ:

— Ինչո՞ւ:

— Որովհետև շատ եմ ուզում:

— Իսկ ես շատ եմ ուզում վճարել: Ու քանի որ ես տարի-  
քով ավելի մեծ եմ, դու պետք է լսես ինձ:

Լրագիրն արժեք 25 սանտիմ, նա ինձ տվեց 50:

— Բոլորը թեզ, — ասաց:

Երկար պահեցի ինքնագիրը, որը, սակայն, հաճախակի տե-  
ղափոխումներից մեկի ժամանակ կորցրեցի:

Մեկնակիս պատին հսկայական մի քարտեզ փակցրեցի: Զին-  
վորական գործողությունների զարգացման համաձայն ամեն օր  
փոքրիկ դրոշակներ էի ամրացնում վրան: Ըստ լրագրերի, ռազ-  
մաճակատում ամեն ինչ լավ էր. «Կհաղթենք, որովհետև մենք ա-  
վելի ուժեղ ենք», — ասում էին թերթերը:

Ռադիոն նույնպես լավատես էր: Բայց ինձ հասնող լուրերը  
բոլորովին էլ մխիթարական չէին: Սննդի մատակարարումը հե-  
տըզհետե վատանում էր, խանութները փակվում էին, զգույշ մար-  
դիկ նույնիսկ հեռանում էին մայրաքաղաքից: Նրանց «պարտվո-  
ղականներ» էին անվանում:

Մենք մնացինք: Այդպես էր հրամայել հայրս իր վերջին նա-  
մակում. «Ինչ էլ ասեն կամ անեն հարևանները, տեղից չշարժ-  
վեք»: Սա նրա վերջին նամակն էր, որից հետո Փարիզի փոստա-  
լին կապը խզվեց: Կառավարությունը Փարիզից հեռացավ ու  
համընդհանուր գաղթը սկսվեց:

Աշխատանք չունեմ, ընտանիքի խնայողություններն էլ գնա-  
լով սպառվում են: Մի բան գիտեմ միայն, որ գերմանացիք հսկա-  
յի քայլերով առաջ են շարժվում ու ճանապարհին սրբում են այն  
ամեն լավը, ինչ կարելի է ուտել:

— Այդ խոզերը գծվում են օժանելիքի, գուրպաների և շոկո-  
լադի համար, — հարևանուհին ասել էր մորս:



Մի քիչ փող ունեի պահած: Առանց ժամանակ կորցնելու վազեցի, մեծ քանակությամբ շոկոլադ գնեցի: Ըստ որում, դիտավորյալ մեծ՝ 250 գրամանոցներից չվերցրի, այլ բարակներից, որոնք ծածկված էին ստվարաթղթի հաստ շերտով ու պահեցի տանը: Համենայն դեպս...

Հասարակական տրանսպորտը խափանված էր. ովքեր փախչում էին Փարիզից, երկաթգծի կայարաններն էին սլանում հեծանիվներով, տեղում թողնում էին հեծանիվներն ու իրերով քեռնավորված, աննկարագրելի իրարանցման ու սարսափի մեջ գընացքներն էին ներխուժում:

Փողոցով մեկ բղավում են Մոնտոլոն հրապարակի ընկեր տղաները.

— Հե՛յ, Ծարդ, գալի՛ս էս գնանք հեծանիվ հավաքենք:

— Գալի՛ս եմ:

Հարյուրավոր ու հարյուրավոր հեծանիվներ խառնիխուռն իրար վրա թափված փայլիլում են արևի տակ: Մոտ քառասուն հեծանիվ բերինք ու պահեցինք վստահելի մի ընկերոջ ծածկարանում՝ համենայն դեպս...

Մեկ ուրիշը առաջարկեց ընկերովի էժանագին օժանելիք գընել:

— Որքան գարշահոտ ու զզվելի լինեն օժանելիքները, այնքան ավելի դուր կգան «դրանց», — ասաց նա:

Գնեցինք, պահեցինք՝ համենայն դեպս...

Մի գեղեցիկ առավոտ Փարիզը նման էր մեռած քաղաքի: Տների պատուհանները փակ են, խանութների փեղկերը՝ իջեցրած: Սալոնների ու մոտոցիկլետների աղմուկով գերմանացիք Փարիզ են մտնում: Փարիզեցիք փակ պատուհանների ճեղքերից հետևում են նրանց: Սակավաթիվ մարդկանց հետ էս դրսում եմ:

...Չորսով նստած ենք մետրոյի պատի վրա:

— Ի՛նչ անենք, — հարցրեց մեկը:

— Հեծանիվները ծախենք, — ասացի ես:

— Այո, բայց ադ վիճակում ծախել չենք կարող. ժանգոտած, փոսած կլինեն: Հարկավոր է վերանորոգել, տեսքի բերել: Ու այդ պետք է անենք կազմակերպված:

Հավաքվեցինք բակում լքված ինչ-որ փայտաշեն տնակի մեջ ու սկսեցինք աշխատել: Մեկն սկսեց զբաղվել մեխանիկական վերանորոգումներով, մյուսը՝ անիվներով, մի երրորդը՝ գունավոր, այք շոյող ծապավեններ փաթաթեց հեծանիվների դեկերին, իսկ ես ծանգն էի քերում:

Աշխատանքներն ավարտվեցին: Մեր հեծանիվները կարգին շնորհի եկան: Սկզբում ոչ ոք չէր ուզում գնել, բայց որոշ ժամանակ անց սկսեցին իրար ձեռքից խլել: Նախատեսած պիտի լինեինք այդ ու սպասեինք: Զահել էինք... Առաջին հեծանիվը ծախեցինք յոթ ֆրանկով, ամենաթանկը վաճառեցինք տասնհինգով... Համաձայն եմ, այդ հեծանիվները փողով չէինք անել, բայց այդքան աշխատանքը... Մեր օգուտը ծիծաղելի էր: Հենց որ ծախեցինք վերջին հեծանիվը, իրար ձեռք սեղմեցինք ու.

— Փայլուն օրերն անցան, տղանե՛ր...

Վատ ժամանակներ են սպասում մեզ:

Մի երեկո դուռը թակեցին: Ահդան բաց արեց դուռն ու ճչաց: Ամբողջովին մազակալված դեմքով, երկու զինվորական պայուսակ ուսերին զցած, թառը ձեռքին, ներս մտավ հայրս, նայեց մեզ ու ասաց.

— Փա՛նք աստծո: Ահա ողջ և առողջ նորից միասին ենք:

Մի քանի ընկերների հետ փախել էր հե՛նց այն ժամանակ, երբ գերմանացիները արդեն պաշարել էին իրենց գումարտակը:

— Ցերեկները թաքնվում էինք, գիշերները՝ քայլում: Քնում էինք հնձաններում ու սնվում հատապտուղներով: Երբեմն գյուղացիք խղճահարվում էին ու մի աման ապուր տալիս: Մարդիկ մեզ քաղաքացիական զգեստներ տվին: Մի ամբողջ ամիս քայլել եմ, ոտքերս ամբողջովին կոշտուկներով են պատած: Բայց ոչինչ, ահա նորից ձեզ հետ եմ ու շնորհակալ եմ աստծուց, որ խնայեց ինձ: Դու՛ք ո՞նց եք:

— Դժվար ժամանակներ են,— հոգոց համեց մայրս,— բայց մեզանից դժբախտներն էլ կան: Ծարլը մեզ շատ օգնեց: Մի խոսքով, վատ չենք, Միշա:

— Իսկ դո՞ւ, — հարցրեց հայրս:

Ես նրան բացատրեցի, որ ապրելու ձևը գտել եմ: Նա գոհունակությամբ թափ տվեց գլուխը, թիթիացրեց ուսիս ու ասաց:

— Լավ է, Ծարլ, շատ լավ է:

Աղքատիկ ընթրիքից հետո հարցրեց.

— Լուսաբողարկումը ո՞ր ժամին է:

— Երկու ժամից, Միշա:

— Լավ: Ժամանակ ունեմ զգեստներս փոխելու ու բարեկամներիս տեսնելու:

Հայրս սափրվեց, լվացվեց ու շորերը փոխեց: Առաջվա պես քթի տակ մեղմ երգում էր: Կարծես պատերազմ չկար: Կարծես

բացակայել էր ոչ թե վեց ամիս, այլ ընդամենը մի քանի ժամ: Կարծես ինքը չէր ապրել դժոխային այդ նահանջը:

Մի օր էլ՝ թե՛.

— Աշխատանք ճարեցի: Աշխատելու եմ Րաֆֆի փողոցում գտնվող հայկական ռեստորանում որպես մետրոօտել:

— Աստված իմ, ի՛նչ բախտավոր եմք, — բացականչեց մայրըս:

Մեր ընտանեկան կյանքը մտնում է իր նախկին հունի մեջ: Թեպետ առաջվա նման ամենատարրական պահանջները բավարարելու փող չունենք, սակայն դժբախտ չենք. միասին ենք, ունենք բարեկամներ և հույսեր:

Այդ սուղ պայմաններում համեղ ճաշ պատրաստելու համար մայրս խոհարարական վարպետության հրաշքներ էր գործում: Օրինակ, ոսկորներից ոչ շատ յուղալի, բայց տաք ապուր էր պատրաստում, կողքին կարտոֆիլի սալաթ՝ համեմված քացախով ու սոյալի յուղով:

Հացի կտորների արանքը մի քիչ աղացած միս էր դնում, վրան մի քիչ տաքդեղ ու աղ ցանում, ու որպես խավարտ բարակ շերտերով կտրատած ճակնդեղ ու դեղին հաց մատուցում: Ամենակարևորը հացի խնդիրն էր. պետք է ուտեինք թարմ վիճակում, առանց ժամանակ կորցնելու, քանի որ հապաղելու դեպքում չորանում էր ու փոշի դառնում:

Երբեմն սեղան նստելիս նկատում էինք, որ մոռացել ենք հաց գնել, և դժբախտաբար տանն էլ ոչ մի սու չկա:

— Այդ թողեք ինձ վրա, — ասում էր հայրս:

Դուրս էր գալիս, վազում գինետուն, իր հայ բարեկամների մոտ, գրուցում նրանց հետ, ինչ-որ զվարճալի բաներ պատմում ու նրանցից մեկին ճաշի էր հրավիրում: Մանապարհին հանկարծ ձեռքը խփում էր ճակատին ու ասում.

— Հացի փող չեմ վերցրել, սատանան տանի:

— Ոչինչ, Միշա, — ասում էր հրավիրվածը, — ես կգնեմ:

— Ծնորհակալություն, հագար անգամ շնորհակալություն: Ահա մեր հացի գրքույկը:

...Ապրում էինք Լաֆայետ փողոցում: Տուն մտնելուց ու դուրս գալուց պարտադիր կերպով անցնում էինք ինչ-որ գարածի միջով, որտեղ աշխատող չկար, քանի որ քաղաքում մեքենա չէր մնացել:

Երբեմն ինչ-որ մեքենայի երջանիկ տեր գալիս էր վերանորոգելու կամ փոխելու մեքենայի անիվը: Տեղն ու տեղը կառչում էին այդ հնարավորությունից ու գարածում թափված գործիքներով վերանորոգում մեքենան ու մի քիչ փող աշխատում:

Բայց հայրս որոշեց տեղափոխվել:

— Տունը փտած է ու վտանգավոր: Օրերից մի օր գլխներիս փուլ կգա ու կճզմի մեզ:

Հայրս իրավացի էր: Ամեն տեսակի միջատներ էին վխտում մեր տանը: Որոշ սենյակներում ճեղքերն այնքան մեծ էին, որ դրանց միջով երեխայի գլուխ կարող էր անցնել:

Բոլորս միասին սկսում ենք նոր բնակարան փնտրել: Ի վերջո գտանք այն, ինչ պետք էր մեզ: Չորսսենյականոց մի բնակարան էր դա երրորդ հարկում, սենյակներից երեքը բավականին ընդարձակ էին, իսկ չորրորդը՝ փոքր: Թայթս դրի այս վերջինի վրա:

Սենյակները մույթ էին, բայց պատերն ամուր էին: Մեզ համար կարևորն էլ այդ էր: Մոռացա ասել, որ բնակարանն ուներ նաև նկուղ: Ածուխ չունեինք, նկուղում էինք տեղավորում այն անպետք իրերը, որ Ազնավուրյանները, ինչպես հարավի բոլոր մարդիկ, քարշ են տալիս իրենց հետ, մտածելով, «կարող է մի օր պետք գալ»: Իհարկե, ոչ մի բանի էլ պետք չէր գալիս: Նկուղներում փտում, քայքայվում էին այն իրերը, որոնք ժամանակին կարելի էր ծախել:

Ամեն ինչին մարդ ընտելանում է, նույնիսկ օկուպացիային: Աստիճանաբար Փարիզն սկսեց մի նոր կյանք:

Ամեն ինչ այնքան անսպասելի էր. քնեցինք «ավելի ուժեղ լինելու» գիտակցությամբ, իսկ առավոտյան վեր կացանք պարտված, հաղթողի կրունկի տակ:

Մոնպառնասի մի կաբարեից տասնհինգ օրվա պայմանագիր պոկեցի: Իսկական ժամանակն էր, քանի որ ոչ մի սու չունեի: Պայմանագիրը գրպանումս վազեցի Փարիզի «kommandatur»-ը՝ անցաթուղթ ձեռք բերելու, առանց որի լուսաքողարկումից հետո չէի կարող ազատ շրջել:

Առաջին օրը ինձ կուխներում տեսնելով, ռեժիսորը քիչ մը-նաց ուշաթափվեք:

— Հուսով եմ, մտադրություն չունեք բեմ բարձրանալ այս տեսքով:

— Ինչո՞ւ չէ:

— Դուք դեռ հարցնո՞ւմ եք: Սա պերճաշուք կաբարե է, սիրելիս, գիճեսուն չէ:

Այդ ասելիս նա գրեթե խեղդվում էր: Ծառ տաքարյուն մարդ էր:

— Մի՞ զայրացեք, հագնելու ուրիշ բան չունեմ: Ամեն դեպքում ավելի լավ է այսպես, քան մերկ:

Հանդերձարանս շատ էր աղքատիկ: Օկուպացիայի տարիներին ունեի ընդամենը մուգ կարմրագույն մի սվիտեր, աննկարագրելի կտորից կարված մուգ դեղին գույնի մի տաբատ ու մի զուգ սանդալ, որոնք հագնում էի առանց գուլպայի. ում էր պետք ավելորդ շքեղությունը: Հարկավոր էր խնայել գուլպաները: Այսպես հագնված լավ էի զգում ինձ: Սա գուցե նուրբ ճաշակի արտահայտություն չէր, բայց ինչ-որ տեղ առաջադեմ արտիստ էի երևակայում ինձ:

Ներկայացումը ուշ էր վերջանում: Մետրոն չէր աշխատում, իսկ «հեծանիվ-տաքսիի» մասին խոսք անգամ լինել չէր կարող, քանի որ բոլորովին սնանկ էի:

<sup>1</sup> Պարետատուն (գերմ.):

Այդ տխուր, դժվար ու տանջալից շրջանումն էր, որ ես գրեթե իրականացրի մանկությանս երազներից մեկը: Տնից կարարե, կարարեից տուն գնում էի անիվավոր շմուշկներով: Եթե այսօր իմ սրունքները մկանուտ են ու ջլապինդ, շմուշկներին եմ պարտական: Ես «շմուշկ-մարդ» էի դարձել:

Մոնպառնասից մեր տուն բավականին երկար ճանապարհ էր: Առաջին օրը կարարեից դուրս եկա գիշերվա ժամը երկուսին: Վաստակած չնչին գումարը գրպանումս, շմուշկներով արագ սահելով տուն սլացա: Ծանապարհին մեծ ճարպկությամբ վիրածներ էի անում, նազանքով մի կողմ էի թեքում մարմինս ու մատներս գետնին հպելով շրջադարձեր էի անում: Այսպես անցա մի փողոց, երկրորդը... Օդային մի ջերմ համբույր ուղարկելով Ժաննա դ'Արկի արձանին, պատրաստվում էի շուռ գալ դեպի հաջորդ փողոցը, երբ ձիերի սմբակների աղմուկը խլացրեց սեփական աղմուկս: Ետ նայեցի այն ժամանակ, երբ մի ձայն թնդաց.

— Halt<sup>1</sup>!

Վայրկենապես անշարժացա: Գիժ հո չե՞մ... Ես չէի ուզում գնդակների մի համազարկ ստանալ հետույքիս: Սմբակների աղմուկը աստիճանաբար մոտեցավ: Գիշերային մի պահակախումբ էր, որի ուշադրությունն էր գրավել ու միապաղաղ ծառայությունից դուրս բերել հնամաշ շմուշկներին աղմուկը:

Մի վայրկյանում ինձ շրջապատեցին սաղավարտներով, կրծքները պսպղան մետաղներով ծածկված, մինչև ատամները զինված, շնչահեղձ մարդկանց սովերներ, որոնք կոնյակի շեր էին հիշեցնում: Գրպանի լապտերը ոտից գլուխ լուսավորեց ինձ, ու ես լսեցի զարմանք արտահայտող բացականչություններ:

Իմ կերպարանքը չէր կարող չզվարճացնել Յ-րդ ուսյիսի զինվորներին: Պատկերացրեք՝ պատլիկ մի մարդ, ոտքերին անիվավոր շմուշկներ, գլխին բրդյա մի դեղին գլխարկ, որի երկու ծայրերը գալիս խաչաձևվում էին փոքի վրա ու գնում միանում մեջքին: Դեմքին գրիմի հետքեր, թևատակին նոտաներ... Այս բոլորը մըտածելու առիթ էր տալիս:

— Was machen sie?<sup>2</sup>,— հարցրեց ֆելդֆերելը, որը ոչ մի կերպ ուշքի չէր գալիս:

— Arbeit... cabaret...<sup>3</sup>

— Ausweiss, bitte!<sup>4</sup>

<sup>1</sup> Կանգնի՛ր (գերմ.):

<sup>2</sup> Ի՞նչ գործ ես անում (գերմ.):

<sup>3</sup> Աշխատանք... Կարարե (գերմ.):

<sup>4</sup> Անցարժույթ, խնդրեմ (գերմ.):

— Ya.<sup>1</sup>

Ստուգեց անցաթուղթս: Մի քանի քայլ ետ գնաց: Զինվորները հետևեցին նրան: Պտտվեց շորս կողմս, գրպանի լապտերի լույսի ներ շերտով լուսավորեց ինձ... Ֆելդֆերելը փոթկաց, ու բոլորը միաբերան հոհոացին: Սպան գերմաներեն ինչ-որ բան ասաց, բոլորը ետ քաշվեցին, երկու ձեռքեր բռնեցին ուսերիցս և ուժգին հրեցին: Քիչ մնաց ընկնեի. «Չպետք է վայր ընկնել օկուպանտի առաջ», — ասացի ինքս ինձ ու արագ հեռացա: Ամեն գիշեր նույնն էր կրկնվում, մինչև որ, ի վերջո, մեր շրջակայքի բոլոր պահակախմբերը ինձ ճանաչեցին: Կարաբեի դիրեկցիան որոշեց երկարաձգել պայմանագիրս, բայց մոռացավ երկարացնել իմ «Ausweiss»-ը:

Մի անգամ, տուն վերադառնալիս, հանկարծ հիշեցի այդ մասին: Սուկայի վախը պատեց ինձ: Դա մի օրինազանցություն էր, որ կարող էր շատ թանկ նստել: Ծանապարհին հանդիպեցի մի պահակախմբի, երկրորդին, երրորդին: Բոլորն ինձ բարեկամական նշան արին: Ոմանք ծիծաղեցին: Բայց ոչ մեկն ինձ «ausweiss» չհարցրեց:

Մի օր էլ լսեցի, որ ինչ-որ ռեվյու է կազմակերպվում Ֆրանսիայով մեկ շրջելու համար: Գնացի ներկայացա:

— Ի՞նչ կարող ես անել,— հարցրեց պարոն Ժեյմսը:

— Երգում եմ, պարում, գիտեմ նաև դերասանություն անել:

— Լավ: Ներկայացեք դաշնակահար Ժան Կազընավին ու հետը մի թեթև փորձ արեք: Քիչ հետո ես ձեզ կլսեմ:

Ուրախ էի, որ այդտեղ բարեկամիս հանդիպեցի:

Ժան Կազընավին լավ գիտեի: Ինը տարեկան հասակում մասնակցում էի երեխաների տոնախմբությանը: Մայրս ինձ համար ունեյիք էր պատրաստել ու մի թերմոս տաք թեյ: Մեկնելուց առաջ, հենց կայարանում, մի սխալ շարժման պատճառով թերմոսս ջարդվեց: Իմ դժբախտությանը ոչ ոք ուշադրություն չդարձրեց, բացի Ժան Կազընավից, որը մոտեցավ ինձ ու ասաց.

— Հոգ չէ: Ես էլ թերմոս ունեմ, այն էլ բավականին մեծ: Երկուսիս էլ կհերիքի:

Մես հասնելուց հետո, որտեղ պետք է տեղի ունենար տոնախմբությունը, նրա թերմոսը նույն բախտին արժանացավ՝ ինչ իմը: Մենք էլ գնացինք դիմացի կայարանի ռեստորանը ու մի լավ ճաշեցինք:

Քննություն եմ տալիս:

Սրահից ինչ-որ մեկը բղավեց.

<sup>1</sup> Խնդրեմ (գերմ.):



— Ընդունված էք, դուրս եկեք:

Մեկ ուրիշն ասաց.

— Հաջորդը:

Մյուս օրը փորձերը սկսվեցին: Ես տեսա, որ ստացածս գումարի դիմաց աշխատանքս շատ-շատ է: Ծպտուն անգամ չհանեցի: Դրա ժամանակը չէր: Այդ օրերին պայմանագրերը շատ քիչ էին. ուրախ էի, որ կարողացել էի պոկել այդ ողորմելի պայմանագիրը: Գոնե անգործ չէի:

Ինքս ինձ ասացի.

«Մի օր վրեժ կլուծեմ այս բոլորի համար: Կգա օրը, երբ ի՛նքս նրանց պայմաններ կառաջարկեմ»: Ու բոլոր այդ տարիների ընթացքում, երբ ես ստիպված էի ընդունել նրանց ստորացուցիչ պայմանները, վայրկյան անգամ չմոռացա որոշումս: Ու նույնիսկ կարծում եմ, որ այդ դժվարություններն ու նվաստացումները, որոնց տակ կքեցի ապրելու, ուտելու համար, իմ մեջ կոփեցին ամեն գնով հաղթելու այդ ուժեղ կամքը:

Տրյուկների մի ամբողջ շարք էի կատարում այդ ռեվյուում:

Նախ սկսում եմ երգել, այնուհետև կատարում եմ ապաշակյան կատարողի մի պար, հետո խմբի «աստղի» հետ մեկ ուրիշ ակրոբատիկ պար, որին հաջորդում է կոմիկականի հավակնություն ունեցող երկու սկետչ: Հետո գալիս է ներկայացման «մեխը»՝ վազքով մտնում եմ բեմ, արագ-արագ մի քառյակ եմ երգում ու ներկայացնում...

Այո, ուտել էր պետք: Մեր միակ հոգսը մի բան գտնելն էր, որ զցեինք ատամներիս տակ, դատարկությունից փոքրացած, կույ եկած մեր ստամոքսը հանդարտեցնելու համար:

Ծուտով մեկս մյուսի վրա լցվեցինք «ապամայով» հիվանդ մի գնացք, որը կդանդաղի յուրաքանչյուր կամրջից առաջ և երկար կանգ կառնի յուրաքանչյուր կայարանում ու հաճախ ժամերով «կլովի» ինչ-որ դաշտում:

Հյուրախաղերի ենք մեկնում: Առաջին քաղաքը Սեդանն է:

Ճամպրուկս տրաքվելու չափ լիքն է: Մեկնում եմ: Մի լավ գրքկելուց ու համբուրելուց հետո մայրս գործի դրեց հայկական մի հին սովորույթ. մի բանի վայրկյան լուռ նստեցինք, հետո նա վեր կացավ ու բաց արեց դուռը: Հայկական սովորույթը պահանջում է՝ եթե անգամ ինչ-որ բան ես մոռացել, նամսից ետ չդառնաս:

Սանդուղքներից վայր եմ իջնում: Ու մինչ յուրաքանչյուր քայլ կհետացնի ինձ տնից, գիտեմ, որ հիմա մայրս մի բաժակ ջուր ձեռքին բաց կանի պատուհանը ու երբ արդեն փողոցում կլինեմ, ետևիցս կթափի բաժակի պարունակությունն ու կասի.

«Ջրի նման գնաս, ջրի նման ետ գաս»:

**Վատարելության հասած հանճարի գլուխգործոցը  
Մեր վերացական մտքի խելահեղ մարմնավորումն է:  
Յտվերներից ու լույսից է կազմված  
Այդ ցավը, որ մեզ անհրաժեշտ է:**

Տղամարդկանց մտքերը հաճախ արտասովոր, ցնորական, ելևէջող, անկայուն են լինում: Դա բնավորության ու երևակայության խնդիր է: Բայց նրանց միտքը կայուն է, անփոփոխ, հալածող, երբ խոսքը կանանց է վերաբերում:

Ինչպես ասացի, «Ռեվյու» ընդունվելուս առաջին օրը հանդիպեցի հին ընկերներիցս մեկին՝ Ժան Կազընավին, որ երաժիշտների ղեկավարն էր: Ժանն ու ես փորձերի ամբողջ ընթացքում միացյալ ուժերով փորձեցինք գայթակղել մեր խմբում պարող երկու քույրերին: Մեր հմայիչ ժպիտներին նրանք պատասխանում էին սիրալիրությամբ, բայց արդյունք չկար: Մի օր, ընդամենը, Ժանի հետ արճարան վազեցինք մի բաժակ սուրճ կուլ տալու, եթե, իհարկե, ինչ-որ խոտի ու չգիտեմ էլ ինչ գարշելի բանի այդ խառնուրդը կարելի էր սուրճ համարել: Փուլ եկանք գինետան նստարանին ու սկսեցինք աչքով անցկացնել մոխրամանները, հուսով, որ ինչ-որ մեկը ծխախոտի մնացորդներ թողած կլինի:

— Գիտե՞ս, Ժան...

— Ի՞նչ:

— Ինձ թվում է՝ ոչինչ չի ստացվի: Աղջիկները բավականաչափ պինդ են երևում:

Ժանը մի կու՛մ սուրճ խմեց ու դեմքը ծամածոեց: Նա լավ սուրճի սիրահար էր, իսկ այն, որ օկուպացիայի ժամանակ էին տալիս մեզ, կարող էր խառնել ամենապինդ մարդու սիրտն անգամ:

— Հնձելու համար պետք է ցանել, —ասաց Ժանը, —պետք է օգտակարը զուգակցել հաճելիին:

— Ասացվածքի համար՝ բրավո, — ասացի ես, — հետո՞:

— Այդ թող ինձ վրա ու հավատա: Դու շատ ես երկչոտ:

Ծպտուն չհանեցի: Ժանը իրավացի էր: Նա ճիշտ էր ասում: Ես շատ երկչոտ էի կանանց հետ, քաղցր-մեղցր, անարդյունավետ: Ասեմք հիմա էլ մի բան չեմ:

Սեդանում առաջին ներկայացումից հետո, որը տվինք պրովինցիայում, Ժանը գործի դրեց իր գիտելիքներն ու արագ և արդյունավետ սիրաբանության մի դաս տվեց ինձ: Չեմ կարող հիշել, թե ինչպես մի օր Ժանը այնպես դասավորեց, որ ես, ինքը ու նրանք՝ չորսով հանդիպեցինք փողոցում: Դեմ-դիմաց կանգնած ենք ու լուռ իրար ենք զննում: Ես անհարմար եմ զգում ու մի ոտքից մյուսն եմ ճոճվում: Սա այն վիճակներից է, երբ մի անհաջող բառ կարող է կործանել, ջուրը նետել երկար ամիսների աշխատանքը: Ուզում եմ փայլել: Մտքովս անց եմ կացնում այն երկար ու անկապ նախադասությունները, որոնք երկչոտներն են օգտագործում վճռական պահն անսահմանորեն երկարաձգելու համար: Մինչ ես բառեր էի փնտրում, Ժանն հանկարծ դիմելով նրանց ասաց.

— Ի՞նչ ենք անում:

Սուկալի լուսություն տիրեց: Աղջիկները աչքները խոնարհեցին: Ես շանթահարված եմ: Մտքումս մեղադրում եմ Ժանին այսքան կտրուկ լինելու համար ու մտածում, որ ամեն ինչ կորած է:

Մենք ապրում ենք նույն խղճուկ հյուրանոցում, որտեղ միմահճակալանոց սենյակ են վարձել աղջիկները: Խնայողության նկատառումներով նույն բանն արել էինք մենք՝ ես ու Ժանը, քանի որ հյուրախաղերից ստացած փողը հազիվ մեր ապրուստին էր հերիքում: Ուրիշ էլք չկա, եթե ուզում ես փող խնայել, պետք է սրբես, քերես ամեն ինչ, ինչպես շունը՝ ոսկորը:

Ցուրտն ինձ համարձակ է դարձնում: Սեդանում ձմռան գիշերները շատ ցուրտ են: Այդ ցրտին դիմանալու համար պետք է բնիկ լինես, ըստ որում, բնիկ պետք է լինեն նաև քո նախնիները: Չեմ սիրում ցուրտը: Ես շատ նիհար եմ ու հենց որ ցուրտն անցնում է մաշկիս տակ, իսկույն նեթ խրվում է ոսկորներիս մեջ ու մասմաս անում, քայքայում, սպանում է ինձ: Մայթի վրա կանգնած դողում եմ թշվառականի պես: Քիթս ու ականջներս կարմրած են, աչքերս փոս են ընկել, շրթներս կապտած են... Հանկարծ վճռականությամբ բռնեցի քույրերից մեծի ձեռքը, որի անունը Քրիս-

տինա էր: Կյանքումս առաջին անգամ ոհսկ էի անում գործ ունե-  
նալ մի աղջկա հետ, որն ինձանից մի գլուխ բարձր էր: Յրտից  
դողդողալով. «Ոչինչ, ավելի տաք կլինի»,— ասացի ինքս ինձ:  
Ժանը մի պահ իմ համարձակությունից զարմացած իր հերթին  
բռնեց փոքր քրոջ թևը: Ես ու Քրիստինան առջևից, ժանն ու իր  
հաղթանակը ետևից, անխոս, մտքում աղոթելով, որ ամեն ինչ  
բարեհաջող ստացվի, շարժվեցինք դեպի հյուրանոց:

Ամեն ինչ բարեհաջող էր: Գիշերային պահակը առանց ինձ  
նայելու տվեց մեր սենյակի բանալին, ժանը վերցրեց աղջկաների-  
նր: Ես աղջկաս հետ փակվեցի իմ սենյակում, ժանն իր աղջկա  
հետ՝ մյուս սենյակում:

Այդ գիշերվանից մեր ռեվյուում երկու երջանիկ զույգ կար:  
Առաջին անգամն էր, որ կնոջ հետ ապրում էի նույն հարկի տակ,  
ու այդ ինձ համար չափազանց հուզիչ, նոր ու գեղեցիկ էր: Նա  
իմն էր, մենք աիրում էինք իրար: Մեր վաստակած փողը միաց-  
նում էինք, ամեն մեկս մի փոքր գումար վերցնում, ուղարկում մեր  
ծնողներին: Թեպետ ապրում էինք առանց ամուսնական կապի,  
սակայն մնում էինք երկու լավ երեխաներ:

Մեր ռեվյուի մերկ կանանց համարի պատճառով օկուպանտ-  
ները հաճախ արգելում էին ներկայացումները:

Ես փոքր եմ, բայց քիթս մեծ է ու այնքան երկար և կեռ, որ  
երբ ցած եմ նայում, քիթս եմ միայն տեսնում, մի քիթ, որ պահա-  
ծողի բացիչի տեսք ունի: Մի քիթ, որը հասկապես օկուպանտների  
ուշադրությունն էր գրավում: Նրանք ինձ հրեայի տեղ էին դնում:  
Գրեթե յուրաքանչյուր քաղաքում ինձ կանչում էին տեղական Kom-  
mandantur: Վաղ առավոտյան թակում էին հյուրանոցի դուռը:  
Ընկերուհիս հորանջելով վեր էր կենում, բաց էր անում դուռը ու  
գինվորական համազգեստ տեսնելով, կանչում էր.

— Ծարլ, քթիդ համար եմ եկել:

Ու ամեն անգամ ինձ տալիս էին նույն հարցերը, որոնց մե-  
քենաբար գրեթե նույն պատասխաններն էի տալիս, թեպետ ամեն  
անգամ մի տեսակ դող էր անցնում մարմնովս:

— Որտե՞ղ եք ծնվել:

— Փարիզում:

— Իսկ ծնողները:

— Հայաստանում:

— Ach! հրեա՞ եք (հարցաքննողի հայացքը ուղղված է քր-  
թիս):

— Ոչ, ոչ, ամենևին:

— Ach!, ո՞րն է ձեր կրոնը:

— Հայ լուսավորչականը:

— Փաստեր ունե՞ք:

— Միակը: Ահա՛:

Ես մեկնում եմ նրան Փարիզի հայկական եկեղեցու կնուցի վկայականը, որ մայրս է ուղարկել ապահովության համար: Ինձ քաց էին թողնում, քաց շարունակում էին կասկածել ու երբեմն հարցաքննում էին մեր խնթի դերասաններին:

Հյուրանոցի սենյակը չի տաքացվում. պատերազմ է: Պատուհանների ապակիները ներսից սառցե քարակ ջերտ են կապել:

Ահավոր մղձավանջ է, նման եղանակներին անկողին մտնել այն ժամանակ, երբ սպիտակեղենը խոնավ է, սառած ու դուրս գալ անկողնուց, երբ դժվարությամբ ես տաքացրել, սարսափելի է: Սանտիմետր առ սանտիմետր առաջ ես սահեցնում նախ մի ոտքդ, ինտո զգուշությամբ՝ մյուսը: Վերջապես, ռիսկ ես անում շարժել ձեռքդ ու արմունկդ, իսկ մարմնիդ մնացած մասը կուշ եկած է, կծկված, ցրտի դեմ մի բուռ դարձած:

Սմեկ երեկո ձեռք եմ քաշում պարուհուս գայթակղելու որոշումից: Ես ոչնչով նման չեմ այն հնադրական տեսքով տղամարդ-գայթակղիչներին, որոնք պանկելուց առաջ իրենց աղջիկների հմայված հաչաքների ներքո ցուցադրում են իրենց լայն կուրծքը և ուռցնում թևերի ու տուքերի մկանները: Ես քնում եմ մորս հյուսած բրդյա լողավարտիքը հագին, ջարֆի մեջ փաթաթված, որից դուրս է ցցվում երկար, գունատ քիթս: Գիշերային գրամիս կատարւալ դարձնելու համար ձեռնոց ու բրդյա հաստ գուլպաներ եմ հագնում:

Սմեկ օր զարթնում եմ պարուհուս կպած, որի մեծ, տաք մարմինը այնքա՛ն եմ գնահատում:

Յուրաքանչյուր քաղաքում, ուր հյուրախաղերի եւնք մեկնում, մի ստատանջություն ունեմ՝ գտնել հասարակական բաղնիքը: Ժամպրուկս թողնում եմ հյուրանոցում ու պաւնում դեպի բաղնիքի երանելի տաքությունը: Ի՛նչ լավ է... Յնցուղի տակ մնում եմ այնքան, մինչև ինձ ուժով չեն հանում: Կես ժամից ավելի չի կարելի մնալ, ես մնում եմ այնքան, որքան կարողանում եմ: Դուրը թակում եմ, հրամայում եմ դուրս գալ, հաչհոչում եմ: Իսկ իմ պետքը

չէ: Մարմնիս բոլոր ծակոտիներով վայելում եմ վերածննդի ու թմրության այդ տարօրինակ հաճույքը:

Մի երեկո, ներկայացումից հետո, ժան Կազընավը թակեց մենչակիս դուռն ու առանց պատասխանի սպասելու ներս մտավ:

Վերմակն ուներիս գցած, ծալապատիկ նստած եմ Քրիստի-նայի կողքին ու միասին կրծում եմք փայտի նման չոր եգիպտացորենի հացի մի կտոր, որը ներկայացումից հետո երկրպագու-ներից մեկն էր նվիրել նրան:

Նայեցի ժանին ու իսկույն զգացի, որ նրա տրամադրությունը վատ է: Առանց մի բառ ասելու նստեց կողքս, տեղավորվեց վերմակիս տակ ու ասաց.

— Ես գնում եմ: Գնացքից վազում եմք ավտոբուս, ավտո-բուսից գնացք: Փորձերն ու ելույթները քայքայում են մեզ: Ինչի՞ համար է այս բոլորը: Մի կտոր հացի՞ համար:

— Ուրիշ աշխատա՞նք ես գտել:

— Գուցե: Ամեն դեպքում պետք է: Եթե սովից ու ջրափո-րությունից եմ մեռնելու, ավելի լավ է մեռնել տաք անկողնու մեջ:

— «Պատրոնին» նախազգուշացրե՞լ ես:

— Իհարկե: Ծատ ջղայնացավ: Ու երբ ասացի, որ կսկսեմ միայն այն դեպքում, երբ ոռնիկս բարձրացնի, ասաց, որ կարող եմ գնալ:

— Լսի՞ր, ժան: Զգվելի բան է ստացվում: Բա ո՞վ պիտի փոխարինի քեզ:

— Այդ մեկը չգիտեմ: Գիտեմ միայն այն, որ վաղն առավոտ-յան ժամը 8-ին կլինեմ Փարիզ տանող գնացքի մեջ:

Ժանի մեկնումը ավերածություն էր խմբի համար: Առանց այն էլ մեր նվագախումբը բաղկացած էր ընդամենը թմբուկից, փո-ղից ու դաշնամուրից: Կեսօրից հետո, փորձի ժամանակ, դիրեկ-տորն ինձ իր մոտ կանչեց:

— Ասացեք խնդրեմ, Ազնավուրյան, դաշնամուր նվագել գի-տե՞ք:

— Մի մատով:

— Լավ է: Դուք կփոխարինեք Կազընավին:

— Միրով, բայց առանց այն էլ հազիվ եմ հասցնում անկ այն, ինչ պահանջվում է ինձանից: Եթե դաշնամուրով էլ զբաղ-վեմ...

— Դե՛ լավ, լա՛վ, սիրելի Ազնավուրյան: Դուք ճարպիկ եք ու հնարամիտ: Ես վստահում եմ ձեզ: Մի բան կանեք:

Այդ կարգի վստահությունը լավ գիտեմ: Ամեն անգամ, երբ

մեկն ուզում է մեկ ուրիշին ավելի աշխատեցնել առանց նրա ոռ-  
գիկը բարձրացնելու, շողոքորթում է նրան, խնկարկում ու ասում,  
որ վատահում է:

— Ո՛չ:

— Ինչպե՞ս թե ոչ: Ձե՞ որ այսպիսով դուք կդառնաք խմբի  
«աստղը»:

— Ինչի՞նչ է պետք:

— Ձեռն հասկանում: Ես ձեզ խելացի տղա էի կարծում:

— Հենց այդ է որ կա, եթե «աստղ» եմ դառնում, ապա  
պետք է որ աստղի ռոճիկ ատանամ:

— Ահա թե ի՞նչ... Ուրեմն դուք էլ եք մյուսների նման: Դուք  
էլ եք միայն փողի մասին մտածում:

Դիրեկտորն ակնեց դառնորեն ողբալ իր վիճակը. «Առանց այդ  
էլ հազիվ եմ ծայրը ծայրին հասցնում»,— ասաց նա:

Աչքս ընկավ նրա մեծ, փքված ու կուշտ փորին, մի փոր, որ  
նախապատերազմյան սննդամթերքի պահարան էր հիշեցնում, ու  
որոշեցի չզիջել: Ապրելու համար մի ելք կա միայն: Քեզ զիջում  
եմ միայն այն դեպքում, երբ քո կարիքն եմ զգում: Իսկ եթե չէ,  
բարի ճանապարհ: Նշանակում է՝ նախ պետք է օգտակար դարձ-  
նես քեզ, ապա՝ անհրաժեշտ:

— Եթե փող չկա, դաշնակահար էլ չկա,— ասացի ես:

— Օրը 15 ֆրանկից ավելի չեմ կարող բարձրացնել:

— 50:

— Դուք զիժ ե՞ք, ինչ է, ծայրահեղ դեպքում՝ 20:

— 40:

— Անհնար է: 25-ից ոչ մի սու ավելի չեմ տա:

Այստեղ արդեն պետք էր կանգ առնել: 25 ֆրանկը վատ չէր:  
Ի հարկե, 30-ը ավելի լավ կ'իներ, բայց եթե հանկարծ մերժեր:  
Նման բան չէր կարող թույլ տալ, բայց ով գիտե:

— Համաձայն եմ:

Կոլիսներում հանդիպեցի Քրիստիանային, որը գիտեր, թե որ-  
տեղից եմ գալիս:

— Բան դուրս եկա՞վ:

— 25 ֆրանկ պոկեցի:

Առաջին անգամ նրա աչքերի մեջ հիացումնք տեսա:

— Ա՛յ քեզ բան... Եթե դու կարողացար նման գումար պոկել  
այդ մարդուց, նշանակում է բավականին պինդ տղա ես:

Խելագար վիճակ...

Ապաշական պարից հետո ցատկում եմ այն «ծակը», որտեղ,  
այսպես կոչված, նվագախումբն է տեղավորված ու նստում եմ



դաշնամուրի առաջ: Մի քիչ նվազելուց հետո կայծակնային արագությամբ փոխում եմ զգեստս, բեմ վազում, կատարում, տեղն է ասել, ակրոբատիկ պարս ու կրկին նետվում դեպի դաշնամուրը: Աջ ու ձախ ձեռքով փոխանիփոխ նվազում եմ, և այդ ընթացքում նոր զգեստ հագնում: Դարձյալ մագլցում եմ բեմ ու մասնակցում երկու սկետչների մեջ ու նորից, քանիտորոք անգամ, նետվում եմ «ծակի» մեջ:

Ապանիչ էր, իսկական տաժանակրություն: Մի քանի օր հետո այդ բոլորից փշտացա: Բացի այդ, բեմական զգեստներս, որոնք գնելու համար ծնողներս վաճառել էին տան գույքի մի զգալի մասը, Օրլեանի կայսարանում անհետացան:

— Հե՛յ, տղաներ, ճամպրուկս չե՞ք տեսել:

Ոչ ոք չէր տեսել:

Ճամպրուկս տարել էին... Արտասովելու եզրին, հոսաահատ ու կատաղած վազում եմ կառամատուցի երկայնքով մեկ ու կասկածանքով նայում ուղևորներին, խուզարկում բոլոր քաժիկները: Չկա բեմական զգեստներով լի մեծ ճամպրուկս: Մտա կայսարանապետի մոտ՝ բողոքելու, հախօրոք լավ իմանալով, որ դա անիմաստ է: Սակայն քանի որ ամենածանր դժբախտության առաջին րոպեներն են, պետք է ինչ-որ բանով մխիթարեի ինձ:

Բեմի ու կյանքի համար ինձ մնացել էր մուգ կարկույտ գույնի, սինթետիկ թեթև կտորից մի ձեռք հագուստ միայն, որով պարզապես անհնար էր շարունակել վաչրկեճական փոխակերպումներս:

Աշխատանքս հյուծում է ինձ, ընկերոսիս ձանձրացնում, միակ կոստյումս էլ գնալով բարակում է: Մի ցանկություն ունեմ միայն՝ Փարիզ վերադառնալ:

Սովածների այդ խնրից ազատվելու միակ միջոցը նորից ոռհիկի բարձրացում պահանջելն էր:

— Բարվական է,— մոնչաց դիրեկտորը:— Այս անգամ չափն անցաք: Մի ֆրանկ ավելի չեմ տա: Պա՛րզ է: Ուզում եք՝ մնացեք, ուզում եք՝ գնացեք: Վե՛րջ:

Գնացի:

Օրերս անցնում են,

Գիշերներս՝ լալիս

Եվ լալիս է ինձ հետ ժամանակը:

Բանականությունն էլ մռայլվում է, մեռնում,

Երբ մեռնում է անցնող ժամանակը:

Գնացքի մի անկյունում նստած տուն եմ վերադառնում: Տը-  
խուր եմ պարտվածի նյարդայնացնող տխրությանը: Երբեք չեմ  
սիրել պարտվել: Երբեք չեմ կարողացել հաշտվել պարտության  
հետ:

Հիշում եմ, թե ինչպես, մի քանի ամիս առաջ, ճամպուկը  
ձեռքիս, հաղթական մուտք գործեցի կաշարան: Ցնծությանը սեղ-  
մեցի մեր խմբի անդամների ձեռքերն, ու բոլորս միասին աղմկե-  
լով գրավեցինք մեր տեղերը:

Ծնողներիցս առաջին անգամն էի բաժանվում: Մայրս ինձ  
այնպես գրկեց, կարծես ուզումս ամառ էի մեկնում: Արտասովելով  
սովեց մի փոքրիկ ծանրոց, որի մեջ իր ձեռքերով պատրաստած  
հայկական կարկանդակներ կային ու որոնց վրա, վստահ եմ,  
ծախսել էր ընտանիքի մեկ ամսվա յոթի պաշարը:

— Զգո՛ւյշ եղիր, Վաղուշ, շնրան՛ս:

— Մի՛ մտահոգվիր, մայրիկ:

— Զգո՛ւյշ եղիր, ոչինչ չկորցնես:

— Լավ, մայրիկ:

Հայրս, որ սովորաբար շատախոս էր, հազիվ էր զգայում հը-  
պարտությունը, բավարարվեց ձեռքս սեղմելով: Վերջին հաշվով  
մեզը տղամարդիկ էինք: Հետո չդիմացավ, սեղմեց ինձ կրծքին,  
ու աչքերը լցվեցին: Իսկ Աիդան, կարմրած աչքերով, բռնել էր  
մայրիկի թևն ու մեկ իր, մեկ նրա արցունքներն էր սրբում:

Իսկ ե՞ս. ես երջանիկ էի: Ես հյուրախաղերի էի մեկնում: Ես  
արտփատ էի:

Ահա դարձյալ մեր դռան առաջ եմ: Սեղմում եմ զանգի կո-  
ճակը: Մայրս հողաթափերը քստքստացնելով դաևդաղ մոտենում  
է ու ջնջում.

— Դո՛ւ ես, Ծարդ:

Հրաշայի է. ինչպես եմ մայրերը իսկույն ճանաչում իրենց զա-  
վակների ոտնաձայնը, զանգը:

— Այո, մայրիկ:

Ես նորից տանն եմ: Ինձ այնպես եմ դիմավորում, կարծես  
հաղթական հյուրախաղերից եմ վերադառնում: Այնինչ միակ,  
քրքրված կոստյումը հագիս, թջվառի մեկն եմ: Ի՞նչ կա որ: Գնա-  
ցել ու հիմա վերադարձել եմ: Ազնավորյանների հայ ընտանիքի  
համար սա հուզմունքի և ցնծության պահ է:

— Ահա մեզք նորից չորսով միասին եմք,— ասաց հայրս,  
նստելով սեղանի առջև:

— Աստված մե՞ծ է,— ասաց մայրս:

Պարտություններով ու դժվարություններով չի իմ կարիերայի առաջին տարիներին ուղեկցող ողջ դառնությունը և ծաղր ու ծանակը ընտանիքիս էր քաժին հասնում: Ես պարտական եմ նորան: Առեն անգամ, երբ տուն էի վերադառնում, ականջներս դեռ չի հանդիսատեսի աղմուկ-աղաղակով, սուղոցներով ու վիրավորանքներով, ծնողներս իմ կողքին էին, պատրաստ լսելու ու մխիթարելու:

Կորած է այն մարդը, որ հեճարան չունի: Իմ հեճարանը իմ ընտանիքն էր՝ մայրս, հայրս, քույրս:

Պարետապին ժամը 12-ն է: Ահդան, որ երբեք չէր ուզանում, այդ ժամին դեռ տանը չէ: Անհանգստանում է՝ 12-ն անց կեսի մոտ զանգը տվին: Սլացա դեսի դուր: Քույրս է, կողքին երկար, բարակ, ամոթխած մի տղա: Ահդան արագ շնջաց:

— Այս տղան քո բարեկամն է: Անունը ժան-Լուի: Հետը «դու»-ով խոսիր:

Իսկույն բարձրաձայն առացի.

— Ողջույն, ժան-Լուի: Ո՞նց ես:

Խոհանոցում Ահդան բացատրեց, որ ժամանակի մասին պատկերացում չի ունեցել ու փաստի սուս կանգնել: Քանի որ արդեն շատ ուշ է եղել տուն վերադառնալու համար, որոշել են, որ ժան-Լուին կքնի մեր տանը: Մի կտոր բան ուտելուց հետո բոլորս անկողին մտանք: ժան-Լուին պատկեց ինձ հետ:

Մենք ծանոթացանք: ժան-Լուի Մարկեն երիտասարդ կոմպոզիտորներից ու արտիստներից կազմված «Կլուբ դը լա շանտոնի» դիրեկտորն էր: Ինքն էլ մասնակցում էր ներկայացումներին, ինչ-որ պատմություններ պատմում:

— Դժբախտաբար չեմ երգում. ձայն չունեմ:

— Ինչպե՞ս ծանոթացաք քրոջս հետ:

— Ահդային տեսնելու համար գնացի՞ք «Կոնսեր-Մայուլ»: Ներկայացումից հետո նրան բերեցի՞ք մեր ակումբը, որն այստեղից հեռու չէ. ու մոռացանք ժամը: Քանի որ նա վախենում էր մե՞նակ գնալ, խնդրեց ուղեկցել իրեն:

Ահա թե ինչպես ժան-Լուի Մարկեն, իմ իմպրեսարիոն, մուտք գործեց կյանքիս մեջ:

Առավոտյան նա գնաց, մեզ հետ ժամադրվելով:

Ակումբները ընդհանրապես չէին հուզում ինձ:

— Կոնսենս,— ասաց Աիդան,— շատ բարեհամբույր ու քաղաքավարի տղաներ են:

Այդ երեկո Աիդայի հետ գնացինք ակումբ, ուր ինձ դիմավորեց Ժան-Լուին ու Աերկայացրեց խմբի անդամներին: Պատվոնախազահը Պիեռ Ռոշն էր, որը թեպետ երիտասարդ էր, բայց արդեն ճաղատանոս էր:

Դեռ շուտ է ու քիչ մարդ կա թույլ լուսավորված սրահում: Պիեռը ճառեց դաշնամուրի առաջ ու նվագեց: Մինչ Ռիզները մի երգ էր կատարում, որ միասին էին գրել, Ժան-Լուին տեղավորվեց Աիդայի ու իմ միջև:

— Այստեղից պիտի տեղափոխվենք,— ասաց Ժան-Լուին,— Պոնթյոն փողոցի վրա մի լավ տեղ ենք գտել: Ուզում ենք մի քիչ ավելի մեծ ու հեղինակություն ունեցող սրահում հանդես գալ:

— Դա ձեր ինչի՞ն է պետք:

— Մեզ մոտ երիտասարդ շատ արտիստներ են գալիս, որոնք փորձում են երգիչ դառնալ: Ահա թե ինչու, բացի փոքրիկ կարարեից, նոր տեղում կունենանք երգի ու պարի դասընթացներ: Մենք կունենանք նաև ձայնագրման առտոխիս, որի միջոցով կրտեսները յուրաքանչյուր երիտասարդի առաջադիմությունը: Երկուները դասընթացներին մասնակցող աշակերտների ուժերով Աերկայացումներ կտանք, նրանց կընկերակցի Պիեռ Ռոշը:

— Ես էլ սիրով կհաճախեմ ձեր ակումբը:

— Ի՞նչ գիտեմ անել:

— Ամեն ինչ ու ոչինչ: Մտքեր ունեմ...

— Դու կարող ես ռեկլամով զբաղվել, եթե, իհարկե, մի օր զգանք դրա կարիքը:

— Եղավ: Ես ձերոնցից եմ:

Տեղափոխվեցինք:

Բացմանը ներկա էր Փարիզի ողջ ընտիր հասարակությունը՝ մոտ 400 հոգի: Նույնիսկ Պիաֆն էր եկել: Ահագին փող էինք ծախսել: Գրպաններս դատարկել էինք, մեծ ընդունելություններին վայել բուժեառ տեղծելու համար շամպայն, էկվեր և այլ համեղ ուտելիքներ էինք գնել: Ստեղծեցինք մի բուժեառ, որն այդ տարիներին միայն կհանկարներում էինք տեսնում: Հաջողությունն անսահման էր... Բուժեառ... Ամենահայտնի անձնավորությունները խոնվել էին երկար սեղանի շուրջը ու չէին ուզում մի փոքր տեղ անգամ զիջել: Հո չեն ոտոս... Ի՞նչ ուտել, կույ են տալիս, հոսք են տալիս, խեղդվում են: Փորձեցի մի էկվեր վերցնել, փրչոտ մի թաթ իջավ ձեռքիս ու մինչ կհասկանայի, թե ինչ կատարվեց, խը-

վեց ձեռքիս էկերն ու նախորդ պատասաղ դեռ կույ չտված, դրեց բերանը:

Երջանկացած մտածում եմք, որ բացումը հաջողությամբ պըսակվեց:

Ինչպիսի՜ հիասթափություն: Հաջողությունը բուժետիճն էր: Բացումը ոչ ոքի չէր հուզում: Ուշ երեկոյան, կերած-խմած, հրավիրված անձինք մեկ առ մեկ ճոճվելով հեռացան ու նրանցից շատերը աղևս ոտք չդրին մեր ակումբը: Անկախ ամեն ինչից, մեր ակումբը աշխատել ակեց: Ցերեկը դասընթացներ էին գնում, երեկոյան աշխատում էր կաբարեն, իսկ գիշերը ինչ-որ բանով զբաղվում էինք, այո, ողջ գիշեր բաց էր մեր ակումբը: Այլ կերպ չէինք կարող, քանի որ մեզանից շատերը «ausweiss» չունեին: Ոտքը դուրս դնելու մասին խոսք լինել չէր կարող. դա շատ վտանգավոր համարձակություն կլիներ:

Մեզանից յուրաքանչյուրը կաբարեի փոքրիկ բեմի վրա անում էր այն, ինչ կարող էր: Մեկն իր երգերի ռեպերտուարն էր կատարում, մյուսը՝ շանսոնների իր համարը, մի երրորդը նմանակում էր: Սերժ Դարվին, Պիեռ Կոտը, Ժերար Սետին ու Դժանգո Ռենհարդը մինչև առավոտ ելույթ էին ունենում, իսկ Էդոար Բարկլին դաշնամուր էր նվագում առանց խնդրել տալու:

Ակումբի հաճախորդները բավականին խայտաբղետ էին: Մեզ մոտ էին գալիս դիմադրության ջարժման մասնակիցներ, դասաչիքներ, հրեականներ, առևտրականներ, գերմանացիների ոժանդակներ, որոնց մոտ կարելի էր գտնել կեղծ անձնագրեր, սննդամթերքի կեղծ գրքույկներ ու նույնիսկ գեներ:

Ցավալի անհոփոթություն. մի օր գեստապոն գինված ներխուժեց մեր կաբարեն: Խուճապի մատնված, բոլորը միասին խուժեցին դեպի գաղտնի ելքը, որից, բարեբախտաբար, տեղյակ չէր գեստապոն: Մեկի մոտ հանձարեղ միտք ծագեց՝ կտրել էլեկտրական լարը:

Մթությունից օգտվելով, դիմադրության ջարժման մասնակիցներից մեկին, որի անունը Կրեվենքյոր էր, հաջողվեց անհետանալ:

Երբ սրահը դարձյալ լուսավորվեց, ակումբում գրեթե ոչ ոք չէր մնացել:

Ես օղանցքից դուրս էի սողացել ու թաքնվել տանիքում:

Ռատիկանները ձերբակալեցին Լոուրենս Ռիզներիճն, որի հայրը թեպետ ամերիկացի էր, բայց ինքը ոչ անգլերեն գիտեր, ոչ

Էլ ամերիկեան: Այնուամենայնիւ, կասկածելի էր համարվում: Ողջ գիշեր հարցաքննելուց հետո առավոտյան ազատ արձակեցին:

— «Կոնտեր Մայլում» ընդունելության քննություն կա, — ասաց մի օր Աիդան, — գնանք փորձենք:

— Հուսով եմ, որ նրանք մերկ պարուհիներ չեն ուզում:

— Մի կատակիր: Հաջորդ ներկայացման համար նրանք դերասան են փնտրում, առնվազն մի տարվա պայմանագրով:

Ջուզվեցի-գարդարվեցի: Գնացիւք: Ես դուրս մնացի: Աիդան ընդունվեց: Այդ օրը նրա անունը մի թեթև վերափոխության ենթարկվեց: Լույսն Ռիմելզը, որը հանդիսանում էր «Մայլի» գեղարվեստական ղեկավարն ու միաժամանակ հանդես էր գալիս որպես հեղինակ, դերասան և պարող, գտավ, որ Աիդա Ազնամուրը վատ է հնչում:

— Այսուհետև դուք կկոչվեք Աիդա Ազնամուր: Այսպես ավելի երաժշտական է, — ասաց նա:

— Թող լինի Ազնամուր, — պատասխանեց Աիդան՝ համակերպվելով:

Հաջորդ օրը Փարիզի աֆիշները խոշոր տառերով Աիդա Ազնամուրին ներկայացնում էին իբրև հաջորդ ներկայացման «աստղ»:

Այդ օրվանից աշխատանք փնտրելիս ասում էի.

— Ես Ծարլն եմ՝ Աիդա Ազնամուրի եղբայրը:

Դեռ մոտիկ անցյալում ինձ դժվարությամբ լսող մարդիկ այժմ նկատելի կերպով սիրալիր էին վերաբերվում, բայց և այնպես ասում էին.

— Գնացեք, ողբարկեցեք ձեր քրոջը:

Ու ինձ մխիթարելու համար բացատրում էին, թե իբր երգչուհիների կարիք են զգում, որ նրանց ձեռքից ձեռք են խլում, իսկ ինչ վերաբերում է երգիչներին, կուլիսները լի են նրանցով, ու դեռ ամեն օր կապոցներով, վագոններով են գալիս... Չգիտեմ ինչ անեն նրանց...

Ես էլ իմ չէի կարող աշխատանք ճարելու համար շրջագոստ հազնել:

Եվ ահա առանց պայմանագրի եմ: Հայրս աշխատանք չունի: Այսպես շարունակել չէր կարելի: Ծուկաներում ապրանք վաճառելու համար հայրս արտոնագիր խնդրեց, ստացավ: Սակայն միայն Սեն-Է-Ուազի մարզի համար: Քանի որ Սենայիկը շատ էր ծանրաբեռնված:

Գնացիներ ապրանք գնելու: Սկզբում սկսեցինք կանացի և տղամարդու գուլպաներից, որոնք վաճառվում էին, բայց ոչ այնքան հաջող: Հետո նրբերջիկի անցանք:

Հորս հետ հեծանիվով էինք անցնում Սեն-Է-Ուազի բոլոր շուկաները: Հենց որ բացում էինք ապրանքը, հայրս, մի մեծ դանակով զինված, կտրում էր մի կտոր նրբերջիկ ու դիմելով հաճախորդներին ասում էր.

— Ճաշակե՛ցեք... ճաշակե՛ցեք...

Հայրս երբեմն մինչև Իվրոն էր հասնում կարագ, ձու, պանիր, հավ բերելու համար: Վերադարձին կայսրանում, ուր իս նրան դիմավորում էի, խիստ ստուգման էին ենթարկում: Հորս բերած ծանրոցը վերցնում, փաթաթում էի պիջակիս մեջ, զցում էի թևիս ու անցնում հսկիչի մոտով:

Մի օր տեսուչներից մեկը կանգնեցրեց ինձ.

— Ի՞նչ կա պիջակի տակ:

Նայեցի ուղիղ նրա աչքերի մեջ ու կես-լուրջ, կես-կատակ ասացի.

— Կիբը կարագ է (5 կիլոգրամ կարագ էր):

Վզակոթիս տալով ասաց.

— Դե լավ, առանց կատակի, փախի՛ր այստեղից:

Մի մասը կերանք, մյուսը՝ վաճառեցինք:



Ծերունին գլուխը տխրությամբ տարուբերեց ու...

— Ես արեցի ինչ հնարավոր էր, բայց ժամանակի քայքայիչ աշխատանքի դեմ ոչինչ չեմ կարող անել: Այս անգամ վերջ,— ասաց նա:

Ես այդ, իհարկե, սպասում էի: Դա պիտի պատահեր մի օր: Այնուամենայնիվ լուրն ինձ ընկճեց ու կարողացա...

— Միայն այդ էր պակաս,— մոթմոթալ:

Հուսահատությունն տեսնելով, ծերունին ասաց.

— Դե լավ, պետք չէ այդպես հուսահատվել: Ես ասացի վերջ, բայց դեռ մի քանի օր յուր կտանի:

Դուրս եկա լրիվ ընկճված: Առանց այն էլ ո՛չ փող ունեմ, ո՛չ աշխատանք, հիմա արդեն կմնամ նաև առանց կոշիկների: Կոշիկարի վճիռը անողոք էր: Կանգնեցի, կոշիկներիս նայեցի: Ներքանները դեռ պիտի են. ես դրանք հեծանակի լինն դողերից էի կրտրել-հանել: Կոշիկս ես էի վերանորոգում: Փոքր մեխեր ու մի մուրճ էի գնել ու կարճ ժամանակում ներքանները կարգի էի բերում:

Երբեմն մեխերը դուրս էին արժնում, ներքանները բացվում ու քայելիս «ֆլակ-ֆլակ-ֆլակ» էին անում: Այդ նյարդայնացնող ձայնը հոգիս կերավ, ու ես ստիպված կոշիկներիս քթերին ու տիկներ անցկացրի ու որպեսզի չնկատվեն՝ ներկեցի դրանք:

Այդպես ուրեմն, տակը դեռ դիմանում էր, երեսն էր հոգին ավանդում:

Երկար քայլելուց ճաքճաք, կարված ու անրից կարված՝ էլ չէին դիմանում:

Այդ տարիներին այնքան եմ կոշիկի կարիք զգացել, այնքան եմ ցանկացել կոշիկ ունենալ, որ հիմա, երբ խանութ եմ մտնում, միանգամից քսան զույգ եմ վերցնում: Հիմա պահարանիս մեջ մի հարյուր զույգ ունեմ: Դա ինձ սրտասպնդում է:

— Զգուշությամբ քայլեցեք: Չվազեք,— ասաց ինձ կոշկա-  
կարը:

Լավ: Մի՞նչն ենք կոշիկ ձեռք բերելու կքայլեմ ոնց որ էկե-  
ղեցում, ցնցումներից կխուսափեմ, թույլ կտամ, որ ինձ ճզմեն,  
ոտատակ կընկնեմ, բայց չեմ թողնի, որ կոշիկներս պատռվեն:

Ինչ-որ խոտից պատրաստված ապուրը կույ տվի, խմեցի իմ  
բաժին քառորդ բաժակ դառը գինին ու ոտքով ճանապարհ ընկա  
դեպի ակունք: Հանկարծ փայլուն միտք հղացա:

Երգի դասընթացներ ունեի՞նք, պարի՞ նույնպես, իսկ ինչո՞ւ  
չհիմնել նաև բեմական շարժման դասընթացներ: Քայլերս արա-  
գացրի: Կոշիկներինս հերն էլ անիծած. հարկավոր է շտապ գտնել  
Պիեռ Ռոշին ու համատեղ գործակցություն ասաջարկել:

Ակզբում խնորել տվեց: Տարօրինակ տղա էր Պիեռը: Որոշ  
ասպարեզներում (որոնց մասին հետո կխոսեմ) շատ ակտիվ էր,  
անսպառ, իսկ որոշ հարցերում էլ ուղղակի ալարկոտ էր, եթե ոչ  
Ֆլեգմատիկ:

— Դա ավելորդ աշխատանք է, Ծա՛րդ:

— Ի՞նչ ես խոսում: Օրական չորս ժամ դաս կտանք, երկուսը  
դու, երկուսը ես: Սատանան տանի, հո չե՞ս մեռնի, միայն երկու  
ժամ: Զահել չե՞ս:

— Այո, ջահել եմ, բայց օրական երկու ժամը իրար գունձա-  
րած, ի՞ վերջո, տարիներ կանի:

Վերջապես, երեք ժամ տևող վեճից հետո զենքերը ցած դը-  
րեց ու համաձայնեց այն պայմանով, որ իր դասերը ժամը  
16—18-ը լինեն: Ոչ ավելի շուտ, քանի որ նա չէր ուզում զոհաբե-  
րել իր առավոտները, երբ ժամերով մնում էր անկողնու մեջ:

Իրար ձեռք սեղմեցինք ու...

— Որքան տևեց, տևեց,— ասաց Պիեռը հոռետեսորեն:

Այդ օրը ոչ ես, ոչ ինքը չէինք կարծում, որ մեր դաշինքը  
տևելու էր ութ տարի:

Իսկույն մեծ հայելիով մի փոքրիկ դատարկ սենյակ վարձե-  
ցինք ու սկսեցինք մեր դասերը: Մեր առաջին աշակերտները երգ-  
չուհիներ Տոնտեն քույրերն էին, որոնց ռեպերտուարի երեք երգը  
կարգի բերեցինք՝ հանգամանորեն յաջակելով ու հղկելով յուրաքան-  
չյուր շարժում, յուրաքանչյուր դիմախառ:

Այդ օրերին Պիեռ Ռոշն ու ես գրեթե անբաժան էինք, լինի  
փողոցում, թե ակումբում: Պիեռն անընդհատ նոր աղջիկ էր  
փնտրում, ես՝ նոր աշակերտ:

Պատահականությունը շատ տարօրինակ բան է: Ահա թե ին-  
չու: Մեր ակումբը բացի երեկոներից, քաղաքից դուրս կազմա-

կերպում էր ման տոնահանդեսներ, որտեղ՝ հաճախ որպես «աստղ» էլույթ էին ունենում ճանաչված արտիստներ, ինչպիսիք էին Ժոզեֆ Դեյդեն, Ռոլանդ Ժերթոն, Լյուք Բառնեն և Լեո Մարժանը՝ օկուպացիայի ժամանակաշրջանի ամենամեծ «աստղը»:

Նման տոնահանդեսներից մեկի ժամանակ էր, որ մի սխալի պատճառով ամեն ինչ փոխվեց իմ կյանքում:

Պիեռ Ռոշը սովորաբար հանդես էր գալիս որպես «աստղ», իսկ ես հիմնով համարի տակ նախկին «օջիւրագոյություններու» էի սնունդ: Չգիտեմ ինչո՞ւ, գուցե այն պատճառով, որ Ռոշին ու ինձ ամեն տեղ միասին էին տեսնում, կոնֆերանսիան փոխանակ արաջիւր իմ անունը հայտարարելու, ու մի արկու համար հետո՝ Ռոշիւր, հանկարծ ասաց.

— Ելույթ կունենան Ծարլ Ազնավուրն ու Պիեռ Ռոշը:

Պիեռն ու ես մի պահ իրար նայեցինք:

Պիեռն ասաց.

— Գնացինք:

Բեմ նետվեցինք ու կատարեցինք այն երեք երգերը, որոնք Տոնտեն քույրերի համար էինք մշակել:

Կասեմ մի բառ միայն՝ հաղթանակ: Հանդիսատեսը մեզ նորից ու նորից էր բեմ կանչում և որովհետև ուրիշ երգ չունեինք, նույն երգն էինք կրկնում:

Ելույթից հետո բարեկամները շրջապատեցին մեզ ու ջերմորեն շնորհավորեցին: 15 րոպեի ընթացքում Պիեռն ու ես մեր ակումբի ամենատաջատար «աստղերը» դարձանք:

— Պիլլիից ու Տարբիից հետո,— ասաց Սական,— ես նման կատարում չէի տեսել:

Ռոշի հորեղբոր որդին՝ լրագրող Պիեռ Անին, ասաց.

— Եթե համաձայն եք, ես կգրադվեմ ձեր ունկլամով:

— Այդ բոլորը լավ է,— ասաց Ռեզները,— բայց ձեզ երգեր են պետք:

— Իմ երգերը կերգենք,— ասաց Ռոշը:

— Կարելի է օգտագործել Տրենեի և Ջոննի Հեսի երգերը:

— Ծիշտ է,— ասաց Ռոշը:

Երկայնահասակ, հիհար ու լավ սանրված Ժան-Լուի Մարկեն առաջարկեց.

— Ես կգրադվեմ ձեր պայմանագրերով: Ծառ կարճ ժամանակում դուք կդառնաք փարիզյան բոլոր կաբարետների առաջնակարգ «աստղերը»:

Ուրախությունից վեր ցատկեցի, վայրէջք կատարեցի, ու կոշիկներս պատռվեցին՝ այս անգամ արդեն անուղղելի կերպով:

Լիլլում ժան-Լուի Մարկեն պոկեց մեր ստաջին պայմանագիրն ու ստացավ մեր ստաջին բողոքի նամակը. քաղաքի ազդագրերը հայտարարում էին. «Ռոշ և Ազնավուր՝ ուխտի երկու վարպետներ», մի բան, որ ոչինչ չէր ասում: Ես գայրույթից կատաղել էմ:

— Սա այն դեպքն է, երբ կարելի է չեղյալ համարել պայմանագիրը:

Մեկնակիս մեջ խո ու ստաջ անելով ունում էմ:

Անկողնու վրա փոված, ձեռքերը գլխի տակ հանգիստ դրած՝ Ռոշը իմ գայրույթի նոպային բոլորովին ուշադրություն չի դարձնում. այն խմբում, որի կազմում ելույթ պիտի ունենանք, տասը սիրուն պարուհիներ կան, մնացածը բոլորովին կարևոր չէ նրա համար: Ես արդեն ասացի, որ Ռոշի համար գոյություն ունի միայն մի ասպարեզ, որտեղ նա կայուն է ու անկուշտ՝ կանանց ասպարեզը: Դա նրա ողջ կյանքն է: Կանայք, իհարկե, ինձ էլ են զբաղեցնում, բայց Ռոշի համար դա գլխավորն էր: Օրը ստանց կանանց (իհարկե հոգնակի) կորած օր էր նրա համար:

Ծառ երկայնահասակ, շատ բարակ, կոկորդիլոսի համբերությամբ, բարոնի շարժումնով ու արքեպիսկոպոսի քաղցր-մեղցրությամբ Պիեռին հաջողվում էր այն, ինչ չէր հաջողվում գեղեցիկ տղաներին անգամ:

Նրա կյանքը մանրակրկիտ մշակված էր: Երեկոյան տուն էր գալիս մի «նվաճումի» հետ, առավոտյան, երբ աղջիկը տուն էր գնում, մի վերջին համբույր դրոշմելով նրա շրթներից, սիրավիր խնդրում էր նրան բանալին դնել դռան տակ ու շուտ էր գալիս քրնում:

Քիչ անց՝ զանգ: Առանց տեղից շարժվելու բղավում էր.

— Բանալին դռան տակ է:

Ներս էր գալիս մի նոր սիրունիկ: Պիեռը համբուրում էր նրան ու ամենից առաջ խնդրում նախանաչ պատրաստել: Մինչ աղջիկը խոհանոցում նախանաչով էր զբաղված, Պիեռը խարխափելով ակնոցն էր փնտրում: Աղջիկների կարծիքով Պիեռը թախծոտ հայացք ունի, բայց դրա պատճառը միայն այն է, որ նա խրչուրդի նման կարճատես է: Քիչ անց աղջիկը վերադառնում էր խոհանոցից, բերելով տապակած հաց ու սուրճ: Բավականության փոքրիկ հոգոցներ հանելով, խմում էր սուրճը ու նոր միայն զբաղվում իր հյուրով: Ինչքան էլ ոռնում էի, որ մեզ «ոխթմի վարպետներ» են կնքել, միևնույնն է, Պիեռը չէր հուզվում. նրա ուղեղում տասը պարունիներն էին:

Ներկայացման հաջորդ օրը մամուլը շատ գովեստով խոսեց մեր մասին: Դիրեկտորը մի շաբաթով էլ երկարացրեց պայմանագիրը: Երբ Ռոջին հայտնեցի այդ լուրը, անկողնու մեջ ձգվելով ասաց.

— Հիանալի՛ է, Ծա՛րլ: Ժամանակ կունենամ բոլորի հետ ծանոթանալու:

Վերադառնում ենք Փարիզ:

Գնացքում Պիեռն անընդհատ քնած է: Խեղճը հյուրախաղերի ժամանակ առիպված էր վեր կենալ վաղ առավոտյան՝ ժամը 11-ին: Դժբախտը անքնությունից չէր կարողանում ոտքերի վրա կանգնել:

Հյուսիսային կայարանում Ժան-Լուին մեզ ժպիտով դիմավորեց: Երբ ժպտում էր Ժան-Լուին, նշանակում էր, որ նա կարևոր լուր ունի մեզ հաղորդելու: Արագ միմյանց ձեռք սեղմեցինք ու...

— Հիանալի լուրեր ունեմ, երեխաներ: Անդրեքսը, որ էլույթ էր ունենում «Էզլոնում», հիվանդ է: Դուք պիտի փոխարինեք նրան որպես «ա-ս-տ-դ-ե-ր»: Դժվարությամբ, բայց հաջողացրի, լավ է, չէ՞: Ու շեշտելով յուրաքանչյուր բառը, ավելացրեց.

— Իսկ գիտե՞ք, թե ինչքան եք ստանալու:

— Ոչ:

— Մի ամբողջ հարատվություն՝ երեկոն 800 ֆրանկ:

Երբեք այսքան փող միանգամից չէի վատասակել:

Անդրեքսին փոխարինելու օրերին, ներկայացումից հետո, Ժան-Լուին և Պիեռի հետ ամեն օր «Մայոյի» մոտակայքում գտնվող ռեստորանում նստած՝ Աիդային էինք սպասում: Նստում էինք բարում ու սիրահետում երեք սկանակ երգչուհիներին՝ Ժակլին Ֆրանսուային, որը երեկոյի ընթացքում 100 ֆրանկ էր վատասակում, Աննետին, որ շատ կենսուրախ աղջիկ էր և Կարմենին:

Ժան-Լուիսն փորձում էր հրապուրել ժակյիճին, Պիեռը՝ Կարմենին, իսկ ես՝ Աննետին: Մեր նպատակին հասնելու համար դիմեցինք ոչ շատ ազնիվ միջոցի:

Ռոշի բնակարանը «ausweiss» չունեցող արտիստների ապաստարան էր դարձել: Անցաթուղթ չունեցողները, առանց նախազգուշացման, վազում էին Պիեռի մոտ: Այդ պատճառով էլ բրնակարանը «անակնկալ» անվանեցինք: Ժակյիճի, Աննետի ու Կարմենի ներկայությամբ այնքան խոսեցինք այդ մասին, որ ի վերջո շարժեցինք աղջիկների հետաքրքրությունը: Մի երեկո որոշեցինք նրանց այնտեղ տանել: Նրանք կարծում էին, թե իրենց տանում ենք մի նոր ու գաղտնի գիշերային գիներտուն: Բայց հայտնվեցին մի տան մեջ, ուր ո՛չ ուտելիք կար, ո՛չ խմիչք:

Պիեռի ծնողները, որոնք ապրում էին Պրելում, երբեմն ցանկություն էին ունենում գալ իրենց փարիզյան բնակարանը: Ժամը 4-ից կամ 5-ից շուտ չէինք քնում: Ամեն օր ժամը 7-ին Պիեռի քույրը, որն ապրում էր ծնողների հետ, զանգ էր տալիս ու հաղորդում ծնողների մտադրությունը: Երբեմն ասում էր.

— Գալիս եմ:

Խունապն սկսվում էր: Հազիվ էինք հասցնում վեր կենալ, հագնվել, անկողիները հավաքել ու քնաթաթախ նստել սեղանի շուրջը:

Ժամը 8-ին Պիեռի ծնողները գալիս էին ու զարմանքով տեսնում մեզ սեղանի շուրջը՝ արվեստի մասին տաք-տաք վիճելիս: Երբեք չէին կասկածում:

Հեռախոսի այդ զանգերը նյարդայնացնում էին: Երբեմն «գալիս եմ»-ից հետո, երբ ամեն ինչ կարգի բերած էինք լինում, Պիեռի քույրը նորից էր զանգում ու հայտնում, որ ծնողները վերջին վայրկյանին մտադրությունները փոխել են ու չեն գալիս: Նորից արագ հանվում ու պառկում էինք քնելու:

Վերջնականապես Պիեռի մոտ եմ տեղափոխվել: Ծնողներիս մոտ եմ գնում միայն նախաճաշելու ու ճաշելու համար: Մայրս երբեմն աչքի տակով նայում էր ինձ ու ասում.

— Դեմք ծեփի գույն է ստացել: Չեմ հասկանում ի՞նչ ես ասում քո բարեկամի մոտ: Դու մի օր կհիվանդանաս:

Համբուրում էի նրան, ճաշում ու դուրս վազում՝ փաչելով նոր մետաղադրամի նման:

Ռոշին շատ էի սիրում: Մենք բոլորովին նման չենք իրար. նա հսկա է ու հանդարտ, ես՝ փոքր, աշխույժ: Մենք լրացնում ենք իրար: Ծատ էի սիրում Ռոշին, բայց նա երբեմն նյարդայնացնում էր ինձ: Նրա սիրային արկածները ծավալվում էին նշանակված,

անփոփոխ ժամերին: Գիշերային արկածներից հետո առավոտները ուշ էր զարթնում, իսկ ես նստած սպասում էի, թե երբ վերջապես կբարեհաճի վեր կենալ և ընտրություն կատարել այն երգերից, որոնք ես մախօրեիս հայտնաբերել էի մեր էլույթի համար: Դուետի համար երգեր գտնելը այնքան էլ հեշտ բան չէր: Այն բարեկամները, որոնց դիմում էի ու համոզում երգ գրել մեզ համար, չէին կարողանում հարմար բան գրել:

Մի օր, համբերությունից ելած, Ռիզներիս ասացի.

— Դե լավ, այնքան էլ մեծ բան չէ երգ գրելը:

— Մեծ բան չէ՛, մեծ բան չէ՛: Եթե այդքան հեշտ լինեք, բողոքն էլ կգրեիս: Փորձի՛ր, տեսնենք ինչ կստացվի:

— Լավ: Ես քեզ կապացուցեմ, որ կարող եմ:

**Ոճրագործի հետքը պրպտող խուզարկուի պես**

**Ես, հետևելով մտքիս ընթացքին,**

**Հարցաքննում եմ ինչ-որ գաղափար,**

**Կազմում եմ մի խոսք,**

**Փնտրելով շունչն ու ռիթմը իմ երգի:**

Ռիզների թերահավատ ու հեզնո՞ հայացքի տակ ակսեցի աշխատել: Ողջ օրը տանջվեցի մի երգ գրեցի: Խնորեցի Ռոշին երաժշտություն հարմարեցնել:

Հաջորդ օրը երգս ներկայացրի ակումբի մեր ընկերներին: Բոլորից շատ Ռիզները ոգևորվեց:

— Բո երգը յուրահատուկ ոճն ու լեզուն ունի: Վստահ եմ, որ հաջողություն կունենա:

Վազեցի երգի մեծ վարպետների մոտ: Մի կերպ հաջողացրի տեսնել Պիաֆին: Նա մերժեց, ասելով, որ երգը գրված է տղամարդու համար: Ծառայեցի Իվ Մոնտանի մոտ, նա էլ թե. «Սա իմ ժանրը չէ»:

Միայն Ժորժ Ումերը, որը թեպետ և՛ հեղինակ, և՛ կոմպոզիտոր էր, համաձայնեց երգել: Ումերը հոտառություն ուներ. այդ երգով նա ձայնապնակի «Գրան Պրի» մրցանակին արժանացավ: Երգը կոչվում էր «Ես խմած եմ»:

Ոչ ոք չգիտեր, որ այդ մեր երգն էր:

Մի հրատարակչությունից մյուսն էինք վազում, մի կարարեի դիրեկտորից՝ մյուսին: Չայներս խզվելու աստիճան երգում էինք որտեղ պատահեր, ինչ գնով պատահեր, սակայն անվանի չէինք դառնում: Բայց պետք է ասեմ, որ այնքան էլ անձանոթ չէինք հասարակությանը:

Չնչին թվացող, բայց կարևոր մի բան՝ լուսանկարվում էինք, արտիստիկ կեցվածքներ էինք ընդունում, ըստ որում նկարվում էինք լուսանկարիչ Հարկուրի մոտ, որտեղ միայն «աստղերն» էին նկարվում: Սև շուկայից զինվորական սպիտակ սավաններ գնեցի ու բեմական բաճկոններ կարել տվինք մեզ համար: Չմտանք լավ էր. տաք էին պահում, բայց ամռանը քրտնեցնում էին ֆինլանդական բաղնիքից էլ վատթար: Այնինչ նիհարելու բողբոլիկն կարիք չէինք զգում: Ես չգիտեմ, թե որպես երգիչներ մեր քաջն ավելանում էր, թե ոչ, բայց մի բան լավ գիտեմ՝ այնքան էինք նիհարել, մանավանդ Պիետր, որ ուժեղ քամուց չընկնելու համար պետք է գրպաններս քար լցնեիք:

Մեր պայմանագրերը օր-օրի ավելանում էին: Երգում էինք գինետներում, պարահանդեսներում, կինոդահլիճներում, Փարիզում ու Փարիզից դուրս օկուպացված գոտիում: Մեր խաբուսիկ ժողովրդականությունը բնավ էլ դուրս չեկավ օկուպացված գոտուց, քանի որ գրեթե անհնար էր թույլտվություն ստանալ ազատ գոտում երգելու համար:

Նանտ, Սէն-Նազեր, Օրեան կամ Հավր գնալու համար «Kommandantur»-ից հատուկ թույլտվություն էր հարկավոր: Այդ հարցով երբեք չդիմեցինք: Երկու պատճառով: Առաջինը՝ կմերժեին, երկրորդը՝ մեզ կարող էին Գերմանիա ուղարկել աշխատելու...

Պիետրի հետ մշակեցինք մեր գործողությանն պլանը. նախ տե-



ղեկանում էինք, թե քանի կիլոմետր է վերջին կամրջի և այն քաղաքի միջև եղած հեռավորությունը, ուր պատրաստվում էինք գրնալ երգելու: Նկատել էինք, որ գնացքները կամրջի վրայով շատ դանդաղ էին անցնում, անշուշտ, «zabotach»-ից վախենալով: Եթե կամուրջը քաղաքից մի քանի կմ-ի վրա էր գտնվում (10 կմ-ից ոչ ավելի), պայմանագիրն ընդունում էինք:

Կամրջի վրա գնացքը դանդաղեցնում էր ընթացքը: Ես ցատկում էի: Պիեռն ինձ էր նետում մեր ճամպրուկներն ու իր հերթին ցատկում: Փոսի մեջ մնում էինք մինչև գնացքի հեռանալն ու ճանապարհ դուրս գալիս: Այրտեղից ոտքով, ավտոբոսով կամ տրամվայով ավարտում էինք մեր ճանապարհի վերջին մասը: Ոտքով գնալը մի առավելություն ուներ՝ ուսումնասիրում էինք տեղանքը և վերադարձին մտնում ազարակները. կարագ ու ձու էինք գնում վերավաճառելու համար:

Հիմնավորապես ապրում էմ Պիեռի տանը: Մեզ մոտ հնարավոր չէր քնել: Տեղ չկար: Հայրական տունն գերմանական բռնի ծառայությունից խուսափող ռուս զինվորների ապաստարան էր դարձել: Սենյակները, նույնիսկ միջանցքը լի էր ռուս զինվորներով: Մորս օգնում էի գետնին տեղաշոր փռել ու ճաշ պատրաստել: Էինում էին զիջերներ, երբ քսանից ավելի ռուս փախստականներ էին քնում մեր տանը: Տեղավորվում էր ով որտեղ պատահեր՝ բազկաթոռին, սեղանների վրա... Ոմանք երբեմն 3—4 օր էին մնում, ապաստելով ազդանշանի:

Հարևանները զիտեին, բայց ծայրոսն չէին հանում: Նրանք տեսնում էին, որ շաբաթը առնվազն մեկ անգամ գերմանական համազգեստներ հագած ինչ-որ մարդիկ էին մտնում Նախարեն փողոցի № 22 տունը ու էլ դուրս չէին գալիս: Բռնի հավաքագրված ռուս զինվորներ էին դրանք: Հայրս նրանց համար քաղաքացիական շոր էր հայթայթում և օգնում միանալ դիմադրության ուժերին:

Նրանց զինվորական համազգեստներն ու սապոգները անհետացնելու պարտականությունը իմ վրա էր դրված:

Գիշերը, պարետային ժամին, վտանգավոր ծանրոցը թևիս տակ, տնից դուրս էի սահում: Մի քանի վայրկյան ականջ էի դրնում, արդյոք չեմ լսվում պահակախմբերի ուղիղ ռոնաձայները, ու մի ցատկով հասնում էի այն փոքրիկ ջրանցքը, որ գտնվում էր մեր տնից 100 մետր հեռավորության վրա, ու արագ համազգեստները նետում մեջը:

Բայց սապոգներն իմ թուլությունն էին: Դրանք նույնպես շր-  
պրրտելու փոխարեն պահում էի նկուղում: Դա հիմար անզգու-  
շությունն էր, որովհետև խուզարկության դեպքում իմ պատճառով  
բոլորիս կզնդակահարեին: Բայց այդ սապոգների համար, որոնք  
հագնել անգամ չէի կարող, պատրաստ էի ավելի վատթար հի-  
մարություններ անել:

Երբեմն երեկոները նկուղ էի մտնում դրանց ձեռք տալու կամ  
ներկելու համար:

Դաշնակիցների ուժակոծությունները հետզհետե ավելի ուժ-  
գին ու հաճախակի էին դառնում: Ծանապարհները, կայարաննե-  
րը, նավահանգիստները անհետանում էին երկնքից տոննաներով  
թափվող ռումբերի տակ: Բազմապատկվում էին գերմանական ռու-  
պաների դեմ կատարվող մահափորձերը: Փարիզի պատերը ծած-  
կվում էին պատանդների գնդակահարությունը ազդարարող մը-  
նայլ, կարմիր աֆիշներով:

Մի օր երեկոյան փողոցում բռնեցին ինձ: Անցագիր չունեի:  
Փաստաթղթերս ստուգելուց հետո հրեցին մի խցիկ, որտեղ արդեն  
բանտարկված էին ինձ նման խեղճ մարդիկ:

Ոչ ոք չի քնում: Ոմանք լաց են լինում: Ուրիշները աղոթում  
են: Իսկ ես սուկալի վախ եմ զգում: Գիտեմ, որ գերմանացի որևէ  
զինվորի դեմ մահափորձի դեպքում մեր միջից կընտրեն պա-  
տանդները: Անվերջ քայլում եմ վանդակի մի ծայրից մյուսը:

Այդ գիշեր սովորեցի վայրկյանները հաշվել: Ամենաշնչին  
աղմուկի դեպքում բոլորը վեր էին թռչում, կանգնում էին ու աչք-  
ները լայն բացում:

— Միայն թե մեր ետևից չգայիս,— ամեն անգամ ասում էր  
լացակումսած, վախից կապտած մի խեղճ ու կրակ մարդ:

Առավոտյան ժամը 5-ին մեզ առաջարկեցին նախքան ազատ  
արձակվելը մի բաժակ սուրճ խմել:

— Բախտների բերեց, տղաներ,— ասացին մեզ,— գիշերը  
ոչինչ տեղի չունեցավ:

Ես հրաժարվեցի սուրճից. ժամը 4-ն անց 49 րոպե է. հիմար  
բան կատացվեր, ձեռք հենց հիմա մահափորձ կատարվեր գերմա-  
նացի մի որևէ զինվորի դեմ. մի սուրճի պատճառով 12 գնդակ  
կստանայի մաշկիս վրա:

Թղթերս ետ վերցրի ու դուրս թռա: Փոստից մեր տունը մոտ  
900 մետր էր: Կանգ առա միայն մեր դարպասի առաջ ու շնչա-  
սպառ փուլ եկա: Հաջորդ առավոտ այդ խոզերը մի խումբ անմեղ

մարդկանց գնդակահարեցին. մի գերմանացի զինվոր էին ապահել:

Ռուսների հեղեղի պատճառով մեր ելույթները օր-օրի դժվարանում էին: Հաղորդակցության կապերը գրեթե խզված են: Գրուսցքները տեղ են հասնում հսկայական ուշացումներով:

Պիեռն ու ես կործանման եզրին ենք: Մեր սպիտակ բանկոնները շարքից դուրս են եկել: Բեմական նոր զգեստներ գնելու փող էլ չունենք: Երբ որևէ տեղ աշխատանք էինք ճարում, մի բան, որ գնալով դժվարանում էր, հանդես էինք գալիս մեր մնացած միակ կապույտ կոստյումով. սովից շնեռնելու համար աշխատանք էր պետք:

— Ամենավատն այն է,— առաց մի օր Ռոջը,— որ դու հեծանիվ չունես:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ես ունեմ: Մենք կարող էինք հեծանիվներով մեկնել հյուրախաղերի:

— Քոնը քավական է:

Կեսօրից հետո ճամպրոկ տեղափոխելու երկու հարմարանք գնեցինք ու տեղավորեցինք մեկը հեծանիվի առջևում, մյուսը՝ ետևում: Հեծանիվն աչքի անցկացրի, յուղեցի, արգելակները կարգի բերեցի. դա իմ մասնագիտությունն էր: «Խեղճ տղա,— մտածեցի,— 40 հեծանիվ ունեիր, որոնք ջրի գնով վաճառեցիր: Հիմա դրանք առնվազն մի 1000 ֆրանկ կբերեիր»:

Աստուսանքի նույն երկար շունեց: Կորցրած բանի համար ես երկար չեմ տանջվում:

Ճամպրոկներից մեկը՝ ետևում, մյուսը՝ առջևում, հեծանիվի վրա լավ ամրացված, պատրաստ ենք ճանապարհ ընկնելու: Սոմորի հետ պայմանագիր ենք կնքել: Փարիզ-Սոմոր տարածությունը պետք է հեծանիվով անցնեմք...

Յուրաքանչյուր 20—30 կմ-ի վրա տեղներս փոխում էինք, ու ամեն անգամ, նայած թե մեզանից ով էր թշու, բարձրացնում կամ իջեցնում էինք հեծանիվի թամբը: Հավանաբար շատ ծիծաղելի տեսք ունեինք, երբ ես էի թշու ու Պիեռը նստած էր լինում իմ առաջ ամբողջովին փակելով տեսողությունս: Ազարակներում կանգ էինք առնում, զրոցում գյուղացիների հետ, ու հնարավորին շարի հաճախ նրանց հետ հացի նստում: Այսպիսով, վերականգնում էինք ուտելիքի համի ու հոտի մեր զգացողությունը:

Երկու օր հետո հասանք Սոմոր: Բնակարանից ու սննդից բացի, օրական 700 ֆրանկ էինք ստանում: Երկու շաբաթ մնալուց հետո Պիեռը դժգոհել սկսեց. աղջիկների հարցը լավ չէր...

Պատահաբար տեղեկացա, որ Դամիան, որը եղույթ պիտի ունենար Անժերում, գնացք չլինելու պատճառով չի կարողանում գալ: Զանգահարեցի.

- Ինչքա՞ն կտաք, եթե գանք:
- Օրը 15.000 ֆրանկ:
- Որքա՞ն ժամանակով:
- Երկու երեկո:
- Գալիս եմք:

Ահա նորից ճանապարհ ընկանք: Այս անգամ դեպի Անժեր: Քամու դիմաց դժվարությամբ եմք ստաջանում: Քամին այնպիսի արագությամբ էր փչում, որ ձայնալարերս վնասվեցին: Տեղ հասնա բոլորովին խզված ձայնով: Հյուրանոցում մեղր, տաք թեյ ու կաթ խմեցրին, բայց չօգնեց: Զայն չունեմ: Դեռ ավելին, սիրտս էլ ցավում է:

Այնուամենայնիվ երգեցինք, բայց դիրեկտորը տվեց հասանելի գումարի կեսը միայն:

Անժերից քժեցինք մինչև Լալալ, այնտեղից էլ՝ Ման: Արդեն պետք է տուն վերադառնալ. մեր տաքատները շատ եմ կարճացել. ամեն անգամ բեմ մտնելուց առաջ ստիպված մկրատով կըտրում էինք դրանց պատսոռոտված, կախ ընկած փողքերը: Բացի այդ, ամեն օր արդուկում էինք, մի բան, որ կարճացնում էր դրանց կյանքը: Ազատ ժամանակի մի զգալի մասը վատնում էինք, զննելով մեր տաքատների կարերը ու լույսին բռնած, ստուգում դրանց հաստությունը: Ի վերջո մեր տաքատները դարձան թափանցիկ:

Ման—Փարիզ 200 կմ տարածությունը մի օրում անցնելով, վերադարձանք տուն:

Աիրան, Ժան-Լուին, Պիեռ Ռոշն ու ես նորից սկսեցինք երևալ Ժան-Ռենայի ռեստորանում:

Այստեղ ինձ ու Ռոշին նայում էին որպես վաղվա հույսեր և ամենայն հարգանքով էին վերաբերվում: Այդ ռեստորանում չէինք երգում, բայց երբեմն ինչ-որ հաճախորդ խնդրում էր երգել, մերժում էինք: Իսկ երբ ասում էին. «Խնդրում եմք մեզ հաճույք պատճառել ու երգել, խոստանում եմք մի լավ ճաշ, բոլոր պարագաներով հանդերձ», համաձայնում էինք:

Պետք է ասել, որ այդ ռեստորանում համեղ ուտելիքներ էին պատրաստում ու տալիս էին նախապատերազմյան ապիտակ հաց: Ամեն անգամ շատ խնդրել տալուց հետո վերջապես ստանում էինք այն, ինչ ցանկանում էինք: Հաճախորդը 1000 ֆրանկանոց

մի սիրուն թղթադրամ էր տալիս, նրան հետևում էին մյուսները:  
Միայն այդ դեպքում բարեհաճում էինք մի քանի երգ կատարել:

Կողմնակի այս եկամտուտները շատ ավելի նշանակալից էին,  
քան այն աշխատավարձը, որն ստանում էինք գինետներում:

Ելույթից հետո նստում էինք սեղանի շուրջն ու ճաշակում մի-  
լիոնատիրոջը վայել սեղան: Հետո, թևանցուկ արած, տուն էինք  
գնում:

**Երբեք չենք գիտենա,  
Թե ինչպես է սերը մեր սիրտը ներխուժում:  
Որտեղի՞ց է գալիս և ինչպե՞ս է անում,  
Որ բանասերկում է մեզ իր ցանցի մեջ:**

Ես նրան հանդիպեցի «Պոփ Շամբորում»: Դա 1942 թվա-  
կանի նոյեմբերյան մի երեկո էր, երբ գերմանացիք Ստալինգրա-  
դի պատերից էին կառչել: Նստած էր սրահում, սեղանի առաջ,  
իսկ ես՝ բարում: Տեղնուտեղը սիրահետեցի: Բայց նա կտրուկ  
կանգնեցրեց ինձ ու սասաց.

— Ժամանակ մի կորցրեք ինձ վրա: Ծառ շոյված եմ, որ  
երիտասարդ եմ երևում, բայց տասնվեց տարեկան աղջիկ ունեմ:  
Նա ուզում է երգչուհի դառնալ: Ես այդ պատճառով եմ եկել այս-  
տեղ: Դուք ճանաչո՞ւմ եք գեղարվեստական մասի վարիչին:

— Իհարկե: Ժան Ռենան է: Ծառ հանելի մարդ է և լավ գի-  
տի իր գործը: Կարող եք շատ համարձակ խոսել հետո: Ես ձեր  
մասին մի երկու խոսք կասեմ նրան:

— Ծառ սիրալիր եք, բայց չարժե:

— Ինչպես ուզում եք:

Հաջորդ երեկոյան այնտեղ եմ, մայրն էլ է այնտեղ. աղջիկը  
քննություն է հանձնում: Եթե մայրն իմ ճաշակով էր, ապա աղ-  
ջիկն առավել ևս: Տասնվեց տարեկան Միշելինը հմայիչ դեմք  
ունեք, լավ կազմվածք ու դրա հետ մեկտեղ հազվագյուտ ձայն:

— Նա քեզ դո՞ւր է գալիս, — սասաց Աննետը, որն ինձ հետ  
էր եկել ու լավ ճանաչելով ինձ, նկատել էր իմ հետաքրքրությու-  
նը աղջկա նկատմամբ:

— Իսկը իմ ճաշակին է: Չչարժվես, ուզում եմ խոսել նրա  
հետ:

Աննետը չհասցրեց բողոքել, ես արդեն աղջկա մոտ էի: Նա-  
յեց ինձ ու մեղմ սասաց.

— Ես ձեզ հիշում եմ, ես ձեզ տեսել եմ ինչ-որ ուշադրում:

— Ի՞նչ կարծիք ունեք:

— Օ՛հ, շատ լավն էիք:

Գործերը լավ են գնում: Եթե չհաջվեմք այն, որ մեզանից քիչ հեռու կանգնած աղջկա մայրը, ինչպես տեսնում եմ, համաձայն չէ, որ ես խոսեմ իր աղջկա հետ, մեկ էլ Աննետը, որը ցատումնալից հայացքներ է նետում վրաս: Բայց ես արդեն մտածում էի միայն իմ նոր հանդիպման մասին:

— Կարո՞ղ եմք հանդիպել վաղը, — շնչացի ես ու ավելացրի, — առանց ձեր մոր...

— Կփորձեմ, բայց շատ դժվար է:

— Սասցեք նրան, որ ձեզ ունկնդրություն են խոստացել:

— Դա լավ միտք է: Մայրս կեսօրից հետո աշխատում է:

— Նա՞ էլ է երգում:

— Ոչ, ոչ: Նա աշխատում է «Մարիվո» կինոթատրոնում:

Հարկավոր է շտապ ժամադրվել. գգում եմ, որ վայրկյան առ վայրկյան մայրը կարող է մոտենալ. ավելի արագ եմ խոսում:

— Լավ, ես կգամ ձեր ետևից: Որտե՞ղ եք ապրում:

— Անգիլեն փողոցի վրա: Այստեղից մոտ է:

— Ժամը 14-ին կլինեմ ձեզ մոտ: Չուշանաք. նախ ես շատ ճշտապահ եմ և հետո ասում եմ «Ես նրան սպասեցնել կտամ» օյիներագությունը:

Հաջորդ օրը երկուսս էլ ճիշտ ժամանակին ժամադրավայրում էինք:

— Ո՞ր եմք գնում, — հարցրեց Միշելինը: Այդ մասին չէի մտածել: Միայն իր մասին էի մտածել:

— Հը... Ես ձեզ առաջարկում եմ կարոսել նստել, համաձայն եք:

— Պաշտում եմ կարուսելը:

Աննետի հետ կապերս խզեցի: Միշելինի համար խելագարվում եմ: Առաջին ժամադրությունից հետո ակետցիք հանդիպել ամեն օր: Բայց գիշերվա մասին խոսք չիներ չէր կարող. այդ աղջիկը ոտքից գլուխ լրջություն էր: Հետաքրքրասեր ու աշխույժ, նա սիրում էր ծիծաղել ու թեթև ֆլիրտ անել: Այսքանը: Մնացածի մասին ոչ մի զիջում: Ես սիրում էի նրան, ուստի համակերպվում էի իմ ճակատագրին, թեև, միևնույն ժամանակ, սպասում էի այն պահին, երբ նա կթուլանար... Նա իսկույն դուր եկավ ընտանիքիս և ընկերներիս: Ամեն ինչ լավ է: Ամիսներն անցնում են ու մի օր էլ արտաբերվեց ամուսնություն բառը: Միշելինի ծնողները, իհարկե, այնքան էլ գոհ չէին, ու դա բնական է, քանի որ դեռ

երիտասարդ էի, խենթ ու առանց մի սուի: Իմ օգտին միայն մի հանգամանք կար. Միջելիների խորթ հայրը ռուսական ծագում ունեւոր, իմ հայրն էլ ռուսերեն գիտեր: Այդ հողի վրա սպեկուլյացիա արեցի երկուսին իրար հանդիպեցնելով:

Փոխզիջման գնալով, մեր ընտանիքները համաձայնության եկան նշանել մեզ: Այսպիսով մեր ծնողները ժամանակ էին շահում, իսկ մենք ազատ հանդիպելու թույլտվություն էինք առանում:

— Եթե երկու տարի կամ շարունակեք իրար դուր գալ, կարող եք ամուսնանալ: Բայց առայժմ դեռ շատ ջանել եք: Բացի այդ, դուք, Ծարլ, դեռ կյանքը ճանաչելու կարիք ունեք,— ասաց Միջելիների մայրը, որն ինձ չէր վստահում:

Ինձ թվում էր, նա այլ հեռանկարներ ունի իր աղջկա համար: Բայց առիպված էի հպատակվել ու սպասել: Իմպուլսիվ խառնրվածք ունեւոր, ոչինչ այնքան չի զզվեցնում ինձ, որքան արասելը, երբ ուզում եմ ձեռք բերել, ստանալ այն, ինչ տենչում եմ ողջ էությանը:

Միջելիների մայրը այնքան էլ մեղավոր չէր. լուրեր էին շրջում, որ դաշնակիցները պատրաստվում են դեսանտ իջեցնել Ֆրանսիայի ափերը, ու, բնականաբար, յուրաքանչյուրը գործում էր ելնելով իր ստրատեգիայից:

— Նրանք առի կելնեն Դրնկերգում: Անգլիացիք ոխակալ են, նրանք կուզեճան 1940 թվականի վրեժը լուծել:

— Ի՞նչ ես խոսում, նրանք կիջնեն Կալե. ավելի կարճ ճանապարհ է:

— Հիմար հո չես: Կալեում գերմանացիք սպասում են նրանց:

— Ծիծաղելի բաներ եք ասում, նույնիսկ գերմանացիք չգիտեն, թե որտեղ կիջնեն նրանք:

— Բավականին հիմար են այդ իմանալու համար:

Դաշնակիցներին ենք սպասում: Մինչ այդ, ամեն ինչ գնալով վատանում է: Աստիճանաբար խանութներն ու թատրոնները փակվում են: Այնուամենայնիվ, ես ու Պիեռը մինչև «մեծ պայթյունը» երկու պայմանագիր կնքեցինք: Մեկը «Տեստոր դը Լ'Էտուալում», մյուսը՝ «Էքսելիտորում»: Ե՛վ մեկը, և՛ մյուսը բացվող տանիք ունեն, իսկ դա շատ կարևոր հանգամանք է, քանի որ թատրոններն արդեն լույս վառելու իրավունք չունեն: Ելույթները տեղի են ունենում բաց տանիքից՝ ներս ընկնող լույսի տակ: Կուլիսներում կռիվ է գնում, թե ով շուտ կսկսի իր ելույթը. ինչքան ուշ երգես, այնքան ավելի մթության մեջ կերգես:



Բնականաբար, ներկայացման «աստղը» զերծ էր այդ գլխացավից: Նրան լուսավորում էին ավտոմեքենայի շորս լուսարձակներ:

«Էտուալում» ելույթ էի ունենում երրորդ համարի տակ, այնպես որ մեր ելույթի ժամանակ դեռ բավականին լուսավոր էր լինում, որպեսզի տեսնեին մեզ, բայց «Էքստելսիորում» մենք ուղղակի «աստղից» հետո էինք բեմ բարձրանում ու մնում ստվերի տակ և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստով:

Մինչ այդ վատ էին գործերը նաև մեր տանը, ուր գեստապոն իր առաջին մուտքը գործեց, փնտրելու համար Միսաք Մանուշյանին, որն իմ ծնողների մտերիմն էր: Նա մի բուռ գաղթական հայերի հետ, հենց Փարիզի կենտրոնում, ասորձանակներով ու նրոնակներով զինված, հարձակումներ էր գործում գերմանացիների վրա:

Մի օր իմացել էր, որ Կադե փողոցով ինչ-որ գերմանական գեներալ է անցնելու՝ պայուսակում երկու միլիոն ֆրրանկ...

— Փողի կարիք ունենք,— ասաց Մանուշյանը իր հանդարտ ձայնով,— հարկավոր է հատիշտակել այդ գումարը:

Իսկույն նեթ մեքենայի վրա հարձակվելու պլան կազմվեց: Այդ օրը, Կադե փողոցում շուկայի օր էր, անգամ այն դեպքում, երբ գնելու բան չէր լինում, բազմություն միշտ կար ու կար: Լավ զուգադիպություն էր. սովորական այդ ամբոխը կասկած չէր հարուցի: Գործողության օրը կանայք տներից դուրս թափվեցին սովորականի նման, ամբողջովին գրավելով փողոցն ու մայրերը: Բայց այս անգամ նրանց զամբյուղների մեջ զենք կար: Գերմանական ոստիկանների ու գաղտնի ոստիկանների փոքրիկ խումբը, որը պետք է ապահովեր ավտոմեքենայի ճանապարհը, բոլորովին չկասկածեց: Մայրս էլ էր այնտեղ՝ իր բաժին զենքով:

Մեքենան եկավ: Կանայք կարծես պատահմամբ կանգնեցին փողոցի մեջտեղը: Տղամարդիկ մտնեցան նրանց ու, երբ մեքենան ստիպված կանգ առավ, զենքերը վերցրին կանանցից, ուղղեցին մեքենայի վրա ու խլելով փողով լի պայուսակը, անհետացան: Այդ բոլորը երկու րոպեից էլ պակաս տևեց: Կանայք հանգիստ շարունակեցին իրենց առևտուրը: Այն փոքրաթիվ ոստիկանները, որոնք պետք է պաշտպանեին գեներալին, ոչինչ չտեսան: Երբ ահագանգը տրվեց, արդեն շատ ուշ էր: Զենքերը վերստին գտան իրենց թաքստոցները, իսկ երկու միլիոն մարկը արդեն շատ հեռու էր:

Հայրս աշխատում էր ռեստորանում ու լավ էր վաստակում: Բայց նրա տունը բերած դրամը իսկույն կեթ կուլ էր գնում:

Պատճառն այն չէր, որ մեներ գալի պես էինք ուտում, պարզապես մեր տունը հավաքակալյան էր դարձել: Դիմադրության ուժերի մի մասնակիցը գնում էր, նրան փոխարինելու էին գալիս գեատապոյի կողմից փնտրվող երկու ուրիշ փախստականներ: Բոլորը ծխում, ուտում ու քնում էին Նավարեն փողոցի վրա: Օրինաչափ երևույթ. պատերազմ էր:

Հայրս ու մայրս սնում, մխիթարում ու զվարճացնում էին այդ հալածված մարդկանց: Իհարկե, նրանց մեջ էին նաև Միսաք և Մելինե Մանուշյանները, որոնք օրերով մնում էին մեր տանը: Մելինեն ծխում էր ու ծխում: Երկուսն էլ շատ ուրախ էին: Մելինեն շուտ էր ոգևորվում, Միսաքը շատ հանդարտ էր:

Մելինեն երբեմն մի շաբաթով մնում էր մեզ մոտ, մինչ Մանուշը (Մանուշյանին մտերմաբար Մանուշ էինք անվանում), օրերով անհետանում էր, թողնելով մեզ լարված, տագնապալից վիճակում: Ու ամեն անգամ վերադառնում էր այնպես, կարծես հենց նոր բակ էր դուրս եկել մաքուր օդ շնչելու: Ու ծնողներին, Մելինեի և Մանուշյանի միջև սկսվում էր մի երկարատև խոսակցություն, որի ընթացքում «համայնավար» բառը հաճախ էր հիշատակվում: Երբեք չէին օգտագործում «կոմունիստ» արտահայտությունը. պատերից անգամ զգուշանում էին: Իսկ «համայնավարը» ոչ ոք չէր հասկանում: Մանուշյանը խոսում էր հանդարտ, համոզված ու քնարական շնչով.

— Մի օր, երբ հաղթենք,— հաճախ ասում էր նա:

Փարիզի ազատագրումից մի քանի ամիս առաջ, հաղթանակի ճանապարհին Մանուշյանը զոհվեց:

Երբեք չեմ մոռանա օկուպանտների կողմից Փարիզի պատերին փակցրած այն կարմիր աֆիշները, որոնք պատկերում էին Մանուշյանին իր ընկերների հետ: Մազակալած դեմքով, բայց շիտակ հայացքով Մանուշյանն էր դա, որին իհարկե, նկարել էին երկար տանջելուց հետո:

Այդ մարդը, որին «տեռորիստ», «օտարական» էին անվանում, մի մարդ էր, որը նստում էր կողքին ու սիրալիք շախմատ էր սովորեցնում: Երբեմն հորս դիմելով ասում էր. «Միշտ, մի բան երգիր լսենք...» Ու մեղմ ձայնակցելով երգում էր: Երբեմն էլ իր գրած բանաստեղծություններն էր կարդում:

Այդ շրջանում մաթեմատիկայի դասեր էի առնում հայկական մի ընտանիքում, որն ապրում էր Բելվիլում: Մի առավոտ մեկը եկավ ու նախազգուշացրեց հորս, որ էլ չպետք է հաճախեմ նր-

րանց տուն: Նրանց ձերբակալել էին ու տունը հսկողության տակ  
առել: Այլևս չվերադարձան նրանք:

1944 թվականի փետրվար ամսին Մանուշյանին իր ընկեր-  
ների հետ գնդակահարեցին:

Չնայած անասահման վշտին, Մելինեն շարունակեց իր գործու-  
նեությունը: Մանուշյանի խումբը քայքայվեց, բայց ովքեր կենդա-  
նի մնացին, աստիճանաբար վերակազմավորվեցին ու ավելի թա-  
փով վերակազմեցին իրենց գործունեությունը:

Մելինեի ներկայությունը մեր թաղում ավելի ու ավելի վը-  
տանգավոր էր դառնում և՛ բոլորիս, և՛ իր համար: Ու մի օր նա  
հեռացավ մեր տնից: Արցունքներն այքներին, մեներ բաժանվե-  
ցինք՝ հաղթանակից հետո դարձյալ հանդիպելու հույսով:

**Կվերածնվեն օրերը երջանիկ՝**

**Կանաչ արևները մեր կյանքի...**

Մեր տան դիմաց մի փոքրիկ հյուրանոց կար: Հայրս ու ես  
այնտեղ տեղավորվեցինք. գեստապոլի մուտքը մեր տուն կանո-  
նավոր կերպով շարունակվում էր: Ամեն առավոտ, լուսաբողարկ-  
ման ավարտից քիչ առաջ, գերմանացիք ներխուժում էին մեր  
տուն ու այնտեղ տեսնում դեռ քնած մորս ու Աիդային միայն:  
Հայրս ու ես հյուրանոցի մեր սենյակի վարագույրի ետևից հե-  
տևում էինք գեստապոլի ելումուտին:

Հենց որ նրանց մեքենան անհետանում էր, հանգիստ անց-  
նում էինք փողոցն ու նախաճաշում «Էրզաց» սրճարանում: Այս  
փոքրիկ խաղը ակնեց շատ անհամազայտացնել հորս. զգում էր, որ  
հետևում են իրեն: Նա որոշեց Աիդային ու մորս ուղարկել Նոր-  
մանդիաչում ապրող մի հին բարեկամի մոտ: Երբ կանաչք լուր  
ուղարկեցին, որ առոք-փառոք տեղ են հասել, հայրս հանգիստ  
շունչ քաշեց ու ասաց.

— Հիմա արդեն ես ինձ լավ կզգամ:

Ինքն իր հերթին, գեստապոլի կողմից հալածվելով (հրաշ-  
քով դեռ չէին բռնել նրան), փախարկ կիռն:

Հաջորդ օրը դաշնակիցները արի դուրս եկան:

Գեստապոն նորից ներխուժեց, բայց այս անգամ տունը բո-  
լորովին դատարկ էր: Բարեբախտաբար, պատուհանից տեսել էի,  
որ նրանց մեքենան կանգ առավ մեր դռան առաջ: Արագ տանիք  
բարձրացա ու թաքնվեցի:

Մայրս և Աիդան ուժասպառ, սովահար ու ցնցոտիների մեջ  
տուն վերադարձան: Ողջ ճանապարհը, մոտ հարյուր /կիլոմետր,

ոմբակոծությունների տակ ոտքով էին անցել, ճանապարհին դեմ առ դեմ գալով հոգնած ու բարոյազրկված գերմանական շարասյուններին:

Ո՛չ Պիեռը, ո՛չ էլ ես մի ֆրանկ անգամ չունեինք գրպաններումս: Փարիզն առանց սննդամթերքի է մնացել: Քաղաքի վրա թևածոտ է հուզմունքն ու խառնաշփոթությունը: Որոշեցի գնալ և ուտելու բան ճարել: Երբ Միշելիմին հայտնեցի որոշումս, նա ակսեց լաց լինել:

— Ծառ հիմար բան կլինի, եթե ազատագրումից մի քանի օր առաջ սպանվես:

Ես նրան չլսեցի: Վճռել էի դիմել այդ ռիսկին: Ազատագրվելու համար ապրել էր հարկավոր: Ոգևորված գնացի ու վերադարձա ոտքերս քարշ տալով. հիսուն կիլոգրամանոց կարտոֆիլի մի պարկ բերեցի: Գերմանացիներն ու ռատիկանները, որոնց հանդիպում էի ծանր բեռին տակ կքած, հազիվ էին նայում ինձ. նրանք հիմա այլ հոգսեր ունեին: Կարտոֆիլի մի մասը պահեցի՞նք մեզ ու Ռոշի համար, իսկ մնացածը տվինք ծնողներին բարեկամներին:

Հայրս վերադարձավ:

— Լիոնում ավելի վատ է, քան այստեղ,— ասաց նա,— այստեղ գոնե կոփվ, դալմադալ կս. ինձանով զբաղվելու ժամանակ չեն ունենա:

Իարձյալ բոլորս միասին եմք, բայց մեր քննասնիքն անեց մի անդամով ևս. Միշելինը՝ իմ պաշտոնական նշանածը, մեզ մոտ տեղավորվեց և Աիդայի հետ բաժանեց նույն անկողինը:

1944 թվականի օգոստոսյան սոսկալի մի շոգ օր դաշնակիցները մոտեցան Փարիզի դարպասներին: Բարիկադներով պատված մայրաքաղաքը ըմբոստացավ: Նախքան օկուպանտները կդատարկեին քաղաքի փողոցները, թաքստոցից դուրս բերված դրոշներ երևացին տների պատուհաններում: Չորս տարվա զրուպրված կատաղությունը վերջապես պայթեց, ու Փարիզը ակսեց կռվել:

Ազատագրված Փարիզը ողջունեց իր ազատարարներին:

Երբ գերմանացիները Փարիզ մտան, ես հետաքրքրասերների մեջ էի:

Հիմա, երբ ժողովուրդը ցնծության մեջ է, ու խեղճորեն ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, ռուսական դրոշներ է ծածկում տողանցող դաշնակից ուժերին, դարձյալ այնտեղ եմ:

Միջելինն ու Աիդան ինձ հետ են: Ավելի ճիշտ իմ առաջ. ես նրանց տեղավորել եմ առաջին շարքում: Խակի գույնի ավտոմեքենաների մեջ նստած զինվորները, չկարողանալով անտարբեր անցնել այս երիտասարդ ու գեղեցիկ երկու աղջիկների կողքով, նրանց նետում էին ծամոն, մսի պահածոներ ու մանավանդ, այո, մանավանդ, սիգարետներ:

Աղջիկները, օդում որսալով դրանք, աննկատելի տալիս էին ինձ, իսկ ես տեղավորում էի պայուսակիս մեջ: Իհարկե, կարծես վատ վարքի տեր աղջիկների բարեմասնությունները իր շահերի համար օգտագործողի տպավորությունն էի թողնում, բայց ինչ կարող էի անել: Հաղթանակի այդ օրերին ամերիկյան սիգարետների տուփը սև շուկայում հարյուր ֆրանկ արժեր: Հենց առաջին օրը քառասունհինգը տուփ սիգարետ բերինք տուն, որը կապահովեր մեր ընտանիքի մեկ շաբաթվա անունը:

Երեկոյան ես առիպված էի ամուր դիմադրություն ցուցաբերել իմ երկու «մեղակից» ընկերներին, որոնք ուզում էին պահել սիգարետները ծխելու համար: Պատկերացնո՞ւմ եք: Բայց քանի որ մեկը քույրս էր, մյուսն էլ նշանածս, ի վերջո համաձայնեցի մի քիչ զիջել: Յուրաքանչյուրին երկուական տուփ տվի, մնացածը գնաց սև շուկա:

Երեսուցին ազատագրման առաջին լրագրերը: Վազեցի մի կապոց թերթ վերցրի ու մի քանի օր զբաղվեցի իմ ամենաստաջին արհեստով: Վաճառողներ քիչ կային: Մարդիկ ուղղակի հար-

ձակվում էին վրաս թերթերս գնելու: Գործերը լավ էին գնում, ու նորից գրասնունս զգացի թղթադրամների հաճելի շրջումը: Գոմարդ մեծ չէր, բայց երբ երկար ժամանակ փող չէս ունեւում, մի տեսակ հաճելի զգացում է տիրում քեզ փողին ձեռք տալիս: Ինձ առաջարկեցին թերթ վաճառել քաղաքի արվարձաններում: Վարձատրությունը լավ էր. համաձայնեցի: Ռոշն ինձ տվեց իր հեծանիվը, ու ահա ես թերթերով լի պայուսակը հեծանիվիս ամրացրած, ակսեցի ֆոֆոալ Փարիզի շրջակայքում:

Սկսվեցին ազատագրմանը նվիրված տոնահանդեսներն ու համերգները: Թողեցի լրագիր վաճառելն ու Պիեռի հետ դարձյալ ձեռնամուխ եղանք մեր հին գործին: Երբեք գործ չէինք ունեցել «Ռադիո-Փարիզի» հետ, ու, պետք է ասեմ, որ մենք չէ, որ հրաժարվում էինք, այլ իրենք:

Արտիստների գուման կոմիտեն մեզ առարկելու ոչինչ չուներ, այնպես որ կարող էինք զբաղվել մեր մասնագիտությամբ:

Մեր ազատարարները հանգստանալու և զվարճանալու կարիք ունեին: Պիեռն ու ես անգործ չեւք. Փարիզը լի է ներկայացումներով: Ֆոնտեն փողոցի վրա Բարդին մի գինետուն բացեց: Գլխապատառ վազեցինք: Եթե ուզում էինք մի կարգին պայմանագիր ձեռք բերել, ապա պետք է շոտ ներկայանայինք: Բարդին երեք օրվա պայմանագիր առաջարկեց:

— Ինչքա՞ն էք ուզում:

Ռոշեցի շատ պահանջել, մտածելով, որ ազատագրմանը հաջորդող այս խելահեղ օրերին ամեն ինչ հնարավոր է: Ռիսկ արեցի.

— Երեք հազար ֆրանկ...— ասացի:

Մտածելով, որ գուցե 1000 ֆրանկ ատանանք:

Առաջարկիս հետևող հարցից շունչս կտրվեց:

— Յուրաքանչյուրի՞դ:

Սկսել ես, ուրեմն շարունակիր մինչև վերջ:

— Իհարկե:

— Օրակա՞ն:

— Հասկա ինչպե՞ս: Դուք կարծում եք շաբաթակա՞ն:

— Թանկ է:

— Մենք թանկ եւք:

Սիրոս արագ խփում է: Հաշվեցի, եթե համաձայնի՞, կստանանք 18.000 ֆրանկ: Երանի համաձայներ... Ատոված իմ, երանի համաձայներ:

— Համաձայն եմ,— ասաց Բարդին երկար մտածելուց հետո,— բայց այդ գնով ուզում եմ, որ բանը զբաղեցնեք կես ժամ:

Այդ գնով Ռոշն ու ես համաձայն կլինեինք բեմն զբաղեցնել թեկուզ ողջ գիշեր: Հիմնադրման օրվանից առաջին անգամ «Ռոշ-Ազնավուր» կազմակերպությունը հաջողություն ունեցավ: Պատճառը չգիտեմ: Ինչևիցե, շրջապատի բոլոր կաբարեները մեզ էին հրավիրում:

Բարդին որոշեց մի քանի օրով երկարացնել մեր պայմանագիրը: Պահանջեցի օրական 10.000: Տվեց: Նոր հաջողություն, նոր առաջարկ: Պահանջեցի 15.000: Տվեց:

Վերջապես մի քիչ փող ունենք: Ռոշին առաջարկեցի ռեկլամ կազմակերպել մեր մասին: Մի քանի օր հետո Փարիզի պատերին փակցվեցին մեր նկարները: Սա իմ առաջին ինքնաֆինանսավորումն էր:

Երեկոյան քեֆը խոռում է մեր տանը: Ընտիր գինու բազմաթիվ շշեր են բերել, հաղթող գինավորներից վերցված պահածոներով մաշրո բազմազան ու բազմապիսի ճաշեր է պատրաստել: Հայրս չի կարողանում ուրախությունը զսպել. անդադար խոսում է, բաժակ-բաժակի ետևից է բարձրացնում ու ներբողներ կարդում հաղթանակի հասցեին:

Ոսկի շրջան է մեզ համար: Կանետոտին մեզ առաջարկում է երգասանակներ ձայնագրել: Սկսեցին երևալ «Ռոշ և Ազնավուր» ձայնասանակները: Ցնծության մեջ ենք: Ապագայի ծրագրեր ենք կազմում: Մտածում են. «Երանի այսպես շարունակվեք»:

Այդպես չշարունակվեց: Ազատագրման հրճվանքն աստիճանաբար թուլացավ, Փարիզն ու փարիզցիք ջունչ քաշեցին, կյանքի ուժը կանոնավորվեց, ու մեր «գները» փոխանակ բարձրանալու, կորագծով իջան: Վստ օրերը ետ դարձան:

**Սիրում եմ Փարիզը մայիսյան:  
 Բողոքօցներն են պայթում:  
 Իսկ ծեր քաղաքը,  
 Որ ողողվում է մի նոր ջահելությամբ,  
 Փայլատակում է, ճառագայթում:**

Դաշնակից բանակների օդակը սեղմվեց, ու Երրորդ Ռայխը փոշի եկավ: 1945-ի մայիսի 8-ին համաշխարհային երկրորդ պատերազմը ավարտվեց:

Միջառլանջային երկար տարիներ ապրած, սով ու սարսափ տեսած մարդկանց աչքերի մեջ երջանկություն, բայց և խոր հոգնածություն կա:

Այդ երկարատև դժբախտությունից վերջնականապես ազատագրվելու և հույսն ու հավատը վերստին գտնելու համար շատ ժամանակ էր պետք: Մենք պետք է նորից սովորեինք նորմալ ապրել:

Հաղթանակի օրը, երեկոյան նորից տանն ենք, բոլորս հավաքված մի սեղանի շուրջը՝ հայրս, մայրս, Աիդան, Միշելինը, Ես և իհարկե մեր բարեկամները: Տունը արժանապայել նշելու համար շուտ տվի գրպաններս ու մինչև վերջին սուն ծախսեցի: Գինի՞նք չրի նման հոտում է, մայրս հայկական այնպիսի մի ճաշ է եփել, որի նմանը վաղուց չէինք կերել: Ծիծաղում ենք, խոսում բոլորս միասին ու երգում ենք, իհարկե, շատ բարձր: Բաժակաճառերն իրար են հաջորդում: Երջանիկ ենք: Հայրս բարձրացրեց բաժակը:

— Խաղաղության այս առաջին ճաշին խմե՛նք մեր այն բարեկամների կենացը, որոնք այլևս չեն վերադառնա:

Խմեցինք լուրջ, հուզված: Քանի մեզ չէր համակել խոր ու



ճնշող տխրությունը, հայրս նորից լցրեց բաժակներն ու վերագրու-  
նելով ժպիտը, մի նոր կենաց առաջարկեց.

— Խմենք նրանց կենացը, ում նորից ենք տեսնելու:

Էլի խմեցի՞նք: Նայում եմ մերոնց ու մտածում. գիտեմ ով եմ  
եղել, բայց չգիտեմ, ինչ կլինեմ: Ու մինչ գիցնի խփում է գլխիս  
ու հաճելի թմրություն է պարուրում ինձ, ինքս ինձ ասում եմ, որ  
չրոք բախտավոր եմ այսպիսի ընտանիքում ծնվելուս համար:  
Ռոշում եմ՝ ինչ էլ դառնամ այսուհետ, միշտ կլինեմ նրանց կող-  
քին, որովհետև այդ երեկո ես զգացի, թե որքան ենք կապված  
իրար:

Ամիսներն անցնում են, իսկ երբ փող չունես, պատերազմ թե  
խաղաղություն՝ միևնույն բանն է:

Ազատագրման տոնակատարություններից ու ետպատերազմ-  
յան հրճվանքից հետո երկիրը վերակառուցվել սկսեց: Բայց եր-  
գը դեռ առաջնակարգ պահանջ չէ:

Պիեռն ու ես իհարկե չենք տրտնջում, բայց և այնպես մեր  
լավատեսությունը լուրջ հարված ստացավ. երեք ամիս է, ինչ ա-  
ռանց աշխատանքի ենք, երեք ամիս է անընդհատ սեղմում ենք  
մեր գոտիները. հեշտ բան չէ:

Բարեկամներից մեկը՝ Տոնի Անդալը, Ռոշին դաշնակահարի  
տեղ առաջարկեց մի նվագախմբում, որն այդ թատերաշրջա-  
նում էլույթ պիտի ունենար «Կազինո դը Սեն Ռաֆայելում»:

— Իսկ ե՞ս. ի՞նչ պիտի լինի իմ վիճակը:

— Որևիցե երաժշտական գործիքի վրա նվագո՞ւմ ես:

— Ոչ մի:

— Հետո՞...

— Բայց ես կարող եմ երգել:

— Երգչի համար դրամագլուխ չունենք:

Ռոշը անսպասելի հայտարարեց.

— Նա կարող է բասի վրա նվագել:

— Գժվե՞լ ես, ինչ է: Կյանքումս բասին ձեռք տված չկամ:

— Կտվորես:

— Տասնհինգ օրո՞ւմ: Խելագարվե՞լ ես:

— Որ ուզենաս, կկարողանաս:

Բասը բերին ու տվին ձեռս. սովորի՛ր: Տասնհինգ օրում լավ  
թե վատ սովորեցի ամերիկյան ջազի կլասիկների չորս գործ: Մի  
ամբողջ երեկո մարդկանց պարել տալու համար չորս գործը բա-  
վական քիչ էր: Ինչեիցե: Պայմանագիրն ստորագրեցի՞նք, գը-  
նացք նստեցի՞նք ու ճանապարհ ընկանք դեպի Սեն-Ռաֆայել:

Հարմար գնով մի սենյակ վարձեցի, հեռագրեցի Փարիզ՝ Արդային, Միշելիճին ու մորս կանչեցի մոտս: Մեր ելույթի առաջին օրը, երեկոյան, Սեն-Ռաֆայելի ողջ երիտասարդությունը այնտեղ էր: Խմբի չորս դիրեկտորները լսեցին մեր համերգն ու իմ նվագած չորս գործերից գոն մնալով, գնացին զբաղվելու այլ գործերով: Իսկույն թողեցի ծանրաշարժ գործիքս ու վերափոխվեցի երգչի: Բայց աչքի տակով հետևում էի, հեևց որ դիրեկտորներից մեկն ու մեկը սրահ էր մտնում, վրա էի պրծնում բաաին ու նվագում, ինչպե՛ս, չորս կտորներից մեկը: Մի քանի օր ամեն ինչ կարգին էր: Հետո դիրեկտորներից մեկը, որի լսողությունը մի քիչ ավելի լավ էր, քան մյուսների՛նը, ի վերջո նկատեց, որ ամեն անցնելիս նույն եղանակներն են հասնում ականջին:

— Ինչո՞ւ միշտ նույն բաներն եք նվագում:

— Որովհետև ժողովուրդն է պահանջում:

— Այդքան հաճա՞խ, հետաքրքիր է...

— Գիտե՞ք, ողջ պատերազմի ընթացքում խեղճերը զուրկ էին ամերիկյան երաժշտությունից, հիմա տեղը հանում են: Հավատացե՛ք ինձ, ես այդ անում եմ միայն նրանց հաճույք պատճառելու համար:

Բացատրությունն ընդունեց, բայց զգացի, որ այնքան էլ չհամոզվեց: Ապացուցելու համար, որ ես երաժիշտ եմ, ականցի դաշնամուրի վրա վախեր և տանգոներ նվագել: Այդ ընթացքում Ռոշը սրահում ֆոֆոտում էր... Ղեկավարության թերահավատությունը ականց անհանգստացնել ինձ. մի օր հավաքեցի նվագախմբի տղաներին ու ասացի.

— Լսե՛ք, տղերք, հարկավոր է, որ բասը անհետանա: Մեկն ու մեկը պետք է գողանա այն, ու պահի մինչև պայմանագրի վերջը:

— Բաս անհետացնելը այնքան էլ հեշտ բան չէ,— ասաց Ռոշը:

Այս ընթացքում կույր աղիքի մի սուր նոպա բռնեց, ու ինձ տեղափոխեցին հիվանդանոց: Ութ օր անց վերադարձա ու երգելի ականցի: Էլ բաաին ձեռք տվող չկար:

— Հասկանո՞ւմ եք,— ասացի դիրեկտորին,— վիրահատությունից հետո կանգնել խորհուրդ չի տրվում:

Մի օր, այնուամենայնիվ, դիրեկտորն ի՛նձ հասկացրեց, որ բավականին հանգստացա նստած երգելով ու ժամանակն է արդեն, որ ես ականս զբաղվել այն գործով, որի համար ինձ վարձատրում են:

Հաջորդ օրը ինձ Փարիզ կանչեց զինվորական վերստուգիչ ֆանձնաժողովը: Մեկնելուց առաջ հավաքեցի խումբն ու ասացի.

— Տղերք, գնում եմ՝ ետ գամ: Երեսունմեկ ժամում կլիներս այստեղ: Բայց ուզում եմ, որ գալուց հետո քան այլևս այստեղ չտեսնեմ: Ինչ ուզում եք՝ արեք:

Տղաները միևնույն կաշարան ուղեկցեցին, ճանապարհին սովորականի պես կատակելով, մի քան, որ այլևս չէր ծիծաղեցնում ինձ. ես առողջ էի. կարող էիմ քանակ տանել: Իսկ իմ մասնագիտության համար քանակը կարող էր կործանիչ դեր խաղալ. «մեկ, երկու, մեկ, երկու», «ձախ դարձ», «քայլով մարշ»: Այդ բոլորը կարող էր սոսկալի հոգնեցնել ինձ: Դրան ավելացրած ուսերիս գցած քանակայինի պայուսակը, քանակայինի ճաշը ու առավոտ շոտ վեր կեճալը: Ո՛չ, այդ բոլորն ինձ համար չէ: Եվ հետո, ով գիտե՛ որտեղ կտեղակայվի մեր կայազորը: Ես լավ գիտեմ այն քաղաքները. հյուրախաղերի ընթացքում քախտ ունեցած տեսնել դրանք: Ինչ տարաբախտն եմ: Գլուխս պայթում է, մտածում եմ, թե ում կարող եմ դիմել... Ոչ մի ծանոթ չունեմ, որը կարողանա ազատել ինձ քանակից: Անկեղծ ասած, չեմ էլ ամաչում այդ մտքից, քանի որ քանակն ու նրա հեղինակությունը բոլորովին չեմ հուզում ինձ:

Գնացքը լիքն է: Տասներկու ժամ անցկացրի գնացքի միջանցքում: Ո՛չ ուտում եմ, ո՛չ քնում, միայն ծխում եմ: Աշխատում եմ թուլացնել, հնարավորին չափ քայքայել առողջությունս: Փարիզ հասնելուն պես առանց զգեստներս փոխելու՝ կեղտոտ, անքայացա իններորդ քաղաքապետարան: Ինձ մտցրին հատուկ կարգի բերած մի հանդերձարան, ուր աղմկոտ երիտասարդների մի խումբ շորերն էր հանում: Ամաչեցի: Փորձեցի մի անկյուն քաշվել ու հանվել աչքից հետո, բայց այդպիսի վայրերում նման անկյուն չես գտնի ու ահա ես բոլորովին մերկ եմ:

— Հաջորդը: Լեզուն դուրս հանեք... Տեսնեճք սիրտդ ինչպես է: Լավ, շատ լավ: Ծնշո՛ւմը: Հիանալի, կատարյալ: Հաջորդը:

Բոլորովին քախտ չունեմ, առողջությունս հիանալի է: Ոչ մի պակասություն չունեմ: Զինակոչիկների հանձնաժողովից դուրս եկա քացարձակ ընկճված: Ինձ շրջապատող զինճառայությանը պիտանի հիմարները հրճվանքի մեջ են: Զգիտեմ որտեղից ինչոր ժապավեններ են ճարել, կացրել են պիջակներին ու երգում են: Հետո վազեցին դեպի գիներտները, որտեղ մի քանի ժամ հետո խմիչքով ներծծված պատրույգներ կրատեան:

Հիասթափված, ընկճված, ճանապարհ ընկա դեպի կաշարան: Մի մոլորված շուն ետևիցս ընկած գալիս էր: Երևի զգաց, որ

այսօր էս ու ինքը նույն ընտանիքից ենք: Դեռ ժամանակ ունեի. ոտքով գնացի Լիոնի կայսարան, մի կտոր սանդվիչ գնեցի, կետը տվի շանը: Տեսնելով, որ ինձանից պոկ չի գալիս, մի տոմս էլ իր համար վերցրի, ու ճանապարհ ընկանք: Գնացքը նույնքան լիքն էր, որքան գալուց: Մի քանի թերթ փռեցի միջանցքի հատակին և ուժասպառ քնեցի շան հետ: Առավոտ ծեփին երկուսով իջանք Սեն-Ռաֆայել կայսարանում:

Երեկոյան կազինո վերադարձա անտրամադիր: Ռոշը վազեց դեպի ինձ, մի անկյուն տարավ ու...

— Եղավ,— ասաց:

— Ի՞նչը եղավ:

— Բարը:

— Կորցրի՞ք:

— Ո՛չ, Ծարլ: Այցելուններից մեկը գցեց և կոտրեց գրիֆը:

Գնա դիրեկտորի մոտ, փրփրիր, կո՛իվ արա:

Այնպիսի՛ մի ականդալ սարքեցի: Դիրեկտորը ներողություն խնդրեց, խոստացավ վերանորոգել գործիքը հիմնարկության հաշվին:

— Դժբախտաբար,— ասաց նա,— հարկավոր կլինի մի քիչ ապասել, որովհետև գործիքներ վերանորոգող միակ վարպետը կաննում է:

Հաջորդ օրը վազեցի վարպետի մոտ ու ասացի, որ բարը վերանորոգի երկու ամսից ոչ շուտ:

Համերգաշրջանը հանգիստ ավարտեցի որպես երգիչ:

Փարիզ վերադառնալուց հետո Պիեռն ու էս սկսեցինք պայմանագրերի «որսը»: Տարվա վերջին պայմանագիր կնքեցինք մի խմբի հետ, որը հյուրախաղերի էր մեկնում: Խմբի առաջնակարգ արտիստները ֆրատելիներն էին, իսկ համերգի առաջին մասի վերջում հանդես էր գալիս Արման Մեստրալը: Մեր խմբում տեղավորեցի նաև Միշելին:

Պատճառը կանացի նշանավոր իմտուիցիա՞ն էր, թե՞ այն որ ես սկսեի էի ավելի քիչ նշարդայնանալ, չգիտեմ, ամեն դեպքում Միշելի՞նին մի տեսակ տարօրինակ էի թվում: Նա ինձ զրկնում, հարցուփորձ էր անում: Բայց ես շրջանցում էի նրա թակարդները: Նման հարցերում շատ էի շնացել:

Մի օր մերունց մոտ գնացի սպիտակեղենս փոխելու: Դեռ սանդղահարթակից կանացի աշխույժ խոսակցություն լսեցի: Ներս մտա ու տեսա, որ մայրս, Աիդան ու Միշելի՞նը հազար ու մի ըզգուշությամբ ինչ-որ շատ երկար սպիտակ մի կտոր են չափում-ձևում:

Քամու արագությամբ համբուրեցի իմ կանանց ու հարցրի.

— Ի՞նչ եք կարում... վարագո՞ւյր:

Քար լոռություն տիրեց: Միշելի՞նը գլուխը կախեց: Աիդան մոտեցավ ինձ ու շնջաց.

— Գիժ ես, ի՞նչ ես...

— Ի՞նչ վատ բան ասացի:

— Լաի՛ր: Չես տեսնո՞ւմ, որ Միշելի՞նի հարսանեկան զգեստն ենք կարում:

Մայրս խիստ հարցրեց.

— Գուցե մոռացե՞լ ես, որ պետք է ամուսնանաս:

— Իհարկե ոչ, բայց գլխիցս մի տեսակ թռել էր:

Հարկ եղավ մի ժամ տանջվել իմ թեթևամտության համար:

Սպիտակ զգեստը պատրաստ է: Պսակը տեղի կունենա հաշկական եկեղեցում: Անհարմար եմ զգում. սովորականի նման սրնանկ եմ ու չեմ կարող ի պատիվ իմ ապագա կնոջ, գորգերով, ծաղիկներով, երգչախմբով մի լավ ամուսնական ծիսակատարություն կազմակերպել: Բայց քահանան խորամանկ աչքով արեց ինձ:

— Այնուամենայնիվ, ամուսնությունդ շուքով կանցնի:

— Ինչպե՞ս:

— Քեզանից առաջ մի հարուստ գույգ պիտի պսակեմ: Նը-  
րանցից հետո ամեն ինչ կթողնեմ այնպես, ինչպես կա, ու դու  
կօգտվես դրանից:

Այսպես, ես ամուսնացա ուրիշների ծաղիկներով: Պսակարդ-  
րության առթիվ Միշելինը հայերեն մի քանի բառ սովորեց, քա-  
հանայի հարցերին պատասխանելու համար:

Ամեն ինչ լավ անցավ: Ծիսակատարությունից հետո տաք-  
սիով ծնողներին մոտ վերադարձանք: Նրանք մի փոքրիկ ընդու-  
նելություն կազմակերպեցին: Ծախսերը փակելուց հետո գրպա-  
նումս մնաց ընդամենը 50 ֆրանկ:

Երիտասարդ ամուսինների երազանքը սեփական բնակա-  
րան ունենալն է: Որքան էլ ծնողներս փորձում էին սիրալիք ու  
գուսպ լինել, միևնույն է, այն չէր: Բայց Փարիզում բնակարան  
գտնելը միշտ էլ սխրագործություն է եղել, մանավանդ երբ փող  
չունես:

Հյուրախաղերից նոր էի վերադարձել, երբ հորեղբորորդի-  
ներս ասացին, որ իրենց հարկաբաժնում վարձով մի սենյակ կա:

— Վեցնում եմ,— ասացի ոգևորված:

Երբ մի հայացք գցեցի սենյակին, ոգևորությունս իսկույն նեթ  
չքացավ: Երեք մետր երկարություն ու երկու մետր լայնք ունեցող  
մի մութ սենյակ էր: Ոչ ջուր ունեւ, ոչ էլեկտրականություն, ոչ էլ  
ջեռուցում: Այլ ընտրություն չունեի, կա՛մ սա, կա՛մ ոչինչ: Վար-  
ձեցի ու դարձա ամեն ինչի վարպետ: Պատի մեջ մի լվացարան  
ամրացրի ու տակը մի դույլ դրի: Այս բոլորը փակեցինք Աիդա-  
յի և Միշելինի կարած ծաղկավոր վարագույրով: Մյուս անկյունում  
խոհանոցային սարքավորում տեղավորեցինք: Դա շատ կարևոր  
էր: Միշելինը հիանալի խոհարար էր, հատկապես լավ էր պատ-  
րաստում իմ սիրած ճաշը՝ կարտոֆիլի ռագուն: Անկողին նույն-  
պես ունեիք: Ունեիք նաև երկու աթոռ ու մի փոքրիկ սեղան,  
որ սև շուկայից էինք գնել: Պատին հարմարեցրի ծալովի մի սե-  
ղան, որն իբրև գրասեղան էր ծառայում, ու երբ փակում էինք,  
ծածկում էր աման-չաման ու գրքերը: Գրքերը շարված էին ա-  
մանների վերևի մասում՝ իմ սարքած դարակների վրա: Պատի  
մեջ մի հանդերձապահարան էլ կար, որի մեջ մեր եղած-չեղած  
մի քանի ձեռք զգեստներն էինք կախում: Հետո էլեկտրական  
լար գնեցի ու սենյակում էլեկտրականություն անցկացրի: Պատե-

ընթաց վարդապետն անկեցի, հուսով, որ սենյակի լուսավորությունը կավելանա: Չուր ջանքեր...

Ծնողներս խոհանոցային պարագաներ տվին մեզ, Միշելինի տատը՝ սպիտակեղեն ու անձեռոցիկներ: Նեղվածքի մեջ ենք ապրում:

Նեղվածքն ավելի ընդգծվեց, երբ հաղթական ներս մտա, թևիս տակ հսկայական մի ռադիոընդունիչ ու կախեցի պատուհանի տակ: Ցնծում եմ. այն խրճիթը, որն իմ ձեռքերով էի կարգի գցել, մի փոքրիկ դղյակ էր թվում ինձ:

Դժբախտաբար Միշելինը չէր բաժանում այն հիացումը, որ այդ սև խուցը պատճառում էր ինձ: Դեռ ավելին, ի մեծ դժբախտություն ինձ, նա նկատեց (պետք է խոստովանեմ, որ իրավացի էր), որ չնայած իր խաղաղ, առանձնացած տեսքին, այն սենյակը, որը պետք է ապաստարան ծառայեր մեզ ու մեկուսացներ աշխարհից, հազար ու մի աղմուկով էր արձագանքում: Ծեփի առօրյա դալմադալը ծխնելույզով բարձրանում ու աղմուկով թափվում էր մեր «թաքստոցը»: Փարիզում շրջող մեքենաների աղմուկից, կարծես, գլուխներս մոտորի մեջ խցկած լինեիմք, այն դեպքում, երբ ուզում էինք համակ քնքշություն դառնալ: Ուստի, հաճախ էի տնից փախչում և, իհարկե, գնում էի Պիեռ Ռոշի մոտ: Միշելինը երբեմն գալիս էր ինձ հետ, բայց ավելի շատ գնում էր ծնողներիս մոտ՝ Այդալիս տեսնելու:

Այդ ընթացքում Ռոշն ու ես երգեր էինք գրում: Ամեն օր վազում էինք հրատարակիչների մոտ կանխավճար ստանալու: Մեր վատտակած փողով ընտանիք պահել չէր լինում: Հարատև սընձանկ վիճակում մի օր ճատած եմ Ռոշի մոտ, առաջս թղթի մի կտոր: Հանկարծ մի միտք ծագեց:

— Լսի՛ր, Պիեռ, երգի լավ վերնագիր գտա՝ «Երեք հարսնացու աղջիկները»: Ո՞նց է:

— Չտեսնված:

Պիեռը շուտ ոգևորվողը չէր: Երգը գրեցի ու տարանք, առաջարկեցիմք մադամ Լը Գրանին, որ մեր թաղում հրատարակչական մի հիմնարկություն էր ղեկավարում:

— Լավն է, բայց շատ կարճ է,— ասաց նա:

Արագ ետ վերադարձանք: Մի քառյակ էլ ավելացրի, երգը դարձավ «Չորս հարսնացու աղջիկները»: Նորից վազեցիմք Լը Գրանի մոտ. փող շատ էր պետք: Նա գտավ, որ երգը էլի կարճ է:

— Մի թերթ թուղթ տվեք,— ասացի ջղախուցած ու քառորդ ժամում մի քառյակ էլ ավելացրի:

— Հիմա ո՞նց է:

— Այ հիմա շատ լավ է,— բացականչեց մադամ Լը Գրանը: «Հինգ հարանասու աղջիկները» երգի կանխավճարը ստանալով, դուրս եկանք:

Կատաղած աշխատում ենք: Հենց որ Պիեռն ազատվում էր իր սիրային գործերից, երգեր էինք գրում, վագում հրատարակիչների մոտ, ստանում մեր կանխավճարն ու սկսում հյուրախաղերի մեկնող խմբեր փնտրել:

Երբ Փարիզից դուրս էի գալիս, Միշելինը, որ իրոք ոչ մի կերպ չէր կարողանում ընտելանալ մեր «թունելին», տեղափոխվում էր ծնողներիս մոտ, ուր կյանքը շատ ուրախ էր: Հասցրու ու մայրս նորան հայերեն էին սովորեցնում: Նա շատ ընդունակ էր, այնքան ընդունակ, որ սիրող դերասանների կազմակերպած հայկական «Անուշ» օպերայում հորս հետ դուետ էր երգում:

Պիեռն ու ես հյուրախաղերի ենք:

Մի ևրելյո Մարսելի «Տեսար դը Վարիտանի» թատրոնի գրիմանոցում ենք: Դուռը թակեցին:

— Մտեք,— ասաց Պիեռն ու աչքերը փայտասկեցին, կարծելով, թե դուռը թակողը սիրունիկ մի աղջիկ է:

Ներս մտավ լղարիկ, միջին տարիքի մի մարդ:

— Ես վարձու ծափ տվողների պետն եմ,— ասաց ու իր ծանայությունները առաջարկեց:

Եթե նրա առաջարկած գնին համաձայնվեինք, ապա մեր ստանալիք գումարն իրեն տալու դեպքում անգամ կստանալինք ընդամենը քառորդ ծափ: Մերժեցինք: Մեր հաջողությունը պարզապես աննշան էր: Անգամ, եթե «ծափ տվողների» առաջարկն ընդունեինք, միննույնն է, հաջողության չէինք հասնի, քանի որ դահլիճում ընդամենը քառասուն մարդ կար:

«Ծափի» այս պատմությունը ինձ հիշեցրեց այն ժամանակները, երբ մի քանի տարի առաջ նոր-նոր սկսում էի հաշտնաբերել անդրկուլիսյան փոքրիկ մեքենայությունները:

Մեծ դժվարությամբ մի շաբաթվա պայմանագիր էի պոկել Փարիզի «Պոլի Կազինոից» ու պատրաստվում էի բեմ դուրս գալ, երբ արտիստներից մեկը մոտեցավ ինձ ու ասաց.

— Ինչքա՞ն ես տալիս Օգյուստին:

Օգյուստը ռեժիսորի օգնականն էր, որի խաղերը վարագույրի հետ ծափերին նոր թափ էր տալիս: Նրա կարծիքով տաղանդը ոչինչ չէր նշանակում: Կարևորը՝ վարագույրի այն փոքրիկ դողն էր, որ կարծես հանդիսատեսին առում էր. «Եթե ծափ չտաք, էլ չեմ բացվի»:

— Օգյուստին ոչինչ չեմ տալիս: Ինչո՞ւ պիտի տամ:



— Առանց նրա կորած էս. վարագույրը այնպես կծեւիի դեմ-  
քիդ, որ քեզ էտ չեն կանչի, և հաջողություն չես ունենա: Դահլի-  
ճում նստած դիրեկտորն անգամ չի նկատի, որ երգել էս:

Մտածումների մեջ ընկա:

— Ինչքա՞ն պիտի տամ:

— Ես տալիս եմ ստացածիս երեք քառորդը:

— Իսկ ի՞նչ է մնում քեզ:

— Տրանսպորտի և իմպրեսարիոյի փողը հաճած՝ ոչինչ:

— Իսկ օգուտը ո՞րն է: Մի քեզ նաչիր.. միհար, սասկած  
կատվի տեսք ունես: Այնինչ Օգյուտը ծաղկում է:

— Ասում էս, էի՞... Արտիստների աշխատավարձի 75 տո-  
կոսը ինքն է լաւիում: Ասում են, տրաքվելու չափ հարուստ է:

— Ոչ մի գրոշ էլ չեմ տա: Իմ աշխատավարձն ինձ պետք է  
ապրելու համար:

«Պոտի Կազիկոյում» աննկատ անցա: Հարկանարար Օգյուտի  
վարագույրի խաղերն էլ ինձ չօգնեին: Այդ կեղտոտը վրեժ լու-  
ծեց ինձանից: Որպեսզի վարագույրը նազանքով ու շուքով իջ-  
նի, մեջը երկայայա երկու ձող էին անցկացրել: Առաջին երեք  
երոյթներից հետո նա այդ ծանր վարագույրը գիղիտոտիճի նման  
վզակողիս իջեցրեց ու գետին տապալեց ինձ:

Հետո սովորեցի. երբ երգն ավարտում էի, աչքի տակով Օգ-  
յուտին էի հետևում, ու հե՛նց որ մոտենում էր վարագույրին, ա-  
րագ դուրս էի թռչում բեմից:

Միշելիները երեխա պետք է ունենան: Մայրս, որ հաշտ էր նրա հետ, պնդեց, որ իրենց մոտ վերադառնանք: Համաձայնեցի:

— Դու հասկանո՞ւմ ես,— ասաց մայրս,— ձեր տանը նա պիտի հիևզ հարկ բարձրանա-իջնի, իսկ այստեղ ընդամենը՝ երկու: Երեք հարկի տարբերությունը հետագայում մեծ նշանակություն կունենա նրա համար:

Այն ժամանակ, երբ ամուրի էի, իմ սենյակը մի կերպ բավարարում էր ինձ, հիմա արդեն շատ նեղ է երկուսիս համար: Եթե մեկը ներս մտնել է ուզում, մյուսը պետք է դուրս գար:

Բացի այդ, Միշելիների անվերջ շատախոսությունները ինձ խանգարում էին աշխատել, ուստի որոշեցի գնալ Ռոշի մոտ, մի բան, որ Միշելիներին դուր չէկաւ. նա լավ գիտեր ընկերոջս սիրաչին արկածները: Դրա համար էլ, օրական երկու անգամ՝ առավոտյան և կեսօրից հետո, այցելում էի իրեն:

Պիեռն ու ես լավ գնով մի շաքարովա պայմանագիր կնքեցինք:

Առաջին օրը բեմ դուրս եկա ու հայտարարեցի.

— Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում «Ես խմած եմ» երգը: Երաժշտությունը՝ Պիեռ Ռոշի, խոսք՝ Ծարլ Ազնավուրի:

Սրահում մեկը տեղից վեր թռավ ու հանդիսաստեաներին վկայակոչելով բղավեց.

— Ստախո՛ւ... Դուք գրագող եք: Ես Ժորժ Ուլմերի մոտիկ բարեկամն եմ: Ես նրա մոտ էի, երբ գրում էր այդ երգը:

Դահլիճում աղմուկ բարձրացավ: Ռոշի պետքը չէր: Այս բոլորը կարծես նրան չէր վերաբերում: Հավանաբար նրա մտքում ինչ-որ սիրունիկներ էին: Ես ստակալի զայրացած եմ:

— Ինչ վերաբերում է ստախոսությանը,— ասացի ես,— հա-

զիվ թե հանդիպած լինեմ ձեզ նման ստախոսի: Վատահ եմ, որ դուք Ուլմերի սովերն անգամ չեք տեսել:

Նա դեռ շարունակում էր իրենը պնդել: Թատրոնի կողքին երգի նոտաների կրպակ կար: Մի երեխայի ուղարկեցի «Ես խղմած եմ» երգի ետևից ու շուտ գալով դահլիճ ասացի.

— Մինչև կապացուցվի պարկեշտությունս, շարունակենք երգել:

Երկու երգ կատարեցինք պինգվիների ոտքերի նման սառը հասարակության անաջ: Ի վերջո երեխան եկավ: Երգը տվի ունկրնդիրներից մեկին ու խնդրեցի փոխանցել: Հետո շուտ գալով դեպի աղմկարարը ասացի.

— Մի լավ ստուգելուց հետո երգը ձեզ պահեք: Իմացեք ում երգն է ու մյուս անգամ ավել-պակաս չխոսեք:

Երգը գրպանը դրեց ու, առանց դիրքը զիջելու, նստեց, ասելով.

— Պա՛հ... Սա ոչինչ չի ասացուցում:

Այնուամենայնիվ, հանդիսատեսն անցավ մեր կողմն, ու համերգը շարունակեցինք բավական ջերմ մթնոլորտում:

1947 թվի մայիսի 21-ին ծնվեց Պատրիցիա-Սեդա Ազնափորյանը:

Վազեցի հիվանդանոց: Թմբիկ, վարդագույն, սիրունիկ մի աղջիկ էր: Ուզեցի տուն տանել, բայց Ափդան ու Միշելիները միացյալ ուժերով մի կերպ ետ պահեցին ինձ: Կնոջս մոտ մնացի, մինչև որ մանկաբարձուհին պարզապես վռնդեց ինձ: Այդ օրը Ռոջի մոտ չգնացի, քնեցի տանը:

Մեր պայմանագրի ժամկետը վերջացավ: Նոր ծրագրի օրը ես ու Ռոջը որոշեցինք կուլխներում անցկացնել, այս անգամ որպես հանդիսատես:

Մեզ փոխարինող երգչին երկրորդ երգից հետո դուրս շրպրտեցին: Երեյդերը մեզ առաջարկեց ելույթ ունենալ մերժված երգչի փոխարեն:

Չհասցրեցինք անգամ փողկապներս ուղղել, մեզ ուղղակի բեմ հրեցին: Երկու շաբաթ է, ինչ երգում ենք: Վերջին ներկայացումը հազիվ ավարտված, Երեյդերը հարդասենյակ մտավ ու ասաց.

— Տղանե՛ր, այն արտիստը, որ պետք է ելույթ ունենար հաջորդ ներկայացման մեջ, հանկարծակի հիվանդացել է:

— Բախտ չունի խեղճը,— կեղծավոր ասաց Ռոջը:

— Դժվար չէ՞ր լինի ձեզ համար, եթե մի շաբաթ էլ մնայիք: Մի քիչ տատանվեցինք, հետո համաձայնեցինք: Երեյդերի



Երեք տարեկան Շարլը, մայրը, տատը և քույրը՝ Աիդան



Ծարլը երկու տարեկան  
հասակում:

Արդալի հետ... առաջին  
ծխախոտը:



Ծարը վեց տարեկան  
հասակում:



Ծարը և Արհան ,






'Շարլը ունկրոի մասնակից



Շարլը տասնմեկ-տասներկու տարեկան հասակում «Պոի մոն» թատրոնում:

«Պալատիումում» Պիեռ Ռոշի  
հետ: Այստեղ է, որ նրան  
հայտնագործեց Էդիտ Պիաֆը:



Ժան Ռաֆա, Աիդա, Պիեռ Ռոշ,  
Ազյայա և Ազնալուր:





Էդիտ Պիաֆը, Էդիի Կոնստանտինը և Ազնավուրը Քեռուստանտեսյին  
Էլույթի ժամանակ:



Կլոդ Ֆիկուս: Երկար ժամանակ  
եղավ Պիաֆի շրջապատում,  
այսպես հետևեց Ծարլին:



Իսաուր Բրետոնը՝ Ազնավուրի  
առաջին հրատարակիչը, որը  
Ռեյնալդսոնը դարձավ նրա  
բարեկամը:

Ազնավորը և Էստրա Բելլը:



Ֆիֆի Ռահեա, Էվելին Պլեսիս,  
Ազնավորը և Անդրե Պուս:



դուրս գալուց հետո Պիեռն ու ես ցնծության մեջ էինք: Ինչպիսի՜  
բախտալորություն... Երրորդ անգամ ուրիշին փոխարինելուց հե-  
տո Պիեռին առաջարկեցի գնալ Աերկա գտնվել հաջորդ Աերկա-  
յացման պրեմիերային:

— Ո՞վ գիտե...— ասացի:

— Չէ՛, այս անգամ չի ստացվի:

— Ի՞նչ իմանաս, գուցե Պատրիցիան է մեզ բախտ բերում:

— Հասկացանք, նա արդեն երկու շաբաթ է մեզ բախտ է  
բերում, բայց ամենին չի կարելի պահանջել այդ փոքրիկից:

— Այնուամենայնիվ գնանք:

— Դե՛ լավ, գնանք: Գուցե մի նոր աղջկա հանդիպենք:

Բայց այդ Աերկայացման արտիստը բավականին ճանաչված  
էր ու երգացանկն էլ շատ լավը, այնպես որ նրան փոխարինելու  
հարկ չեղավ: Այնուամենայնիվ, հիանալի երեկո անցկացրինք,  
մանավանդ որ նման վայրերում մեր երևալը օգնում էր մեզ ժո-  
ղովրդականությունն ձեռք բերելու: Եվ իրոք, Հանրի Ժենեկն մեր  
«Ես խմած եմ» երգը մտցրեց իր երգացանկի մեջ:

Սկսեցին մեզ դիմել երգի կարիք ունեցող երգիչներն ու երգ-  
չուհիները. արդեն մոդաիկ ու ավանգարդիստ հեղինակ-կոմպո-  
զիտորներ էինք համարվում: Մեզ, իհարկե, դիմում էին նրանք,  
ովքեր դեռ «աստղեր» չէին, բայց և այնպես ապագայի «հույսեր»  
ի ին համարվում ու ձայնագրվում էին: Հեռախոսը զանգ:

— Տղաներ, ես ձայնագրվում եմ, մի ռիթմիկ երգ է հարկա-  
վոր:

— Արի խոսենք:

— Բայց դա ինձ պետք է վաղն և եթօ:

— Ի՞նչ ժանրի երգ ես ուզում: Սիրայի՞ն: Կոմիկակա՞ն...

Գործի անցա: Մի քանի ժամ հետո տեքստն արդեն պատ-  
րաստ է: Ռոշը նստում է դաշնամուրի առաջ ու երաժշտությունն է  
գրում: Երեկոյան զանգ ենք տալիս:

— Արի տար:

— Ո՞նց է...

— Ահավոր լավ: Կտեսնես:

«Ո՞նց է, ո՞նց է...» Բոլորը նույն հարցն են տալիս: Հո չենք  
սալի վատն է: Բայց ամեն դեպքում Պիեռն ու ես միշտ էլ համոզ-  
ված ենք, որ մեր երգերը գլոսիագործոցն են:

- Լա՞վ է:

- Լավ է:

Հենց որ լսում ենք այդ պատասխանը, փնտրում գտնում ենք

այն հրատարակչին, որին հեշտությամբ կարող ենք «մշակել» ու պոկել առավելագույն գումարը:

— Գիտե՞ք, սա ձայնագրվող երգ է,— ական է Ռոշը:

— Եվ լավ կվաճառվի, հավատացե՛ք ինձ: Սա մի նոր «Ես խմած եմ» է:— Պիեռն ու ես վրա ենք տալիս, կատարում երգը... Մի խոսքով, չենք թողնում, որ հրատարակիչը շունչ քաշի: Այդ հարցում բավականին ընդունակ ենք:

— Բացի այդ,— եզրակացնում ենք միաբերան, շեշտելով յուրաքանչյուր բառը,— իմացե՛ք, որ չի լինի մի նվագախումբ, որ նման մեղեդիին չուզենա կատարել:

Շատ քիչ էր պատահում, որ չկարողանայինք «ծախել» մեր երգը:

Մի օր, կեսօրին, Պիեռնի տանն եմ: Հեռախոսի զանգ:

— Ատամներս եմ մաքրում, պատասխանիր,— ասաց Պիեռը: Լսափողը վերցրի, խոստո մի ձայն ասաց.

— Միստինգետն է խոսում: Լսել եմ, որ մոդաիկ երգեր եք գրում: Կուզենայի հանդիպել ձեզ հետ:

— Լա՛վ, վե՛րջ տոր, ինձ չես կարող ձեռ առնել:

Ամենաանցյալ հույզ անգամ չարտահայտելով, ձայնը շարունակեց.

— Իրոք, Միստինգետն է խոսում, ես չեմ կատակում:

— Բա եղա՞վ, չնայած չգիտեմ ո՞վ ես, բայց բավականին լավ ես կեղծում ձայնդ: Սակայն ոչ այնքան լավ, որ ինձ խաբես:

Ռոշը մոտեցավ ու հարցրեց՝ ո՞վ է: Առանց լսափողը փակելու, բարձրաձայն ասացի.

— Մի խելատ կին, որն ուզում է հավատացնել, թե ինքը Միստինգետն է:

— Տուր տեսնեմ: Ի՞նչ իմանաս...

Իրոք որ Միստինգետն էր: Նա մեզ ժամադրեց իր՝ Կապյուսենների փողոցի № 2 տանը, որ գտնվում էր հենց Օլիմպիայի վրա:

Ներկայացանք ժամը ուղիղ 14-ին: Նա մեզ շատ սիրալիք ընդունեց իր հսկայական, բայց մի քիչ հնաժողովրդական բնակարանում: Առանց մի բաժան բան հյուրասիրելու, մատը տնկեց դեպի դաշնամուրը:

Չվաճառված մի երգ ոսնեխներ միայն, որ կարող էր դուր գալ նրան՝ «Պարահանդեսը արվարձանում»: Օրիորդը ուշադրությամբ լսեց մեզ ու ասաց.

— Գիտե՞ք ձեր երգը ում է հարմար...

Նա միշտ ձևեր էր թափում, իբր չի հիշում մյուս «աստղերի» անունները:

— Ո՞ւմ մասին է խոսքը, միաս:

— Հասկանո՞ւմ եք, խոսքը այն փոքրիկ, տգեղ կնոջ մասին է, որի ձայնը շատ մեծ է իր մարմնի համար... Ի՞նչ էր անունը... Պիֆի...

— Պիա՞ֆ...

— Հենց այդ է որ կա: Պիա՞ֆ:

Հանկարծ իր տարիքի կնոջ համար զարմանալի աշխուժությամբ վեր կացավ, մոտեցավ մի մեծ պահարանի, բաց արեց, ու մեկը տեսանք ձայնապնակների մի հսկայական դեպ:

— Այս պահարանը լի է ամերիկյան ձայնապնակներով: Լսեք դրանք ու օգտվեք:

Դիվանագիտությամբ նրան բացատրեցինք, որ մեկը ուրիշներից գողանալու սովորություն չունենք, որ մեկը ունենք մեր մտքերը:

— Լա՛վ: Ինչպես ուզում եք: Այդ դեպքում մի երգ գրեք ինձ համար, այնպիսին, ինչպիսին երգում է այդ Մամա... Մամա...

— Մարժա՞ն:

— Այո, Մարժան: Կամ այն մեկի նման, որը երգում է «Մադամուազել Փորթանցիա»... Ինչպե՞ս էր անունը... Ժիգի...

— Ժիրո:

— Այո:

Սկսեցինք գրուցել: Աստիճանաբար նա սկսեց իր կյանքի մասին պատմել ու մեզ ներկայացրեց,— իրողում եմ, չեմ ստում,— գաղիք քսան տարվա իր ծրագրերը: Պիեռն ու ես ապուշ կտրած իրար նայեցինք. Ախր այդ «միաս»-ը տարիների մի ամբողջ բեռ ուներ իր ուսերի վրա:

Ժամը վեցին նայեց ժամացույցին ու ասաց.

— Երեխաներ, ես ժամադրված եմ: Վաղն առավոտ շուտ եկեք: Մի քանի բարեկամներ ունեմ, որոնք ինձ մոտ ճաշի են գալու և յուրաքանչյուրն իր հետ ուտելու ինչ-որ բան է բերելու: Այս երեկո ինձ հրավիրել են լսելու այն փոքրիկին, որը երգելու է «ABC»-ում:

— Փոքրի՞կը,— ասաց Ռոշը:

— Այո: Մորիս... Մորիս Ծեվալլեն: (Այդ փոքրիկն այն ժամանակ արդեն հիսունն անց էր):

Հաջորդ օրը Պիեռի հետ Ռամել «ռոստրիֆ» ճարեցինք, դրրիկը թեներիս տակ ու գնացինք միասի մոտ: Նույն սիրավիր ընդունելությունը: Դեռ ավելին, անգամ մի քիչ ջերմություն կար նրա

վերաբերմունքի մեջ: Իսկույն կանչեց սպասուհուն, խնդրեց ազատել մեզ փաթեթից ու ժպտալով ասաց.

— Եկեք գնանք ձեղնահարկ, ես ձեզ այնպիսի բան ցույց տամ, որ հաճույքից մեռնեք:

Վեր մագլցեցինք: Միսսը շատ ճարպիկ էր ու արագաշարժ: Ձեղնահարկը թատրոնի պահեստ էր հիշեցնում: Նա անդադար ետ ու առաջ էր անում, դարակներ, սնդուկներ, ճամպրուկներ բացում, ուր իրար վրա դիզված էին նրա բեմական երկար կարիերայի զգեստները: Զգեստներից մեկը հանում էր, դնում առաջն ու շուռ գալով դեպի մեզ ասում.

— Սա հագնում էի 1923 թվականին... «Բուֆ» ներկայացման մեջ:

Հետո խնամքով ծալում էր, մի քանի քայլ անում ու վերցնում էր մեկ ուրիշը:

— Այս մեկը հագնում էի, երբ Մորիսի հետ կազմինչում պարում ու երգում էի: Այդ տարիներին Մորիսը երիտասարդ էր...

— Իսկ սա հագա առաջին անգամ, երբ հանդես եկա «Իմ մարդը» ներկայացման մեջ:

Ռոշի հետ չորս ժամ այդպես տանջվեցինք: Միսսը վերհիշեց իր ողջ անցյալը:

Վերջապես սեղան նստեցինք: Ներկա էին նաև Միստենգետի նախկին խաղընկերները՝ չորս տարեց երիտասարդներ:

Անհամբեր սպասում եմք, թե երբ կմատուցեն մեր բերած միսը: Խոսակցությունն ընդհատելով, միսն ասաց.

— Միրելիներս, միսը այս ժամին ուտելու համար շատ ծանր կլինի, այդ պատճառով միայն բանջարեղեն եմ պատրաստել:

Պանրի հերթը հասնելուն պես ասաց.

— Ես պանիր չեմ ուզում: Ձեզնից ո՞վ է ուզում:

Նախկին խաղընկերները հետևեցին նրա օրինակին: Ռոշը շատակեր չերևալու համար իմ ու իր անունից քաղաքավարությանը ասաց.

— Ծնորհակալ եմք: Մենք էլ չենք ուզում:

Միսն իհարկե չպնդեց: Այդպես էլ ավարտվեց մեր ընթրիքը: Հյուրասենյակ անցնելուն պես հրաժեշտ տվինք միասին ու նրա խաղընկերներին: Այդպես ավելի լավ է նրանց համար, թող որքան ուզում են հիշեն իրենց անցյալը: Իսկ մենք շտապեցինք ռեստորան. բարեբախտաբար բաց էր:

Միստինգետն իհարկե մյուզիկ-հոլլի մեծ վարպետ էր, բայց լավ մտածելու դեպքում, մենք հարմար հեղինակներ չէինք նրա համար:

Ա՛խ, եթե Պիաֆը մեզ զանգահարած լիներ... Պիաֆը կախարդական աճուն էր մեզ համար, մի աճուն, որ սրբություն էր յուրաքանչյուր հեղինակի ու կոմպոզիտորի համար: Բայց, ավա՛ղ, որքան փորձում էինք զանգ տալ, միշտ էլ քարտուղարուհին էր վերցնում հեռախոսն ու սառը, անտարբեր պատասխանում:

— Եթե ուզում եք օրհորդ Պիաֆին երգ առաջարկել, փոստով ուղարկեցեք: Նա կկարդա ու եթե հավանի, կգրի ձեզ:

Մենք մեր երգերը չէինք վստահում, մանավանդ ես, որ դառը փորձ ունեի:

Օկուպացիայի տարիներին էր, երբ բոլորը, նույնիսկ «առողերը», մտորոյով էին երթնելում, օպերայի կայարանում հանդիպեցի Մորիս Թելալյեին: Ողջ քաջությունս հավաքեցի ու մոտեցա: Նրան մի երգ տվի, որի տեքստը Փակ Զիմաինն էր, իսկ երաժրշտությունը՝ իմը: Երգը կոչվում էր «Զանգակատանը բուեր կան»: Մորիսը սիրափրությանը վերցրեց երգն ու հեռացավ: Պատասխանի եմ սպասում՝ չկա: Դրանից հետո, հակառակ իմ անսահման հիացմունքին, տարիներ շարունակ ստամ ունեի նրա դեմ:

Այդ լռության պատճառը պարզվեց բավականին ուշ՝ մոռացել էի երգի տակ գրել աճունս ու հասցես...



Ժողովուրդն սկսում է ճանաչել մեզ: Իհարկե, «աստղ» համարվելուց դեռ հեռու ենք, բայց գիտեն, որ երգիչներ ենք: Պիեռ Կուռն ու Ֆրանսիս Բլանշը «Վաշինգտոն» սրահում ռադիոհաղորդում են կազմակերպում ու խնդրում են մեզ մասնակցել այդ հաղորդմանը:

Հաղորդման օրը, առավոտյան ժամը 10-ին, Պիեռին արթնացրի: Նա այդ ընդունեց որպես ունեցածություն իր ազատության նկատմամբ: Ես պահանջեցի անպայման փորձ անել:

— Ինչ հոգեհաս մարդ ես, Շարլ, այսօր մինչև երեկո դեռ շատ ժամանակ կա:

— Ո՛հ, ժամանակ չկա: Ուզում եմ, որ այսօր մեր ելույթն անցնի ավելի լավ, քան երբևէ:

— Կարո՞ղ եմ իմանալ պատճառը:

— Այսօր համերգասրահում կլինեն Պիաֆը, Տրենեն, Ռատլ Բրետոնեն ու իր կինը: Մեզ ցույց տալու միակ առիթը ներկայացել է: Հասկացա՞ր հիմա:

— Հասկացա: Փորձում ենք:

Զգում եմ, որ այդ երեկուն լինելու է շատ կարևոր, եթե ոչ որոշիչ մեր կարիերայի համար. վախճենում եմ:

«Վաշինգտոն» համերգասրահը արտիստական մուտք չունի: Հանդիսատեսներն ու արտիստները մտնում են նույն դռնից, այնպես որ բոլորը պետք է գան նույն ժամին, հաղորդման ընթացքում բոլոր տեսակի աղմուկներից խուսափելու համար:

Ծրագրում ելույթ ունեցող արտիստները բեմին մտն՝ առաջին շարքում են նստած, կողքի սանդուղքից հերթով բեմ բարձրանալու համար:

Ոռշն ու ես եկանք այն ժամանակ, երբ Պիաֆը, Տրենեն ու Բրետոնները արդեն տեղավորված էին:

Դաշնամուրը դրված էր բեմի խորքում, ինձնից հեռու. կարծես մենակ էի երգում, մի բան, որ կրկնապատկում էր վախա: Այդ երեկո ինձ ու Պիեռի համար յուրահատուկ պրեմիերա էր. դահլիճում անվանի անձնավորություններ կային:

Շշմեցնել եմ ուզում: Սկսում եմ երգել: Հանկարծ առաջին շարքից կրծքային, գրնգուն մի ծիծաղ պայթեց: Նայեցի՝ Պիաֆն էր: Ծնկներն իրարից հեռու, մարմինը առաջ, գլուխը ետ, հոհոտում էր: Առաջին երգից հետո շուտ եկա դեպի Պիեռն ու աչքով արի, հասկացնելով, որ գործերը լավ են: Ամենաշատը Պիաֆը ծափ տվեց: Յուրաքանչյուր երգից հետո սկսում էր ծափ տալ, ու բոլորը հետևում էին նրան: Բեմից իջնելուց նայեցի առաջին շարքում նստած չորս մեծերին՝ ծիծաղում էին. Պիաֆը ձեռքով նշան արեց, որ նշանակում էր. «Զգնաս առանց ինձ տեսնելու»: Երկչոտ կանգնեցի պատի տակ ու սպասեցի համերգի ավարտին:

Երեկոյի վերջում այնպես շրջապատեցին նրան, որ չհասնար ձակվեցի մոտենալ: Ինքը ճեղքելով ամբոխը մոտեցավ ինձ ու...

— Բերանդ կցավեր, եթե մոտենայիր ու բարևեիր,— ասաց: Անսպասելի հարվածից շշմած, պապանձվեցի:

— Դու ի՛նչ է, հիմա՞ր ես, թե՞ վախենում ես ինձանից:

— Երկուսն էլ... Մի քիչ:

Այն, որ կարող էր վախեցնել ինձ, դուր եկավ նրան. սկսեց ծիծաղել:

— Ի՞նքո՞ւ ես գրում երգերը:

— Ես խոսքերն եմ գրում, իսկ Ռոջը՝ երաժշտությունը:

— Ռոջն ո՞վ է:

— Այն, որ ինձ հետ միասին էր երգում:

— Ինչպե՞ս: Դու մենակ չե՞ս երգում:

Բեմի խորքում տեղավորված Պիեռին չէր նկատել:

— Ինչպե՞ս է պատահել, որ դու չես եկել ինձ մոտ, չես ներկայացել:

— Եկել եմ, զանգել եմ, բայց մադամ Պիաֆի կողմից ընդունվելու համար պետք էր հսկայական պատմեղներ հաղթահարել:

Հետո հանկարծ հիշեց.

— Հա՛, իսկապես, ես քեզ արդեն տեսել եմ: Եկել էիր ինձ ու Մոնտանին երգ առաջարկելու:

— Ծիշտ է:

— Այս երեկո զբաղվա՞ծ ես:

— Ոչ: Պարզապես գնալու եմ տուն՝ կնոջս մոտ:

— Ահա մի ամուսնացած ևս... Չեմ հասկանում, ի՛նչ եք բո-

լորդ այդպես հիմարաբար շղթայում ձեզ: Ոչի՞նչ, այս անգամ թող  
սպասի, թող սպասել սովորի. հետագայում նա դեռ շատ է սպա-  
սելու քեզ: Հետևի՞ր ինձ:

— Իսկ Ռո՞շը:

— Լավ, նրան էլ բեր, տեսնենք նա՞ ինչի է նման:

Եվ ահա այն դուռը, որից ներս մտնել էինք երագել, սիրալիք  
բացվում է մեր առաջ: Ահա վերջապես մենք գտնվում ենք Բերրի  
փողոցում գտնվող Պիաֆի տանը, ուր շատ քիչ արտոնյալներ  
իրավունք ունեն հաճախելու: Առաջինը ես մտա հյուրասենյակ:  
Բազկաթոռներին նստած էին Մարգարիտ Մոնոն, Հանրի Կոն-  
տեն և Էլի ուրիշներ, որոնց չէի ճանաչում: Բազկաթոռի ծայրին  
նստած, աշխուժությամբ ձեռքերը թափահարելով, խոսում էր  
Մարգարիտը: Թվում էր ուր որ է հավասարակշռությունը կկորց-  
նի ու կընկնի: Սուր ձայն ուներ, բայց նրա անմոռանալի մեղմ  
հայացքն ու հնալքը անջնջելի տպավորություն թողեցին ինձ վրա:  
Իսկ Կոնտեն, փառահեղ հագնված, բազմած էր աթոռին ու մերթ-  
ջնդ մերթ դիվանագետի արժանապատվությամբ ծխախոտը մոխ-  
րամանի մեջ էր թափ տալիս: Նրանց մեջ էր Պիաֆը:

Անհարմար եմ զգում: Ինձ կույշ եկած տեսնելով, Էդիտը, փո-  
խանակ սրտասկոզելու, եկավ, նստեց կողքիս, ձեռքը դրեց ազդ-  
րիս ու նայեց իր բարեկամներին, որոնք հավանությամբ ժպտալ  
սկսեցին: Կարմրեցի, քրտնեցի: Բացարձակ հիմար վիճակի  
մեջ եմ:

Շուրջս թաքուն իրար են նայում, աչքով անում ու երկի-  
մաստ ժպտում:

Ռոշը լքեց ինձ ու գնաց նստեց հյուրասենյակի խորքում, եր-  
կար մազերով մի աղջկա՝ Պիաֆի քարտուղարուհու մոտ: Չէի հա-  
մարձակվում շարժվել. Էդիտի փոքրիկ ձեռքը ճնշում էր ինձ: Ներ-  
կաները առանց քաշվելու մշակում էին ինձ:

— Ի՞նչ ես կարծում, որևէ բան դուրս կգա՞ սրանից:

— Գուցե...

— Էդիտն ավելի լավ գիտե:

— Խելացի է երևում:

— Ինձ թվում է՝ մի քիչ փոքր-մոքր է ու ոսկրոտ:

— Շտերն աշնանը կհաշվեն, սիրելիներս... — ասաց Պիաֆն  
հանկարծ, ու բոլորը լռեցին:

Մարգարիտը միամտորեն հարցրեց.

— Իսկ ի՞նչ կլինի Փոքերը:

Բոլորը ձևացրին, թե ոչինչ չեն հասկանում: Պիաֆն հան-  
կարծ հարցրեց.

- Ազգություն՞ներ:
- Հայ եմ:
- Իսկ դա ի՞նչ է նշանակում:
- Ծատ երկար պատմություն է:
- Դե, որ երկար է, պետք չէ:

Ոտքից գլուխ չափեց ինձ ու տեսնելով, որ ամբողջովին ան եմ հագել, ասաց.

- Ինչո՞ւ ես ան հագել:
- Որովհետև ան վերնաշապկի վրա կեղտը չի երևում:
- Կարո՞ղ է պատահել, որ քո շապիկն հիմա կեղտոտ է:
- Կարող է պատահել:

Ծոռ գալով դեպի բարեկամներն ասաց.

— Բայց լավն է այս փոքրիկը, նույնիսկ կեղտոտ շապիկներ է հագնում:

Բոլորը հավանություն տվին: Ես դարձա երեկոյի ուշադրության կենտրոնը: Աչտեղ իմ բախտն էր որոշվում՝ կամ կդառնամ Պիաֆի խմբի ծաղրի առարկան, քաղության նոխազը, կամ կարծանանամ Պիաֆի շրջապատին պատկանելու պատվին: Ծապկիս կասկածելի մաքրությունը իմ օգտին է, այնպես որ արդեն կիսով չափ ընդունված եմ: Հետո զգացի, որ ստոիճանաբար, աննկատելիորեն դուրս եկա ուշադրության կենտրոնից:

— Պատմիր մի քիչ քո մասին,— ասաց Պիաֆը:

— Պատմելու շատ բան չունեմ, քարշ էի գալիս:

— Որտե՞ղ էիր քարշ գալիս:

— Որտեղ պատահե՞ր՝ կարարե՞նք, ուեստդրաններում, կինոդահլիճներում, փողոցում, ժողովրդական պարահանդեսներում: Ռոշն ու ես ինչ-որ հաջողության հասել ենք, բայց դեռ հպարտանալու ոչինչ չունենք:

— Ուրեմն դու եղել ես փողոցներում ու ժողովրդական պարահանդեսներում, նշանակում է վալս պարել գիտես:

— Այո:

— Հակառակ կողմի վրա՞ էլ:

— Այն էլ ո՞նց:

— Հիմա կտեսնենք: Քեզ նմանները ինձ հաճույք պատճառելու ու շքեցնելու համար հաճախ ասում են, որ հիանալի վալս են պարում: Բայց մինչև օրս նրանցից ոչ մեկը իր քարձրության վրա չի եղել:

Աչքին ընկած մազափունջը ետ գցելով, ձայն տվեց քարտուղարուհուն:

— Տառ՛ն, փոխանակ մի անձանոթի հետ սիլի-բիլի անելու, եւն քաշիր այս գորգն ու լույնը իջեցրու, իսկ դու՝ Ռոշար...

— Ռոշ, — քաղաքավարությամբ ուղղեց Պիեռը:

— Լավ, Ռոշ: Դու էլ նստիր դաշնամուրի ստաջ ու ժողովրդական տոնահանդեսի մի իսկական վալս նվագիր: Իսկ ինչ վերաբերվում է քեզ, — ասաց ինձ, — տեսնեմք արժեքդ:

Կաշկանդավածությունն միանգամից չքացաւ. ես ինձ զգացի իմ միջավայրում: Էդիտը վեր կացաւ:

— Մնացեք նստած, — ասացի ես:

Մի քիչ զարմացած նստեց տեղում, շիտակաճալով, թե ինչ էս ուզում անել: Մինչ Ռոշը նվագել կսկսեր, մատներս տարա բերանս ու սուլեցի: Պիաֆն հասկացաւ՝ ինքը պետք է մոտենար ինձ, ոչ թե ես՝ իրեն: Այդ էր պահանջում փողոցի կարգը: Նա վեր կացաւ ու մոտեցաւ ոչ որպէս Էդիտ Պիաֆ, այլ որպէս մի անշուք աղջիկ, որին սուլոցով պարի է հրավիրում իր թաղի փողոցային տղան: Պիաֆի աչքերի մեջ երանության փայլ կար:

Ես հաղթանդամ չեմ՝ լնդհակառակը, բայց երբ գրկեցի նրա իրանը, ինձ Գարրի Կուպերի պէս հաղթանդամ զգացի: Առանց մեծ քայլեր անելու, առանց մարմինն ու գոլիսն ճոճելու, նրան այնպէս պտտեցրի, ինչպէս չէր պտտվել Պիաֆ դառնալուց ի վեր:

Ռոշն անդադար նվագում է, ես առամներս սեղմած պարում եմ: Որոշել եմ, եթե պետք լինի՝ պարել ողջ գիշեր: Ուզում եմ, որ Պիաֆը թողություն խնդրի, ծնկի գա, հասկանա վերջապէս, որ տղամարդու հետ գործ ունի՝ իսկական տղամարդու: Ես դեռ չգիտեմ, թե ի՛նչ է մտածում նա Ազնավուր-երգչի մասին, բայց ուզում եմ, որ Ազնավուր-պարողին ողջ կյանքում չմոռանա: Այդպէս էլ եղաւ:

Դիմացկուն դուրս եկաւ Պիաֆը: Թեպետ քառորդ ժամ չանցած բարեկամների ծափահարությունների տակ կանգնեցրեց ինձ, հիացմունքով նայեց ու ասաց.

— Լա՛վ, եղբայրս, չտեսնված պարող ես: Դու կարող ես նույնիսկ ախտի մեջ պարել:

Քիթս վեր ցցեցի, փքվեցի: Գոհ եմ ինձանից: Պատրաստվում էի նստել, մտքումս ասելով, որ իր դասն առաւ, բայց Պիաֆին դեռ չգիտեի:

— Իսկ «պատողորդ» կարո՞ղ ես պարել:

— Իհարկե:

Սկիզբ առաւ ձեւավոր «պատողորդ»: Ես նրան պահեցրի ծնկներին, օդ բարձրացրի, պտտեցրի... Վերջապէս կանգ առանք:

Երկրմտաանքով մայրացի ու տեսա, որ ամեն ինչ կարգին է: Նրա աչքերը փայլում էին: Նա գոհ էր ինձանից:

— Իսկ «տանգո», — ասաց նա քնքշորեն:

— Իհարկե, ո՞րն էք ուզում «Արգենտինյանը», «Պոփ պա՞» թե՞ «Ալա Ֆրոտը»:

— Երեքն էլ գիտե՞ս:

— Այո:

— «Արգենտինյանը» պահիր քեզ: Կսկսենք «Պոփ պայից», հետո կփորձենք «Ալա Ֆրոտը»:

«Ալա Ֆրոտը» ժողովրդական պարահանդեսներում իրար կիս գրկած են պարում ու ոչ մեկը մյուսով չի հետաքրքրվում: Սակայն այստեղ, այս սալոնում, որտեղ բարձր հասարակությունից մարդիկ էին մտած, ես ամաչեցի: Փորձեցի ինձ հեռու պահել Պիաֆից, ձիգ պարել, չհարվել նրան: Բայց նա վրդովված ասաց.

— Ձե՛, չեղա՛վ: Առանց խարդախության: Ես իսկականն եմ ուզում՝ ժողովրդականը:

Դե որ այդպես է, կպարեմ այնպես, ինչպես ուզում ես... Ու ես սկսեցի պարել իսկականը, ժողովրդականը: Ատո՞հնամաբար ներկաներն սկսեցին փափկանկատությանը հետանալ: Ռոջը դաշնամուրին կպած դեռ նվագում էր, իսկ ես Պիաֆի հետ դեռ պարում էի: Լուսաբացին ավարտվեց աշխարհի ամենատերկար «տանգոն»:

— Վաղն ատավոտյան անցիր ինձ մոտ, լուրջ խոսելիք ունեմ, — ասաց Պիաֆը:

Վերջապես հրաժեշտ տվինք իրար: Մետրոյի վերջին գնացքն արդեն մեկնել էր, ատիպված Ռոջն ու ես, բռունցքներս սեղմած, ուս-ուսի տված քնեցիք փայտե մատարանի վրա:

Հաջորդ օրը ներկայացա մենակ. Ռոջին արթնացնելու բոլոր ջանքերս իզուր անցան: Դուրը բաց արեց քարտուղարուհի Ֆանիր ու շնջաց.

— Օրիորդը դեռ քնած է, անցեք սալոն և սպասեք:

Երկու ժամ սպասելուց հետո Պիաֆն ինձ ընդունեց անկողնու մեջ, դեմքին՝ գիշերային դիմակը պահող ռետինների հետքեր:

— Նախաճաշե՛լ ես:

— Այո՛:

— Իսկապես նախաճաշել ես, թե չէ, — գրեթե բղավեց նա:

— Այո, նախաճաշել եմ:

— Ճշմարիտն ասա, թե քաղցած ես, հիմարություն է ձևեր

թափելը:

Մի բաժակ սուրճ խմեցինք, կարկանդակ ու մեղր կերանք:

— Լսի՛ր թե ինչ եմ ասում: Մի քանի օրից «Կոմպանյունների» հետ հյուրասիսաղերի եմք մեկնում,— ասաց մա ծամեղով,— դու և քո ընկերը ծրագիրը կսկսեք ձեր երգերով: Հետո դու կներկայացնես ինձ:

— Իսկ որքա՞ն պիտի ստանանք:

Այդ մեկը չպետք է ասեի. Պիաֆն ուղիղ նայեց աչքերիս, ցածրից բաժակը, ուղղվեց անկողնու մեջ ու պայթեց...

— Հիմարի՛ գլուխ, փողատե՛ր թշվառական: Քեզ բախտ է վիճակվել Պիաֆի հետ ելույթ ունենալ ու դեռ համարձակվում ես փողի մասին խոսել: Ողջ Փարիզը, լսո՞ւմ ես, ուղբերիս տակ քարշ կգար իմ խմբում հանդես գալու համար:

Չայնը գնալով բարձրանում էր, ձեռքերն էր թափահարում ու աչքերով պատերը վկայակոչում:

— Մի էս փալերոտիկն տեսե՛ք, էս խղճուկի՛ն...

— Մի՛ զայրանաք,— ասացի ես,— ապրել պե՛տք է, թե՛ չէ: Ես ընտանիք ունեմ, պահել է պետք:

— Իսկ ես, հիմարի մեկը, պահելու ոչ ոք չունե՛մ: Եթե ինձ այսպիսի բան առաջարկեին այն ժամանակ, երբ մուրացկան էի քեզ նման, կփակեի բերանս... Իսկ եթե բացեի, ապա միայն շընորհակալությունն ասելու համար:

— Ծնորհակալություն,— ասացի ես:

— Ծնորհակալություն, համաձա՞յն ես, թե՛ շնորհակալություն, համաձա՞յն չես,— հարցրեց նա զայրացած:

— Ծնորհակալություն, համաձայն եմ, ինչ վերաբերում է ինձ,— ասացի ես,— մնացածի մասին պիտի խոսեմ Ռոշի հետ:

— Հա՛, ուրեմն, դեռ այնքան մեծ չես, որպեսզի ինքնուրույն որոշումներ կայացնես:— Ու նորից սկսեց... — Իհարկե, պարունը պետք է իր արիատուկրատ, փչացած ընկերոջ կարծիքն հարցնի: Նախ և առաջ, ո՞ր է քո այդ սալոնի Դոն-Ժուանը: (Ամեն ինչ տեսնում է. նկատել էր Ռոշի սեթևեթեղը իր քարտուղարուհու հետ:)

— Քնած է:

— Հա՛... Ուրեմն պարունը քնած է: Ուրեմն պարունը չի բարեհաճում վեր կենալ ու գալ մադամ Պիաֆի մոտ. դա նրա համար մեծ նեղություն կլիներ: Նա հարմար է գտնում իր սպասավորիկն ուղարկել... Իե լավ, ուրեմն այսպես, ամսի 16-ին ճանապարհ եմք ընկնում: Կտտանաք այն, ինչ կտամ, կանեք այն՝ ինչ կասեմ: Մի բան ևս. աշխատանքից ուշացողներին թափելով ասում եմ: Ժամը ուղիղ 8-ին կհանդիպենք Հյուսիսային կայարանում: Մինչ

այդ, երբեմն կարող ես գալ այստեղ: Դու կծանոթանաս «կուպանյոնների» հետ, նրանք վաղը վերադառնում են: Այսպիսով կընտելանաս շրջապատին: Դա քեզ օգտակար կլինի: Իսկ հիմա հանգիստ թող ինձ, ես պետք է հազնելեմ:

Ու՛Ֆ, ինչ փոթորիկ էր... Վազեցի Ռոշի մտտ, հայտնելու, որ հյուրախաղերի եկք մեկնում: Բնականաբար չառացի, որ Պիաֆն իմ հերն անիծեց: Ինչ լավ կին էր: Քսանչորս ժամվա ընթացքում նա ինձ ընդունեց այն աշխարհը, որը հետագայում իմը պիտի լիներ: Նա ինձ շղթայակապ պահեց ութ տարի, սրտիս մեջ թողնելով մի քանի օրվա սեր, քնքշություն ու հիշողություններ կյանքիս մնացած օրերի համար:

Միշելինն ու ես երեխաների մամն եկք ապրում: Ծիծաղում եկք, սիրում իրար, ման գայիս ընկերների հետ: Բարեբախտաբար Պատրիցիայով մայրս էր զբաղվում: Բայց ոչ այն պատճառով, որ Միշելինը չէր ցանկանում, կամ չէր կարող, այլ պարզապես, որովհետև երեխային չէինք կարող հետներս քարշ տալ:

Բացի այդ, աշխատում էինք: Միշելինը երգում էր մի կարաբեում, Ռոշն ու ես՝ մեկ ուրիշում: Իսկ հետո, աստված իմ, չէ՞ որ մենք ջահելներ էինք, իսկ ջահելությունը իրենն է պահանջում:

Մեր մակարդակի արտիստների հետ քաղցած ու ծարավ մըստում էինք ինչ-որ էծանագին գիներտան սեղանի շուրջը, շատախոսում, «օյհնրագություններ» անում, մինչև որ մեկը բացականչում էր.

— Սատանան տանի, ժամը արդեն 5-ն է:

Ըստապ վեր էինք կենում ու վազում տուն: Հաջորդ օրը ուշ էինք վեր կենում, արագ լվացվում, մախորդ օրվա շորերը հագնում ու ամեն մեկս մի կողմ գնում, երեկոյան նորից հանդիպելու համար:

Այն օրը, երբ Միշելինին հայտնեցի Պիաֆի հետ հյուրախաղերի մեկնելու մասին, ասաց.

— Անչափ ուրախ եմ, որ քեզ բախտ վիճակվեց:

Բայց և այնպես չկարողացավ չարտահայտել իր մտահոգությունը:

— Գիտեմ, որ Պիաֆը սիրում է երիտասարդ երգիչներին... վախենում եմ, որ թաթը վրադ դնի:

— Մի՛ վախեցիր, նրան Ռոշն է հետաքրքրում:

Ես այդ ասացի Միշելինին հանգստացնելու համար:

— Ամեն ինչ Պիեռի վրա ես գցում: Դա ինձ արդեն ասել և՛ Միստենգետի կապակցությամբ:



- Պիե՛ն:
- Հը՛...
- Ժամը յոթն է: Գնացքը ժամը ութն անց քսան շարժվում է: Հազիվ հասցնենք:
- Մի բուպե: Հիմա վեր կկենամ:
- Պիե՛ն:
- Հը՛...
- Պիե՛ն, ի սեր աստծո, ժամը 7-անց 30 է... Ուշքի արի, էլ ժամանակ չկա... Կուշանանք գնացքից:
- Ի վերջո Պիեռը մեծ դժվարությամբ վեր կացավ: Քնայաթափա պատեպատ է դիպչում, սենյակից խոհանոց անցնում, սալոնից մենջամենյակ, իսկ ժամն արդեն 8-ն է:
- Վազեցիներ փողոց: Դես ենք վազում, դեն ենք վազում, հայացքով խուզարկում փողոցը, սպասում...
- Սա ի՛նչ փռած երկիր է,— պայթեց Պիեռը,— երբ պետք է՝ տաքսի չես գտնի: Ո՛ր են այդ շանորդիները:
- Մի քանի բուպե ևս սպասելուց հետո ճամպրուկները վերցրինք ու... վազքով դեպի Հյուսիսային կայարան, որ մեր բախտից շատ հեռու չէր: Երկու տոմս վերցրի ու վազեցի կառամատույց: Ժամն արդեն 8-ն անց է 20 բուպե:
- Ո՞րչո ժամանակին հասանք, քայց միայն տեսնելու համար մեր գնացքը, որն հետզհետե արագացնելով ընթացքը, մի վերջին անգամ «ո՛ւ-ո՛ւ» արեց ու անհետացավ:
- Աղե՛տ: Պատկերացնում եմ, թե Պիաֆն ինչպես է բարկացած: Քնայաթափա Պիեռին խոսկիցս գցած, որը չի էլ հասկանում, թե ինչ է կատարվել, վազեցի մի երկայթողայինի մոտ:
- Ասացե՛ք, Տուրգուսն գնացող ուրիշ գնացք կա՞:
- Միայն երեկոյան:

— Ինչպե՞ս անենք, որ շուտ հասնենք. բավական ծանր վիճակի մեջ ենք:

— Ես ձեզ կարող եմ միայն մի խորհուրդ տալ՝ մինչև Ամյեն մի բեռնատար գնացք կա, մտո՛ւք գնացեք, այնտեղ մի բան կանգեք:

Վազեցի՛նք: Անցնում ենք Երկաթգծերի վրայով, վազում վագոնների երկայնքով: Քրտի՛նքի մեջ կորած ենք, էլ ուժ չունենք:

— Սա է,— գրեթե խոխուսցնելով ասաց Պիեռը: Ես էլ եմ շնչասպառ:

— Թո՛ւ, շարժվում է: Պիեռ կա՛ց, Պիեռ, մի քիչ էլ...

Վազեցի՛նք: Պիեռն իր ճամպրուկը գցեց բաց վագոնի մեջ, ինը գնաց մրա ետևից: Դեռ շարունակում ենք վազել: Պիեռը կախվեց վագոնից ու վեր ձգվեց: Մի քանի քայլ, ու ես էլ քարձրացա:

Տախտակամածի վրա փուլ գալով, մեկնվել ենք անուժ: Երկար ժամանակ լսում ենք գնացքի աղմուկը խլացնող մեր հետոքը միայն:

Աստիճանաբար շնչառությունս տեղն եկավ, ու ես պայթեցի.

— Պարունը չի կարողանում անկողնուց վեր կենալ ու բոլորին կրակն է գցում... Ես հոգնել եմ քո հիմարություններից, Պիե՛ռ, լսո՞ւմ ես, հոգնել եմ...

Ո՛չ, Պիեռը չէր լսում. գնացքի ճոճքից նորից էր քնել:

Ամյենում մեզ տարափ գցեցի՛նք ու հասանք Լիլլ: Լիլլում քրրուհարթաթախ թռանք մի տրամվայ, և... Տուրգոտանումն ենք:

Վազեցի՛նք կայարան և իմացանք, որ մեր բաց թողած գնացքի ժամանելու է հինգ րոպեից:

— Տեսնո՞ւմ ես,— ասաց Ռոջը,— կարիք չկար գլխապատառ վազել: Այստեղ սպասե՛նք, թե՞ գնանք մի բաժակ բան խմենք:

— Գնանք:

Նստած ենք կայարանամերձ սրճարանում: Այստեղով են անցնում գնացքի ուղևորները: Հենց նոր էին դատարկել բաժակները, երբ տեսանք Էդիտին իր իմպրեսարիո Լույու Բարիի և Ժորժերի հետ՝ «կոմսականյունների» հետևից գցած: Մեզանից մի քանի քայլ հեռավորության վրա լսում եմ Էդիտի ցատումնալից ձայնը.

— Է՛լ աչքիս չերևան նրանք: Ես նրանց մարդ դատնալու մնարավորություն տվի, իսկ այդ թշվառականները կողքով անցան: Եթե երբևէ հանդիպեմ նրանց...— հանկարծ տեսավ մեզ.

— Ի՞նչ եք անում այստեղ:

— Մի բաժակ բան ենք խմում, ընկերացեք մեզ:

Մոտեցավ, ուզում էր քարոզ կարդալ գլխներիս, բայց ծիծա-

ղելու ցանկությունն այնքան մեծ էր, որ մոռանալով ամեն ինչ ասաց.

— Եթե չգուշիք, ամեն ինչ վերջացած կլիներ:

Մի շնչով խսեց զարեջուրն ու ասաց.

— Դե լավ, որ եկել հասել եք, ավելի լավ է հիմա բացատրեն, թե ինչպես է ընթանալու ներկայացումը:

Մի պահ լռիքով լուսությունից օգտվելով, երկու ջիշ գինի ու մի ջիշ զարեջուր նա պատվիրեցի:

— Ահա՛,— ասաց Էդիտը,— ներկայացման սկզբում ձեզ կներկայացնեն: Պիեռի հետ կերգենք հինգ երգ, հետո նա կմտնենք եմ ու կներկայացնեն «կոմպանյոնների»: Ես ինքս կզբաղվեմ նրանց լուսավորությամբ: Ընթացումից հետո դու, Շարլ, բեմ կմտնես ու ինձ կներկայացնես հետևյալ բառերով. «Մի խոսք ու այդ խոսքի մեջ մի ամբողջ երգ՝ Էդիտ Պիաֆ»: Հետո կզբաղվես իմ լուսավորությամբ:

Այսպես Ֆրանսիայի հյուսիսից հասանք Շվեյցարիա, որը մեր հյուրախաղերի վերջնակետն էր: Ֆրանսիայում ամեն ինչ լավ անցավ, բայց Շվեյցարիայում դրամական դժվարությունների հանդիպեցինք:

— Ես ու դու,— ասաց Պիաֆը մտերմաբար,— եթե որևէ բան պատահի, փողոցներում երգելով կարող եմք էլ ը ցեխից հանել. մենք նույն խնորից ենք: Բայց մյուսներին հարկավոր է հայրենադարձնել:

— Եվ անել...

Ռոշն ու նա քիչ էինք հանդիպում «կոմպանյոնների» հետ: Ասեմք նրանք էլ էին իրենց հետո պահում:

— Դրանք «Բոշ-սկաուտներ» են,— քննիծաղ տվի,— ո՛չ աղջիկների են հանդիպում, ո՛չ էլ խմում: Մոթեն էլ ընկնում է թե չէ, անկողին են մտնում:

— Թշվառներ,— ավելացրեց Ռոշը,— աշխատանքը՝ աշխատանք, ծառայությունը՝ ծառայություն:

Ծիշտ է, աշխատանքը շատ ժամանակ էր խլում նրանցից. ամեն օր փորձեր էին անում ու խոսում միայն ամուսնությունից ու անաղարտությունից: Սպանում էին մեզ իրենց բարոյախոսություններով: Մի երկուսը տարբերվում էին մյուսներից, բայց այդ կեղծավորները վարպետորեն քողարկում էին իրենց խաղը:

Գրեթե դատարկ դահլիճներն ու փողի պակասը մեզ ասիպեց մերձեցնալ նրանց: Հարկադրված մի քանի հոգիանոց սենյակներ էինք վարձում: Մեր հետ ընկավ Ֆրեդը՝ երիտասարդ մի սողա, որին շատ էին սիրում աղջիկները, բայց ինքը երկչոտ էր ու անփորձ:

«Կոմպանիոններին» շատերը հավանություն չէին տալիս մեր արեղակերպին, սակայն Պիաֆին շատ էր դուր գալիս: Մենք հաճախ էինք միասին խմում:

— Մի-մի հատ չգցե՞նք,— ասում էր Պիաֆը:

— Ինչո՞ւ չէ, Էդիտ:

— Բայց այդ մասին ոչ մի խոսք ժողովին, դա նրան դուր չի գա:

Խեղճ ժողով, այնքան միամիտն էր, որ հաճախ երեկոները մտահոգված ասում էր.

— Սոսկալի է: Էդիտն այնքան է հոգնած, որ հազիվ է կանգնում ոտքի վրա:

Ամեն տեղ պահած գարեջուր ունեինք: Երբեմն աշխատանքի մասին խոսելու պատրվակով Էդիտը գալիս էր մեր համարը՝ խըմելու: Մի գիշեր նրան նոր կրոնի աստվածունի ընտրեցինք ու մեզ՝ հավատացյալներին, կնքեցինք գարեջրով. մի բաժակ գարեջուր էինք թափում գլխներիս ու խմում երեսներիցս ցած հոսող կաթիլները:

— Ինձ էլ,— պահանջեց Պիաֆը:

— Բայց դուր աստվածունի եք, Էդիտ:

— Չայնդ կտրիր, Շարլ, ես էլ եմ ուզում:

Մեր սենյակից գարեջրատան տհաճ հոտ էր գալիս:

Պիաֆը Շվեդիա է մեկնում: Ժողովը կատաղած է, որովհետև Պիաֆը, Ռոշն ու ես սոսկալի հարբած ենք: Բաժանման պահին լաց ենք լինում: Լաց եղանք հյուրանոցի արահում, լաց եղանք տաքսիի մեջ ու կայարանում դեռ լաց էինք լինում:

Արհամարհական հայացքներ գցելով մեզ վրա, ժողովը խընամքով հետևում էր, որ Պիաֆը խմելու ոչինչ չգնի: Ու երբ գրեցինք շարժման ազդանշանը տվին, հանգստացած ջունջ քաշեց:

Արդեն մի հարյուր անգամ ողջագուրված կլինենք, բայց Պիաֆը վերջին անգամ երեք համբույր դրոշմեց այտերիս, ու ետ քաշվելու պահին ականջիս շնչաց:

— Ինչ որ պետք է արե՞լ ես:

— Այո՛:

Գնացքը շարժվեց, տանելով Պիաֆին ու գարեջրի շշերը, որոնք Ռոշն ու ես թաքցրել էինք բարձի տակ, մուշտակի գրպաններում, ճամպրուկի մեջ ու անկողնու տակ:

Կառամատուցում կանգնած՝ հարբածությունս միանգամից անցավ: Հանկարծ բողոքովին միայնակ զգացի ինձ ու հատկացա, որ Էդիտը մեծ տեղ էր գրավել իմ կշանքում:

Ես էլ նրա կյանքում, որովհետև մի քանի օր անց Եվեդիա-  
յից մի երկտող ստացա.

«Ես երբեք չէի կարծում, որ այդքան կկարոտեմ քեզ:

Փողոցի քո փոքրիկ քույրը՝  
Էդիտ»

Մի քանի շաբաթ անց մենք նորից հանդիպեցինք: Պիաֆն  
այս անգամ Միացյալ Նահանգներ էր մեկնում: Մատը դնելով  
մեր ցավոտ տեղին, ասաց.

— Հիանալի կլիներ, եթե կարողանայիք Ամերիկա գալ:

— Երազում եմք,— ասացի,— բայց փող չունենք:

— Հուսահատվել պետք չէ: Տղամարդ եղեք,— ասաց Պիա-  
ֆը,— փորձեք մի կերպ ընկնել Ամերիկա, մնացածը թողեք ինձ:

— Հեշտ է ասել՝ «տղամարդ եղեք»,— ասացի ես,— մտնում  
եմ Ամերիկա գնալու ցանկությունից:

— Հուսով եմ, չեք վախենում:

— Չէ՛ մի...

Մի քանի բուպե հետո գիներաանը նստած, Ռոշը մոթմոթում է:

— Ամերիկա գնալ... Ամերիկա... ծիծաղելի մարդ ես, Եարլ.  
փող է պետք, այն էլ ջատ:

— Բո քանը չէ, Պիեռ, այդ թող ինձ վրա:

— Պարոն Ռատլ Բրետոնին եմ խնդրում:

Կատրինը՝ տիրոջ հավատարիմ քարտուղարուհին, հարցրեց.

— Ի՞նչ գեկուցել:

— Ռոշ և Ազնավոր: Նա ինքն է կանչել:

Բրետոնի մոտ մի գրասենյակ կա, որ ժամանակին գալիս,  
երգեր էի վերցնում, բայց գիտեի, որ գրասենյակից այն կողմ մի  
այլ սենյակ էլ կար դիրքի տեղ հյուրերի համար: Ներս մտա այն-  
պես, ինչպես սրբավայր կմտնեն: Հետաքրքիր, մի տեսակ վախի  
ու հարթանակի խառը զգացում տիրեց ինձ. ես մտել էի այն սեն-  
յակը, որտեղ Տրենեն այնքա՛ն նվազել էր...

Ռատլը մեզ ընդունեց ու ասաց. «Պետք է ասեմ, որ վազելով  
չեք եկել... երեք ամիս է՝ ինչ սպասում եմ ձեզ»:

— Պիաֆի հետ հյուրախաղերի էիք մեկնել:

— Լա՛վ: Նստեցեք: Դուք իհարկե երգեր ունեք ինձ առաջար-  
կելու:

— Այո՛: Մեկը:

— Միա՞յն:

— Այո, բայց Էդիտն է երգելու:

— Գիտե՞ք, նա միշտ այդպես է ասում: Ինչևիցե, լսե՛նք:

Մենք կատարեցինք «Կտրին տղա է» երգը:

— Կապն է, ճուշմիակ ջատ լափը: Վաստահ եմ, որ Էդիտը կեր-  
գի, հիանալի է, ընդունում եմ:

— Կանխավճար կտաք, իհարկե:

— Այդպես էլ գիտե՛ի: Բոլոր երիտասարդ լերգիչները այդ-  
պես են վարվում: Ես սովոր եմ դրան: Ինչքա՞ն էք ուզում:

— 181.000 ֆրանկ:

Ռատուլը հազից խեղդվեց: Աչքերը դուրս պրծան ու մեզ նա-  
յեց այնպես, կարծես գծանցից փախած լինե՞ի՛նք: Իրավունք էր  
ունե՞ր. այդ օրերին առավելագույնը, որ կարող էինք պահանջել,  
10.000 ֆրանկն էր:

— Դուք խելագարվե՞լ էք, ինչ է: Երբեք, ո՛չ մի երգի հա-  
մար նման գումար չեմ տվել:

— Կասկածում եմ, բայց մի մասը գցե՛նք գալիք լերգերի հաշ-  
վին:

— Իսկ կարո՞ղ եմ իմանալ, թե ինչու հասուկապես այդ՝  
181.000 առասպելական գումարը:

— Ահա թե ինչու: Անցյալ օրը, երբ Էդիտը պատրաստվում  
էր Նյու-Յորք մեկնել, ասաց, որ մենք այնքան քաջություն չենք  
ունենա գնալ իր ետևից: Ու ես հաշվեցի՝ գնալ-գալու տոմսերը,  
ավտոբուսի և այլ մանր-մունր ծախսերը այդքան են անում: Վա-  
ղը ջէ մյուս օրը ինքնաթիռ ե՛նք նստում:

Ռատուլը նայեց մեզ, տարուրե՛րեց գլուխն ու «Երևի ես էլ եմ  
գիժ»,— ասաց ու պատրաստվեց չեկ գրել: Սարսափած նայեց  
ինձ, երբ հազալով ասացի.

— Մենք կանխիկ գումար կուզե՛ինք. բանկում հաշիվ չունենք:

Փարիզ—Նյու-Յորք տոմս գտնելն անհնար էր, ինքնաթիռնե-  
րը պայթելու աստիճան լիքն էին: Չղայնանում ե՛նք, նյարդային  
շարժումներ անում, աղաչում: Վերջապես բախտներս բերեց:

— Կթո՛չեք Ամստերդամ, այնտեղից էլ Նյու-Յորք: Մենք  
կզգուշացնե՛նք Ամստերդամին:

Ամստերդամում վատ անակնկալ էր սպասում մեզ: Ծամա-  
րուկները հանձնեցին մեզ ու բախտի քմահաճույքին թողեցին: Ոչ  
ոքի պետք չէ՛ինք. թագադրությամբ զբաղված քաղաքը խելա-  
գար վիճակի մեջ էր:

Չորս օր շարունակ հյուրանոցից օդանավակայան, օդանա-  
վակայանից հյուրանոց էինք վազում: Ավելորդ է ասել, թե որքան  
էի ջղայնացած: Իսկ Պիեռը կամ քնած էր, կամ հոլանդոսիներ  
էր որսում: Ուրիշ ոչինչ նրան չէր հետաքրքրում: Վերջապես

Քիմոզերորդ օրն անապոստոսան մեզ հայտնեցին, որ այդ օրվա Նյու-Յորք թոչող ինքնաթիռի ուղևորներից երկուսը չեն անդա-յացել: Վազեցինք...

Նստած ենք: Բողոքն ամրացրել են իրենց գոտիները: Պատ-րաստ ենք թռչելու: Ժպտում են Պիեռին: Հանկարծ ինքնաթիռի շարժիչները կանգ առան: Ուղեկցունին հայտարարեց:

— Խնդրում ենք ասել՝ ովքե՞ր են պարուններ Ռոշն ու Ազնա-վուրը:

Մատներս բարձրացրիք: Նա մտեցավ մեզ.

— Մեր ավիաընկերությունը ցավով հայտնում է, որ դուք պետք է իջնեք ինքնաթիռից: Այն երկու անձնավորությունները, որոնց տեղերն եք զբաղեցրել, ներկայացան, ու...

— Ոչ մի դեպքում, — ասացի կտրուկ:

— Բայց, պարոն...

Ոչ մի պարոն... Գոռիս քանդեցի, կանգնեցի, օգտագործե-լով չեղած հասակիս յուրաքանչյուր ինարավոր սանտիմետրը, ավելի տպավորիչ լինելու համար կանգնեցի ոտքերիս մատնե-րին ու սկսեցի ոռնալ: Սոսկալի սկանդալ սարքեցի: Սպառնացի դիվանագիտության հարց դարձնել այս միջադեպը: Նույնիսկ Ռո-շը, որն իմ կատաղությանը սովոր էր, ապշած ինձ էր նայում:

Աղմուկ-աղաղակիս վրա եկավ ինքնաթիռի հրամանատարը: Ուղեկցունին հանգիստ ասաց նրան.

— Այս պարոնը չի համաձայնվում իջնել:

Հրամանատարը հոլանդերեն հասկացրեց, որ տանում է մեզ:

Երբ գետնից պոկվեցինք, նոր միայն հանգիստ շունչ քա-շեցի:

Ամերիկա՛, ահա՛ մենք... Ինքնաթիռի անիվները դիպան գետնին, ինքնաթիռը մի թեթև վեր թռավ ու սահեց թռիչքուղու վրայով: Մի քանի րոպե ետ, ու կիրակաճաճա տարիների մեր նրագանքը: Շոտով կճեմենք Բրոդվեյն ի վար, արտասովոր ներկայացումներ կդիտենք, փողոցում երես առ երես կհանդիպենք այն «աստղերին», որոնցով հեռվից-հեռու հիշանում էինք: Փողոցի յուրաքանչյուր անկյունում ջազ կլսենք ու Հադլեն... Այո՛, մանավանդ Հադլենը կտեսնենք:

Հադլենը իր նվագախմբերով, երաժիշտներով ու «բլյուզի» երգիչներով միշտ էլ ձգել է ֆրանսիացուն: Ամեն ինչ խառնված է մեր ուղեղում, նյարդային անհանգիստ վիճակ՝ ինչե՛ր ենք տեսնելու...

— Ասում են, որ ամերիկյան սևամորթները սիրում են ֆրանսիացիներին, — ասաց Ռոշը:

— Այո, ախպերս: Մեզ սպասում է մեծ կյանք ու առասպելական պայմանագրեր:

Հրճվում եմ, չեմ կարողանում տեղում նստել: Ինքնաթիռն էլ կանգ չի առնում: Շոտայում եմ ոտքս դնել ամերիկյան այդ հողի վրա ու գնալ կանգնել առատության աղբյուրից թափվող այդ փոքրիկ, սքանչելի, կանաչ թղթերի տակ, որոնք «դուար» են կոչվում: Պատրաստ ենք, պատրաստ գրկելու այդ թուղորը:

Ինքնաթիռը կանգ առավ: Օդանավակայանի պաշտոնյաներից մեկը մտավ ներս, անցավ ինքնաթիռի երկայնքով մեկ, նայեց մեզ ու իջավ:

Բարձրախոս՝9 հայտարարեց մեր անունները, իմը՝ մի թիչ դժվարությամբ: Վազեցինք անձնագիրը ներկայացնելու:

Ամերիկա՛, ահա՛ մենք...

— Վիզա...



— Վիզա՞, ի՞նչ վիզա:

Պաշտոնյան խոսում է, խոսում, բայց մեկը ոչինչ չենք հասկանում, բացի «վիզա» մի (հաստիկ բառից:

— Լսե՛ք, պարո՛ն,— ասացի ես,— մեզ ոչ ոք ոչինչ չի ասել վիզայի մասին: Եթե իմանայինք, կվերցնեինք: Անմիտ բան է ըստացվում: Մենք չգիտեինք, հասկանո՞ւմ էք:

Ո՛չ, նա իմ ասածներից ոչինչ չէր հասկանում: Հետո էլ իր հերթին երկար խոսեց, այս անգամ ես ոչինչ չհասկացա ու շուտ եկա դեպի Պիեռը:

— Գրողը տանի,— ասացի,— դու ինձ ասել ես, որ լիցելյում անգլերեն ես անցել: Օգտագործիր վերջապես թո գիտեղիքները:

— Սրանց լեզուն ես չեմ հասկանում,— ասաց Պիեռը,— սրբանք ամերիկերեն են խոսում:

Հրճվանքի զգացումը անխղճորեն լքեց մեզ. բա որ հանկարծ հաջորդ ինքնաթիռով մեզ ետ՝ Ֆրանսիա ուղարկե՞ն: Պաշտոնյան մատով նշան արեց հետևել իրեն: Գլուխներս կախ, թշվառ, աննյակում ետ ու առաջ եմք անում: Պաշտոնյաններից մեկը, որը մի քիչ ֆրանսերեն գիտեր, ասաց.

— Ինչպե՞ս պատահեց, որ սուանց վիզայի եկաք:

— Ի՞նչ իմանամ:

— Ետ գնալու տոմս ունե՞ք:

— Ո՛չ:

— Իսկ փո՞ղ:

— Ո՛չ:

— Ինչո՞ւ եք եկել:

— Ֆրանսիացի երգչուհի մադամ Պիաֆը, ճանաչո՞ւմ եք նրան, ասաց, որ իր մոտ գանք:

— Որտե՞ղ է նա:

— Նյու-Յորքում, այսինքն՝ այտեղ...

— Նյու-Յորքը մե՞ծ է: Հասցեն գիտե՞ք:

— Ոչ: Բայց գիտենք նրա իմպրեսարիոյի անունը, որը պետք է տեղյակ լինի: Անունը Ֆիշեր է, գրասենյակին էլ Բրոդվեյի վրա է:

Հեռախոսագրքի մեջ ինչքան ասես Ֆիշերներ կային: Մի քանի անհաջող փորձերից հետո ապա հայտնաբերեց իսկական Ֆիշերին:

Ադետ... Էդիտը տասը օրով Կանադա է մեկնել, Ֆիշերն էլ նրա հետ: Ամերիկյան ապա փորձեց կապվել Ամերիկայի Ֆրանսիական դեսպանատան հետ: Ուշ էր, աշխատանքը վերջացել էր: Գրասենյակներն արդեն փակ էին:

Մենցակում մի քանի ժամ բանտարկված մնացինք: Մոտեն ընկավ: Լուռ եմք: Բանալին պտտվեց դռան փականքի մեջ: Մի տիպ, որը ոչ մի բան Ֆրանսերեն ջգիտեր, ներս եկավ ու նշան արեց հետևել իրեն: Տարավ մեզ ու նստեցրեց մի երկար «Լիմուզինի» մեջ: Ավտոմեքենայի դռները ներսից բռնակներ չունեին, որ կարմիր լույսի կամ ընթացքի դանդաղեցման դեպքում կարողանայինք դուրս թռչել ու փախչել: Ասեմք, մտադրություն էլ չունեմք. այդ օրվա հուզումները ուժասպառ են արել մեզ:

Գնում եմք անձանոթ, անվերջանալի թաղամասերով: Վերջապես մեքենան կանգ առավ: Ծովափին եմք: Մեքենան բարձրացավ լաստանավի վրա ու լաստանավը ուղղություն վերցրեց դեպի ինչ-որ կղզի: Մեքենան իջավ լաստանավից ու կանգնեց մի հսկա շինության առաջ: Դռները բացվեցին՝ իջանք: Վարորդը մի քանի բառ փոխանակեց երկու հսկաների հետ, որոնք մեզ մի թեթև հրելով ներս տարան ու ինչ-որ բարտեր լրացնել տվին:

Պահակը թևերիցս բռնած տարավ մի սենյակ, ուր արդեն մոտ քառասուն հոգի էին քնած: Երկու մահճակալ ցույց տվին, ճամպրուկները ցած դրինք, հանվեցինք ու լուռ պսոկեցինք:

Մենք գտնվում ենք «Էլլիս Ալենդ» բանտում: Ահա՛ և մենք, Ամերիկա...

Առավոտյան արթնացա սոսկալի աղմուկից: Բաց արի աչքերս ու տեսա՝ կատարյալ բարեկունյան խառնաշփոթ. մեզ շրջապատող մարդիկ խոսում են լեհերեն, իսպաներեն, հունարեն... մի խոսքով, բոլոր լեզուներով, բացի անգլերենից:

Ռոջի հետ գնացինք լվացվելու: Ամեն ինչ բաց էր, զուգարաններն անգամ դռներ չունեին:

— Ես չեմ կարող զուգարան մտնել, — ողբաձայն ասաց Ռոջը, — ամաչում եմ:

— Ես էլ:

Բողոքս շարք կանգնեցինք: Փոքրիկ, ընդհատ քայլերով, հրակայական հերթը ուղղվեց դեպի ընդհանուր ճաշարահը, ամանեղենի սոսկալի աղմուկ բարձրացնելով: Մինչ մեր հերթը միջանցքից միջանցք դանդաղ առաջ էր շարժվում, կողքից ինչ-որ երկաթյա դռներ էին բացվում ու փակվում:

— Այս բողոքն ինձ դուր քի գալիս, — դողացող ձայնով ասաց Ռոջը, — ի՞նչ ես կարծում, Ծա՛րդ, մեզ երկա՞ր կպահեն այստեղ:

— Գաղտնիք չունեմ:

Ես էլ եմ անհամոզիտ: Քսան բույե հետո ճաշարան մտանք: Յուրաքանչյուրը, մի սկուտեղ բռնած, անցնում է ճաշ բաժանող մարդկանց կողքով: Ուտելու բան ջատ կար, բայց այդ բողոքը

«զգվելի էր, իրոք զգվելի: Կարթասաներից մեկի մեջ բրինձ տե-  
նա: Մատով ցույց տվի, մերժեցին:

— Just for chinese<sup>1</sup>.

Ցույց տվի կարթ:

— You're not a baby!<sup>2</sup>

Բավարարվեցի նրանով, ինչ հասնում էր ինձ: Սրահում, որ-  
տեղ ողջ օրը բանտարկված էինք, բանալիով փակված դաշնա-  
մուր կար: Բանտարկյալներից մեկը, որ մի քիչ ֆրանսերեն գի-  
տեր, մի քիչ էլ անգլերեն, իմանալով, որ Պիեռը դաշնամուր է նը-  
վագում, պահակից բանալին վերցրեց:

Պիեռը բացեց դաշնամուրի կափարիչը: Բանտարկությունից  
վերջապես ազատված միջատները անմիջապես դուրս թափվե-  
ցին դաշնամուրի միջից ու շարժվեցին տարբեր ուղղություններով:  
Բոլորս վրա պրծանք և ով ինչով կարող էր, մեկը կրունկներով,  
մյուսը փայտով, աստկացրինք միջատներին: Սկսեցինք նվագել,  
երգել: Բանտարկյալները երջանիկ էին, որ միասպաղաղությունից  
դուրս էին եկել: Ուրախ էր մանավանդ նրանցից մեկը, որն արդեն  
մի քանի ամիս է, ինչ այնտեղ էր գտնվում: Բավակահանին լավա-  
տես էր: Մեր և մյուսների նման հուսահատված չէր:

Երրորդ օրն է: Մեզ կանչեցին, բանտ բերող մեքենայի նման  
մեկ ուրիշ մեքենա նստեցրին ու տարան Նյու-Յորքի կենտրոնը,  
ինչ-որ դատավորի մոտ, որը թարգմանչի օգնությամբ հարցաքն-  
նեց մեզ.

— Ինչո՞ւ եք եկել:

— Եկել ենք, որովհետև ողջ պատերազմի ընթացքում երա-  
զել ենք Ամերիկա տեսնել:

— Որևէ քաղաքական կուսակցության պատկանո՞ւմ եք:

— Ոչ մի:

— Ձեր մասնագիտությունը:

— Հեղինակ-կոմպոզիտոր-երգիչ:

— Ի՞նչ եք գրել:

Հիշեցի. մի օր, անգործությունից, Պիեռ Գրինբլայի հետ փոր-  
ձեցի թարգմանել ամերիկյան մի կատակերգություն, որը մինչև  
«օրս Նյու-Յորքում մեծ հաջողություն ունեցր: Կատակերգությունը  
կոչվում էր «Ֆիննական ծիածան»: Փայլուն միտք հղացա: Դա-  
տավորին ասացի, որ Ամերիկա եմ եկել, որպեսզի կատակերգու-  
թյան հեղինակին հանդիպեմ ու թարգմանությունն հանձնեմ:

<sup>1</sup> Չինացիների համար է (անգլ.):

<sup>2</sup> Երեխա չեք (անգլ.):

Թարգմանիչը թարգմանեց: Պարզվեց, որ դատավորը խենթանում է այդ պիեսի համար: Նա խնդրեց ինձ մի քառյակ երգել, տեսնելու, թե ինչպես է հնչում ֆրանսերեն: Կատարեցի: Վերջնականապես համոզվելով, որ պրեզիդենտին սպանելու համար չէ, որ եկել ենք Ամերիկա, ասաց, որ շատ ենք դուր գալիս իրեն և ուզում է ինչ-որ բանով օգնել մեզ:

— Դատավորը,— ասաց թարգմանիչը,— ձեզ ժամանակավոր կարճատև վիզա է տալիս: Հենց որ աշխատանք գտնեք, կգաք կներկայանաք իրեն, որպեսզի երկարացնի ձեր ժամկետը: Հակառակ դեպքում դուք պարտավոր եք երկրից հեռանալ:

— Ծնորհակալ եմ, պարոն դատավոր,— ասացի:

— Ծնորհակալ եմ, պարոն դատավոր,— ասաց Ռոշը:

Վերադարձանք «Էլլիս Այլենդ», ու հաջորդ առավոտ մեզ ազատ արձակեցին: Տաքսու վարորդին ասացի այն միակ սևզվերեն նախադասությունը, որ գիտեի.

— I am very glad to meet you <sup>1</sup>

— So what?<sup>2</sup>,— ասաց վարորդը զարմացած:

Բայց ես ավելին չէի կարող ասել: Նրան մեկնեցի այն թղթի կտորը, որի վրա գրված էր Ֆիջերի հասցեն՝ «Տայն սկուեր»: Այնտեղ էր գտնվում Ֆիջերի գրասենյակը:

— Ոնց որ կինոնկարներում,— հաիշտակված բացականչեց Ռոշը:

Իրոք որ: «Տայն սկուերումն» ենք՝ Բրոդվեյի իենց կենտրոնում: «Բոնդ» խանութի վրա, բազմահարկ մի շենքից հսկայական ջրվեժ է թափվում: Մարդու մի հսկա քերան «Կյամել» է ծխում, ծխի մեջ ամպ թողնելով: Թերթ ու քաղցրավենիքներ վաճառողները, կոշիկ մաքրողները, ձայնապնակների խանութները, որոնք անդադար ռեկլամում են այս կամ այն երգչին, բազմազույն ու բազմապիսի զգեստներ հագած շտապող անցորդները, կանաչ, դեղին տաքսիները, շենքերը, ամեն, ամեն ինչ ճզմում էր մեզ ու կարծես ասում. «Այստեղ դուք ոչնչություն եք: Այստեղ ոչ մի բան հեշտ չի ձեզ համար»: Այս բոլորը ծանր հարվածով գլխիս իջավ: Հավանաբար այդ այն պահն էր, երբ ուզեցի ճանաչվել այս երկրում: Բայց դեռ շատ տարիներ պետք է անցնեին, մինչև իրականապես իմ ցանկությունը:

<sup>1</sup> Ծան ուրախ եմ ձեզ հանդիպելու (անգլ.):

<sup>2</sup> Հեռո ի՞նչ (անգլ.):

**Յ՛ կյանք,  
Այնպես արա,  
Որ ավագե հատիկս դառնա հսկա:**

Ասել, որ Տիշերի մոտ մեզ լավ ընդունեցին, ճիշտ չէր լինի:  
Զննեցին մեզ, ծանր ու թեթև արին, տեսան, որ քաշ չունենք:

— Փող ունե՞ք:

— Այո, երեք դոլար և ութ սենթ: (Դոլարներից մեկը տաք-  
սուն էի տվել):

— Ծառ չէ: Որտե՞ղ եք տեղավորվել:

— Ոչ մի տեղ: Ծամայրոսկները դռան սուսջ են:

Մեզ նայեցին ավելի ընդգծված արհամարհանքով:

— Մենք ձեզ ցույց կտանք էժանագին մի հոթել: Այնտեղ են  
իջևանում «կոմպանյունները»: Հեռու չէ, կարող եք ոտքով գնալ:

Բրողվելի և 6-րդ ավելնուի միջև գտնվող «Լոնգուել» հո-  
թելն էր: Իհարկե, պալատ չէր, բայց մենք «Վալդորֆ-Աստորիա-  
յին» չէինք էլ ձգտում: Առայժմ մի ցանկություն ունեինք՝ կան-  
խավճար չպահանջելին հանկարծ, թե չէ ճաշներս եփած է:

Հենց որ հոթելի սրահը մտանք, մի տղա մոտեցավ մեզ ու  
ֆրանսերեն խոսեց: Լուսյեն ժարոն իր խաղընկերոջ հետ ակրո-  
բատիկայով էր զբաղվում: Նա մեզ սուսջարկեց իր օգնությունը  
որպես թարգմանիչ հոթելում սենյակ վարձելու համար, մի բան,  
որ անսահմանորեն թեթևացրեց մեր գործը: Աշխատողի հետ մի  
քանի վայրկյան խոսելուց հետո ժարոն շոտ եկավ դեպի մեզ:

— Երկու սենյակ կա, շաքաթակա՞ն չորս դոլարով: Ավելի  
էժանը չեք գտնի:

— Հիանալի է: Ծնորհակալություն:

— Առայժմ, — ասաց ժարոն ու հեռացավ:

Թանկ չէր սենյակը, բայց լավն էլ չէր: Վարդագույն ներկած  
պատերը փրտ խառնելու չափ գունատ էին: Առանց հին ներկը  
հանելու, նորից ներկած պատերի վրա գունդ-գունդ կետեր կա-  
յին: Լվացարանը ճաքճաք էր, ջեռուցման ախտենը շոգեքարջի  
պես շվվոց էր արձակում: Ինչ վերաբերում է մահճակալների զրս-  
պանակներին, ապա սրանք ապրում էին իրարից անկախ ու ան-  
հաշտ: Իսկ Ռո՛շը... Սոսկալի կասկած անցավ մտքովս: Իսկ ի՞նչ,  
եթե նրա սենյակը իմից լավն է: Նման հարցերում նրա բախտը  
միշտ բերում էր: Նեղ, մութ, գորշ պատերով միջանցքով անցա ու  
մտա նրա մոտ: Ո՛ւֆ... Նրա սենյակը նույնքան զգվելի է, որքան  
իմը:

— Ո՞նց է:

— Իհարկե, «Վերսալ» չէ, բայց կարևորը՝ լու չկա: Չգնա՞նք շրջենք:

Դուրս եկանք ու քաշեցինք Բրոդվեյն ի վար: Չեմ հիշում, թե ինչ կինոնկար էր գնում, բայց ընդմիջմանը Ջին Կրուպպայի նվազախումբը պիտի նվազեր: Տոմսը դուրս ու կեսով՝ երեք դուրս:

— Գայթակոյիչ է,— ասաց Ռոշը,— բայց եթե մտնենք, գրքայաններումս կմնա ընդամենը 80 սենթ:

— Իսկ եթե չմտնենք, միևնույն է, ավելի չենք հարստանա ու տեսած չենք լինի:

— Իրավացի ես, Ծարլ, վաղը մի բան կանենք:

Ահա մենք՝ ոլթոյի վարպետներս, բազկաթոռներին նստած նայում ենք Կրուպպային, որի միայն անունը երազի պես բան է Փարիզի մեր ընկերների համար:

— Ո՞նց է նվազում շան որդին...

— Սպանում է...

Երբ դուրս եկանք, արդեն գիշեր էր: 15 սենթ տվինք մի-մի նրբերջիկ կերանք, 5 սենթ տվինք մի-մի կոկա-կոլա խմեցինք ու մեզ մնաց ընդամենը 40 սենթ...

— Ինչ լա՛վն է Ամերիկան...

Թափառեցինք փողոցներում ու Ամերիկան կուշտ ու կուտ տեսնելուց, կուշտ ու կուտ լսելուց հետո շատ ուշ վերադարձանք հյուրանոց ու պանկեցինք քնելու: Հարկավոր էր առավոտյան թարմ ուժերով վեր կենալ, գալիք պայքարի ծրագիրը կազմելու համար:

Առավոտյան մեր առաջին գործը եղավ «Լիից մյուզիկ» հրատարակչության հասցեն գտնելը: Փարիզից դուրս գալուց առաջ Ռաուլ Բրետոնը խորհուրդ տվեց գտնել իր բարեկամներից մեկին, ոմն Լուին, որն այդ հրատարակչության տերն էր: Բլոկնոտս քրքրեցի, գտա հասցեն, ու մինչ Ռոշը հանգիստ քնած էր, գրպանիցս հանեցի խոսակցական բառարանս ու սերտեցի պատասխանները այն հարվանական հարցերի, որ կարող էին մեզ տալ: Հետո մի կերպ վեր կացրի Ռոշին, հագնվեցինք ու ճանապարհ ընկանք:

«Լիից մյուզիկ կորպորեյշն»-ի մուտքի առաջ քարտուղարուհին հարցրեց, թե ի՞նչ ենք ուզում:

— Mister Lou Levy. We are friends of Monsieur Raoul Breton of Paris.<sup>1</sup>

Մի քանի լուսնի մեզ առաջնորդեցին մի ընդարձակ սրահ, ուր միջահասակ մի մարդ մեզ ընդունեց իրոք շատ սիրալիր:

— Who are you?<sup>2</sup>

Հատ-հատ սասցի.

— Roche and Aznavour.<sup>3</sup>

— What are you doing.<sup>4</sup>

— Writing songs and music.<sup>5</sup>

Մինչ այստեղ ամեն ինչ լավ գնաց: Եթե սա է անգլերենը,— մտածեցի ես,— ապա կարկանդակ ոտնելու պես հեշտ է:

— How is the Marquise?<sup>6</sup>

Մինչ այդ չգիտեի, որ Ռաուլ Բրետոնի կնոջ անունը Մարկիզ է: Ինձ թվաց, թե նա նկատի ունի նախապատերազմյան մի երգ, որի անունն էր «Ամեն ինչ լավ է, մադամ Մարկիզ»: Ուստի պատահաբանեցի.

— Old! oh, very, very old..<sup>7</sup>

Լուսն ինձ նայեց զարմացած: Սկսեցի անհանգստանալ: Տեսնես ինչ հիմարություն եմ թույլ տվել: Լուսն սկսեց ինչ-որ բան պատմել, որից իհարկե ոչինչ չհասկացա: Այդ բոլորը իմ բառարանում չկար, բայց, իհարկե, ուշադիր լսում էի, ժպտում ու երբեմն ասում՝ yes: Ըստ երևույթին վերջին «այո»-ն պիտի տեղ ընկար, որովհետև Լուսն կանգ առավ ավելի զարմացած: Ի վերջո հասկացա, որ ես անգլերեն չգիտեմ ու... խեղդվեց ծիծաղից:

Արցունքները սրբելով, հեռախոսը վերցրեց, շարունակելով ծիծաղել, հեռախոսի մեջ մի քանի բառ սասց ու հազիվ էր լսափողը ցած դրել, երբ ներս եկավ Սալ Չիանթան, որը ֆրանսերեն մի տիրապետում էր կատարելապես: Ռոջն ու ես իսկույն վրա պրծանք ու միաբերան նկարագրեցինք մեր վիճակը: Սալը թարգմանեց: Լուսն մտածեց, նայեց մեզ, նորից մի լավ ծիծաղելուց հետո մեզանից վերցրեց երկու երգ ու մեկնեց 200 դոլար:

<sup>1</sup> Միսոր Լու Լեվիին: Մենք Փարիզի պարոն Ռաուլ Բրետոնի բարեկամներն ենք (անգլ.):

<sup>2</sup> Ովքե՞ր եք (անգլ.):

<sup>3</sup> Ռոջ և Ազնավուր (անգլ.):

<sup>4</sup> Ի՞նչ է ձեր զբաղմունքը (անգլ.):

<sup>5</sup> Երգեր ենք գրում (անգլ.):

<sup>6</sup> Ինչպե՞ս է Մարկիզը (անգլ.):

<sup>7</sup> Մաշված է, օ՛, շատ, շատ է մաշված (անգլ.):

Պիեռն ու էս հարչուրապատիկ անգամ շնորհակալություն հայտնելով դուրս վազեցինք: Հարո՛ւտո եմք...

— Այս փողը տնտեսելով պիտի ծախսենք, — ասաց Ռոջը:

— Իհարկե: Որպես լապացույց հենց հիմա տալիս եմք հյուրանոցի երեք շաբաթվա վարձը: Գոնե այդ կողմից ապահով կլինենք:

Փողի մնացորդը գնաց ներկայացումների ու նրբերջիկների վրա: Վերջնականապես սնանկացրի ինձ, գնելով մի տրանզիստոր, որի նմանը չէի տեսել: Արդե՞ն չունեմ և ոչ մի սու:



Ամեն օր անգլերենս կատարելագործելու պատրվակի տակ հող էմ իջնում հյուրանոցի անձնակազմի հետ զրուցելու: Բնականաբար, ակտեցի ճանաչել հաճախորդներին, որոնց մեծ մասը ֆրանսիացի կամ իտալացի արտիստներ էին, ու նրանց հետ բարեկամական կարգեր հաստատեցի: Խեղճերը չէին կաակածում, որ իմ գոհին էին դառնալու:

Ժարոն ու ես առանց խոսքի հաականում էինք իրար: Նա էլ մեզ նման փող չուներ:

Մի քանի դուրս չանթելու համար Լոնգվելլի բարեկամներիս հետ պոկեր էինք խաղում:

**Թուղբ են առնում,**

**Թուղթ են խառնում,**

**Թուղթ են կտրում,**

**Թուղթ բաժանում:**

**(Օ՛, չքնաղ է պոկեր խաղալը անշուշտ:)**

Այդ խաղն փնձ մոտ լավ էր ստացվում հետևյալ պատճառներով. առաջինը՝ խաղը չէի սիրում, երկրորդը՝ տարվել գիտեի, երրորդը՝ երբեք չէի ջղայնանում:

Բացի այդ, կորցնելու վտանգը մեծ չէր, քանի որ հյուրանոցի հաճախորդներն էլ հարուստ չէին: Խաղում էինք ժետոններով ու տարածներս մի «Սև առի» էր կամ «Կոկա-կոլա»:

Ժարոն ու ես նախընտրում էինք «Կոկա-կոլան»: Պատճառն այն էր, որ գարեջրի շժերը չէինք կարող վերադարձնել, իսկ «Կոկա-կոլայինը»՝ կարող էինք: Հատն էլ երկու սենթ արժեր: Բանի որ միշտ տանում էի (գործ ունեի սիրողների հետ), դիմացի խանութից վերև էի բարձրացնել տալիս կոկա-կոլայի արկղե-

րը, ու խաղից հետո իշխանավայել հյուրասիրում տարվողներին, և հենց որ մեկն էինք մնում, ես, Ռոշն ու Ժարոն գնում էինք դասարակ շէրը հանձնելու: Ինչ խոսք, ձեռք բերած փողը մի մեծ բան չէր, բայց և այնպես հացի փող էր: Նրբերշիկը «Տայս սկուերում» արժեր 10 սենթ, բայց «42-րդ ավելյուի» վրա 5 սենթով էինք առնում:

«6-րդ ավելյուի» վրա, Մարտինի մոտ, գարեջուրն արժեր 10 սենթ, բայց այդ գումարի դիմաց մեկը կարող էինք խժուել ձիթապտուղ, պանիր, թթու վարունգ: Լավ օրերին մեզ թույլ էինք տալիս գնալ «Հեկտոր» սրճարանը, ուր 75 կամ 80 սենթով լավ ուտում էինք:

Մի օր մեր ունեցած փողը հաշվեցինք ու դուրս եկավ, որ երեքով ունենք երեք դոլար ու 25 սենթ: Փողը հանձնեցինք Ռոշին. նրան գանձապահ էինք ընտրել, նկատի ունենալով խնայողության սուր զգացողությունը, որ գրեթե ժլատության էր հասնում: Այդ օրը մի շատ հարուստ ընտանիք մեզ ճաշի էր հրավիրել: Հազուադեպս խոզանակեցինք, լվացինք շապիկների օձիքն ու յօթերի ծայրերը և գնացինք:

— Տղանե՛ր,— բացականչեց Ռոշը,— դրամսու ինք ընկել:

ԲուՖեանն առասպելական էր ու բոլոր սեղանների վրա սիգարետներ կային: Մինչ ես ու Ժարոն եղած-չեղածը խժոում էինք, խմում, ծխում, Պիեռը սեթևեթում էր մի երիտասարդ սիրուն կնոջ հետ:

— Փոխանակ սիլի-բիլի անելու, կեր,— ասաց Ժարոն, հագիվ բացուխտի անելով ոտելիքով լի բերանը:

— Իրավացի ես,— ասացի, —ի՞նձ խեղդող հակաչական պատանը կուզ տալով:

Ռոշը մոտեցավ մեզ:

— Դուք մեկնակ վերադարձեք: Ես կգամ մի քիչ ուշ:

— Առայժմ, ծերուկ:

— Առայժմ:

Ոտքով տուն վերադարձանք, պառկեցինք ու տեղն ու տեղը քնեցինք: Զարթնեցի՝ Ռոշը չկար: Բողոքովին չեմ անհանգստանում, չեմ մտածում, որ կարող է մեքենայի տակ ընկնել կամ ոտիկանների ձեռքն ընկնել: Մի բանի մասին եմ մտածում միայն՝ նրա մոտ եմ մեր երեք դոլարներն ու 25 սենթը:

Ժարոյի հետ ամբողջ օրը բան չկերանք: Առանց հացի օրը երկար է: Հյուրանոցից էլ դուրս չենք գալիս, հոտով, որ Ռոշը կարող է զանգ տալ: Ո՛չ մի զանգ, ո՛չ մի լուր: Հաջորդ առավոտյան՝

ստամոքսս դատարկ, ահալոր տրամադրության մեջ եմ. պոկեր անգամ չկարողացա կազմակերպել. կատաղած եմ:

— Ախր ի՞նչ է անում այսքան ժամանակ: Նա գիտե, որ մեր ողջ հարստությունը իր գրպանում է,— ողբում է Ժարոն, որն ինձ նման մեռնում էր սովից:

— Ի՞նչ ես խոսում, եթե այդ հիմարը մերկ է, ինչպե՞ս կարող է ձեռքը գրպանը տանել:

— Բայց պիտի իմանա, որ մի՞նչ ինքն իր աղավաղակի մոտ գլխկոխում է, մեկը այստեղ սովից ասուկում ենք:

— Ի՞նչ իմանաս, գլխկոխում է, թե չէ: Գուցե ինքն էլ է սովից մեռնում:

Հեռախոսը զանգեց միայն կեսօրից հետո, ժամը չորսին:

— Մի քիչ շուտ չե՞ս զանգել,— ասաց Ժարոն,— վերջապես հիշեցի՞ր մեր գոյության մասին... Որտե՞ղ ես:

Ռոշը հասցեկն տվեց՝ 70-րդ փողոց: Հեռու է: Հետո ավելացրեց.

— Նա ձեզ ճաշի է հրավիրում: Ծտապեցեք:

— Բայց ահագին ժամանակ է պետք տեղ հասնելու համար. ոտքով ենք գալու, ոչ մի գրոշ չունենք:

Չենք քաղում, թռչում ենք: Վերջապես տեղ հասանք: Ռոշը մեզ ընդունեց մի փոքրիկ ջքեղ բնակարանում, հագին՝ մետաքսյա սև գիշերազգեստ: Մի սրահ տեսեք, ինչ ազնվակիրթ տեսք ունի:

— Մեռնում ենք,— ոռնացի:

Հյուրասենյակ մտանք, արագ բարեկեցիկ տանտիրուհուն, մորեխի նման մի քանի վայրկյանում կուլ տվինք սենդվիչներն ու մաքրազարդեցիկ սեղանը: Ռոշը ներողամիտ նայում էր մեզ:

— Եթե էլի եք ուտել ուզում,— ասաց երիտասարդ կինը, որը շատ սիրունիկն էր,— կարող եք օգտվել սառնարանի ուտելիքներից: Ձեզ զգացեք ինչպես տանը:

Այդ մեկը պիտի չասեր: Երկու սովահարներս խուժեցինք խոհանոց ու էլ դուրս չեկանք: Սառնարանը բերնեբերան լի էր: Ինչ կար, չկար լափեցինք-ոչնչացրինք:

— Դե համը մի հանեք,— ասաց Ռոշը սրտնեղած:

— «Համը մի հանեք»... «Համը մի հանեք»: Քեզ համար ինչ կա, դու կուշտ կերել ես, իսկ մեր ստամոքսները երկու օր է դատարկ են:

Թաղանձ ավարտվեց: Ժարոյի հետ վերադարձանք սրահ, նստեցինք բազմոցի վրա ու որոշեցինք մի քիչ էլ գրույց անել:

Մի քանի բուպե հետո վայրենիների նման քնեցինք՝ ստամոքսներս լի, սրտներս հանգիստ: Երկու ժամ հետո արթնացանք.

Ռոշն ու երիտասարդ կիւնը, բազկաթոռների վրա դեմ-դիմաց նըստած, լուռ մեզ էին նայում:

Վեր կացա, ձգվեցի, հորանջեցի, արթնացրի ժարոշին, վերցրինք մեզ հասանելիք մեկական դոլարն ու 25 սենթը և գնացինք, առանց անհանգստանալու, թե ինչ կմտածի տանտիրուհին մեր մասին մասնավորապես, ու ֆրանսիացիների մասին՝ ընդհանրապես:

Մի քանի օր հետո, պատահաբար, երես առ երես հանդիպեցի երկու պարողների՝ Ֆլորանսին ու Ֆրեդերիկին, որոնց ճանաչում էի Փարիզից: Ֆրեդերիկի անունը Արգար էր, անուն, որ մի քիչ հաշկական է: Փոխօգնության զգացումը իր գործն արեց. Ֆրեդերիկը մեզ խոստացավ «Դատն Տատնի» կարպետներից մեկում աշխատանք ճարել:

— Ի՞նչ ես կարծում, կհաջողեցնի՞ր,— ասաց Ռոշը:

— Վստահ եմ:

Սպասում եմք. տագնապալի սպասում, մասնավանդ որ դարձյալ փող չունենք: Մի քանի օր հետո, «Անուկի» քարում նստած, վերջին գրոշներն էինք ծախսում, երբ մեզ մոտեցավ հաճելի մի մարդ ու ասաց.

— Ֆրանսիացի եք, այնպես չէ՞:

— Այո:

— Օ՛, Ֆրանսիա... Ի՞նչ հիանալի երկիր է: Թույլ կտա՞ք ձեզ հյուրասիրել: Երկար ժամանակ է, ինչ ֆրանսերեն չեմ խոսել:

Նստեց մեր սեղանի մոտ, կանչեց մատուցողին, որը կովակոլա ու ֆրանսիական գինի բերեց:

— Ի՞նչ եք անում Նյու-Յորքում:

Առանց ամաչելու ամեն ինչ պատմեցինք: Մեր արած պատմությունը ծայրաստիճան զվարճացրեց նրան, ու որոշեց իր խը՛նամքի տակ վերցնել մեզ:

— Ապրում եմ Բոստոնում, մի քանի օրով եկել եմ Նյու-Յորք, բիզնեսով իհարկե: Բայց պիտի այցելեմ նաև ժնողներին, որոնք ապրում են Բրուկլինում: Նյու-Յորքում եղած ողջ ժամանակաընթացքում ես կզբաղվեմ ձեզանով:

Մենք բողոքեցինք: Երկու հարված իջեցնելով մեջքներիս (քիչ էր մնում թոքերս տեղից պոկելը), ասաց.

— Գնացինք:

Երեքով ճամփա ընկանք: Այցելեցինք բոլոր գիշերային կարպետները: Գիշերվա ժամը երկուսին խարիսխ օգեցինք մի ակումբում, ուր դոնապանից սկսած մինչև քարմենը, բոլորը երգում էին: Խոհարարը ճաշ պատրաստելիս երգում էր, մետրոդ-

թելը երգում էր հաշիվը ներկայացնելիս... Շատ ուրախ էր: Խմում էինք, հա՛ խմում... Մեր ծանոթող խնդրեց իրեն Վիկտոր անվանել: Վիկտոր ենք ասում՝ խմում ենք, Վիկտոր ենք ասում՝ ուտում ենք: Կարարեմի կենտրոնում մի դաշնամուր կար: Վիկտորը խնդրեց մեզ ելույթ ունենալ: Իսկույն համաձայնեցինք. վաղուց չէինք երգել:

Վիկտորը մի քայլ անգամ մեզանից չէր հեռանում, ու մենք դեմ չէինք, քանի որ փաստորեն նրա հաշվին էինք ապրում: Օրերից մի օր նա հանկարծ չքվեց, առանց «զգուշացեք, գնում եմ» ասելու:

Նույն օրը Էդիտը Կանադայից վերադարձավ: Չգիտեմ ո՞վ էր պատմել նրան մեր դժվարությունների ու թշվառության մասին...

Նա մեզ շատ էր սիրում, քայց ինչ-որ սենտիմենտալ պատճառներով չէր ուզում, որ քարշ գալինք իր շրջապատում:

— Միայն այդ էր պակաս,— շղայնացավ Ռոշը,— ի՞նչ պիտի անենք, չես տեսո՞ւմ, որ սրտնեղած է:

— Էդիտն է, ոչինչ:

— Եվ վերջապես, եթե մենք այստեղ ենք, ապա միայն նրա պատճառով:

— Դե լավ, այնուամենայնիվ, գնանք նրա մոտ:

Գնացինք: Նա մեզ սովորականի նման չընդունեց. պարզ երևում էր, որ սրտնեղած է:

— Ի՞նչ եք անում այստեղ,— ասաց:

— Ախր, Էդիտ, դուք ասացիք՝ եկեք, մենք էլ եկանք:

— Դուք պարզապես կապելու գժեր եք: Ինչո՞վ պիտի ասրեք այստեղ:

— Դե լավ, Էդիտ, մի՛ բարկացեք: Երգեր ենք ծախել ու արդեն մի քանի դուրս ունենք, շուտով ելույթ էլ կունենանք:

Նայեց մեզ, զգացի՝ ուզում է, որ աչքին չերևանք:

— Լան՛ք, ես ձեր մասին խոսել եմ Կանադայում, կարող եք ելույթ ունենալ Մոնրեալի թատրամասում: Ձեր պատասխանին եմ սպասում: Իսկ հիմա ռադիոյի քաջեք, չեմ ուզում շատ մարդ տեսնել իմ շրջապատում. դա կարող է Մարսելի ուշադրությունը շեղել: Նա շատ ծանր ու կարևոր մարտի է պատրաստվում:

Փողոցում Ռոշը հեզնանքով ասաց.

— Եթե Սերդանին խանգարում ենք, պետք չէ պնդել: Պատկերացնո՞ւմ ես, հանկարծ նա մեր մեղքով մարտը տանուլ տա... Մպորտասներները մեզ «լինչի» կենթարկեն:

Չպատասխանեցի: Էդիտի վերաբերմունքն ինձ տակնուվրա էր արել. ես ջերմ ընդունելության էի սպասում: Ինչպես միշտ,

հյուրանոց հասնելու համար 15 կմ անցանք: Այնտեղ մեզ մի նոր լուր էր սպասում: Այս անգամ լավ: Ճլորանսն ու Ֆրեդերիկը մեզ համար ունկնդրություն էին հաջողացրել «Գրինվիչ Վիլլեյջի» «Կաֆե Առսաիթիում»:

Ճլորանսն ու Ֆրեդերիկը եկան մեզ հետ, քաջալերելու համար:

Բարնեյ Ջոզեֆսոնը՝ կաբարեի տերը, երեք երգից հետո կանգնեցրեց մեզ.

— Լավ է: Տարեվերջի տոնական օրերին ես ձեզ կգբաղեցնեմ երեք շաբաթով: Ծաթաբալկան կտամ 350 դոլար:

Իսկույն կնքեց պայմանագիրն ու ասաց, որ մի երեկո գանք, երգենք ժողովրդի առաջ, իմանալու համար նրա վերաբերմունքը, որպեսզի ըստ այնմ վերանայենք մեր ծրագիրը:

Վերադարձին մտածում եմք. հիմա հուկտեմբերի սկիզբն է, մինչև տոները Նյու-Յորքում մնալն իմաստ չունի: Ավելի լավ է գնանք խոսենք Պիաֆի հետ ու ասենք, որ պատրաստ ենք Մոնրեալ գնալ:

— Լավ, կասեմ, որ Լուին գբաղվի ձեզանով, — ասաց Պիաֆը:

Մի քանի օր առաջ «Կոմպանյոնները» Կանադայի հյուրախաղերից վերադարձել էին ու սովորականի պես տեղավորվել «Լոնգվել հոթելում»:

Շուտով էլույթ պիտի ունենանք գիշերային կաբարեում: «Կոմպանյոնների» հաջողությունը Ամերիկայում կատարյալ էր: Նրանց հաճախ էինք տեսնում, մանավանդ Ֆրեդին:

Էդիտին հանդիպելուց հետո գնացի Ֆրեդի սենյակը:

— Ասա տեսնե՛նք, ո՞նց է Կանադան:

— Ծատ լավ:

— Ես բնությունը նկատի չունեմ, աղջիկների մասին է խոսքս, դմբո:

— Կարծում եմ, որ ձեզ համար դա պրոբլեմ չի լինի:

— Գեղեցի՞կ եմ:

— Իմ կարծիքով, այո:

— Դե լավ է, հավանական է շուտով գնանք:

Հանգստացած դուրս եկա: Լուրը իսկույն նեղ հայտնեցի Ռոջին, որը դրանից հետո մի ցանկություն ուներ միայն՝ գնալ, շուտ գնալ առատության այդ երկիրը:

Ամեն օր գնում էինք Էդիտի մոտ Կանադայից լուր ստանալու ու միևնույն ժամանակ Մարսել Սերդանին հանդիպելու համար:

Մարսելը մեղմ, հանգիստ տղա էր: Նրա հետ բնականաբար միայն բռնցքամարտի մասին էինք խոսում:

Շենքոս միշտ էլ «կոմպանյուններ» լինում էին: Մարսելը բռնցքամարտի ձեռնոցներ էր տալիս մեզ, ու մենք երիտասարդ շների նման իրար դնչերի էինք հասցնում:

Ծիծաղից երկու տակ եղած Մարսելը մեզ խորհուրդ էր տալիս.

— Պաշտպանվիր... Ո՛չ, այդպես չէ, հիմա կուտես...

Հարվածը իջնում էր մեկնումեկիս ճիշտ քթին, ու Մարսելը ծիծաղից արտասովում էր:

— Ես քեզ զգուշացրե՛լ էի... բաց տեղին խփիր... ոչ, ոչ, այդպես չէ...

Քրտնաթոր, շնչակտուր ու կատաղած մարտի ենք բռնվում: Էդիտին այդ դուր չի գալիս. նա գտնում է, որ աղմուկը շատ է:

— Դուք գտնվում եք «Պարկ Ավենյուի» մոտ: Սա շքեղ փողոց է: Ի՞նչ է, կարծում եք «Գուտ-դ'օրումն» եք գտնվո՞ւմ:

Երբեմն Մարսելը հագնում էր ձեռնոցներն ու ասում.

— Փորձիր հարվածել ինձ:

Անհնար է: Թներս շատ կարճ են, հուզվում եմ, թռչում եմ, չորս կողմը պտտվում, ինձ պատռում, իսկ նա հանգիստ կասեցնում է հարվածներս ու ինձ պահում հեռավորության վրա: Մի քանի րոպե հետո Մարսելն ասում էր.

— Քեզ համար նեղություն չէր լինի, եթե Ռոջի հետ մի քիչ երգեիր:

— Սիրով, Մարսել:

Պիեռը նստում էր դաշնամուրի ստաջ, ու երգում էինք:

Երբ փողոցում միասին ման էինք գալիս, անցորդները ժրպտում էին նրան, խոսում, հաճախ Էդիտին անգամ չէին նկատում, մի բան, որ մեծ տպավորություն էր թողնում Էդիտի վրա: Նա ասում էր.

— Տեսնո՞ւմ եք, մեծ մարդ է Մարսելը:

Երբ Մարսելը երկար էր գրուցում ու շատախոսում մեզ հետ, Պիաֆը, առանց խոսքերը կշռադատելու, հասկացնում էր, որ ժամանակն է հեռանալ:

— Չեղավ: Սա ի՞նչ բան է: Գնացե՛ք: Ի վերջո Մարսելի հետ մի քիչ հանգիստ մնալու իրավունք ունե՞մ, թե՞ ոչ: Բողբովին փառիկանկատ չեք:

Մարսելի ու Տոնի Ջեյլի միջև տեղի ունեցավիք մարտին բոլորս ներկա ենք: Ես նստած եմ Էժանազին տեղում, Մարսելի և Էդիտի մշտական երկրպագուները՝ ո՞րևոր տակ: Էդիտը չուզեց

գալ, շատ էր վախենում: Ինձ ու Պիեռին հասկացրեց, որ Մարսելը մարտից հետո տուն է գալու իր ընկերների հետ, ուստի մեզ համար տեղ չի լինի:

— Անցեք վաղը: Բարի գիշեր, տղաներ:

Հաջորդ օրն սասաց.

— Եղալ: Լույուն Մոնրետալի ձեր ելույթը կարգավորեց: Կանադացիք չորս շաբաթվա պայմանագիր են առաջարկում՝ շաբաթական 350 դոլարով: Հինգ օրից ձեր ելույթներն սկսվում են: Իսկ հիմա չքվե՛ք:

Ծնորհակալություն հայտնեցինք ու չքվեցինք: Այդ երեկո փորձական ելույթ ենք ունենալու «Կաֆե Սոսաիթիում»: Վախից՝ կարի-կանաչ տեսնելով մեզ, Ջոզեֆսոնը՝ կաքարեի տերը, մեզ հանգստացնելու համար սասաց.

— Այս օրերին Նյու-Յորքում շնորհիվ Էդիտ Պիաֆի ու Ժան Սաբլոնի ֆրանսիական երգերը լավ ընդունելություն են գտնում: Խորհուրդ եմ տալիս ձեր ելույթն սկսել տիպիկ փարիզյան մի երգով:

Մեր ելույթն սկսեցինք տիպիկ փարիզյան մի երգով ու դահլիճում հոմերական ծիծաղ պայթեց... Հանդիսատեսը մեզ դրել էր ամերիկացի կոմիկների տեղ, որոնք փորձում են նմանակել ֆրանսիական երգը: Քիչ հետո նրանք հասկացան, որ մենք բողոքովին էլ ամերիկացիներ չենք: Բայց արդեն ուշ էր: Որքան էլ փորձեցինք ուղղել մեր սխալն ու հասնել մեր սպասած հաջողությանը, ոչինչ դուրս չեկալ:

Մտածում ենք. արդյո՞ք Ջոզեֆսոնը, այս կիսատասպալումից հետո, կուզենա ուժի մեջ պահել պայմանագիրը: Բայց ահա՛ և նա:

— Լավ կլինի, boys<sup>1</sup>,— հանգստացրեց մեզ,— մի բան պետք է միայն, մինչև ծնունդը դուք պետք է մի բանի երգ պատրաստեք անգլերեն ու ամեն ինչ «O. K»<sup>2</sup> կլինի:

Ելույթի տասպալումից տակնուվրա եղած տուն էի վերադառնում, երբ հանդիպեցի Ֆրեդին: Նա իմ բարևին մի տեսակ ցրված պատասխանեց. մի օր առանց դուրը թակելու մտել էի նրա սենյակն ու տեսել նրան մի շեկ, հմայիչ աղջկա հետ, դա բողոքովին նման չէր իրեն: Սյուզանը կանադացի դերասանուհի էր: Ֆրեդը նրա հետ ծանոթացել էր Մոնրետալում հյուրախաղերի ժամանակ:

Սյուզանի՝ իր սենյակում հայտնվելը արդարացնելու համար Ֆրեդը խճճվեց անհավանական բացատրությունների մեջ: «Մենք

<sup>1</sup> Տղաներ:

<sup>2</sup> Լավ:



պատահաբար հանդիպեցինք Նյու-Յորքում, հասկանում ես... Հետո գիտեա... Հետո տեսնում ես...»: Մի խոսքով, սովորական ատերի մի շարան, որին ոչ ոք չի հարկատում, ո՛չ լսողը, ո՛չ էլ ասողը:

Հաջորդ օրը միայն նրա մասին էր խոսում. «Այնքա՛ն գեղեցիկ է, այնքա՛ն խելոք, այնքա՛ն մեղմ...»:

Նման դեպքերում, եթե չես ուզում գծովել ընկերոջդ հետ, համաձայնիր:

— Մոնրեալ վերադառնալուց մոռացա՛վ հովանոցը,— հանաչեց Ֆրեդը:

— Իհարկե, նա գնաց արևն իր սրտում:

— Քանի որ Կանադա եք գնում, գուցե հովանոցը հանձնեք իրեն:

— Կարող ես վստահ լինել, անձամբ կհանձնեմք:

— Հենց իրենց տուն կտանեմք,— ճշտեց Ռոշը:

— Չէ՛, տղաներ, զգույժ, նա լավ աղջիկ է:

— Մենք լավը չե՞նք, ինչ է:

— Ուզում եմ ասել...— կմկմաց Ֆրեդը:

— Ուզում ես ասել, որ սիրում ես նրա՞ն:

— Ասենք թե սիրում եմ:

— Դե՛, այդ դեպքում տո՛ւր հովանոցը:

Այդ անիծյալ հովանոցը ճամպրուկի մեջ տեղ չարեց: Ահա թե ինչու, երբ Մոնրեալի օդանավակայան իջա, հովանոցը ձեռքիս մեծ տպավորություն թողեցի. անգլիացու տեսք ունեի:

Ո՞րչ Կուսերը՝ մեր պաշմանագրի իմպրեսարիոն, «Լատինական թաղամասի» տիրոջ՝ պարոն Լոնկոսիճի հետ մեզ սպասում էր օդանավակայանի սրահում:

— Հենց որ ստանաք ձեր ճամպրուկները, Ս. Կ. Վ. Լ. Ի.-ի ռադիոյի ռեպորտյորներից մեկը ձեզ հետ հարցազրույց կանցկացնի,— ասաց Ռոյը:

— Ի՞նչ բան է Ս. Կ. Ն. Լ. Ի.

— Դա այն ռադիոկայանն է, որն սկսել է ֆրանսիական երգի պրոպագանդան կառնյալիս Կեթեկում իջխող ամերիկյան երգի դեմ,— ասաց պարոն Լոնկոսիճը:

Յուրաքանչյուր ֆրանսիացի արտիստ, որը Կեթեկ է ժամանում, ընդունվում է որպես «աստղ»: Հաղորդակցությունը Կանադայի ու Ֆրանսիայի միջև դեռ դժվար է: Ահա թե ինչու, ֆրանսիացի անձանոթն անգամ ընդունվում է արտակարգ ջերմությամբ: Նրա միջոցով կանադացիներն ուզում են իմանալ, թե ինչ է տեղի ունենում Ֆրանսիայում, հատկապես Փարիզում: Կանադացիները ծարավ են ֆրանսիական երգի: Ծամպրուկները ոտներին տակ՝ հարցազրույց ենք անցկացնում:

— Ռոյ և Ազնավուր: Ի՞նչ կարծիք ունեք Կանադայի մասին: Առողջանությունն ինձ զարմացրեց, հարցը առավել ևս:

— Թույլ տվեք տեղ հասնել: Դեռ ոչինչ ջեճք հասցրել տեսնել:

Կեթեկն իմ վրա տարօրինակ տպավորություն թողեց: Ամերիկայի ագրարային այդ մասը տեսնելով, ժպտացի: Տպավորությունն այնպիսին էր, կարծես Բերրիոն էի գտնվում, բայց ահավոր ժամանակակից մի Բերրիոն:

Տեսածս շատ հեռու էր Լիճ Ռեճոյի «Կանադայի տնակա» երգից: Որսորդների, գյուղացիների, փայտահատների փոխարեն, որ

սպասում էի, տեսա ժամանակակից, շատ հարմարավետ ավտոմեքենաներով, նեոնային լույսերով ողողված, ասպրանքներով բեր-  
նեկերուն լի խանութներով մի քաղաք:

Մեզ հարցերով խեղդեցին: Հարցնում են Մորիս Թելալյեի, Տինո Ռոսիի, Ծարլ Տրենեի, ֆրանսիական վերջին ֆիլմերի ու Սարթրի վերջին ստեղծագործության մասին: Ռոժն ու ես հազիվ էինք հասցնում պատասխանել: Մեզ տեղարկրեցին անգլիական թաղամասի «Մաունտեն սորուիտի», «Տուրիստ Ռումում»:

— Վաստ չէ,— ասաց Ռոժը,— կաքարեն ողիղ մեք դի-  
մացն է:

Հաջորդ օրը երեկոյան ելույթ ունեցանք քաղաքի նշանավոր մարդկանցով լի դահլիճում: Այդտեղ էին բոլորը: Էլ չենք խոսում աղջիկների մասին: Միանգամից այդքան գեղեցիկ աղջիկներ չէինք տեսել ողջ կյանքներիս ընթացքում: Ռոժը հիացած էր:

— Չտեսնված բաներ են այս կանադոսիիները, Ծա՛րլ, բա-  
ցահալստ ավելի լավը, քան ամերիկոսիիները: Գիտե՛ս ինչ, ինձ թվում է, որ ես պաշտելու եմ այս փոքրիկ երկիրը:

— Բա է՛ս...

Երգեցինք: Ելույթից հետո այնպիսի մի օվացիա արեցին, որի նմանը երբեք չէինք տեսել: Այդ երեկո մենք հատուկ տաղանդ-  
ցուցաբերեցինք թե չէ, չգիտեմ, բայց հանդիսատեսը հաստատա-  
տաղանդավոր էր...

Ռիթմի և ժողովրդական պոեզիայի միաձուլումը ուղղակի մա-  
շում էր կանադացի հանդիսատեսի սիրտը: Խնդրեցին նորից եր-  
գել:

— Գնացի՛նք,— ասացի Ռոժին,— տեսնենք ո՞վ առաջինը  
կհոգնի: Նրա՛նք մեզ լսելուց, թե՛ մենք երգելուց:

Ծահեցին նրա՛ք: Վերջում էլ չէինք կարողանում երգել: Ծա-  
պիկս ամբողջովին թաց էր, ճակատիցս վար հոսող քրտի՛նքը աչ-  
քում էր աչքերս:

— Սրբե՛ք ձեր քրտի՛նքը,— ասաց հանդիսատեսներից մեկը,  
մեկնելով ինձ իր թաշկինակը:

Դահլիճը հոտնկալս ծափահարեց մեզ: Դա հարգանքի ամե-  
նագեղեցիկ տուրքն է, որ կարելի է տալ արտիստին: Բիշ էր մը-  
նում ուրախությունից լաց լինելի: Կուզե՛նայի բողոքին գրկել, համ-  
բուրել: Աս արդեն Նյու-Յորք չէր:

Քաղաքի բոլոր անվանի մարդիկ եկան սեղմելու մեք ձեռքը,  
շնորհավորելու, ճաշի ին հրավիրում, առաջարկում են քաղաքն  
ու շրջակայքը ման ածել: Ինքնագրեր ենք բաժանում:

Ի վերջո, հայր ու որդի Դեյֆենները մեզ տարան իրենց տուն, որտեղ և անցկացրինք գիշերվա մնացած մասը: Գծի պես խմեցինք ու երգեցինք մինչև առավոտ:

Մամուղը գովեստով է խոսում մեր մասին: Կաքարեները միշտ լի էին հանդիսատեսներով: Լոնկտին առաջարկեց մի շաբաթ ևս մնալ, համաձայնվեցի, պայմանով, որ 100 դոլար հավելյալ գումար տա: Ընդունեց:

Կյանքում ամենակարևորը կարգ ու կանոնն է: Հարկավոր է կազմակերպված լինել, թե չէ կհոգնես, ուժասպառ կլինես ու ոչ մի բանի չես հասնի: Պիեռն ու ես մեկս մյուսից կազմակերպված էինք: Երեկոյան երգում էինք, առավոտյան մինչև 8-ը աղջիկների ու տղաների հետ այցելում գիշերային բոլոր կաքարեները, հետո խնորեղեն էինք ուտում ու ժամը 10-ին մեր աղջիկների հետ թևանցուկ տուն էինք վերադառնում:

Կարճ ժամանակում հաստատովեց Դոն-ժուանի մեր վատ համբավը:

Նույնիսկ Սյուզան Ավունը՝ Ֆրեդի նշանածը, չէր համարձակվում գալ հովանոցը վերցնել. վախենում էր, որ մարդիկ կարող են ուրիշ բան մտածել:

Մյուս կողմից ուրիշների աչքին բավական լավն էինք: Ու իհարկե, ինչպես ամեն ինչում, այնպես էլ սիրո մեջ, ունկլանը խաղում էր իր դերը:

— Պիե՛ն...

— Ասա՛:

— Երեկ երեկո մի ժաննա դ'Արկի հետ էի...

— Այրեցի՞ր:

— Բոցավառվեց:

— Ինձ հետ,— ասաց Ռոշը,— հետաքրքրական բան պատահեց: Գիրկս ընկնելուց առաջ ծունկի եկավ ու «հայր մերն» ասաց:

— Նախքան քո թևերի դժոխքի մեջ ընկնելը, նա աղոթել է իր հոգու փրկության համար:

Լավ կյանք էր: Զգիտեինք որքան էր տևելու, դրա համար էլ ժամանակ չէինք կորցնում:

Ես բոլորիդ սիրում եմ, կանա՛յք...

Աստիճանաբար ընտելացանք կանադացիների առողջանությանը ու սկսեցինք կատարելապես հասկանալ Կեթեկի ժողովրդական լեզուն ու նրա գունեղ արտահայտությունները: Այո՛, Մունրեալում մեզ զգում էինք ոնց որ տանը: Չէինք ուզում նույնիսկ պատկերացնել, որ կանադացիների մեջ կարող էր վատ մարդ լինել:

Մի օր ազդեցիկ տեսքով մի հարուստ մարդ մտար մեր սենյակը:

— Անունս Էդմոն Մարտեն է — առաց,— ես կուզեմայի երեք ամսով պայմանագիր կնքել ձեզ հետ: Որքա՞ն էք ուզում:

— 500 դոլար:

— Շատ է: Տալիս եմ 400, նկատի ունենալով, որ պայմանագիրը կնքվելու է շատ երկար ժամանակով:

— Սկզբունքով համաձայն եմ,— առացի,— բայց ես պետք է նախօրոք այցելեմ ձեր կաբարեն, տեսնեմ հարմա՞ր է մեզ:

Հաջորդ օրը կեսօրից հետո մենք հայտնվեցինք պատերը սոսկալի նկարներով զարդարված մի մեծ սրահում, որն ամեն ինչի նման էր, բացի ժամանակակից գիշերային կաբարեից: Նողկալի էր: Չկարողացանք թաքցնել մեր հիասթափությունը: Մեր ոգեվորությունը վերականգնելու համար Էդմոնը հարցրեց.

— Ի՞նչը փոխենք, որ համաձայնեք երգել:

— Նախ բեմը վարագույրով փակում էք, լուսարձակներ էք դնում ու դաշնամուրը փոխում: Հետո հանում էք բեմը երիզող այս պարանը: Սա բունցքամարտի ոփնգ է հիշեցնում: Ու ամենակարևորը, հանդիսատեսներին ստիպում էք փողկապ կապել:

Էդմոնը չգիտեր ինչ անել. այն թաղամասում, ուր գտնվում էր կաբարեն, փողկապը ավելորդ շքեղություն էր համարվում: Իմ պահանջը կարող էր ազդել թատրոնի դրամական մոտոքի վրա:

— Ի՞նչ ուզում եք կանեն, բայց փողկապի հարցը կապանի «բիզնեսը»:

— Այդ դեպքում այնպես արեք, որ գոնե առաջին շարքում նստածները փողկապով լինեն, իսկ մյուսները ինչպես ուզում են:

— Լա՛վ: Նոր տարվա տոներից Նյու-Յորք ենք գնում, կվե-րադառնանք ու կսկսենք համերգները:

— Ե՞րբ են վերջանում ելույթները «Լատինական թաղամասում»:

— Ծաբաթվա վերջին:

— Այդ դեպքում մյուս շաբաթվա սկզբին, մինչև Նյու-Յորք մեկնելը, ելույթ ունեցեք ինձ մոտ:

— Բայց... Վերափոխումները:

— Կլի՛նի:

— Ինձ թվում է անկարելի է հասցնել:

— Եթե ես ասում եմ, նշանակում է՝ կլի՛նի: Էդմոն Մարտենի ասածը արած է:

Երեկոյան Էդմոնի մոտ նաչի ենք հրավիրված: Տան նկուղում բար ու թղթախաղի սրահ էր հարմարեցրել: Մեր պատվին նույնիսկ դաշնամուր էր գնել: Ծամպալցի օգնությամբ շատ շուտ մտերմացանք Էդմոնի հետ: Նա մեզ պարտնեց իր կյանքը: Ապրել էր Մարսելում, Կահիրեում, Չիկագոյում, իսկ հիմա՝ Մոնրեալում: Պատմության ողջ ընթացքում զգում էինք, թե ինչպես նրան հանգիստ չի տալիս հայրենի երկրի՝ Ֆրանսիայի թափափոնը: Խոհեմաբար ո՛չ ես, ո՛չ էլ Ռոշը չհարցրեցինք, թե ինչու Էդմոնը Ֆրանսիա չի վերադառնում:

Նրա բարեկամներն ու գործընկերները նույնամասն կյանք էին ունեցել: Ուղղամիտ, կիրթ մարդիկ էին նրանք:

Պարզ երևում էր, որ այդ թաղամասի կաբարեի տները գյուղական քահանաներ չէին...

— Ի՞նչ ես կարծում, դաժա՞ն մարդիկ են երևում,— ասաց Ռոշը վախեցած:

— Կարծես թե...

Համերգի սկզբում Էդմոնը մեզ ներկայացրեց կաբարեի մյուս տներին: Չորսն էին նրանք՝ Մարյուս Մարտենը՝ Էդմոնի եղբայրը, որն ուներ նաև մեկ ուրիշ կաբարե, ու Վիկ Կոտրոնին:

Վիկը լռակյաց էր: Խոսում էր միայն անգլերեն: Բառերի մի կարճ տարափ էր տեղում և իսկույն ևեթ խորասուզվում էր լռության մեջ: Անընդհատ շրջապատված էր տասը-տասներկու ամբակազմ տղաներով, որոնք նույնպես սակավախոս էին: Նրանք հիմնականում դուսն առաջ էին նստում: Երբեմն Վիկը մի նշան էր

անում, և նրանք վեր էին կենում ու անխոս գնում: Քիչ հետո վերադարձան էին, նստում նույն տեղում ու ապաստում Վիկի հաջորդ կամխարդական նշանին:

— Սրանք ո՞ր են գնում-գալիս, — հարցրեց Ռոշը:

— Իրենց հարցրու: Տե՛ս ինչ քնքուշ տեսք ունեն:

— Գի՞ժ էս, ինչ է: Դեմքերին նայելիս նույնիսկ մարմնովս դող է անցնում:

Ոչ միայն չտեսանք կարարելի չորրորդ տիրոջը, այլև նրա անունն անգամ չիմացանք: Նա ևս, ըստ երևույթին, ուժեղ անձ-նավորություն էր:

Մեզանից բացի ծրագրում կար երկու արտիստ ևս, ժակ Նորմանը՝ հաճելի, հումորով մի տղա ու երգչուհի Մոնիկ Լեյրակը, որից չէի կարողանում աչքերս կտրել: Երկար ծամերով մի աղջիկ էր նա, հնդկոսի ունեն: Ես միշտ երազել էմ հնդկոսիի պիտել...

Փողոցում անսովոր բան էր կատարվում «show»-ի կապակցությամբ: (Այդպես են Կանադայում անվանում ներկայացումները): Հանդիսատեսները սնդիկներով ու գիշերային զգեստներով էին գալիս: Օրինակը Էդմոնն էր ցույց տալով: Նա հիամնալի էր իր նոր սնդիկներով: Իհարկե, սրահում հսկա, լայն ուսերով տղաներ էլ կային, հագներին՝ փակ վզով ավիտերներ:

— Ադմոն չեմ հանի, — մեզ հանգստացնելու համար ասաց Էդմոնը, — Վիկի տղաներն այստեղ են:

Երբեք, աշխարհի ոչ մի երկրում չեմ տեսել, որ այդքան խրմեն: Մատուցողները գարեջրի խոշոր շշերով նախօրոք լցրել էին սեղանները, որպեսզի ներկայացման ընթացքում եղ ու մոտ չսանեն: Դա իմ պայմաններից մեկն էր:

Մի շնչով դատարկում էին շշերը ու պահանջում նորից կրկնել:

Փողն իզուր չէին տալիս. օրական երկուսական ժամանոց երկու ելույթ էինք ունենում, իսկ շաբաթվա վերջում՝ նույնիսկ երեքը:

Ժակ Նորմանը կանադացիների կուռքն էր, իսկ Մոնիկ Լեյրակը՝ աճող երգչուհի:

Անհամբերությամբ ենք ապաստում այն օրվան, երբ կսկսվեն նյու-յորքյան մեր ելույթները. կմախք ենք դառնել:

— Լի՛ր, Ծարլ, հուսով եմ, որ «Կաֆե Սուսպիթում» չի կրկնվի այն չարաբաստիկ երեկոն, — ասաց Ռոշը, որին աշխատանքն ու աղջիկները ավելի էին հյուժել, քան օկուպացիան:

Ինքս էլ պակաս չէի հյուժվել. որոշեցի՛նք մի քանի օր շուտ գնալ Նյու-Յորք, մի քիչ քնելու, ուժերս վերականգնելու համար:

Կարծես որոշված թան էր, որ ամերիկյան ասինմանի վրա միշտ մի անախորժություն պետք է պատահի. գնացքից ցած իջեցրին. մի կերպ հասկացա, որ դարձյալ վիզան էր պատճառը: Այս անգամ աշխատանքային վիզայի մասին էր խոսքը: Մինչև բացատրվեցինք, իրար հասկացանք ու ցույց տվինք վիզան, գր-նացքն արդեն հետու էր:

«Կաֆե Սոսաիթիում» երգեցինք հինգ շաբաթ: Ներկայա-ցումը մենք էինք ակտում: Պետք է ասեմ, որ մեծ հաջողություն ու-նեցանք: Մանապեհոյ որ «Ես խմած եմ» երգի անգլերեն թարգ-մանությունը Ժորժ Ուլմերը փրով ողարկել էր:

Կարարեների տերերը գալիս էին մեր հարդասենյակը պայ-մանագրեր առաջարկելու: Ռոշին ասացի.

— Ծոսալել պետք չէ: Որքան ավելի սպասեցնենք նրանց, այնքան ավելի կտաքանան:

— Ծիշտ ես: Պետք է մեզ թանկ ծախենք:

Երկուս էլ սխալվեցինք: Ես վերցրել էի պայմանագիր առա-ջարկողների հասցեները, ու «Կաֆե Սոսաիթիում» համերգները ավարտելուց հետո գնացի, գոյա նրանց: Բայց իզուր: Մենք ար-դեն արժեք չունեինք նրանց համար:

Հետագայում իմացա, որ Միացյալ Նահանգներում առաջար-կը պետք է ընդունել անմիջապես, մանապեհոյ քանի աշխատանք ունես: Ըստ ամերիկյան տրամաբանության, եթե չես աշխատում, նշանակում է դու ոչ ոքի պետք չես, հետևաբար ցուցակից ջրնջ-վում ես:

Երկար փնտրեցի, բայց ոչ մի աշխատանք չգտա: Մի անգամ նա մեր խորամանկության գոհը դարձանք. մնացինք առանց աշ-խատանքի, առանց փողի: Ես ունեցած-չունեցածս ծախել էի, իսկ Ռոշը, այդ մրջյունը, ունեցած-չունեցածը, ողջ խնայողությունը բա-րում գողացնել տվեց:

— Զանգ եմ տալու Մարտենին, — ասացի:

— Լավ է... Նրան ասել էինք, որ մինչև գարուն խեղդված ենք պայմանագրերի մեջ, իսկ հիմա, դեռ երկու ամիս չանցած, պիտի լաց լինենք, որ մեզ նորից ընդունի:

— Եթե ավելի լավ առաջարկ ունես, ասա:

— Ցավոք, չունեմ:

— Երեք օրից եկեք, — ասաց Մարտենը:

Իսկույն հավաքեցինք ճամպրուկներն ու սուրացինք կա-յարան:

Կանադա՛, ահա մենք վերադարձել ենք... Երկու օր հետո դարձյալ Մարտենի կաբարեում ենք:



— Մի քանի օրից խելքի կգանք ու նորից կգնանք Նյու-Յորք,— ասացի Ռոշին:

Այդ մի քանի օրը դարձան ամիսներ: Գործերն այնքան լավ էին Մոնրետալում, որ Միշելիկին ու Աիդային խնդրեցի գալ ինձ մոտ: Աիդան նույնիսկ շաներ ունեւ «show»-ում հանդես գալու:

Մի քանի շաբաթ հետո Միշելիկը, որ մեռնում էր մեր երեխայի կարոտից, Փարիզ վերադարձավ ու... Պայտեց ումբը՝ Ռոշը սիրահարվեց: Անունը Ժոզելին էր, ազգանունը Դյունջան: Տասնվեց տարեկան էր, ու , ասովա՛ծ իմ, ի՛նչ անուշիկն էր:

**Եկ, ընծայիր ձևավորվող երջանկությանը**

**Ջահելությունդ՝ տասնվեցամյա:**

**Եվ թող քո սիրտը մանկական**

**Կամաց-կամաց ձևավորվի:**

Ահա թե ինչպես պատահեց: Յուրաքանչյուր ուրբաթ օր, կեսօրից հետո, Մարտենի մոտ երիտասարդ տաղանդներ հայտնաբերելու նպատակով կոնկուրս էինք անցկացնում: Ողջ խումբը ներկա էր լինում՝ Աիդան, Ժակ Նորմանը, Էմիլ Գրուդոնը, Ժան Ռաֆֆան, Ռոշն ու ես: Ֆերնան Ժիգնակ անունով, ականջները կախ, Բինգ Կրոսբիին հիշեցնող մեղմ ձայնով տասնչորս տարեկան մի տղա էինք ընտրել արդեն, երբ հայտնվեց Ժոզելիկը...

Երգեց, շարժվեց, ժպտաց, ու Ռոշը շանթաճահարվեց: Հարվածն անողորք էր, սոսկալի: Մի քանի շաբաթ հետո, այդ պիեդ Դուն-Ժուանը, այդ հաբարտ ամուրին, գլխիկոր ասաց.

— Ես ամուսնանում եմ, ի՛նչ խորհուրդ ես տալիս:

— Ծիշտ ես անում. լավ աղջիկ է:

Երանության մեջ դուրս եկավ սենյակից: Դուրը թակեցին. Աիդան ներս եկավ՝ ամաչկոտ, աչքերը գետին հառած:

— Ծա՛րդ, կարո՞ղ եմ խոսել քեզ հետ:

— Իհարկե, վատ քա՞ն է պատահել:

— Ոչ, ո՛չ, ամեն ինչ լավ է...

Տատանվեց, հետո մի շնչով ասաց.

— Ուզում եմ ամուսնանալ, Ծա՛րդ:

— Սա ի՛նչ վարակ է...

**Հիվանդության նման,**

**Եվ ցավի նման չգիտակցված,**

**Խենթությամբ ներկված մի հապաղում...**

48 ժամվա տարբերությամբ Պիեռն ամուսնացաւ Փոզելիւնի, Աիդան՝ կարարեալում աշխատող Մարսել Դիոդի հետ:

Մինչ այդ, ես սկսում եմ մեծամտանալ: Աստիճանաբար, քանի փող էի աշխատում, ոստիոյում ելույթներ էի ունենում և աւանուս հայտնի էր դառնում, այնքան ավելի ուժգին էի տարվում մեծության հովերով:

Պիեռն ու ես, ամեն մեկս շաբաթական 400 դոլար էինք վատակում, գումար, որ բավականին մեծ էր այդ օրերին, իսկ մեզ համար ուղղակի՝ առասպելական: Ու ես՝ Մոնմարտրի նախկին ոտաբորիկս, ես՝ Բրոդվեյի նախկին սովածս, որոշեցի բարձրացնել իմ կենսամակարդակը:

Նախ և առաջ մի օգտագործած մեքենա գնեցի: Մեկին խնդրեցի ինձ ու մեքենան հյուրանոց բերել. վարել չգիտեի:

— Խելքդ թոցրե՞լ ես, ինչ է,— բացականչեց Ռոշը,— ինչո՞ւ ես գնել այս նավը: Վարորդական իրավունք էլ չունես:

— Բո բանը չէ:

Հաջորդ օրը գնացի, երկուսուկես դոլար տվի ու վարորդական իրավունք ձեռք բերի: Գրքուկը հանձնելիս հարցրեցին՝ թել գիտե՞մ, թե՞ չէ:

— Ողջ կյանքս Փարիզում մեքենա եմ թել,— ասացի:

Փողոց դուրս եկա ու կողքով բախվեցի առաջին իսկ պատահած տրամվային: Տրամվայը մի քիչ քարշ տվեց մեքենան ու բաց թողեց: Վնասվածքը լուրջ էր:

Հենց որ մեքենան վերանորոգեցի, ներկեցի, նորից դուրս եկա փողոց: Երգում եմ: Գոհ եմ: Փողոցը արագ ընթացքով շոտ գալիս մեքենայի ամիովները սողացին, ինձ կորցրի ու խրվեցի ձյունե պատի մեջ:

Սկսնակ եմ, վտանգավոր սկսնակ: Ինձ ոչ ոք չէր ասել, որ պետք է յուղ լցնել մեքենայի մեջ: Երբ իմացա, արդեն ուշ էր: Ինչ-որ հետաքրքիր ու բավականին ուժեղ ձայն եմ լսում մեքենայի առաջին մասից, ինչ-որ նախազգուշացնող լսմպեր վառվեցին, ու մեքենան կանգ առավ: Վարպետը ինձ գրեթե հիացմունքով նայեց:

— Լուրջ բա՞ն է պատահել:

— Դուք արդեն մեքենա չունեք:

Բարեբախտաբար օգտագործված մեքենա վաճառող երկու ընկեր ունեի: Քանի որ ես արդեն չեի կարող առանց մեքենայի լոյս գնալ, նրանք միջոտ որևէ մեքենա տալիս էին ինձ, ու ես քրջում էի այնքան ժամանակ, մինչև որ ընկերներիցս մեկն ու մեկը զանգում էր ու ասում.

— Մեքեման բե՛ր, Շարլ, արդեն վաճառե՛լ ենք:

Բերում հանձնում էի ու ստանում մեկ ուրիշը: Բայց ուրիշի մեքեման քշելը ինձ չէր գոհացնում: Ես պիրում եմ իմը ունենալ, միշտ էլ ասել եմ պարտք վերցնելը:

Երբ Ռոջը որոշեց Ֆրանսիա վերադառնալ, իր կնոջը ծեր մորը ներկայացնելու համար, ես նրան ընկերակցեցի: Ծամայրուկներս տրաքվելու չափ լի էին:

Մայիսի մեկին, վերադարձի տոմսերը գրպաններումս, նավ նստեցի՛նք ու ճանապարհ ընկանք դեպի Ֆրանսիա: Ափդային թողեցի ամուսնու մոտ, խոստանալով վերադառնալ հուլիս ամսին:

Նավի խցիկում բաց արի ճամպրուկներս, կոստյումներս շարեցի կախիչների վրա: Ծոյում եմ դրանք ու ինքս ինձ խոսում. «Երբ ընկերներս այսպես գուզված զարդարված տեսնեն ինձ, պատկերացնում եմ ինչ կզգան»:

— Սա ի՞նչ բան է: Կրկեստ՞ում ես աշխատում, ինչ է:

— Ես սա կարել էմ տվել Կանադայում:

Էդիտը նայեց ինձ ոտից գլուխ: Հագիս բաց կանաչ գույնի կոստյում էր, նույն գույնի վերնաշապիկ, նույն գույնի կոշիկներ, գոլթաաներ ու մի շայն փողկապ, ամերիկացի լողորդուհու պատկերով: Էդիտը միանգամից պայթեց.

— Ազնիվ խոսք, դու աղջիկ ես: Հենց հիմա գնա ու դեմ գրցիր այդ բոլորը: Էլ ի՞նչ ունես:

— Դե՛... Բաց կապույտ, ոսկեգույն կետերով վարդագույն, մոխրագույն, դեղնավուն կոստյումներ...

— Դրանցից շատ ունե՞ս:

— Հա: Հինգ ճամպրուկ:

— Տար այդ բոլորը աղբանոց նետիր: Հնավաճառ էլ չես գտնի, որ այդ խլամների գոնե կշռով ծախես: Բոլոր դեպքերում, իմ աչքին այդ շորերով չերևա:

— Դե լավ, հո մերկ չե՞մ ման գալու:

— Ավելի լավ է մերկ, քան աղբալես:

Ծնողներին մոտ թավշե մի պիջակ գտա, մի շալվար ու մի վերնաշապիկ՝ բոլորը սև գույնի ու վերադարձա Պիաֆի մոտ:

— Այսպես դու ինձ ավելի ես դուր գալիս: Մանավանդ որ առաջին անգամ ես քեզ սև զգեստներով տեսա: Էդ ինչի՞ նման էիր քիչ առաջ. գավառական ծիծաղելի դերասանի: Մի խոսքով, նախ այդ քեզ չէր սազում, հետո էլ ինձ դուր չէր գալիս: Դե՛, քանի որ հիմա նորից մարդու տեսք ստացար, պատմիր քո ծրագրերի մասին:

— Պիեռն ու ես մտադիր ենք մի երկու լավ վճարվող ելույթ ունենալ Փարիզում, որից հետո ուզում ենք վերադառնալ ու հաստատվել Կանադայում:

— Ի՞նչ գիտես, թե լավ կվճարեն:

— Որովհետև մեր հաջողությունը Մոնրեալում կատարյալ էր: Կորից քայքայել սկսեց ինձ.

— Մե՛ծ քան, քեզ թվում է, եթե մի երկրում, որտեղ երգարվեստ չկա, հաջողության եք հասել, նշանակում է Փարիզում ձեզ գրկաբաց են ապաստում: Խեղճ հիմարիկա, ես վստահ եմ, որ այստեղ նույնիսկ մոռացել են, թե ով եք դուք:

Ծպտուն չեմ հանում, միայն թուքս եմ կուլ տալիս: Երբ ջրհայնանում է Էդիտը, հարկավոր է սպասել մինչև որ ինքն իրեն հանգատանա: Բայց նա դեռ վերջացնելու միտք չունեք:

— Հետո այդ ո՞վ է ուղեղի մտքրել, որ դու պետք է անպայման Կանադա վերադառնաս: Հասկացիր մեկընդմիջտ, որ արտիստական կարիերայի պետք է սկսես Ֆրանսիայում: Մի խոսքով, բարի եղիր մոռանալ այդ հիմարությունները ու տեղավորվիր ինձ մոտ: Դու պետք է իմ հսկողության տակ լինես: Ասե՛նք, մոռացել էի, որ դու ամուսնացած ես: Ի՞նչ կասի կինդ:

— Ի՞նչ պիտի ասի:

Վերջերս մեր ամուսնական գործերը օր-օրի վատանում էին: Մեր միջև տեղի ունեցող ընդհարումների ժամանակ կինս հաճախ էր օգտագործում ամուսնավրժույթուն բառը:

«Աշխատանքդ ավելի էս սիրում, քան ինձ: Ընկերների ավելի կարևոր են քեզ համար, քան ես»:

«Ամբողջ օրը դաշնամուր տնկտնկացնելու փոխարեն մի քիչ ինձնով զբաղվեիր»:

«Դու ինձ այլևս չես սիրում»

«Արժեք, որ քեզ խաբեի...»

«Դու ինձ երբեք սիրո խոսքեր չես ասում, այնինչ սիրո մասին լավ գրում ես...»

«Իմ նոր գլխարկն անգամ չնկատեցիր: Եթե մի օր մասն գամ գլխիս ծաղկաման դրած, էլի չես նկատի»:

«Հյուրախաղերի գնալիս կամ ճամփորդելիս դու ինձ երբեք հետդ չես տանում»:

«Դու կեղտոտ եասես ես, իսկ ես զոհաբերեցի քեզ իմ ջանելությունն ու լավագույն տարիները...»

Հառաչեց, հառաչեց... ու մի օր ճամպրոկն հավաքեց ու գրկաց: Հաջորդ օրը տեղափոխվեցի Պիաֆի մոտ:

— Նախ և սուսջ, — ասաց Էդիտը, — դու պետք է երգեր գրես ինձ համար, բավականին շնորհք ու երևակայություն ունես:

— Լա՛վ:

— Սպասիր, դեռ չեմ վերջացրել: Հետո պետք է կասկերդ խզես Ռոջի հետ:

Հարվածն անողոր էր:

— Էդիտ... Դա անկարելի է... Այն, ինչ դուք պահանջում եք ինձանից, սուկալի է. Պիեռը իմ հին ընկերն է:

Պիաֆն ընդհատեց ինձ.

— Երբ մի մարդ կարիերա է անում, նա պետք է այդ անի մեկ-մեկակ, տղամարդու պես:

Պիեռի հետ բացատրվելու հետևանկարը խեղդում է ինձ, տանջում: Չգիտեմ ինչ անեմ, ինչպես սկսեմ: Գիտեմ, որ երկուսս էլ դժբախտաբանալու ենք... Բարեբախտաբար խզումն առաջացավ գրքերից ինքն իրեն, առանց փոխադարձ կշտամբանքների, առանց կեղծիքի:

Ես որոշեցի մնալ Ֆրանսիայում, Պիեռը որոշեց Կանադա վերադառնալ՝ իր Ժոզելիների հետ: Մեր «դուետը» խզվեց ինքն իրեն:

— Վերջին հաշվով հո չեմք կարող դուետ երգել մեկս մի մայրցամաքից, մյուսս՝ ուրիշ:

— Իրավացի ես, Ծարլ:

Սակայն վերջ տալ ութ տարվա բարեկամությանը, այնքան էլ հեշտ չէր: Տխուր է: Վերջին անգամ միասին ելույթ ունեցանք: Առաջվա նման ոտքով տուն վերադարձանք: Միմյանց ձեռք սեղմեցինք, մի անգամ էլ նայեցինք իրար աչքերի ու.

— Հաջողություն, Ծարլ:

— Հաջողություն, Պիե՛ռ,— ասացինք:

Ու յուրաքանչյուրս գնաց իր ճանապարհով:

Բեմի վրա մի տեսակ վատ եմ զգում: Երգում եմ անտրամադիր: Ականջս կորցրել է իր հավասարակշռությունը: Ինչ էլ անեմ, միևնույն է, անընդհատ թվում է, թե կոկորդիս մեջ մի ձայն էլ է պակասում: Որքան էլ լավ նվագի դաշնակահարը, միևնույն է, Պիեռի նման չի նվագում: Ելույթներս անցնում են սոսկալի տղխուր, ձախողում ձախողման ետևից:

Էդիտը կուլիաներից ձայն է տալիս ու քաջալերում է.

— Դե՛, քեզ տեսնեմ... Դու կհաղթես նրանց, դու կարող ես հաղթել:

Անօգուտ է, հոգով, մարմնով, ողջ էությանը «դուետիստ» եմ ես: Ոչինչ չի ստացվում: Դահլիճից բղավում եմ՝ «Բավական է», սուլում եմ և ի վերջո բեմից դուրս վճռում:

Տերեկները Ռսուլ Բրետունի մոտ են անցկացնում, երեկոները՝ Պիասֆի, իսկ գիշերները թափառում են կարաբեից կարաբե, ուր Տչորաևս Վերանի, Ռիչարդ Մարսանի ու Ժան-Լուի Մարկեի հետ խելագարի պես խմում են:

Մի օր, առավոտյան կողմ արձանագրեցի.

— Այն մարդը, որ ինքն իրեն չի ճանաչում, երբեք ոչ մի բանի չի հասնի... Ընդորհքը դեռ ոչինչ չի նշանակում, կարևորը սեփական թերություններից օգուտ քաղելն է:

Մի կերպ տուն վերադարձա ու փուլ եկա անկողնու վրա: Ոտքերս ծանրացել են, շարժումներս անընդհատ, բայց ուղեղս դեռ աշխատում է ասածիս ուղղությամբ: Ինձ դուր է գալիս մտքիս խորությունը: Մի կերպ անկողնուց վեր կացա, փուլ եկա աշխատատեղանիս աթոռին ու գրեցի հետևյալը, որը և պահեցի ողջ կյանքիս ընթացքում:

«Որոնք են իմ պակասությունները: Չայնս, հասակս, շարժումներս և կրթության ու կուլտուրայի պակասը, ճշմարտախոսությունս, անհատականությանս պակասը»:

«Չայնս փոխելն անհնար է: Բժիշկները, որոնց դիմում եմ, միաբերան համոզում են, որ երգելուց ձեռ քաշեմ: Բայց ես պիտի երգեմ, թեկուզ կոկորդս պատռվի»:

«Հասակս ինչ որ է, այն է՝ մի մետր 64, նույնպես անհնար է ուղեղ: Ռետիկե հաստ ներքաններով կոշիկներ չեմ կարող հագնել: Միակ փորձը, որ արեցի, մի քանի սանտիմետր շահելու համար, խաչտառակ վախճան ունեցավ. Միացյալ Նահանգների իմպրեսարիոները կարծում էին, որ երկու ոտքից էլ կաղ եմ: Մի լուծում կա միայն՝ եղածով չուրս գնալ ու մոռացնել տալ այդ պակասությունը»:

«Ծարժումներս, կարճահասակ մարդու շարժումներ են՝ կարճ, չոր ու կորույ: Այտուհետև պետք է աշխատեմ կրորացնել շարժումներս ու դանդաղ քայլել: Ինձ խանգարող կոմպլեքսից ազատվելու համար մի մետր 64 սմ-ից բարձր դնում անցնելիս անգամ պիտի կռաման աչնպես, ինչպես երկայնահասակները»:

«Կրթությանս պակասը՝ մեծ դժվարությամբ ձեռք եմ բերել յոթնամյա կրթության վկայականը. ոչինչ մեռակ չեմ սովորում: Սովորում եմ միայն ուրիշներից լսելով»:

«Ճշմարտախոսությունս՝ անուղելի եմ. անարդարության հանդիպելիս ոռնում եմ: Ուզածդ մարդուն գրողի ծոցն եմ ուղարկում, երբ ցանկություն է առաջանում»:

«Անհատականությանս պակասը՝ ինձ նկատել տալու համար էքսցենտրիկ եմ հագնվում՝ նկատում եմ, բայց ժպտում»:

«Թուլակազմ, երկչոտ, վախվորած երեխայից, ինչպիսիքն ծղւ-  
վել են, պետք է դառնան ուժեղ մարդ, միևնույն ժամանակ պահ-  
պանելով բարոյական նորմաները, որ ծնողներու են ներարկել՝  
լինել զգայուն և արտասովելու ընդունակ»:

«Պետք է հրաժարվել ներկայից ու նաչեմ դեպի ապագան,  
առանց ժխտելու անցյալը: Իմ բազան ողջ ֆրանսիական երգն է,  
արմատներս՝ համաշխարհային ֆոլկլորն ու արևելյան պոեզիան,  
հատկապես հայկականը»:

Գրիչս ցած դրի ու նորից կարդացի բանաձևս. ճիշտ էր և ան-  
կեղծ:

Պիտի պայքարեմ այս բողոքի դեմ, դա շատ ժամանակ կխալի  
ինձանից: Ստիպված պիտի լինեմ խնամքով հետևել ինձ: Բայց  
պիտի փոխվեմ, այդպես են ուզում:

Թղթերս դասավորեցի ու նորից քնեցի հարբածի խորունկ  
քնով:

Առավոտյան վեր կացա ու դարձյալ կարդացի գրածս: Հան-  
կարծ մի անտվոր վատահոսություն համակեց ինձ, այն վատահո-  
սյունը, որ միշտ պակասել էր ինձ: Կանգնած անկողնուս մոտ,  
հանկարծ զգացի, որ եթե ինձ չեն սիրում, ապա դրա միակ պատ-  
ճառը այն է, որ ինձ չեն հասկանում, ու ես որոշեցի հասկացնել  
տալ ինձ:



— Տղանե՛ր, մի քանի օրից Նյու-Յորք ենք մեկնում, — հայտնեց Պիաֆը:

Մաշված, պատառոտված հիմն գիշերազգիտանով փաթաթված, նա խոհանոց մտավ: Ես շարունակեցի կարագ քսած հացի կտորները թաթախել թեյի մեջ, սպասելով, թե ուրիշ ինչ կասի:

— Քե՛զ, Ծա՛րլ, տանում եմ հետո: Դու կզբաղվես իմ լուսավորությամբ ու մանր-մունր հարցերով: Դու քեզ օգտակար կդարձնես, բացի այդ, արհեստ կսովորես:

Նա նստեց սեղանի մոտ, ուր խոհարարուհին բանջարեղեմ էր մաքրում: Հետո վեր կացավ, մի բաժակ վերցրեց, թեյ լցրեց, մի կում խմեց ու շարունակեց.

— Մեկնելուց ստաջ պետք է մի լավ կշտանանք Փարիզից. շուտով կարոտելու ենք... Այսօրվանից մինչև մեր գնալը ամեն գիշեր պիտի դուրս գանք:

— Կարծես թե ամեն օր տանն ենք, ո՞ր ենք գնալու:

— «Ռուլոտ» ենք գնում Լուլուի մոտ: Միշտ չէ, որ նա լավ է վերաբերվել ինձ:

— Այդ դեպքում ինչո՞ւ փողը նրա մոտ ծախսել:

— Նրան ապացուցելու համար, որ ես եմ հիմնա «աստղը»: Թող տեսնի կշտանա:

Գնացի՛նք: Լուլուի մոտ վիսկի կար, գարեջուր, երսժշտություն, պարի հրապարակ ու Արլետո՞ւ՝ փոքրիկ, քնքուշ, բոլորովին ջահել ու թաքմ պարուհի Արլետո: Նա ինձ այնքան հուզեց, այնքան նայեցի նրան, որ Պիաֆն ասաց.

— Եթե քեզ դուր է գալիս, կանչիր իմ սեղանին, հիմա՛ր:

Հրավիրեցի: Ընդունեց հրավերս:

Հավում եմ նրա թևին, ուսին, ձեռքին, այտին, շրթներին: Այն

երկը օրը, որ մնում է ինձ Փարիզում անցկացնել, նրա հետ ես՝  
հիացած, հուզված, սիրահարված:

Երբեմն երեկոները մտածում եմ ընկերներին մասին, որոնք  
Էդիտի մոտ են ու ենթարկվում են նրա հերթական քնահաճույ-  
քին: Այո, այդպիսին էր Պիաֆը, նա քնահաճույքներ ուներ: Լինում  
էր շրջան, երբ միայն «այս» էինք ուտում, հետո միայն «այն»:  
Գոյություն ունեին «դասական երաժշտության» ու «գրականու-  
թյան» շրջաններ: Լինում էին օրեր, երբ մենք պետք է ջերմեռան-  
դությանը ունկնդրեինք նրա ձայնապնակների ու լսեինք նրա յու-  
րովի մեկնաբանությունները: Հիմա կիևոյի շրջանն էր: Ամեն ինչ  
սկսվեց այսպես. Էդիտը ցած դրեց ձեռքի լրագիրն ու ասաց.

— Տղանե՛ր, ի՞նչ լավ կիևոնկարներ կան այս բուպեիս Փա-  
րիզում:

Ժան-Լուի Մարկեն անխոհեմ, հիմար գտնվեց ու ասաց.

— Ասում են «Երրորդ մարդը» կիևոնկարը գլուխգործոց է:

— Դու մայե՛լ ես:

— Ո՛չ: Միայն լսել եմ:

— Աղոթիր աստծուն, որ հանկարծ հիմար ֆիլմ չլինի, թե  
չէ... — սպառնաց Էդիտը:

Բոլորս միասին գնացինք: Կիևոնկարը ջատ դուր եկավ նրան:

— Դու տեսա՞ր Օրսոն Ուելսի հաչացքը, — հիացած ասաց  
Պիաֆը, — ինչ լավն է անասունը, ախտոս, որ նկարը կրկնօրի-  
նակված է, կուզե՞նայի բնագրով տեսնել:

Չեմ հիշում, թե ո՞ր տիխմարը հանկարծ ասաց.

— Կիևոնկարը մի օր ֆրանսերեն է գնում, մի օր՝ անգլե-  
րեն...

Ինչպիսի՞ հիմարություն... Հաջորդ օրը նորից գնացինք նույն  
կիևոնկարը դիտելու: Ու այսպես մի ամբողջ շաբաթ: Այո կեղ-  
տոտ «Երրորդ մարդուն» դիտեցինք ութ անգամ: Չզվեցի Օրսոն  
Ուելսի քայվածքից էլ, նաչվածքից էլ, ֆրանսիական տարբերա-  
կից էլ, անգլիական տարբերակից էլ, օպերայի փողոցի վրայի կի-  
նոթատրոնից էլ, գիևու շշերի առաջ նստած ֆիլմի շուրջ ծավալ-  
վող ամենօրյա բանավեճերից էլ... զզվեցի, սիրտ խսունելու չստի  
զզվեցի:

Բարեբախտաբար ծանոթացել էի Արդետին, այսպիսով, գո-  
նե մի քանի երեկո չքվել կարողացա:

Էդիտը վաճառեց իր շքեղ արտոմեքենան. փող չուներ: Նրան  
օգնելու համար ես էլ իմ հնամաշ ու քաչքաչված մեքենան վա-  
ճառեցի:

Պիտի Նյու-Յորք գնանք: 50-րդ փողոցի վրա գտնվող հյուրանոցի 23-րդ հարկում Էդիտը մի բնակարան վարձեց: Նույն հյուրանոցի երրորդ հարկում մի շատ փոքր սենյակ էլ էա գրառեցրի: Պատուհանն ուղղակի թացվում էր մի պատի վրա, այնքան մոտիկ, որ կարելի էր ձեռքով դիպչել:

Հազիվ էինք տեղավորվել, երբ Էդիտը բաց արեց լրագիրը, որ տեսնի, թե ինչ կիմոնկարներ են գնում: Հանկարծ ուրախության ճիչ արձակեց:

— Օ՛, տղանե՛ր, դժվար թե կարողանաք գուշակել:

Գաղտնագողի իրար նայեցինք, վախենում ենք գուշակել:

— Փոքրիկ կիմոնկարներում ցուցադրում են «Երրորդ մարդը»,— հաղթական բացականչեց Էդիտը,— թեպետ կենտրոնից հեռու է, բայց վազեցիկնք: Շա՛րլ, տաքսիներ կանչիր:

Ճիլմը մեկ անգամ ևս տեսնելու մարմաջով տարված, նա չնըկատեց մեր դեմքերի թթու արտահայտությունը:

Պատճառաբանելով, որ աչքերս հոգնած են, ես հաջողեցրի մի տասնյակ կարգ հեռու նստել: Կիմոնկարի հենց առաջին պատկերների վրա խոր, կենարար քուն մտա: Հանկարծ զգացի, որ ինձ թափ են տալիս՝ ինքն էր:

— Ուրեմն այդպե՛ս, քնում ես:

— Օ՛, երևի մի քանի վայրկյան քունս տարավ...

— Ես քեզ շնորհ եմ անում արվեստի գլուխգործոց նայել ինձ հետ, իսկ դու խոնկացնում ես:

— Գիտե՛ք, Էդիտ, պատճառը տեղափոխությունն է: Հոգնած եմ:

— Զգիտեմ, մի քիչ զգայուն որ վիճեիր, մինչև կիմոնկարի վերջը կդիմանայիր:

— Մյուս անգամ...

— Էլ մյուս անգամ չի վիճի. ես քեզ պատժելու եմ: Այսօրվանից «Երրորդ մարդը» կնայենք առանց քեզ: Սա քեզ դաս կլինի: Մի պատիժ, որ բոլոր տղաների նախանձը ջարժեց:

— Ի՛նչ բախտ ունես,— առացի՛ն ինձ թաքուն,— իսկ մենք այդ զգվելի նկարը պիտի մի ամբողջ շաբաթ նայենք ու երևի դեռ հաջորդ շաբաթ էլ:

Հյուրանոցի նախասրահում բոլորի ներկայությամբ ինձ վիրավորելու համար Էդիտն առաց.

— Գնա քնի՛ր, քանի որ հոգնած ես: Իսկ մենք շամպայնը կխմենք առանց քեզ:

Ընկերներս գնացին կուզիկ-կուզիկ, աչքների տակ կապույտ շրջանակներ:

— Ուրախ ժամանց եմ ցանկանում ձեզ,— ասացի:

Նախանձախառն ասելությանը նայեցին ինձ ու գնացին:

Թ', ինչ լավ բան է անկողինը, ինչպիսի հրաշալիք, հո չեմ քնելու... Շուտ պանկելը և ուշ վեր կեցադը շոայություն էր, եթե փոթորիկ Պիաֆի հետ ես:

Քնում եմ: Երագում եմ, որ քնում եմ, մի բան, որ ավելի հրաշալի է, քան քնելը: Հանկարծ գիշերվա մեջ հետախոսը զանգեց: Էդիտն է:

— Վերև բարձրացի՛ր:

Գիշերազգեստս քաշեցի վրաս, ոտքերս մտցրի հողաթափերի մեջ ու քնաթաթախ մտա վերելակ:

— Չգիտեմ ինչ է կատարվում ինձ հետ: 23-րդ հարկում գլուխքս մի տեսակ դժժում է: Բացի այդ,— տազնապով ասաց Էդիտը,— վստահ եմ, որ տունը ճոճվում է:

— Ի՞նչ եմք անում:

— Ի՞նչ եմք անում, տեղափոխվում եմք:

— Ո՞ր:

— Դու կգբադեցնես ի՛մ բնակարանը, ես՝ քո սենյակը:

Նման բան մի անգամ արդեն պատահել էր Բուլոնի իր անձնական հյուրանոցում: Ննջասենյակը կահավորել էր «ա լյա» Մարի-Անտուանետ, չխուսափելով և ոչ մի ծախսից: Բայց հենց ասուցին գիշերը ինձ անկողնուց վեր կացրեց ու իր շքեղ բնակարանը փոխեց իմ անկողնի հետ:

Բայց այդ օրը Նյու-Յորքում մա ուղղակի գերազանցեց իրեն:

— Ի՞նչն եմք իջեցնում ձեր բնակարանից:

— Ամեն ինչ:

— Ինչպե՞ս ամեն ինչ:

— «Ամեն ինչը» ֆրանսերեն բառ է, չէ՞:

— Լա՛վ:

Ուշ գիշեր է. ոչ մի բեռնակիր: Ողջ հյուրանոցում միայն մեկը եմք արթուն: Էդիտը արթնացրեց Էդիի Կոնստանտինին, որպեսզի մեզ օգնի: Ինչ կա-չկա, փնթփնթալով հավաքում եմք, դարտում, փակում: Էդիի հետ ողջ կահ-կարասին (շատ կար) ներքև իջեցրինք: Մի կողմից էլ իրերս ճամպրուկների մեջ լցրի ու վերև բարձրացա: Ձեւ կարող կրկնել այն հայհոյանքները, որ ասում-նեքս սեղմած ծոր էի տալիս: Նորից պանկեցի քնելու: Քնեցի, բայց ոչ երկար: Հետախոսի զանգ. նորից ինքն է.

— Իջի՛ր:

Նորից վեր կացա, նորից հագա խալաթս, նորից հագա հո-

դաթասիրտ, անորից մտա վերելակ ու այս անգամ անքն իջա: Պիսաֆը կանգնած է գիշերազգեստով, ջղայնացած է:

— Այստեղ էլ է ճոճվում, ինձ թվում է ամբողջ թաղամասն է ճոճվում:

— Ի՞նչ եմք անում:

— Ինչ եմք անում, անորից վերև եմ քարձրանում:

Ճամպրոսկները վերստին հավաքելիս Էդդիին շնջացի. «Ծամպայնն է դողացնում Նյու-Յորքը»: Նա ինձ պատասխանեց դիմախաղով, որ նշանակում էր. «ofcourse»<sup>1</sup>: Նույն տեղափոխությունը անորից կատարեցինք, այս անգամ հակառակ ուղղությամբ:

Այդ շրջանում էր, որ Էդիտը մի օր «Վերսալում» երգելիս հանկարծ կանգ առավ: Չրնկներու համար քեմի վարագույրից կախվեց ու շնջաց. «Գլուխս պտտվում է»: Հանդիսատեսը ոչինչ չնկատեց: Բայց մենք գիտենք, որ «գլուխս պտտվելը» խմիչքի հետևանք է: Իսկ Էդիտը, հավատացեք ինձ, շրթները բաժակից չէր պոկում:

Վերջին ժամանակներս Էդիտը մի անը մոլուցքով է տարված, մտքրել է գլուխը, որ կոչված է նկարիչ դառնալ: Մեզ հաճելի անակնկալ անելու համար զնեղ էր պրոֆեսիոնալ նկարչի անհրաժեշտ բոլոր պիտույքները՝ մկրատներ, սրվակներ, մատիտներ, ռետիններ, պաստառներ ու այդ բոլորը ցիրուցան տարածել սենյակով մեկ:

Անկողնում պսակած նկարում էր: Լույուին կամ Ժան-Լուիին նստեցնում էր մահճակալի մոտ ու պահանջում էր կեցվածք ընդունել: Ինձանից մեան բաներ չէր պահանջում, քանի որ արդեն սկսում էր ճանաչել ինձ:

— Ծառ հաստագլուխն ես մեան հարցերում,— ասում էր:

Իսկ ես ջղայնացած պատասխանում էի.

— Հաստագլուխ չեմ, համբերություն չունեմ:

— Նկարչությունը լուրջ գործ է:

Լեզուն դուրս հանած նկարում էր, նկարում ու հանկարծ քարկանում.

— Մի շարժվիր, դմբո:

Քիչ հետո փրփրում էր.

— Ինչպես կարող եմ նկարել քեզ, երբ հանգիստ չես նրստում, կարծես կրակի վրա ես նստած... Դու կարծում ես մեան պայմաններում հե՛շտ է նկարել ու մեանեցնել:

<sup>1</sup> Իհարկե (անգլ.):

Երկար նկարելուց հետո թույլ էր տրվում ինձ կտավով հիս-  
նար:

— Դե, ի՞նչ:

— Հա... Այո, այո... Մի խոսքով, որոշ նմանություն կա:  
Գուցե...

— Ինչպես թե գուցե: Ինքն է, որ կա:

— Եթե այդպես եք գտնում, Էդիտ:

— Ոչ թե այդպես եմ գտնում,— ոտնում էր Պիաֆը,— այդ-  
պես է:

Իմ առաջ էր դրված անձն, մանկական, պարզունակ մի գծա-  
գիր:

Սակն դեպքում մի բան պարզ է. Էդիտի նկարչական տաղան-  
ըն իր ննջառենյակից երբեք դուրս չեկաւ:

Էդիտը Նյու-Յորքում լավ բարեկամուհի ուներ՝ Ռենը, որ,  
ճակատագրի հեգնանքով, նկարչական պատկերասրահ էր դե-  
կավարում: Թեպետ նա երկար տարիներ ապրում էր Միացյալ  
Նահանգներում, սակայն փարիզյան իր հնչեղ առողանությունը  
պահպանել էր:

Ռենը «Վերսալ» էր եկել Էդիտին տեսնելու ու հանկարծ  
նկատեց ինձ սենյակի անկյունում: Ըստ երևույթին, նրա ուշա-  
դրությունը գրավել էր իմ քթի ծավալը:

— Լավիկն ես, բայց աներևակայելի քիթ ունես:

— Իմն է:

— Պարզ է, որ քոնն է. այդպիսի մեծ քիթը չէիր կարող գո-  
ղանալ. կրունկեիր:

Նա շարունակեց ուսումնասիրել քիթս: Ես ծպտուն չեմ հա-  
նում:

— Լավ կլիճի կարճացնես: Այդ շատ լավ եմ ասում այստեղ:  
Ճիշտ չեմ ասո՞ւմ,— ասաց, շուտ գալով դեպի Էդիտը:

— Ես նրա քիթը չեմ նկատում,— ասաց Էդիտը,— մեկը սո-  
վոր եմք:

— Եվ վերջապես,— ասաց Ռենը,— մեծ, սիրուն աչքեր ու-  
նես, գեղեցիկ ժպիտ... Բայց այդ քիթը ռեխո ծածկել է ու խան-  
գարում է տեսնել դեմքիդ մնացած մասը: Քեզ համար եմ ասում:  
Ի՞նչ ես ուզում ասել կյանքում:

— Երգել:

— Առավել ես: Մտածիր իմ ասածի մասին, կրեսնես, որ  
կյանքդ կփոխվի:

Երեկոյան, ընթրիքի ժամանակ, Էդիտն ու Էդրի Կոնտաման-  
տիներ պտտվում են այդ հարցի շուրջը:

— Ինձ թվում է, Ռեզի միտքը վատ չէ,—ասաց Պիաֆր:

— Լսե՛ք, ես այսպես եմ ծնվել ու մինչև օրս քիթս ինձ չի խանգարել: Ինչո՞ւ պիտի մի հիմնարկի քննահանույթով պատկեմ վիրահատության անդամին:

Մեր անդամի շուրջ նստած էր նաև հրատարակիչ Լու Լևին: Նա ես խառնվեց գործին:

— Ես մի հիանալի վիրաբույժ բարեկամ ունեմ: Մեր լավագույն վիրաբույժն է: Վտահ չեմ, որ նա էժան գնով կհամաձայնի: Չհասցրի բացել բերանս, երբ Էդիտն ասաց.

— Ի՞նչ է նրա անունը:

— Իրվինգ Գոլդման:

— Լո՛ւ, զանգահարեք նրան վաղն կեթ ու Ծարլիի համար ժամադրություն նշանակեք:

Ահա և ծուղակի մեջ եմ: Վախը սրտումս ներկայացաւ կոսմետոլոգին: Նա ինձ ցույց տվեց անվանի մարդկանց լուսանկարներ՝ նկարված վիրահատությունից առաջ և հետո: Նկարեց իմ ապագա պրոֆիլը, որն ինձ դուր եկավ: Սկսեցի երագել ապագա դեմքիս մասին: Տեսնելով, որ թուլացաւ ու տեղի եմ տալիս, փախուստի ճանապարհներս փակելու համար Գոլդմանը կանխավճար վերցրեց ու կլինիկայի մի սենյակ առանձնացրեց ինձ համար:

— Վեց օրից, առանց բան ոտնելու, առավոտյան ժամը 7-ին եկեք կլինիկա,— ասաց վիրաբույժը:

Օրերն անցնում են: Վիրահատման նախօրեին Էդիտը որոշեց, որ հարկավոր է վերջնականապես թաղել իմ մեծ քիթը. ներկայացումից հետո գնացինք «Պարվիլյոն» ֆրանսիական ռեստորանը:

— Երկու ջամպայն,— հրամայեց Պիաֆր:

— Խմե՛ք առանց ինձ, ես պետք է սոված ներկայանամ կլինիկա:

— Սոված, նշանակում է առանց ոտնելու, իսկ խմել կարող ես,— ասաց Պիաֆր:

Քանի որ այդ ինձ ձեռ էր տալիս, ձևացրի, թե հավատում եմ: Չորս շիշ ջամպայն խմելուց հետո առավոտյան կողմ երեքով գունդ ու գլոր դարձանք:

— Մտածում եմ,— ասաց Էդիտը,— մտածում եմ, թե արդյո՞ք պիտի չես անում:

Կոնտրակտինը, լրիվ հալից ընկած, բոսըր աչքերին, չհակահանեց:

— Ես էլ եմ մտածում...— անտարբեր ասաց նա:

Այդ մի քիչ թուլացրեց ինձ:

— Էդիտ, դե հիմա կատակելու ժամանակը չէ: Մի ժամից պիտի կլիմիկա գնամ:

— Ես բոլորովին էլ չեմ կատակում, Ծա՛րդ: Ես վախեցնում եմ, որ հետագայում գղջանք: Ահա բոլորը: Վախեցնում եմ կորցնես անհատականությունդ:

— Բայց արդեն ժամադրված եմ ու կանխավճարն էլ մոծել: Ես հո չե՛մ կարող այդքանից հետո խաբել Գորդմանին:

— Գորդմանին ինչ: Քիթը իրենը չէ, քոնն է: Վերջին հաշվով քո գործն է: Եթե այնտեղից դուրս գաս այլանդակված, հրեշի դեմքով, մեղքը քոնը կլինի:

Կլիմիկայում թմրեցնելու համար սրակեցին, բայց էլի ցար էի գգում: Անհավատալի բան էր, որ աղմուկ չբարձրացրի. բարոյալքված էի, վախեցած:

Վիրահատությունից հետո, քթիս հակաշակառն մի վիրակապ, աչքերս փոս ընկած, քթի մեջ խոսելով ներկայացաւ Էդիտին, որը կարեւորացանքով նայեց ինձ ու ասաց.

— Խե՛ղճ իմ Ծա՛րդ, ի՛նչ օրն եմ գցել քեզ...

Փարիզ վերադարձաւ մե՛նակ, քթիս վիրակապը չհանած: Էդիտը պետք է գար երեք շաբաթից, «Վերսալի» պայմանագիրն ա-վարտելուց հետո:

Վերջապես վերադարձաւ նաև Էդիտը: Բոլորս միասին գնացինք Օրլի, նրան դիմավորելու: Բոլորին համբուրեց: Ծիծաղում էր, շատախոսում, բայց ինձ նկատել չէր ուզում: Ամեն անգամ, երբ մոտենում էի, շուտ էր գալիս մեջքով:

Մոտածում եմ. «Ի՛նչ է պատահել նրան, ի՛նչ եմ արել»:

Մոտենալու մի երկու փորձ արի, բայց տեսա, որ անօգուտ է: Վիրավորված գնացի, հեռվում կանգնեցի ու սպասեցի:

Բոլորը նստեցին իրենց մեքենաները: Ես մնացի Էդիտի վա-րորդի մոտ. որոշել եմ Էդիտի հետ Փարիզ գնալ ու անաբայման քացատրվել: Սաելիքներս արդեն պատրաստել եմ: Ու այդ բոլորը պիտի ասեմ առանց կնկնալու, առանց խնայելու: Նրա այդ վիրավորական վերաբերմունքից հետո... Իսկապես, վերջին հաշ-վով ինչի՞ տեղ է դնում իրեն:

Վերջապես ցրվեցին: Բոլորն իրենց մեքենաներով շտապե-ցին Պիաֆի տուն վերադարձը տոնելու: Վճռական մոտեցա.

— Էդիտ:

— Այդ դո՛ւ ես:

— Իսկ ո՞վ էիք ուզում, որ լինեք:



— Ի՞նչ ծիծաղելի է, ձայնիցդ ճանաչեցի... Ես արդեն կատարում էի քո վրա: Ինքս ինձ ասում էի. «Կեղտոտը չի եկել, էլի ինչ-որ աղջկա հետ է...»

— Ես բոլորից շուտ էի եկել: Բայց ամեն անգամ, երբ մտենում էի ձեզ, շուտ էիք գալիս:

Էդիտը ծիծաղից գալարվեց:

— Ես քեզ չեմ ճանաչել: Պատկերացնո՞ւմ ես: Մտքումս ասում էի. «Ո՞վ է այս կեղտոտ հիմարը, որն անընդհատ պտտվում է շուրջս»:

**Հանուն ջահելության  
Եվ հանուն գեղեցիկ օրերի,  
Իմ ջահել խոհերը փախչում են,  
Որպեսզի սփռեն իրենց թուլությունը՝  
Սիրո արևի տակ:**

Ուզում եմ անկախ ապրել: Հարկավոր է դուրս գալ, փախչել Պիսաֆի բռնակալ խնամքի տակից:

Ծանր բացասությունից հետո, որի ընթացքում Էդիտն ինձ ողողեց «Դու հիմար ես» բառերով, ես լքեցի այն անցյալը, որ զբաղեցնում էի նրա մոտ: Ժան-Լուի Մարկեն տեղափոխվեց Էդիտի մոտ ու գրավեց իմ տեղը, իսկ ես զբաղեցրի այն բնակարանը, որտեղ նա ապրում էր Ֆլորանս. Վերանի, Ռիչարդ Մարսենի և Բիլլի Ֆլորանի հետ:

Այն թաղամասում, որտեղ ապրում էինք, բնակարանի վարձը ոչ բոլորի համար էր մատչելի: Մեր խմբին էլ փող աստված տրվել, չէր խնայել... Տանտերը, որին անհիանդոմով վարձ չեփնք տալիս, գալիս ու կատաղած դուռն էր ծեծում.

— Բաց արեք, գիտեմ, որ ներսում եք:

Մտնելային լռություն: Ծունչներս սրահած, ծպտուն չեմք հանում:

— Եթե չվճարեք, ռատիկանության միջոցով դուրս կվռնդեմ ձեզ ու դատի կտամ...

Խեղճ մարդը ջղայնությունից խեղդվում էր, իր փողն էր ուզում: Ոչ թե չեփնք ուզում մեր պարտքը մուծել, այլ պարզապես փող չունեինք: Նա էլ ատիպված կտրում էր մեր տաք ջուրն ու Էլեկտրականությունը: Բնականաբար, երբ շատ ցուրտ էր լինում, տաքանալու միակ միջոցը տեղաշորն ու արկոհողն էր մնում:

Բիլլին աշխատում է «Անժ Ռուժում» որպես թմբկահար-երգիչ: Նա սիրում է տուրուզի մի աղջկա, որը նրան տեսնելու համար հաճախ Տոլուզից հասնում էր Փարիզ:

Ֆլորանսն ու Ռիչարդը անհանգիստ զույգ էին: Իրար պաշտում էին, բայց երբեմն էլ իրար հերն անիծում: Իրար տանջում էին ու ծիծաղում, կոպում էին, հաշտվում ու նորից կոպում: Ֆլորանսը երաժշտություն էր գրում, իսկ Ռիչարդը անվանի մարդկանց էր նմանակում: Նա փոխանիոխ դառնում էր Ռեմյու, Ժուլե, Ժյուլ Բերրի և Ժան Տիսիե:

Իսկ ես մեկ այս, մեկ այն էի անում: Երբեմն աշխատում էի Ֆլորանսի հետ: Նա նվագում էր, ես երգում էի: Բիլլին երգում էր մեզ հետ, ու Ռիչարդը կարծիք էր հայտնում:

Լավ լեղանակներին Ռիչարդի հետ ներքև էինք իջնում, լվանում, փաչլեցնում էինք մեր ավտոմեքենաները ու գնում կամ տեսի «Սեն-ժերմեն-դե-Պրե», կամ «Բյուտոտ»:

Մեր սիրած խմիչքը կարմիր գինին էր: Ամենաազբեղ վայրերում ամզամ ձեռք չէինք քաշում մեր կարմիր գինուց: Ֆլորանսը իմ հետ եկող աղջիկներին մասին իր կարծիքն էր հայտնում. «Վատը չէ, բայց շատախոս է»: Կամ. «Չէ, ախպեր, այդ չաչանակը մեզ պետք չէ» ու աչքի տակով երբեմն նայում էր Ռիչարդին, որը թեպետ մինչև ականջները սիրահարված էր իրեն, բայց և այնպես դեմ չէր նայել որևէ մի սիրուն աղջկա: Ռիչարդն էլ իր հերթին չէր սիրում, երբ տղամարդիկ ֆոֆոում էին Ֆլորանսի շուրջը:

Երբեմն խմբով որոշում էինք երեխաներին մաս ածել: Ես Պատրիցիային էի վերցնում, Ֆլորանսը՝ իր աղջկան, դուրս էինք գալիս Փարիզում շրջելու:

Ֆլորանսն ու Ռիչարդը իրենց ելույթներն ավարտելուց հետո գալիս էին ու Ժան-Լուիին գտնում Ժենեվեի մոտ:

Մինչև նրանց գալը, Ժան-Լուին ու ես փորձում էինք ապահովել ամենօրյա մեր սերը:

Աչքերով խուզարկում էի կաքարեի փոքրիկ սրահի մուտք անկյունները՝ սիրունիկ աղջիկներ հայտնաբերելու համար: Միևնույն էր, մեռակ կլիների նրանք, թե տղաների հետ. ինձ պետք էր ամեն գնով կապվել մեկի հետ:

**Երբ ձեռքիդ մեջ բանտում ես այդ թուլությունը,  
Լինել քսան տարեկան և հույս ունենալ  
Խոստումնալից առավոտների:**

— Ժան-Լուի, տեսե՛ղ ես անկյունի երկու աղջիկներին:

— Այո, բայց տղաների հետ եմ:



Միշելինը՝ նրա առաջին կինը.



Աիդա Ազնավուրը՝ Մոնրեալու.

Պատրիցիան՝ Ազնավուրի դուստրը:





Տեր և տիկին Ազնավորյանները՝ իրենց աղջկա Աիդայի  
ամուսնության օրը:




Ազնավորին շնորհավորում է Ժիլբեր Բևիս

Ազնավորը «կոմպանյոնների» հետ:











Ազնավորը ծանոթանում է  
իշխանուհի Պաուլային և իշխան  
Ադերին:



Ավտոլթարի հետևանքով  
կոտորվում են Ազնավորի թևերը:



Չամբագրություն:



Աշխատելիս:



Նկարահանման ժամանակ:

— Բո քանը ջէ, այդ ինն թող:

Շուտ եկա դեպի ժենեպլան ու սասցի:

— Քաղցրիկս, այնպես արա, որ նստենք այդ անկյունի սեղանին:

Ժենեպլանի համար դա երեխայի խաղ էր: Քանի որ արահը փոքր էր ու հաճախորդները շատ, նրա համար շատ հեշտ էր մեզ տեղավորել այն սեղանին, ուր նստած էին մեր ուզած աղջիկները:

— Տեղ տվեք, տեղ,— ասաց ժենեպլան,— ուզում եմ իմ երկու բարեկամներին տեղավորել ձեր սեղանի մոտ:

Երգը «Բյուրատում» ռեկորդային արագությամբ էր մերձեցնում մարդկանց: Մի քանի թեթևամիտ, անպարկեշտություն չլիմի ասածս, բաց քաղաքներից հետո սկսում էինք ոչ միայն սեղաններից խփել, այլև հարևանսնու ազդրերին: Այսպիսով, գրույցը շատ արագ էր կաշում:

— Թույլ կտա՞ք մի բաժակ գինի հյուրասիրել:

— Սիրով,— ասացին աղջիկների կավալերները:

Խմեցինք ու մի արագ «թույլ կտա՞ք»-ից հետո, որին հաջորդեց դյուրահավատ, միամիտ ու ընկերական մարդու համար վտանգավոր «հապա ինչպես»-ը, սկսեցինք պարել ուրիշների աղջիկների հետ:

Իսկ ինչ վերաբերում է պարին... Իս հո պար չէր՝ իրար կըպած շարժվում էինք: «Ծնողների մո՛տ եք ապրում»,— սովորական, շարժն այս և այլ նման հարցերը ընդունված չէին ժենեպլանի կարգերում: Այնտեղ ընդունված էր.

— Զահլեքդ չի գնացել՞ նրանցից:

— Ի՞նչ ասենք...

— Ոչինչ էլ մի ասեք, դուք ամեն ինչ ասացիք: Ձեռ քաշեք նրանցից:

— Ձե՛նք կարող. կո՛ծգոհեն:

Իսկույն փախուստի ծրագիր կազմեցի: Հիմնական մուտքից բացի կարարեն ոսներ նաև մի դուռ, որ բացվում էր բակի վրա: Ժան-Լուիին կարգադրեցի նստել մեքենայի դեկին ու պատրաստ սպասել բակ դուրս եկող դռան մոտ:

Միամիտ ու ժպտերես սեղանակից ընկերներիս հրաժեշտ տղվի, սեղմեցի նրանց ձեռքը, դուրս եկա ու սահեցի մեքենայի մեջ:

— Կգա՞ն, — մտահոգ հարցրեց Ժան-Լուին:

— Անպայման:

Մի քանի րոպե անց, ըստ իմ ծրագրած սցենարի, երկու գեղեցկուհիները վերցրին պաշտասկներն ու իրենց կարգի բերելու

պատրվակի տակ շարժվեցին դեպի լվացարան: Կիսախաւարի և պարող գույգերի մեջ կա՛վալերները չէին կարող հետևել աղջիկներին: Առանց ետ նայելու, ճարակորեն դուրս եկան ետևի դռնից ու իրենց գցեցին մեքենայի մեջ:

Առավոտյան միշտ շուտ եմ վեր կենում: Առաջին գործս ինսուրեասարիոններին տեսնելն է, որոնք աչստեղից-աչնտեղից ցածր վըճարվող աշխատանք են ճարում, ու մի քիչ փող եմ ձեռք բերում:

Հետո վազում եմ Բրեւոնների մոտ, ուր անց եմ կացնում իմ ամենապրպայծառ օրերը՝ երգեր եմ թառաջարկում արտիստներին: Ռատլն ինձ կուրորեն հավատում է: Նա քաջալերում է ինձ, օգնում համբերությամբ տանել իմ չար բախտը: Մանաւականը նա ինձ խրախուսում է ավելի հավասարակշռված, ավելի կարգապահ կյանք վարել:

Մի օր Ռատլն ասաց.

— Քեզ ժամադրել եմ իմ նախկին քարտուղարուհի Պատուշուի հետ: Նրան ասացի, որ հարմար երգեր ունես: Եթե հաջողացնես, կարող ես նույնիսկ նրա կաբարետում երգելու պայմանագիր կնքել: Ողջ Փարիզն է աչստեղ լինում: Դա հիմա ամենամոդաիկ կաբարեն է: Այնպես որ, լավ առիթ կլինի քեզ ճանաչել տալու:

Ժամը 15-ն է: Ծշտապահ Պատուշուն տեղումն էր: Ռատլը մեզ ծանոթացրեց: Նա ինձ նայեց, փորձելով թափանցել իմ մեջ, մի բան, որ հեշտ չէր. երկչոտությունն թաքցնելու համար աչքերս ծածկել էի սև ակնոցի հաստ ապակիով:

— Լավ, քանի որ արդեն ծանոթացաք, ես կարող եմ գնալ, — ասաց Ռատլը: Կաթվածահար ու խուճապի մեջ, կանգնած եմ այդ կնոջ դիմաց: Ես ոչինչ չունեմ նրան ասելու, իսկ նա դիտում, ուսումնասիրում է ինձ: Նյարդայնացած մի գլանակ վառեցի ու առանց դետոդեն ընկնելու նստեցի դաշնամուրի առաջ:

— Դուք կարճատե՞ս եք:

— Ոչ, մադամ:

— Իսկ ինչո՞ւ եք ակնոց կրում:

— Աչքերս հոգնած են:

Ամեն ինչի հետ համաձայն եմ, միայն թե չիմանա, թե վախեցնում եմ:

— Ես ձեզ լսում եմ:

Երգեցի, ինքս ինձ մի կերպ նվագակցելով: Քիչ հետո սկսեցի երգել, ոչ թե իր, այլ ինձ համար: Մի բան, որ թեթևացրեց վիճակս: Պատուշուն նայում էր ինձ կես-կատակ, կես-լուրջ հայացքով:

## Աչքերիդ կապույտից կապույտ

Չեմ տեսնում ոչինչ,—

Նույնիսկ կապույտը երկնի:

Պատաշուն ընտրեց այս երգը: Ես նրան ազնվորեն նախա-  
զգուշացրի, որ նույն երգը ձայնագրելու է նաև Էդիտը:

— Այդ երգը միայն իրե՞ն է պատկանում:

— Ոչ:

— Նրան կվշտացնե՞ր, եթե ես էլ երգեի:

— Իհարկե՛ ոչ:

— Ուրեմն ես գնում եմ այդ երգը:

Ամեն ինչ լավ է, ու աստիճանաբար սկսեցի արվելի հանգիստ  
զգալ ինձ: Պատաշուն ինձ ասուջարկեց ելույթ ունենալ իր մոտ.

— Դուք դաշնամուրի ասուջ կնստեք սև ակնոցով, ու մի փո-  
քրր լուսարձակ կկենտրոնացնենք ձեզ վրա: Կարծում եմ, որ այս-  
պես տպավորի՞չ կլինի:

— Բայց ես ակնոցն աչքերիս չեմ երգում:

— Լավ, այդ դեպքում, ասանց ակնոցի:

— Բայց ես ասում եմ ինքնամեկազակցումը: Նախ շատ վառ  
եմ նվագում ու հետո՝ ամենակարևորը, ես չեմ նվագում այն սո-  
նայնությունը, ինչ երգում եմ:

— Հասցա ո՞նց եք ուզում:

— Թող մեկն ինձ նվագակցի, իսկ ես երգեմ միկրոֆոնի ա-  
սուջ կանգնած:

— Լավ, հենց որ ձեր խոստանությունը անցնի, եկեք ինձ մոտ:

Անմիջապես ելույթ կունենաք: .

— Բայց սա իմ նորմալ ձայնն է:

— Դուք դա ձա՛յն եք հանաբուն:

— Դա իմ ձայնն է:

— Ծա՛տ եք ծխում:

“ — Օրը երեք տոսի:

— Եվ շատ խմո՛ւմ եք:

— Ոչինչ...

— Հասկացա: Ես ձեզ հիմա մի բան կասուջարկեմ:

— Կանանցից զգուշանում եմ:

— Լսե՛ք, դուք պիտի հաճույք պատճառեք ինձ ու ծխելը  
թողնեք, մինչև որ ձեր ձայնը նորից նորմալ դառնա: Ընդամենը  
երեք շաբաթվա պատմությունն է:

Երեք շաբաթ հետո նորից ներկայացա, բայց այս անգամ սո-

վորական շղարշ չէր, որ պատել էր ձայնալարերս, այլ Լուսնոնի ողջ մատախուղը: Դեռ ամեն ստավոտ էլ ինհարացիս էի անում:

- Բայց չէ՞ որ ես ձեզ ասել էի ծխելը թողնել:
- Ես թողել եմ:
- Երբվանի՞ց:
- Ձեր պահանջած օրվանից:

Նա ինձ նայեց, չիմանալով հավատալ, թե չհավատալ, ծիծաղել, թե չղայնանալ:

— Դե լավ, վազեք մի տոնի ծխախոտ բերեք, ծխեք ինչքան կուզեք ու վերադարձեք, երբ զգաք, որ ձեր ձայնը նորմալացել է:

Ելույթս անցավ իդեալական պայմաններում: Լուսավորությունը կատարյալ է: Ինձ նվագակցում էր Պատաշուփ Կլիմոնտոն՝ ակորդեոնի տաղանդավոր վարպետ Ռազելլիի մասնակցությամբ: Նման նվագակցության մասին երազել ամբար չէի համարձակվել:

Մորիս Ծեվալեն շնորհավորեց ինձ: Էդիտը, Ժակլին Ֆրանսուան ու մյուս ընկերներս գալիս էին ինձ լսելու:

Հանկարծ Էդիտը հայտնագործություն արեց.

— Քո հարցում բոլորը պիտավել եմ: Առաջինը՝ ես: Քեզ լսելիս մտածում էի... Լավ երգեր ունես, լավ էլ կատարում ես... Բայց երկուսը միաստեղ չի ստացվում: Քո գրած երգերը պետք է տաս ուրիշները երգեն, իսկ ուրիշների գրածը՝ դու: Այդ թող ինձ վրա: Ես քե՛զ համար կգրեմ, դու՛ ինձ: Վատահ եմ, որ աշտպես հաջողության կհասնես:

— Ոչ մի դեպքում:

— Ինչպե՞ս թե «ոչ մի դեպքում», հիմարության աստիճանի հավակնոտ մի եղիր:

— Դա հավակնոտություն չէ, Էդիտ, երգերը ես եմ գրում ու, քնակահարսը, ես պիտի երգեմ:

— Ծուռով հյուրախաղերի եմ մեկնելու Մարսել: Եթե ամենայն, ինչ ուզում եմ, քեզ հետո կտանեն, թե չէ մնա՛ Փարիզում ու փռի՛ր:

— Բարի ճանապարհի:

Մի լավ կուլեցիկնք, բայց ես չզիջեցի:

Նրա մեկնելուց հետո ինձ հանկարծ շատ միայնակ զգացի: Մոնրետալում ինձ պայմանագիր առաջարկեցին: Մեկնելուց առաջ մի երկու օրով Մարսել գնացի, Պիաֆին տեսնելու: Ինձ տեսնելուն պես Էդիտն ասաց.

— Գիտե՞ս, արդեն զոջում եմ, որ քեզ հետո չեմ վերցրել:

Կանադան ինձ ընդունեց մեկ ամսով: Հաջողությունս պարզապես համետար էր: Ոչ մի համաձայնություն Ռոջի հետ ունեցած մեր հաղթարշավի հետ: Կանադացիները ափսոսում էին, որ Ռոջն ու ես բաժանվել էինք իրարից: Չնայած դրան, կաբարեյի տերն ինձ առաջարկեց երկու շաբաթով երկարաձգել պայմանագիրը: Հենց պատրաստվում էի ընդունել առաջարկը, հեռագիր ստացա Պիաֆից:

**«Առանց քեզ չեմ կարող ամուսնանալ: Իսկույն վերադարձիր: Համբուրում եմ՝ քո Էդիտ»:**

«Առանց քեզ չեմ կարող ամուսնանալ»: Հետաքրքիր է: Խոսքը ո՞ւմ մասին կարող է լինել... Մեկ անգամ ես ճամպրուկս հավաքեցի ու ճանապարհի ընկա դեպի մագնիսի պես իրեն ձգող Պիաֆը:

12-ն անց էր, երբ մտա սրահ: Գիտեմ, որ տիկինը դեռ քնած է: Թխադեմ մի երիտասարդ, բազկաթոռին նստած, խնամքով եղունգներն է կրծում ու ոտքով տակտ խփում: Մոտեցա ու ձեռքս մեկնեցի, մտածելով, որ «սապազա ամուսինն է»:

— Իմ անունը Ծարլ Ազնավուր է: Էդիտն իմ մասին պատմած կլինի:

— Նա միայն ձեր մասին էր խոսում: Ես ժիլբեր Բեկոն եմ՝ Ժակ Պիլզիին նվագակցողը:

Առաջին հայացքից նա ինձ հարմարեղի, անչափ նշարդային, սակայն բացաիրտ և ուրախ մարդ թվաց: Չկարողանալով այլևս զսպել հետաքրքրամտությունս, հարցրի.

— Մի թեթև պատմեցեք, թե ինչպես պատահեց: Այդ բոլորն ինձ այնքան անսպասելի է թվում:

— Ծատ հիմար ձևով: Ժակն ու ես լսել էինք Էդիտին ներկայացնելու մի երգ, որը միասին էինք գրել: Եվ ամա...

Չգնում եմ ժիլբերին ու մտածում, որ մարդ պիտի ահավոր տաղանդ ունենա մեկ երգի ընթացքում Էդիտին գլխահան անելու համար: Էդիտը տաղանդավորներին շատ է սիրում, սակայն միանգամից ամուսնանա՞լ... Ժիլբերն ու ես ժպտում էինք իրար, ինքը մտքերով ստարված, կենտրոնացած եղունգն է կրծում, ես փորձում եմ ավելի խորը ճանաչել նրան: Հանկարծ գիշերային խաղաթո՞ղ հագին Էդիտի սենյակից դուրս եկավ Պիլզը ու տեսնելով ինձ, առանց նախաբանի, անսահման քնքշությամբ ասաց.

— Հենց նոր աչքերը բացեց:

Տեսնելով նրա ժպիտը, այդ երանելի, մի թեթև զսպված, մի քիչ ինքնագոհ, մի քիչ «ամայելի մեջ» ժպիտը, որ ունեն միայն



աիրահարված մարդիկ, հասկացա իմ սխալը: Վերջնականապես  
ամեն ինչ պարզ դարձավ, երբ ժակն ասաց:

— Նախանաջը անկողնու մեջ պիտի մատուցեմ:

Ժիլբերն ու ես դարձյալ մեծակ մնացինք ու բնականաբար  
սկսեցինք խոսել երգի մասին: Ի մեծ զարմանս իմ, երգարվեստը  
այնքան էլ չէր հետաքրքրում Ժիլբերին: Նրա ցանկությունը լուրջ  
երածշտություն գրելն էր: Նստեց դաշնամուրի առաջ, մատները  
աահեցրեց ստեղծերի վրայով ու նվագեց մի գեղեցիկ, ժողովրդա-  
կան մեղեդի: Զգացի, որ նա ուներ ճիշտ այն, ինչ պետք էր երգի  
առապարեզում մեծ երածիշտ դառնալու համար:

Ինչպես միշտ, իր հին, գունաթօսի գիշերազգեստի մեջ փա-  
թաթված, քնքշությամբ իր ժակի թևից կախված, Էդիտը մտնեցավ  
ինձ ու համբուրեց:

— Ահա դու նորից այտուտդ ես, իմ «հիմարիկ տաղանդ»:

Երկու շաբաթ ինձ չտեսնելուց հետո սրանք նրա առաջին  
խոսքերն էին:

Ծիծաղելով պատասխանեցի.

— «Մեծ քրմոսոս» մի նշանի վրա վազեցի, օ՛, ինչ եմ ասում,  
թոռ:

— Լավ մտածեցի,— ասաց Էդիտը,— դու իրավացի ես: Դու  
պետք է քո երգերը երգես: Երեքով՝ ժակը, դու և ես, հյուրախա-  
ղերի եկք մեկնելու: Ծանապարհին դու և Ժիլբերը ժակի համար  
երգեր կգրես: Նոր, թարմ քան կգրես:

Հանկարծ հասկացա, թե ինչո՞ւ նա չի կարողանում ամուս-  
նանալ առանց ինձ, և ինչու ես կարող եմ երգել իմ երգերը: Էդի-  
տըն այդպիսին էր ու այդպիսին էլ աիրում էի նրան: Կարևորն այն  
էր, որ վերադարձել էի և ուրախ էի, որ վերադարձել էի:

Էդիտն ու ժակը ուզում էին հագուրդ տալ իրենց թարմ սի-  
րուն. դուրս եկան: Ժիլբերը, որ ջէր կարողանում տեղում նստել,  
ասաց.

— Նշանածիս՝ Կիկիի հետ ժամադրված եմ, կարող ես գալ  
ինձ հետ:

Նկատեցի, որ Ժիլբերը շուտ է մտերմանում: Վերջին հաշ-  
վով այսպես ավելի լավ է, քանի որ միասին պիտի աշխատեինք:  
Այդ օրվանից Ժիլբերն ու ես կանոնավոր կերպով հանդիպում էինք  
իրար, իր, Էդիտի կամ Բրետոնների մոտ: Ամեն տեղ էլ մի դաշ-  
նամուր կար, որի վրա նվագում էր Ժիլբերը, ու սեղանի մի ան-  
կյուն, որտեղ գրում էի երգերիս տեքստը:

Հյուրախաղերն ակավեցին: Էդիտը, ժակն ու Ժիլբերը գնում  
եան մի մեքենայով, ես՝ մեկ ուրիշով, որի մեջ ճամպրուկներն էն ու

Կիկին: Էդիտն իր մեքենայի մեջ կին տեսնել չէր ուզում: Նա Ժիլ-բերի ամուսնությանը հասկանություն չէր տալիս: Ռե գնացեք, կոսիեք, թե ինչու: Ռեատորաններում բոլորի համար նույն ճաշն էր պատվիրում:

— Բոլորիս համար «էսկալոպ» բերեք:

Ժիլբերը բողբոջում է.

— Ես հավի ճուտ կուզեմայի:

Սեդանի տակից հարվածում են ոտքին:

— Չեմ հասկանում, ինչո՞ւ ես ոտքիս խփում:

Ժիլբերի ու Կիկիի համար հյուրախաղերը իսկական տանջանք էին: Բարեբախտաբար, Էդիտն ու Ժակը սիրո առաջին փուլումն էին գտնվում: Ժիլբերն ու ես շուտ էինք գալիս թատրոն և ստեղծագործում էինք: Կիկին ուրախ, որ վերջապես նշանածը կողքին է, խելոք նստում ու լսում էր մեզ: Այսպես յոթ-ութե երգ գրեցինք: Բայց Փարիզ վերադառնալուն պես Ժիլբերը հեռացավ մեզանից: Էդիտն ու նա իրոք որ չէին կարողանում յուրա գնալ: Այդ բոլորի պատճառն այն էր, որ Ժիլբերը որոշեց ամուսնանալ:

Սի քանի օր Փարիզում մնալուց հետո վերսկսեցինք մեր հյուրախաղերը առանց Ժիլբերի: Էդիտը հայտարարեց.

— Տղանե՛ր, այս անգամ առանց հիմարությունների: Պետք է, որ ես ու Ժակը արտակարգ հաջողություն ունենանք: Ոչ մի զանցանք չենք թույլ տալու:

Միշտն ասած, ինքն իրեն չէր հավատում:

«Ուռյա» սրահը շեփ-շեցուն է: Սովորության համաձայն ներկայացումը պիտի լես բաց անես իմ երես երգերով: Նախօրոք գիտես, թե ինչ է սպասում ինձ. հյուրախաղերի ակզբից հանդիսատեսը սույնց ու տանջամահ արեց ինձ իր վիրավորանքներով:

Կույրաներում իրարանցում է: Ներկայացումից 20 րոպե ուշացել ենք, և դեռ Էդիտն ու Պիլզը չեն եկել: Հանդիսատեսն արդեն լուրջ անհանգստանալ է սկսում:

— Բայց ո՞ր եմ սրանք,— տրտնջում է ներկայացման կազմակերպիչ պարոն Լամբրոզոն՝ ձեռքերը գրպանում, հանգած ծըխախոտը բերանին, անհանգիստ լես ու ատաջ անելով: Անհանգստանալու պատճառ կար. հանդիսատեսները ոտքերը գետնին էին խփում ու բղավում. «Սկսե-ե-ե՞ք, սկսե-ե-ե՞ք...»:

— Ինչո՞վ սկսես,— կատաղած ասաց Լամբրոզոն, մի հայացք գցելով ինձ վրա, որ նշանակում էր. «Ունեցած, չունեցածս սա է...»:

Եկան վերջապես, իրար թևանցով արած, քահ-քահ ծիծաղելով ու ճոճվելով: Կակազելով սիրածեցին պատմել իրենց անցկացրած երեկոյի մասին:

— Այնպիսի մի սպիտակ գիւնի խմեցիկնք, տղաներ, որ իրեն-իրեն գնում էր,— ատաջ Պիլզը:

Ժակի թևից կախված, ոտքերի վրա հագիլ կանգնելով, քայլելիս կոշիկները կորցնելով, մշուշոտ հայացքով Էդիտն ասաց.

— Բոլ-բոլ խմեցիկնք...

Լամբրոզոն կանգնած է խայտառակ վիճակի ատաջ, քայքայման ձգրին: Մինչ այդ Էդիտին խմած տեսել էի, բայց այդ օրվա նման՝ երբեք: Ժողովուրդն ուղղակի կատաղած էր:

— Ամեն ինչ կջարդեն,— հիստերիկ ձայնով ասաց Լամբրոզոն:

Արոջում կայացրի.

— Ես կ'մտնեմ թեմ,— առաջի Էդիտին,— ու իմ երգերը երգեցի ուց հետո կ'ներկայացնեմ Ժակին: Այսպիսով, ավելի շատ ժամանակ կ'ունենաք հանգստանալու և ուժ հարկաքելու:

Էդիտը պայթեց.

— Գի՞ժ ես, ի՞նչ է... Ես եմ ներկայացնելու Ժակին, լսո՞ւմ ես, նա իմ մարդն է... Բո գործը չէ,— առաջ ու քնքուշ հայացքով Ժակին նայեց: Ժակը հուզված ուզեց համբուրել նրան ու հարկա-սարակչոությունը կորցրեց: Բեմի մեքենավարներից մեկը կարողացավ ճիշտ ժամանակին պահել նրան: Աստված իմ, ինչ խայտառակ վիճակ էր:

— Լաե՛ք, պապա,— առաջի Լամբրոզոյին,— ես թեմ եմ քարձրանում, դուք աշխատեք ուշքի բերել նրանց ու համոզեք Պիաֆին, որ լավ կլինի, եթե այսօր քացառության կարգով ես ներկայացնեմ Ժակին:

Բեմ էլա ու երգել սկսեցի մի հանդիսատեսի առաջ, որն ինձ պարզ հասկացնում էր, թե որքան շուտ վերջացնեմ ելույթս, այնքան ավելի լավ ինձ համար: Նույնիսկ մեկը, առանց քաշվելու, դահլիճից բղավեց. «Հաջո՛րդը»: Հենց պատրաստվում էի դուրս գալ թեմից, Լամբրոզոն բղավեց.

— Էլի մնացեք... Մի քիչ էլ ձգձգեցեք... Դեռ պատրաստ չեմ:

— Նրանք «լինչի» կենդանակեմ ինձ:

— Ոչինչ, խնդրում եմ: Այդ արեք ինձ համար:

Ծուռ եկա դեպի Էդիտի դաշնակահար Ռոբերտ Ծովինյին, որ քարերսխատաբար գիտեր իմ երգերը, ու վերնագրերն առաջի: Երգեցի երեք երգ ևս: Այստեղ արդեն հանդիսատեսը համբերությունից դուրս եկավ ու սուլեց, բղավեց, ոտքերով գետնին խփեց: Կարճ ասած, երգեցի՝ ձայնս ու նվագախումբը խլացնող աղմուկաղաղակի մեջ: Բայց անխիղճ Լամբրոզոն շարունակում էր նշան անել. «Էլի մնա»:

Աստված իմ, ի՞նչ անեմ... Էլ չգիտեմ, ինչ երգեմ: Սկսեցի ինչ-որ պատմություններ անել, որոնք մինչև օրս ծիծաղաշարժ էին, բայց այս անգամ անգոր գունկեցին: Դահլիճը ըմբոստանալու եզրին է: Փառք աստծո: Ժակը վերջապես պատրաստ է: Ներկայացրի նրան, իսկ Էդիտը կողմնակներից ինձ սկսեց հայհույել:

— Հուրա... խորթ եղբայր... կեղտոտ... փտած... տակաճք:..

Բանի տեղ չեմ դնում: Հենց որ Պիլզը երևաց, դահլիճը հանդարտվեց, բայց Էդիտը դեռ ի վիճակի չէր երգելու:

— Թատրոնս կվառեն,— ցնորվածի պես անդադար կրկնում էր Լամբրոզոն:

Ընկերներիցս մի քանիսին դահլիճ ուղարկեցի, որպեսզի խստնվեն ժողովրդին ու ժամանակ շահելու համար Պիզից նոր երգեր պահանջեն: Ի վերջո մոտ տասնհինգ թույն շահեցինք, ու վրա հասավ ընդմիջումը:

Վարագույրը բացվելուն պես արագ ներկայացրի Էդիտին:

Նա բեմ մտավ, սաչթաքեց, կոշիկի մեկը դուրս թռավ ոտքից, հագավ ու կանգնեց միկրոֆոնի առաջ: Առաջին երգը սկսեց աստվածային ձայնով: Կուլիսներում զարմացած իրար նայեցինք, բայց երգի տեքստը բողբոջվին չէր հասկացվում:

Դահլիճը կենտրոնացած լսում է: Մարդիկ ոչինչ չեն հասկանում, բայց հավատում են Պիաֆին: Պիաֆը հենց նոր էր վերադարձել Միացյալ Նահանգներից, ու ենթադրելով, որ նա անգլերեն է երգում, ուժեղ ծափահարեցին: Էդիտը մեզ աչքով արեց. «Տեսա՞ք, ոնց գրպանս դրի դրանց»: Բայց նրա լավատեսությունը անժամանակ էր:

Երկրորդ երգից հետո, որ նույնպես անկապ էր, հանդիսատեսն սկսեց կասկածել, որ ինչ-որ բան այն չէ: Բայց, այնուամենայնիվ, շարունակեց ծափ տալ:

Երրորդ երգի վրա ամեն ինչ փուլ եկավ: Նվագախումբը սկսեց նվագել: Էդիտը բաց արեց բերանը, բայց ոչ մի հնչյուն դուրս չեկավ: Մանր, ճոճվող քայլերով մոտեցավ, հենվեց դաշնամուրին ու ասաց.

— Գլուխս պտտվում է...

Սլառեղ արդեն հանդիսատեսը վրա պրծավ: Ռմակք բռնափում էին. «Հիվանդ է»: Մեծամասնությունը գոռում էր. «Հարբած է»: Մի սուրց ժայթքեց դահլիճի խորքից, ու իսկույն վարագույրը իջեցրին:

Ինձ գցեցի նախաբեմ: Դիմավորեցին սուրցների տարափով:

— Խայտասակությունն է...

— Վերադարձրե՛ք մեր փողերը... վերադարձրե՛ք... վերադարձրե՛ք...

Այնուամենայնիվ կարողացա լռեցնել նրանց:

— Տիկնայք և պարոնայք: Էդիտ Պիաֆն այս օրերին շատ հոգնեցուցիչ հյուրասիրւելի մեջ էր, դրա պատճառով իրեն վատ զգաց: Բժիշկն հիմա կուլիսներում նրա կողքին է ու հավատացնում է, որ քիչ հետո Էդիտը կկարողանա նորից երգել: Խնդրում եմ ներել նրան: Բարի եղեք մի քանի թույն ասպանել...

Ոչ մի ծպտուն. միայն մեկն ասաց.

— Ասում ես, էլի, Շահրլ:

Վերջապես վարագույրը բարձրացավ, ու Էդիտը նորից երե-  
վաց: Գիտեմ, նա շատ էր վախեցել: Վախեցել էր կորցնել իր  
հանդիսատեսի հավատն ու սերը: Սուրոցներն ու գոռոցները իս-  
կույն զգաստացրին նրան: Նա շարունակեց երգել կիսատ թողած  
երգը: Հորդեց նրա կախարդիչ ու վշտոտ ձայնը, բայց դահլիճը  
մնաց լուռ, քիճոռ: Այնուամենայնիվ, մի տառնչակ երգից հետո  
«հրաշքը»՝ այդ հոչակալիոր Պիսֆ-հրաշքը իր գործն արեց: Նրա  
կախարդիչ ձայնից հանդիսատեսը մոռացավ իր հիասթափու-  
թյունն ու սկսեց կլանված լսել: Իր մեղքը լրիվ քավելու համար  
Պիսֆը մեկ ժամ էլ արվելի երգեց: Ու երբ շնչասպառ, սպառված  
ու պաշտոն կանգ առավ, այնպիսի առասպելական օվացիա բարձ-  
րացավ, որի մասին միշտ երագել եմ: Նա վազեց դեպի մեզ: Ես  
կանգնած եմ գոհ, ուրախ: Ծնորհակալական մի խոսք եմ սպասում  
նրանից: Գիտեմ, որ եղել եմ բարձրության վրա, որ փրկել եմ կա-  
հույքը: Գիտեմ, որ եթե ես չլինեի, ամեն ինչ կորած էր: Բայց  
Պիսֆը, առանց մի հայացք գցելու վրաս, անցավ կողքովս, գնաց  
նետվեց Ժակի գիրկը, համբուրեց նրան ու սասց:

— Ծնորհակալ եմ, սիրելիս, դու փրկեցիր երեկոն:

Տարիներ հետո Պիսֆը եկավ «Ալիհամբրա» համերգասրահ,  
ինձ ճաշի հրավիրելու: Երբ նրան հիշեցրի «Ռոյալի» դեպքը, ժղպ-  
տաց ու սասց:

— Կամ գիտեմ, թե ինչ արեցիր դու ինձ համար այդ երեկո,  
բայց ինչ արած՝ սիրահարված էի:

**Քաղաքից քաղաք եւ դեգերեցի  
Եվ ինձ հանդիպած լավ աղջիկներին  
Գրկիս մեջ առա:  
Նրանց, որոնց եւ լավն եմ համարել:**

Քաղաքից քաղաք անցնելով, եկանք հասանք «Կոտ դ'Ազ-  
յուր», որտեղ պիտոյի մնանք մոտ տասը օր: Համերգի պայմանա-  
գիր ունենք Կաննում, Անտիպում, Նիցցայում, Մոնտե-Կառլո-  
յում, Ֆրեժուսում և Սենթ-Մաքսիմում:

Հարմար գտանք տեղավորվել Կաննում:

Բոլորս, առանց բացառության բոլորս, գոհ եմք: Այսպիսով,  
նախ և առաջ ստիպված չեմք լինի ամեն առավոտ ճամպրոկ հա-  
վաքել, ճամպրոկ քանդել... Հետո մի քիչ շունչ կքաշենք, կքնենք  
ու հագուստներս կըլձանանք: Այդ բոլորը շատ հաճելի էր մեզ հա-  
մար, իսկ ամենակարևորը՝ ամառ էր ու շատ շոգ, և աղջիկները  
շատ էին գեղեցիկ: Միջերկրական ծովն էլ երկու քաշլի վրա էր:

Լույու Բարրին Էդիտի համար մի շքեղ հյուրանոցում բնա-  
կարան առանձնացրեց դեպի ծովը մայրո պատշգամբով: Բավա-  
կան էր մի քանի քաշլ անել, ու ծովումն իս: Ես, ինչպես միշտ,  
վերջին հարկում մի փոքրիկ ոչ թանկ սենյակ եմ զբաղեցրել:

Ինչ տեղավորվել եմք այստեղ, Էդիտի տրամադրությունն  
ընկած է: Սենյակից դուրս չի գալիս: Պատուհանները սիակ, վա-  
րագույրները իջեցրած, գիշերազգեստը հագին, նստում է կիսա-  
խավարում ու սրբում դեմքից հոսող քրտիճի վաթիլները: Նրա  
սենյակը իսկական բաղնիք է: Ոտքերը ծալած, կուչ է եկել բազ-  
մոցին ու արհամարհական հայացք է նետում վրաս:

— Լավ չե՞ս, Էդիտ:

Լոռուցիուն: Խոհեմաբար սպասում եմ: Գիտեմ, որ թափ է առնում ու որտեղ որ է նուպան կակարվի:

Վերջապես պայթեց.

— Կեղտոտ, եռակի կեղտոտ, եսասեր տակաճք: Էլի ծովափի՞ն էիր:

— Այո: Ի՞նչ վատ բան կա դրա մեջ:

— Սի քեզ նայիր, ինչի՞ նման ես: Առողջությունից և վիտամիններից տրաքվում ես: Դու զվարճանում ես, իսկ ես սպասում եմ ինձ ձեզ ապրեցնելու համար:

Փոթորկից հետո խաղաղվեց մի քիչ ու ասաց.

— Բարի եղիր, մի քիչ գարեջուր քերել լողասենյակից: Էս երկրում մի բաժակ բան էլ խմել չես կարող, առանց քրտինքի մեջ կորչելու:

Ծուռակցի հրամանը կատարել: Ընդարձակ բնակարանի սենյակներով անցնելիս մի բաց դռնից տեսա, որ Պիաֆի քարտուղարուհին, Ժակն ու Ռոլանը կողք-կողքի գետնին նստած, ոտքները պատուհանից ներս ընկնող արևին պարզած, արևի լոգանք են ընդունում: Էդիտը սուկում էր ծովափից ու արևից, ասում էր, երբ առանց իրեն լին զվարճանում: Խրանց արգելել էր ծով գնալ:

Գարեջրի շերտ սառը ջրի տակ էին դրված: Վերցրի երկուսն ու քերի: Պիաֆը ձեռքիցս խլեց ու հենց շից սկսեց ազահությամբ ծծել:

— Այսօրվանից ամեն ինչ փոխվելու է, — ասաց Պիաֆը:

Բունակարության մի նոր դարաշրջան սկսվեց: Այդ գիշեր, Ժամը երեքի մոտ, հեռախոսի զանգն արթնացրեց ինձ: Նա էր:

— Հուսով եմ, աղջիկ չկա քեզ մոտ:

— Իհարկե ոչ, Էդիտ:

— Լավ, արագ հագնվիր ու քսան լոպտից եղիր հյուրանոցի հողում: Գնում եմք խմելու:

— Էդիտ, բաց մի քիչ հոգնած եմ...

— Այդ դեպքում մի լողացիր ցերեկները: Տեսնում ես, որ լավ չէ: Սի ասա տեսնեմ, Փարիզում երեկոները հոգնո՞ւմ էիր:

— Ը... Ո՛չ:

— Որովհետև չէիր լողանում, որովհետև արև չկար: Արևը լավ բան չէ: Գիտե՞ս ինչու:

— Ոչ:

— Որովհետև նա այդուհի է վիտամինները:

Չորս-հինգ հոգով քնաթռափս, անքնությունից բթացած, լցվեցինք Պիաֆի ավտոմեքենան ու գնացինք դեպի ուրախ կառարներին ու ուեստորանները: Քաղցած չեինք, բաց կերանք...



ծարավ չէինք, բայց խմեցինք... Անքնություննից փակվող մեր աչքերը մի կերպ բաց պահելով, լուռ լսեցինք նրան, մինչև որ ասաց.

— Հարկավոր է վերադառնալ: Գալիս է այդ գարշելին:

«Այդ գարշելին» արևն էր՝ նրա թշնամին: Այսպես շարունակվեց ողջ հյուրախառնելի ընթացքում: Ստիպված հերթով փակվում էինք նրա հետ իր ասլոնի կիսախավաքում, որպեսզի նա մեռակ չմնա: Էլ ի՞նչ «Կոտ դ'Ազյուր»:

— Հոգիներս կերավ, ի՞նչ զգվելին է,— փնթփնթում էր Ավելիսը՝ «անանուն երգիչը»:

— Ավելի վատ. բռնակա՛լ է:

Փառք ասածո, նորից Փարիզում ենք: Ծոստով Նյու-Յորք ենք մեկնելու: Ու ինչպես միջո, այս անգամ էլ Էդիսոն ուզում է հնարավորին չափ լավ անցկացնել փարիզյան վերջին գիշերները:

Մի օր, կարարեում, մի վերջին բաժակ էլ խմելուց հետո, փողոց էինք դուրս եկել ու տաքսի էինք փնտրում, երբ Պիաֆի ու ջադրությունը գրավեց շուկայի մի հերկուլես, որը կրծքի շուրջը շղթաներ էր փաթաթում ու կրծքավանդակն ոտնցնելով, փշրում էր դրանք: Խցկվեցինք բերանբացների մեջ ու սկսեցինք դիտել:

• Ապիտակ մազերով, փոս ընկած կրծքավանդակով, թոքախտավորի արտաքինով, ջնջահեղձ, մաշված մի խեղճ ծերունի էր հերկուլեսը:

— Հորս է նման,— ասաց Էդիսոն ջարդված ձայնով:

Իսկույն ուղեղումս անագանգ հնչեց: Էդիսին շատ լավ եմ ճանաչում ու գիտեմ, որ դա այն ձայնն ու բառերն են, որոնք լավ բան չեն խոստանում: Արտիստը մոտեցավ ու, ձեռքի ափսեն թափ տալով մեր առաջ, հին դերասանների վերամբարձ տոնով ասաց.

— Օ՛, ինչպիսի՛ պատիվ է ինձ համար նման խղճով «համարով» հանդես գալ այնպիսի մե՛ծ արտիստի առաջ, ինչպիսին դուք եք:

Էդիսը բացեց պայուսակը, ձեռքը սուզեց մեջը և ինչ կարչկար դուրս հանեց դրեց ափսեի մեջ՝ 20.000 ֆրանկ (հին փողով): Փողի այդ դեզը տեսնելով, հերկուլեսի աչքերը դուրս թռան. նա չէր կարողանում հավատալ, որ այդ բոլորը իրենն են:

— Ինչքա՛ն ունես,— հարցրեց ինձ Էդիսը:

— Տաքսիի փող անգամ չունեմ:

Այդ գեղեցիկ ժեստից հետո ստիպված ոտքով տուն վերադարձանք: Յոթկիլոմետրանոց գիշերային «գրոսանք» կատարեցինք: Երբ տուն հասանք, ոտքերս այրվում էին:

— Գիտե՛ս ինչ, Ծա՛րդ,— ասաց Էդիսը,— ես ինձ հիանալի

եւմ զգում: Ի՞նչ հիմնարկն ենք. Փարիզում քիչ ենք քայլում: Այսօր-  
վանից ամեն երեկո ոտքով ենք վերադառնալու: Բացի այդ, քայ-  
լելը չեզոքացնում է ալկոհոլը:

Այդ որոշումից հետո (մի բան, որ երբեք չկատարվեց) նա  
շարունակեց.

— Վերջին հաշվով այս տեսակ սպորտը ծարավ է առա-  
ջացնում: Ի՞նչ ես կարծում:

— Ես հենց այդ էի ուզում ասել:

— Դե՛, ուրեմն, շտա՛յ խոհանոց:

Առավոտյան «բարի գիշեր» մաղթեցինք իրար: Երեք անգամ  
համբուրվելուց հետո, անվատաւի քայլերով, Էդիտը գնաց քնելու  
հյուրանոցի պահակի սենյակում. նա այնտեղ էլ ապրում էր,  
գտնելով, որ գնած բնակարանը շատ ընդարձակ է իր համար:

— Ես միշտ ապրել եմ կամ հավաքարարուհիների սենյակ-  
ներում, կամ էլ փտած հյուրանոցներում: Իսկ այս բնակարանը այն  
տպավորությունն է թողնում, կարծես ապրում եմ թանգարանում  
կամ ուրիշի տանը: Մի խոսքով, ինձ իմ տանը չեմ զգում:

Թեպետ տունը տեսնելու առաջին օրը բացական էր.

— Չտեսնվա՛ծ է: Վերջապես կապրեմ հանգիստ ու ամեն  
ինչ կրասավորեմ ըստ իմ ճաշակի: Անգամ թագուհուն վայել ըն-  
դունելություններ կկազմակերպեմ:

Նկարիչների, դեկորատորների, գորգավաճառների ու վար-  
պետների սովոր բանակը հսկայական հարստություն նստեց նրա  
վրա: Ննջաւենյակի պատերը բաց կապույտ մետաքսով էր ծածկ-  
ված, ոսկեզօծված էր այն ամենը, ինչ կարելի էր ոսկեզօծել:  
Բաղնիքի սենյակը վարդագույն էր ներկած, հատակին՝ բրոշա,  
բրոնզագույն կերպաս:

— Ի՞նչ ես կարծում, մի քիչ ճչացող է, բայց տպավորություն  
թողնում է, այնպես չէ՞,— ասաց Էդիտը, ցույց տալով իր տունը:

Բնակարանն ուներ նաև երկու ընդարձակ սրահ: Սակայն  
բացի փայտյա մի սպիտակ աթոռից, ուրիշ ոչ մի կահույք չկար:  
Բողոքս միասին ապրում էինք խոհանոցում:

Այն հետաքրքրական խտմբը, որ հեճոց նոր էր դուրս եկել ֆրանսիական դեսպանատնից ու քայլում էր Նյու-Յորքի փողոցներով, Էդիսոնի մտերիներուն ու նրա և ժամկ Պիլզի ամուսնության վրկաներն էին:

Փեսան ժպտում էր, հարազը՝ փայլում: Քանի որ Էդիսոնը խմբի ամենակարճահասակն էր, քայլում էր գլուխը բարձր, միշտ այնպես, ինչպես բես մտնելիս: Անցողիկները կուսում էին, որ նրա կյանքում ինչ-որ կարևոր իրադարձություն է տեղի ունեցել:

Էդիսոնը հագնված էր շատ տարօրինակ ձևով: Մի քիչ նույնիսկ անշնորհք: Դրանից նրա տեսքը ավելի հուզիչ էր դարձել: Հագին բաց կապույտ գույնի կիսաերկար մի զգեստ էր՝ արմունկից քիչ ցած ավարտվող թևերով: Բարձրակրոնակ կոշիկները առեն վայրկյան վտանգի էին ենթարկում նրա հավասարակշռությունը: Ու վերջապես գլխին արհեստական ծաղիկներով զարդարված թագ հիշեցնող մի գլխարկ կար: Իսկ և իսկ գլուխացու հարու:

Ու չնայած դրան, նրա կերպարանքը խորապես հուզիչ էր: Կատչած իր ամուսնու թևից, մերթ ընդ մերթ այսոք հպում էր նրա թևքին, բաց կապույտ աչքերը բարձրացնում վեր ու նայում նրան մանկան հիացած աչքերով:

Նրա կողքին՝ անասահման գեղեցիկ, ինքնավստահ, նրբագեղ հագնված, ամենապիւնդ ու ինքնավստահ տղամարդուն անգամ գետին տապալելու ընդունակ, անդիմադրելի նազանքով քայլում էր երազների էակ, ամենակին կինը, ամնոտանալի խաբույսաչ ասող, անմահ «կապույտ հրեշտակ» Մառլեն Դիտրիխը:

Էդիսոնը Մառլենի նկատմամբ խոր բարեկամական հիացմունքի ու պաշտամունքի մի զգացում էր տածում և հպարտանում էր նրա բարեկամությամբ: Նա շատ բան էր արտահայտում, երբ աւում էր. «Իմ բարեկամուհի Մառլենը»:

Մառլեանն էր նրան նվիրել այն փոքրիկ ռակյա խաչը, որից երբեք չէր բաժանվում:

— Դու հասկանո՞ւմ ես,— ասաց մի օր Էդիտը,— Մառլեանը դանա է ու... Անկեղծ ասած, ես հպարտ եմ, որ այդ կինը իմ ընկերուհին է և հիանում է ինձանով:

Արտասովոր մի տեսարան էր տեսնել այդ երկուսին Նյու-Յորքի փողոցներում կողք-կողքի քայլելիս: Մեկը հպարտ սահում էր սալահատակի վրայով, մյուսը՝ մանրակազմ, ուտոստում էր նրա կողքին:

— Ասա՛, սիրուն չի՞ մարդս:

Մառլեանը, որ լավ էր ճանաչում Պիաֆին, տվեց ճիշտ ՚ստասիսանը.

— Հրաշք է:

Չետո Էդիտը շուտ ձեկավ դեպի ժակն ու շքնացաց...

— Ինձ թվում է քեզ ավելի հարմար կլինե՞ր: Մառլեանը...

— Բայց ես քեզ եմ սիրում, Դիդիթ, մի՛ սոռացիր, որ դու իմ կինն ես:

Ահա՛, սահա՛, հեկեց սա է, որ պետք է ասել Էդիտին երջանկացնելու համար: Հիացած, շուտ գալով դեպի Լույու Բարրին և ինձ, Էդիտն ասաց.

— Լա՛վն է, Լույու:

— Չտեսնված:

— Իսկ դու, Շարլ, ի՞նչ կարծիք ունես:

— Շատ հաճելի մարդ ու... լավ ընկեր է:

— Ուրեմն կյանքումս առաջին անգամ չեմ սխալվել:

Իրոք, ժակը չտեսնված տղա էր: Հոգում էր Էդիտի բոլոր պահանջները: Հազիվ էինք անցել 5-րդ ավելյուն, երբ Էդիտը քրքջաց: Չարմացած նայեցինք իրեն:

— Ինչ երկչուուն է իմ ժակուն: Պատկերացնում եք, այդ ե՛ս մի երեկո խնդրեցի նրա ձեռքը... Տեսնում էի, որ պատեպատ է ընկնում ու չի համարձակվում առաջարկությունն անել...

— Բան գտար ծիծաղելու,— պաշտպանվեց ժակը, երեխայի նման կարմրելով,— վախենում էի մերժես ու ձեռ սունես ինձ:

Բոլորս ժպտացինք ու շարունակեցինք մեր ճանապարհը դեպի ռեստորան: Մտածում եմ Էդիտի ասած նախադասության մասին. «Առաջին անգամ կյանքումս չեմ սխալվել»: Ամեն անգամ իր սիրած մարդուն օժտում էր այն բարեմասնություններով, ինչ կուզեմար տեսնել նրա մեջ:

Մենք պետք է նրա մեղսակիցները դառնայինք. նրա ասած-

ճերի հակառակը պնդելով կարող էինք կործանել նրա փոքրիկ դրամատը:

Հաճախ եմ ասել, որ Էդիտի շրջապատը երբեք չի հակաճանաչել նրան: Եկեք ճիշտն ասենք: Դրա պատճառը ստրկամտությունը չէր: Մենք ուզում էինք նրան պաշտպանել, քաջալերել, ուզում էինք, որ նա ավելի նորմալ կյանք վարի, մի քիչ երջանիկ լինի:

Վերջին հաշվով, նա գիտեր, թե ինչն ինչոց էր: Նա շատ լավ գիտեր իր սիրած մարդկանց պակասություններն ու առավելությունները:

Նա աչքերը փակում էր ոչ միայն երազելու համար, այլև չտեսնելու համար այն, ինչ չէր ուզում տեսնել: Էդիտը պարզ տեսնում էր ամեն ինչ և խուսափում էր պարզությունից: Պարզությունը վախեցնում էր նրան:

Նա սիրում էր փակել աչքերը, ես սիրում եմ ընդհակառակը, մայել աչքերը լայն բացած: Նա սիրում էր թանձր վարագույրները, խեղդով մթնոլորտը, քաղաքն ու գիշերը, ես սիրում եմ արևը, բացօթյան, տարածությունն ու լույսը: Մեր առաջին հանդիպմանը նա ասաց.

— Ես քեզ սիրում եմ, որովհետև ինձ նման դու էլ կոցում ու խրվում ես բաների մեջ:

Կյանքի մեջ խրվելու համար մենք սակայն կյանքը միանման չէինք կոցում:

Մեզ իրար մերձեցնողը հիմնականում երգարվեստի մկաստմամբ ունեցած մեր մախասիրությունների ու պատկերացման մուշմուջությունն էր: Մեր ընկալումներն ու հույզերը նման էին միմյանց, ու սիրո մույն պաշտամունքն ունեինք. երկուսս էլ ձգտում էինք կատարյալին, համոզված լինելով հանդերձ, որ երբեք չենք գրտնելու: Չնայած դրան, ամեն անգամ մույն թափով մի նոր սիրո մեջ վերամարմնավորում էինք մեր երազները, պատրանքները, հույսերը: Այդ բոլորը առանց չարիչալու-ձևելու, առանց հաշվի, առանց վերապահության:

Էդիտը երբեք չի իմացել փողի արժեքը: Ես գիտեմ: Այնուամենայնիվ այդ հարցում ունեինք մի ընդհանուր գիծ՝ ոչինչ չէինք անում փող ունենալու համար, ու ավելի քիչ բան անում ունեցածը պահելու համար: Մեր նշանաբանն էր՝ «Փողը ծախսելու համար է ստեղծված»:

Երկուսս էլ հավատում էինք բարեկամությանը, բայց պատրաստ էինք շատ բան գոհել երգին:

Երգը մեզ համար (ինձ համար հիմա էլ) ապրոստի միջոց չի եղել, այլ եղել է ապրելաձև իր ուրախություններով, բարոյա-

խոսություններով ու դոգմաներով: Այսօր բազմաթիվ երգիչներ անհետ կորչում են, որովհետև չեն հավատում երգին, նրանք հավատում են միմիայն բանկում կուտակվող իրենց փողին: Երգարվեստ չեն մտնում այնպես, ինչպես կոմունիստներն են այլ արվեստ: Մի օր Մորիս Թելալեն ինձ ասաց.

— Երգարվեստ պիտի մտնել այնպես, ինչպես կրոնի մեջ:

Չի կարելի երգել փողի համար: Բայց եթե բախող բերի ու հաջողության հասնես, այն ժամանակ շատ փող կաշխատես:

Երկար ժամանակ ապրել եմ իմ հնարավորություններից բարձր: Չէի հասցնում հարկերս վճարել, խրված էի պարտքերի մեջ, ոչ մի սու չկար գրպանումս, բայց մտնում ինձ միլիարդատեր էր համարում:

Կյանքում, ինչպես բեմի վրա, երգիչը դերասանություն է անում: Օրջում է շքեղ ավտոմեքենայով, որի պարտքերը դեռ չի մարել ու օրվա ճաշերից մեկը բաց է թողնում, այդ մեքենայի մեջ բեմգին լցնելու համար:

Կեղծում է ամեն ինչ, և հաջողության աստիճանը, և հանդիսատեաների քանակը, և եկամտովի ու աշխատավարձի չափը: Նա շարունակ արտակարգ ծրագրերի մասին է խոսում, բայց իրականում անհամբեր հետախույզ զանգին է սպասում, պատրաստ՝ ընդունելու ամեն մի առաջարկություն: Միևնույն է, թե ինչպիսին կլինի, որտեղ և ինչպես կվարձատրվի: Ու այդ առաջարկը կընդունի որևէ մեկին հաճույք պատճառելու կամ լավության անելու պատրվակի տակ, այնինչ պայմանագրի մեծ կարիք ունի:

Բայց չկարծեք, թե արտիստները ստում են: Նրանք պարզապես լավ օրերին սպասելով, խեղաթոյրում են ճշմարտությունը իրենց երագից դուրս չգալու, իրենք իրենց համոզելու, քաջալերելու ու հարվածներից դիմաճակով համար:

Գրեթե միշտ անբարյացակամ են ինչ-որ արտիստի նկատմամբ: Դա կարևոր է: Այդ հակակրակների պատճառը հետաքրքրական մի երևույթ է՝ չես սիրում ու վատաբանում ես այն, ինչով իրականում խորապես հիացած ես: Նման թշնամի ունենալը կենսական պահանջ է: Այդ քեզ օգնում է, խրախուսում ավելի մեծ նուանորով աշխատել:

Բայց դա երկար չի տևում: Մի օր անհետանում է մաղձի ու ակում ես պայքարել ոչ թե ուրիշի, այլ ինքդ քո դեմ, հասկանալով, վերջապես, որ դու և նա բոլորովին տարբեր եք:

Ես ապրել եմ այդ բոլորը և աստիճանաբար գլխի ընկել, որ իմ միակ ելքը՝ ինքս իմ հեղինակը լինելն է, որ ես ոչ մի պատճառ

չունենալ ինձ տանջելու այս կամ այն երգիչ-կատարողի համար: Ընդհակառակը, փոխանակ ըմբոստանալու, ինձ հարկավոր է մի խաղաղ ասպատարան, ուր կտեղակորեն իմ դաշնամուրն ու գրասեղանը, ուր կկարողանամ գտնել ինքս ինձ, կամփոփվեմ ինքս իմ մեջ, դժբախտություններին մեջ: Կմտածեմ ու թղթին կհանձնեմ իմ սերերը: Ինձ մի նավահանգիստ, մի կղզյակ է պետք աշխարհից հեռու, աղմուկից հեռու, բայց և «ռազմադաշտերին» մոտիկ:

Ռատւլ Բրետոնն ու իր կինը ինձ հրավիրեցին օրն անցկացնել իրենց ամուսնամուտացալիս տանը՝ Մերում:

Նախաճաշից հետո շրջեցինք խնձորի այգիներում ու խոսեցինք մեր ընդհանուր սիրո՝ բնութջան մասին:

— Երբ մի օր ճանաչվեմ ու հարստանամ, կթողնեմ Փարիզը ու կտեղափոխվեմ գյուղ: Ահա այստեղից ոչ հեռու մի անկյուն կա, որ ինձ դուր է գալիս:

— Բայց դու հարուստ ես, Ծա՛րդ, իսկույն գնիր, գիտես, որ գները արագ բարձրանում են:

— Դե լավ, Ռատւլ, դուք հո գիտեք, որ ոչ մի գրոշ չունեմ: Բողոքն ասում են, որ շուտով շատ փող կունենամ, բայց առայժմ ոչինչ չունեմ: Ստե՛նք, դուք այդ ինձանից լավ գիտեք. ձեզ բարկահանին մեծ գումար եմ պարտք:

— Հե՛նց այդ է, որ կա: Դա խոսում է այն մասին, որ դու հարուստ ես: Եթե փոքր գումար պարտք լինեիր, կնշանակեր քեզ մի թեթև օգնել եմ, բայց քանի որ շատ ես պարտք, նշանակում է հույսեր իմ կապել քեզ հետ:

— Այդ բողոքը լուկ խոսքեր են, Ռատ՛ւլ...

— Բողոքովին: Եկ նստե՛նք մեքենա ու գնանք քաղաքապետի մոտ, տեսնե՛նք ծախելու ինչ ունի:

Քաղաքապետը ոչինչ չունեիր մեզ առաջարկելու, բայց այդ օրվանից ամեն շաբաթվա վերջին վազում էի Ռատւլի մոտ: Մի՛նչ նա իր խնձորենիներն էր խնամում, ես ուսումնասիրում էի շրջապատը: Մի օր էլ դեմ առ դեմ եկա մի ավերված ագարակի՝ հըրաշալիք... Ագարակի տակում ավերակ շինությունների մնացորդներ կային, որունց պատերը, ասկայն, հաստ էին և հոտալի: Դա գտնվում էր Բրետոնների կալվածքից մոտ երեք կիլոմետրի վրա:



Հայրունագործությունն իցս հուզված, վազեցի Ռասուլի մոտ, վերցրի նրան ու շտապեցի դեպի իմ (ես արդեն այդպես էի անվանում) «ազարակը»: Բայց մի մանրուք մտահոգում էր ինձ. թեպես ազարակը լքված էր, բայց ոչ մի տեղ «ծախու է» ցուցանակը չէր երևում:

— Մի՛ մտահոգվիր, Ծա՛րլ, ես կոտորելուսն ու կգրադվես դրանով:

— Հույսս դուք եք, Ռասու՛լ:

— Խոստանում եմ:

Վերադարձա Փարիզ: Գիջերը չկարողացա այք փակել. ես ինձ արդեն կալվածատեր եմ զգում. մի մեծ շուն ամենուրեք հետևում է ինձ, մշակում էմ այգուս արողատու ծառերը, իսկ ձմռանը գյուղական պարզհուզի մարդու պես հագնված կրակ եմ գցում վառարանին մեջ ու, ծխամորճը ատամներիս արանքում սեղմած, բարեկամներիս եմ ընդունում և նրանց հետ շախմատ խաղում:

Հաջորդ օրը, աչքերս անքնությունից կարմրած, վազեցի Բրետունների գրասենյակը: Երբեք այսքան վաղ չէի վեր կացել:

— Դե՛:

— Ծախու չէ:

Մհա և խորտակվեց երագս, հանգամ վառարանին կրակը, մրգերը ցած թափվեցին, վերջ ծխամորճին: Մի գլանակ վառեցի ու փորձեցի հաղթահարել հիսապթաիությունս:

— Դե՛ լավ, ինչ արած, այնքան երազներ եմ ունեցել, որ չեմ իրականացել:

— Մի ջղայնացիր, Ծարլ, մի՛ ջղայնացիր, փոխանակ ընդհատելու, թող շարունակես: Ես վերցրի...

— Ի՛նչը:

— Աստված իմ, լոի՛ր: Պայմանավորվեցի մի ընկերության հետ, որը քո ազարակների տիրոջ հետ կրանակցի ու կհամոզի նրան վաճառել:

Երազը վերակավեց: Սպասումը տևեց հինգ նյարդային օրերբեք հասնելություն չեմ ունեցել:

Ծարաթ առավոտ լույսը չբացված վեր կացա ու նստեցի մեքենայիս դեկին: Ծուտ, որպեսզի ինձ չկանգնեցնեն գերազանցված արագության համար: Այդ ժամին կարող էի ուզածին չափ արագ քշել, որովհետև ավտոտեսուչները գրադված էին իրենց «կաֆեկրեմը» ըմպելով: Ու քանի որ իրոք շատ շուտ էր Բրետունների մոտ գնալու համար, որոշեցի գնալ տեսնել իմ կալվածքը:

Հրեցի մոտքի դուռը, որի կողպեքը շարժից դուրս էր եկել ու շրջեցի այն վայրերով, որ գուցե իմ տունն էր լինելու:

Գյուղը կոչվում էր Գալլուի: Գիտեմ, ինչ-որ ժամանակ այն-տեղ ապրել են Դանիել ժելեմն ու Դանիել Դելորմը: Բացի այդ, գյուղը հպարտանում էր իր երկու պաշտոններով, փոռվ ու արձա-րանով, որ գտնվում է գլխավոր փողոցի սկզբում: Քիչ հեռու նը-պարավաճառի ու մասվաճառի խանութ և մի հոշակապ եկեղեցի կար: Դա մի խաղաղ ու մաքուր գյուղ էր, հեկնց այն, ինչ պետք էր ինձ:

Կալվածքում շրջելուց հետո (դա ինձանից շատ ժամանակ չիլից) գնացի Ռատլի մտո, որն արդեն ավարտում էր նախա-նաշը:

— Ծիշո ժամանակին եկար: Գնում եմք «Դյուշես Անն»:

Գործակալության տիրուհին, չթողնելով մի բառ անգամ ա-սել, իր տեսակետը հրատցրեց գյուղի տների մասին: Խոսեց, խո-սեց, խոսեց... Եվ այնքան արագ, աստվա՛ճ իմ, ուղղակի անհնար էր նրան կանգնեցնել: Անընդհատ խաղաքարտերի նման աչքիս առաջ էր թափում մյուս կալվածների լուսանկարները:

— Այս մեկը ձեզ դո՞ւր է գալիս:

— Ո՛չ:

— Իսկ աա՞:

— Ո՛չ:

— Նայեցեք այս մեկին: Ուղղակի հիս-նա-լի է ու արոտ-կարգ, ոչինչ պետք չէ վերափոխել: Ձեզ կմնա միայն ներս մղո-նել ու ապրել: Ուրիշ ոչինչ: Ամեն ինչ դասավորված է:

— Ո՛չ: Ինձ ավերակ տունն է պետք:

— Բայց, վերջապես, պարոն Ազնավուր, ձեր դիրքի տեղ անձնավորությունը չի կարող բավարարվել ավերակ տնով:

— Ես ա՛յդ տունն եմ ուզում:

— Իսկ դուք հաշվի առնո՞ւմ եք այն աշխատանքները, որ պիտի կատարեք: Ամեն ինչ այնքան թանկ է հիմա: Հավատացե՛ք իմ փորձին: Պարզապես արասելու համբերություն չեք ունենա:

— Գուցե, բայց ես այդ տունն եմ ուզում:

— Համարոն եք: Դե լավ, նայեցե՛ք այս կալվածին... Ես կա-րող եմ այն ցույց տալ հեկնց այսօր: Ընդամենը կարծենա...

— Նախ՝ մի ֆրանկ անգամ չունեմ: Հետո...

Լռություն տիրեց: Գործակալության տիրուհին զարմացած ու մտահոգ հայացք գցեց վրաս. մտածում էր, արդյո՞ք ես լուրջ եմ խոսում:

— Ոչ մի ֆրանկ չունեմ, բայց պարոն Բրետտոնը խոստացաւ օգնել ինձ:

Իսկոյն հանգստացաւ ու շարունակեց նույն թարիով:

— Առավել ևս: Եթէ պարոն Բրետտոնը խոստացել է օգնել ձեզ, ապա դուք կարող եք ավելի լավ տան հավակնություն ունենալ:

— Ո՛չ, ո՛չ և ո՛չ: Ինձ ավերակն է պետք: Ուրիշի ձեռքով սարքած տանն ապրելը ինձ համար նույնն է, թէ ապրել հյուրանոցում, որքան էլ գեղեցիկ լինի այն: Տոնը պետք է նման լինի իր տիրոջը: Ու հավատացեք ինձ, կարճ ժամանակում քարերի այդ կույտը ինձ է նմանվելու:

Հասկանալով վերջապես, որ չեմ հրաժարվելու մտքիցս, համաձայնեց:

— Այ, այդ հարցում դուք միանգամայն իրավացի եք: Իմ տեսած հաճախորդներից շատ-շատերը հետագայում զղջացել են ուրիշին լսելու համար: Այսպես ուրեմն. ի՞նչ եք կարծում, կավածատիրոջը կառաջարկենք երեքուկես միլիոն ֆրանկ: Տեսնենք ի՞նչ կպատասխանի:

— Ոչ: Կառաջարկենք միլիոնուկես, այսպիսով սակարկելու տեղ կունենանք:

Վազեցի Ալբերտ Լազնիի մոտ, որն առանց դժվարության հաջողեցրեց ստանալ երգերիս կանխավճարը: Փողի պակասը լրացրեց Ռաուլ Բրետտոնը: Թղթադրամներն իրար վրա դարսեցի, փաթաթեցի լրագրի մեջ, թերթով կապեցի ու Ժան-Լուի Մարկեի հետ սկսեցինք գնդակի պես խաղալ: Գնդակ, որն ինձ հողատեր էր դարձնելու:

Այդ պահին չէի գիտակցում, որ տարիներ շարունակ լարված պիտի աշխատեմ պարտքերս մարելու համար:

Հիմա տունս ավարտված է: Հիմնական աշխատանքների համար հարկավոր եղաւ չորս տարի: Տասը տարի էլ գնաց մինչև որ դարձաւ այն, ինչ հիմա կա: Բայց ինձ համար դեռ ավարտված չէ. իմ տունը ձորքեք չի ավարտվի: Ասում են, որ մա ինձ նրման է: Դա ինձ հաճույք է պատճառում:

Ծխամորճ չեմ ծխում, գունե առաջժմ, բայց ժամանակ առ ժամանակ, ամռանը շոշոմ եմ աչգոսս մրգերը ու ձմռանը կրակ եմ գցում վառարանիս մեջ:

Տնիցս հաճախ եմ հետաանում, բայց միջոտ էլ հաճույքով եմ վերադառնում: Աշխարհի որ ծայրում էլ լինեմ, տաճս մասին եմ մըտածում:

Այդտեղ եմ ինձ սպասում հիշողություններս, այնտեղ եմ մի օր առանձնանալու կնոջս, ընտանիքիս, երեխաներիս ու, հոստով եմ, անցուշտ, թոռուներիս հետ: Ինձանից հետո հետունորդներս կկարողանան ասել այն, ինչ ես երբեք բախտ չեմ ունեցել ասել:

— Սա իմ նախնիների տունն է:

Իսկ իմ նախնիները մեծ մասամբ շիրիմ անգամ չեմ ունեցել:

Էդիտի տարեդարձը վրա հասավ, և քր ղեռ Նյու-Յորքում էինք: Հինա Բեթհոլվենով էր տարված, մանավանդ Ֆյուրսովոնգլերի կատարմամբ: Ամեն երեկո կիսախաավարով ողողված իր սենյակում նստած (այլ պայմաններում չէր կարող) զնայված ու հափըշտակված լուսն էր Բեթհոլվենին:

— Ա՛հ, այդ «Հինգերորդը» Ֆյուրսի կատարմամբ:

— Այ քեզ բա՛ն: Ի՛նչ է անում այդ Ֆյուրսը «Յոթերորդում»:

— «Իններորդում» Ֆյուրսն ուղղակի հանճարեղ է:

Հարուստ չեմ, բայց Էդիտի տարեդարձը լավ նշելու ու հանույք պատճառելու համար գնացի 49-րդ ավելցուի ձայնասպանակների խանութը ու, երկար սակարկելուց հետո, զեղյով ձեռք բերեցի Բեթհոլվենի «Ութերորդ սիմֆոնիան», իհարկե, Ֆյուրսովոնգլերի կատարմամբ:

Էդիտն ինձ խելագարի պես ընդունեց:

— Օ՛... Ահա քեզ հաճելի ու խելացի մի նվեր,— բացակասչեց Էդիտը,— միշտ զգայուն «Հինարիկ հանճարի» արարքը ինձ չի զարմացնում:

Իսկույն հրամայեց ձայնասպանկը լսել.

— Թուլացրեք լույսերը, բոլորդ տեղավորվեք ու խնդրում եմ ոչ ոք չխուսի, չջարժվի:

Ձայնասպանկը պտտվում է: Բազմոցի մեջ ընկղմված, ոտքերը տակը ծալած, բարձիկը գլխի ետևում, մարմինը թուլացրած, աչքերը փակ, Էդիտն ամբողջովին կրանված է երաժշտությանը: Բայց իր համար արտաստվոր երևույթ՝ մի քանի բուսե ոսկկնորիտուց հետո ակսեց մի թեթև շարժվել: Իհարկե, նվագարկիչը մի քիչ փչացած էր ու նորմալ արագությանը չէր պտտվում, բայց ոչ այնքան, որպեսզի ողբերգության ամիթ տար: Ինչ-որ վատ բան էր ապաստվում. զգում էի:

Էդիսն սկսեց աստիճանաբար ավելի ու ավելի նշարդայ-  
նանալ ու էլ չդիմացավ, հրամայեց.

— Վառնե՛ք լույսերը:

Լույսերը վառվեցին, թողորս իրար նայեցին:

— Լույտ՛ւ, կանգնեցրու ձայնապնակը ու եթե հավանում ես,  
քեզ վերցրու, էլ ինձ պետք չէ:

Զարմացաւ: Հետո ուղղակի շանթահարվեցի, երբ շարունակեց.

— Այդ Բեթհոմվե՛նն էլ... Երբ սխալվում է, լավ է սխալվում...

Էդիսի հետ գծողություններս բազմապատկվում են: Ըստ ո-  
րում, պատճառները միշտ էլ չնչին են: Բայց դրանք նրա աչքին  
հսկայական իմաստ էին ատանում: Եթե ուզում ես, որ խաղաղու-  
թյուն լինի, պետք է միշտ գիջես: Երբեմն գիջում էի, երբ անտը-  
րամադիր կամ հոգնած էի լինում: Բայց հաճախ էլ դիմադրում էի,  
վեճի բռնվում:

Քանի որ նա սիրում էր ջղայնությունը մեկի վրա թափել, իր  
շրջապատում միշտ էլ լինում էր մեկը, որը քաղցրության նոխազ էր  
դառնում: Մի դեպ, որն ինձ երբեք դուր չի եկել: Ես ուզում էր  
մարդկանց հետ վարվել քեֆն ուզածի պես: Ես ուզում էի իմ կյան-  
քով ապրել: Թեպետ նրան շատ բանով եմ պարտական, բայց  
հո նրա սեփականությունը չեմ:

Մի օր նա ուզեց տեսնել Միևուտսիի «Դեպքանը» պիեսը: Ես  
տեսել էի բեմադրությունը ու Էդիսին գովեստով պատմել այդ մա-  
սին: Իսկույն խնդրեց Լույտի՛ն ցերեկային ներկայացման տոմսեր  
գնել: Ներկայացումը մեծ հաջողություն ունեցր. Լույտն կարողա-  
ցավ ընդամենը երկու տոմս ճարել ու, քանի որ ինքն էլ էր ուզում  
դիտել, Էդիսն ինձ ազատ արձակեց:

— Լավ: Այդ դեպքում ես կրկնումե՛մ Ժորժ Ավագյանի ճաշի  
հրավերը, — ասացի:

— Ձեա՛ն եղանո՞ւմ, Ծարդ:

— Բողորովի՛ն, Էդի՛տ, մանավանդ որ ներկայացումն արդեն  
տեսել եմ:

Մսե՛ն ինչ լավ էր: Հանկարծ տուրտուրսիցն ակավեց. վերջին  
րուպեին Լույտ Բարրի՛ն մի կարևոր գործ ունեցավ ու չկարողացավ  
Էդիսին ընկերակցել:

— Ոչի՛նչ, Ծարդը կգա ինձ հետ:

— Ձե՛մ կարող, Էդիս:

— Իսկ ինչո՞ւ:

— Դուք լավ գիտեք, ճաշի եմ հրավիրված:

— Հետո՞ ինչ:

— Շատ անհարմար կլիներ, եթե հանկարծ վերջին վայրկյանին ես...

— Իհարկե, պարոնը վարվելաձև գիտի... Նա բարձր խավի մարդ է խաղում... Ավելի լավ է խոստովանես, որ զահլա չունես ինձ հետ դուրս գալու, որ քո բարեկամ Ավագյանը՝ ձայնապնակների խանութի այդ դիրեկտորը, քեզ ավելի է հետաքրքրում, քան ես...

— Ախր, դա պարզապես քաղաքավարության հարց է: Այդ մարդը հատուկ ինձ համար հայկական ճաշ է պատրաստել տրվել:

— Ա՛խ, հա՛... Դու խաղողի տերևները ինձանից ավելի ես նախընտրում, այդպե՛ս է:

— Ո՛չ, այդպես չէ:

— Դե լավ, այդ բողոքի հերև էլ անհիժաժ, հի՛ռես գայի՛ս ես, թե չէ:

— Ձե՛մ կարող:

— Լավ: Եթե մեկ էլ քեզ հետ դուրս գամ, ավելի լավ է...

Նախադասության ավարտին չսպասեցի...

Գնացի բարեկամներին մոտ: Երեկոյան, երբ տուն վերադարձա, Էդիտը ինձ նայեց ապակյա աչքերով. «Նայում եմ քեզ, բայց չեմ տեսնում»: Փորձում եմ բռնել հայացքը, անօգուտ է: Աչքս էլ մնացինք: Իրար հետ չենք խոսում ամենամանչան բաների մասին անգամ: Նա ինձ հետ միայն միջնորդով է խոսում: Մի օր եկավ, կոլլիսներում կանգնեց կիս կողքին ու ասաց իր բարեկամուհի Մոմնին.

— Ասա այդ փոքրիկ հիմարին, որ փոխել եմ երկրորդ ու երրորդ երգերը:

Մոմնը շուտ գալով դեպի ինձ ասաց.

— Էդիտն ասում է, որ բաց թողնես...

— Տիրուհուն ասա՛, որ ես խուլ չեմ:

Օրերն անցնում են: Ուղիղ տասնհինգ օր, այսպես միասին վերադասունում ենք նույն հյուրանոցը, նախաճաշում նույն սեղանին ու երեկոյան աշխատում նույն կաբարետում, ասումնց մի թատ փոխանակելու: Բացարձակ անտեսում ենք իրար: Ի վերջո, տեսնելով, որ մթնոլորտը շատ հեղձուցիչ է, որոշեցի Փարիզ վերադառնալ:

— Ուրեմն ուզում ես գնալ:

— Այո՛:

— Դե՛ լավ, գնա՛:

— Այո, բայց...

— Էլ ի՞նչ բայց...

— Վերադարձի տոմսս ձեզ մոտ է:

Դժկամությամբ տվեց տոմսս ու փնթփնթաց. «Ոչ միայն հոգիդ եմ առնում, այլև պարտավոր ես ճանապարհի ծախսերը քաշել...»

Նսավը նոր էր բաց ծով դուրս եկել, երբ ինձ մի հեռագիր հանձնեցին. «Արդեն կարոտել եմ քեզ.

Էդիտ»:

Ես էլ էի կարոտել նրան, բայց այս անգամ որոշել եմ մեկնակ չորս գնալ, առանց Պիսաֆի: Գիտեմ, որ շատ դժվար օրեր եմ ըստ պատմում ինձ, բայց դիմում եմ ոխակի: Կտեանեմք:

Առաջին անձնավորությունը, որին հանդիպեցի Փարիզում, Ռատյ Բրետտունն էր. ամեն ինչ խառնեցի:

— Վերջապե՛ս, — բացականցեց նա, — վաղուց ժամանակն է, որ թոչեւ քո սեփական թևերով... Ծատ եմ սիրում Էդիտին, բայց ապրել նրա խնքում, քեզ համար, վնասից բացի, օգուտ չկա: Դու պետք է մոռանաս նրան: Տե՛ս, թե ինչպես ժիլլեր Բեկուն սկսեց անդա՛նի դատնալ... Ամուսնացալ Կիկլիի հետ, խաղաղ կյանք է վարում: Ու փոխանակ աշխարհով մեկ թափառելու, բոլոր ուժերը կենտրոնացրել է մի նպատակի վրա՝ դառնալ «առտող» իր սեփական երկրում: Որից հետո միայն նա կմտածի աշխարհ շրջելու մասին:

Ռատյը գուցեև իրավացի էր, բայց գրպանումս ոչ մի ֆրանկ չունեմ այլևս ու դժվար օրերն սկսվեցին:

Ինչ ասես, որ չեմ գրում իմ մասին:

«Ազնավորը չվաճառվող ապրանք է, որովհետև ուտելու բան չէ»:

«Նման արտաքինով ու ձայնով քեմ դուրս գալու հավակնությունը աներևակայելի է, ուղղակի խելագարություն: Մի բան, որ ապացուցում է այդ արտիստի բացարձակ անողջամտությունը: Բարեբախտաբար այն մարդիկ, որոնք ասպարեզ եմ բացում արտիստների համար, որոշել եմ բոլոր դռները փակել նրա առաջ»:

«Այդ խոսքոտ ձայնի տեր մարդու թոխքը դեպի ոսկին տեղի չի ունենա: Նա քեմ չի բարձրանա, որովհետև ձայն չունի, որովհետև ի վիճակի չէ կանգնել հանդիսատեսի առաջ: Վճիռը վերջնական է»:

«Նա կարիտես չի ստեղծի, քանի որ չունի լավ արտիստի և ոչ մի սովյալ»:



«Լայ կլիներ, եթե Ազնավուրը հաշվապահությամբ զբաղվեր»:

Ինչե՛ր ճաշակեցի...

Այն, որ ես հիմա էի եկել Պիաֆի շրջապատից, էլ չէի բնակվում նրա մոտ, էլ չէի գնում նրա ակոսով, ավելի քան շնորհագրություն էր երգի փոքրիկ աշխարհի համար: Դա հրապարակային մահապատիժ էր:

Ոչ ոք իրեն հարց չէր տալիս, թե ինչո՞ւ հետագա Պիաֆից: Ազատության ու անկախության պահանջն ուղիղում էր որպես պաշտոնագրություն: Բողոքի կարծիքով ես մերժված ու լքված էի, «որովհետև Պիաֆը հասկացել էր վերջապես (բավականին մեծ ուշացումով), որ ես անտաղանդ եմ»:

Քանի որ Էդիտն արդեն չէր հետաքրքրվում ինձանով ու ոչ ոք ոչևս չէր անում վշտացնել նրան, չորս կողմից ինձ վրա հարձակման ազդանշան տրվեց: Ժամանակն էր արդեն, որպեսզի մաքրեմ հաշիվներս ու մեկընդմիջտ հասկանամ, որ ոչնչությունն եմ:

— Կեղտոտներ,— ասաց Ժան-Լուի Մարկեն:

— Մի, ավելի քան կեղտոտներ...

Փարիզ վերադառնալուց հետո ոչ մի պայմանագիր չեմ կարողացել պոկել, ոչ մի ելույթ: Դուները փակում են իմ առաջ: Ինձ ընդունելու, լսելու մի բոլոր անգամ ժամանակ չունեցին: Ոչ ոք չի ուզում ուժերս փորձելու հնարավորությունն տալ: Ոչ ոք չի կարծում, թե կարող եմ տաղանդի փոքրիկ պատանիկ անգամ ունենալ: Բախտները չէր բերում, երբ փողոցում դեմ առ դեմ էին հանդիպում ինձ ու խուսափել չէին կարողանում. այս դեպքում դժվարությամբ զսպելով հեզմակամ փոքրիկ ժպիտները, խղճահարված տեսք էին ընդունում, թեթև խիտմ էին մեջքիս, որ նշանակում էր «Պիևդ կաց» ու սկսում էին գլխիս քարոզ կարդալ:

«Ախր ինչո՞ւ ես համատում, ա՛յ սիրելիս... Ուրիշ գործ գտիր քեզ համար, առանց այն էլ քո ընտրած մասնագիտությունը լի է անտաղանդներով: Ինչո՞ւ ես ուզում անպայման ավելացնել այդ դատնացածների, դժգոհների, նախանձների, քարշ եկողների ու ապագա անհաջողակների հոժ բազմությունը... Ողջամիտ եղիր»:

Քիչ էր մնում համոզեին ինձ այդ հիմարները, բայց ես շատ էի վիրավորված, շատ էի նվաստացած: Ես պետք է հաղթեի, անպայման հաղթեի:

Միայնակ, մոլոր սենյակում պատկած, աչքերս լայն բացած անկարող եմ քնել: Ծառ եմ զայրացած: Վիճակս շատ վատ է. ոչ մի առ չունեմ, իսկ պարտքեր՝ որքա՛ն ասես: Եթե ծնողներիս մոտ

չուսեմի, ապա սովից կկոտորվեմի: Բայց ոչինչ, պետք է դիմանալ:

Վերամակը դեմ եմ նետում, գլխիս եմ քաշում, նորից դեմ նետում, վեր եմ կենում ու տեղյակով քաշելով ~~ստորածայն~~ խոսում եմ.

— Հիմարներ... Հետամնաց, լնացած մարդիկ... Ի՞նչ եք հասկանում դուք: Ձեզ թվում է, թե այն, ինչ կա, ենթացալիս չէ փոխվելու: Բայց չարաչար ախալվում եք. կգա մի օր մեկը, շուտ կուսաճեն ինչ, ու քերանների քաց կմնաք: Այս անգամ դուք, դառնացած, ջախջախված, կողքաք ձեր բախտը:

Այդ ժամանակ հույսի նշույլ անգամ չունեմի, բայց հոգուս խորքում բողբոջից թաքուն երազում էի, որ այդ մեկը ես կլինեմ: Միայն մեկը գիտեք իմ տվայտանքների մասին՝ (մյուսները կծիծաղեին) Ժան-Լուին: Ես նրան ասացի.

— Ախր Պիաֆն ինձ մեծ ապագա գուշակեց, իսկ նա մի կին է, որ հանդիսախոսություններ չի շնայում: Ռատլ Բրետունը անվերապահորեն աջակցում է ինձ, եթե նա վստահ չլինեք, ապա այդքան փող չէր ծախսի: Ծարլ Տրեմեն գալիս ու երկար մնում է մոտըս՝ մխիթարելու, քաջալերելու համար: Իսկ նա ժամանակը քամուն տվող մարդ չէ:

Այնուամենայնիվ, գործերս գնալով վատանում եմ. ուտելու քան չունեմ, տուն չունեմ, ձայնապնակներ չունեմ: Ում էլ որ դիմում եմ ձայնագրվելու համար, մերժում են: Դեռ ավելին, քրննադատում եմ Բրետունին, որ ինձ օգնում է:

— Ռատլ, — ասում լեն նրան, — մեկը ձեզ հավատում ենք: Տարիներ շարունակ ապացուցել եք, որ դուք անսխալակաճան եք, բայց հիմա այդ Ազնավուրի հարցում ախալվում եք ու ձեր փողն էլ քամուն եք տալիս:

Մի օր ընկճվեցի: Որոշեցի, ինչպես չորս կողմից էին ասում, ողջամիտ լինել: Ձեռ քաշեցի... Որոշումս հայտնեցի Բրետունին.

— Ռատլ, — ասացի, — գրողի ծոցն եմ ուղարկում այս բոլորը: Ես ընտանիք ունեմ: Վերջ: Երբեմն երգեր կգրեմ ուրիշ երգիչների համար ու, դրան գուգահեռ, կաշխատեմ որպես իմպրեսարիո, կգրադվեմ ջահել սուդանդներով:

— Եթե ուզում ես ջահել տաղանդներով զբաղվել, — ասաց Ռատլը, — ապա առաջինը քեզանից ակտի:

— Բայց, ախր, չի առացվում:

— Կատացվի:

— Ինչիս է պետք 100 տարեկան դառնալուց հետո:

— Ավելի շուտ կատացվի:

— Հեջտն է ասել, Ռասո՛ւլ, ես հիմա ոչ մի լատ բան չեմ սպասում: Կատարցալ հուսադքված եմ:

— Լսի՛ր ինձ: Մի տարի էլ դիմացիք ու ձթե ոչինչ դուրս չեկաւ, այն ժամանակ կարող ես անել, ինչ ուզում ես:

Համաձայնեցի: Մանավանդ որ հուզուս խորքում ուզածս էլ հեւնց այդ էր: Միայն թե ուտել, սպրեւ էր պետք: Ամեն օր հրետուններին գրասենյակումն եմ: Առավոտ վաղ գնում եմ, երգեր եմ գրում ու առաջարկում Ռասուլի մոտ եկող երգիչներին: Որպես հեղինակ դժգոհելու բան չուներ. երգերս վաճառվում են: Երկու տարուց հեղինակային իրավունքներս մի փոքրիկ հարստությամբ կկազմեն: Բայց եթե Ազնավուր-հեղինակը ընդունված է, ապա Ազնավուր-երգիչը երգում է միայն իր համար:

Երբեմն թաքուն գնում եմ Էդիսոյի մոտ: Վերադառնալուց հետո մենք իհարկե հաշտվեցինք, բայց Ռասուլը չի ուզում, որ նա նորից թաթը դնի վրաս:

— Հաջողության հասնելու ամենաապահով միջոցը Էդիսոյից հետո մնալն է: Քանի նրա իջխանության տակ ես, ոչ մի բարեկամ չեմ ունենա: Գրած երգերդ թեր ինձ տուր: Ուրիշ ոչինչ: Դու պետք է ազատ մնաս:

Ճորանն Վերանի հետ մի երգ էինք գրել «Ատում եմ կիրակիները» վերնագրով: Գնացինք Պիաֆին ներկայացնելու: Կարդաց...

— Դու ինձ պարկերացնո՛ւմ ես այս երգը երգելիս, ի՛նձ...

— Ինչո՞ւ չէ:

— Դու խելատ ես:

— Մենք ձեզ համար ենք գրել:

— Ինձ համար, թե մեկ ուրիշի համար, միևնույն է, երգը կարող ես շարտել, ուր ուզում ես...

— Ուրեմն կարող եմ անել այն, ինչ ուզո՞ւմ եմ...

— Նոր ասացի, որ կարող ես...

— Լս՛վ, լս՛վ, հասկացա, բայց հետո չասելք, թե ձեզ չառաջարկեցի (ես ճանաչում եմ Էդիսոյին):

Ինձ պատմել էին մի աղջկա մասին, որ երգում էր «Ռոգ Ռոսժ» կարարեում: Հեւնց նույն օրը իրենցից գնացի նրան տեսնելու: Նա ինձ երկար սպասեցնել տվեց՝ մինչև կարարեայի փակվելը:

— Ուրեմն դուք ուզում եք ինձ ե՞րգ առաջարկել, — հարցրեց ժյուրիետ Գրեկուն հմայիչ ձայնով:

— Այո՛:

— Ի՞նչ է վերնագիրը:

— «Ատում եմ կիրակիները»:

Վերնագիրը նրան հետաքրքրական թվաց ու խնդրեց մի հասոված նվագել:

— Նողկալի եմ նվագում: Թող սովեք երգել, եթե իհարկե ձայնն շատ չքերծի ձեր ակամեջները:

Ժյուլետն առանց տատանվելու վերցրեց երգս: Հաջորդ օրը վագեցի Ռատոլի մոտ ուրախ լուրը հաչունելու: Նա որոշեց երգը ներկայացնել Դովիլլի «Երգի կունկուրսին», գտնելով, որ մրցանակ շահելու հնարավորություններ ունի:

— Ի դեպ,— առաց նա,— «Դյուկրետե Տոմպսոն» ձայնապլանկների գեղարվեստական դեկավար Մորիս Տեգեի հետ քեզ համար տեսակցությունն եմ խնդրել: Նա համաձայն է ձայնագրել քեզ:

Մորիս Տեգեին հիանալի ընդունեց ինձ: Տրամադրությունն արձրացավ: Վստահ ինձ վրա, ձայնագրել սովեց երկու երգ՝ «Ջեզաբելը» Ֆրանկ Պորսելի նվագախմբի կատարմամբ և «Պոկերը»՝ Պոլ Մորրիսայի:

Սակայն այս փոքրիկ հաղթանակները ինձ ոչ մի պայմանագիր չբերեցին: Ահա արդեն տասնմեկ ամիս է անցել իմ ու Բրետոնի խոսակցության օրվանից ու ոչ մի բանի չեմ հասել. դեռ թշվառության մեջ եմ:

— Ռատու... Փողի կարիք ունեմ:

— Էլի՞: Ինչքա՞ն:

— Դե... Բավականին: Ռատու, դուք լավ գիտեք, որ վեց ամսում արդեն կատանամ հեղինակալին իրավունքներիս գումարը...

— Այո՛, այո՛, բայց ինչքա՞ն ես ուզում:

— 100.000:

Դարձյալ հազը խեղդեց նրան: Նկատել եմ, որքան խնդրած գումարն մեծ է, այնքան ավելի երկար ու թունդ է հագում:

— Եթե հանկարծ մի միլիոն պահանջած լինեի, ապա նրա թոքերը տեղից կարկվեի:

— Մի խոսեմ Մարկիզի հետ (կինը), տեսնեմ ինչ կարելի է անել: Երկուշաբթի օրը արի:

Այսպես, ամեն երկուշաբթի գնում վերցնում եմ կանխավրճարս և ուրբաթ օրը նորից խնդրում: Բայց նա հավատում է ինձ: Նա միակն է, գրեթե միակը, որ հավատում է իմ հաջողությանը:

Դովիլլում Ժյուլիետ Գրեյկոն ստացավ կատարման մրցանակը, իսկ «Ես ատում եմ կիրակիները» երգը՝ դրամատիկ հեղինակների ընկերության մրցանակը: Ինձ մնում էր ընտրել՝ «Ոսկե մեդալ» կամ 75.000 ֆրանկ: Ես մատերիալիստ եմ. գրպանեցի 75.000-ը: Էդիսոն ինձ կանչեց իր մոտ:

— Անպետքի սեւեր, այդպէս ուրեան: Իմ երգերը տալիս ես ուրիշ երգչունհիւնէրի, հա՛:

— Բայց, Էդիտ, դուք ասացիք, որ երգս կարող եմ շարունակ...

— Ե՛ս եմ ասել... ե՛ս:

— Այո՛, դո՛ւք:

— Դա այն երգը չէր:

— Բացարձակ նույնն էր:

— Ուրեմն ինչ-որ բան ես փոխել տեքստի մէջ:

— Բացարձակապէս ոչ մի բան: Դուք ինձ ասացիք՝ ո՛չ:

— Ես քեզ ասացի... ասացի... Դու ինձ էլի սխալ ես հասկացել:

Նա ոչ մի կերպ չէր ուզում ընդունել, որ սխալվել է:

— Ափսո՛ս, շատ կուզեմայի այդ երգերը լսել ձեր կատարմամբ, Էդիտ: Հիմա արդեն անհնար է:

— Անհնա՛ր: Ինչո՞ւ:

— Որովհետև Գրեկուն է երգում:

— Գրեկո, Գրեկո... Գրեկո ես գցել գլուխդ: Դու սիրահարված ես:

— Ձէ: Հազիվ եմ ճանաչում:

— Այո՛, այո՛, դու սիրահարված ես: Ես դա պարզ տեսնում եմ: Ինչկիցե: Ես պիտի երգեմ քո երգը ու ցույց տամ, թե ինչպէս պետք է երգել:

Ժյուլիետտ Գրեկուն, Էդիտ Պիաֆը, Ժիլբեր Բելկոն ու մյուս հըռ-չակապոր կամ նվագ ճանաչված երգիչները իմ երգերով կարիէրա էին անում, իսկ ես դեռ ոչնչություն էի մնում: Ռատյի նշանակած ժամկետն էլ մոտեցնում էր ավարտին, մնացել էր մի քանի օր:

Հանկարծ հրաշքով ինձ երեք օրվա պայմանագիր առաջարկեցին երեք հարյուր տեղանոց «Պակրա» մյուզիկ-հոլլում:

Երեք օրն, իհարկե, քիչ է, բայց համերգին ներկա իմպրեսարիոները նկատեցին ինձ:

— Վերջին հաշիվով այնքան էլ զգվելի չէ,— ասաց նրանցից սեւեր ներկայացումից հետո:

Այդքանն էլ բավական էր, որպէսզի սկսեին ինձ հետ փոքրիկ պայմանագրեր կնքել:

Անսպասելիորեն Էդիտն ինձ առաջարկեց վերադառնալ ու տեղավորվել իր մոտ: Եթե միայն սրտիս լսեի, կվազեի առանց տապալանվելու: Գիտեմ, նա առանց ետիմ մտքի է կանչում: Բայց ուզում եմ Ռասուլի կարծիքն իմանալ: Ինձ թվում էր, որ նա դեմքը կթթվեցնի: Բայց ոչ, նրա պատասխանը հստակ էր ու նախատախտակոր:

— Դիմանալով այդ ծանր դժվարություններին, քո արվեստին և մանատխանդ քեզ, ապացուցեցիր, որ առանց խնամակալի կարող ես յուր գնալ: Բայց եթե քեզ հաճելի է նորից սուզվել Պիաֆի վտանգավոր աշխարհը, գնա՛: Իմ կարծիքով դու արդեն զերծ ես նրա ազդեցության տակ հիմնովին ընկնելու վտանգից ու եթե նրա շրջապատը դադարի քեզ դուր գալ, ապա գիտեմ, որ կարող ես հեռանալ:

Ահա դարձյալ Պիաֆի շրջապատում եմ: Որքան ժամանակ է անցել, բայց էլի նույնն է, մազաչափ անգամ չի փոխվել. նույն բռնակալ վերաբերմունքը դեպի շրջապատը: Միայն ինձ է խնայում: Նա շարունակում է սիրել գիշերն ու ատել ցերեկը: Ոչինչ իր կյանքից չի փոխում, բացի այն մարդուց, որին արդեն չի սիրում: Մեկ էլ երբեմն նշարդային նուպայի զոհ՝ քարտուղարոսհիներին:

Ամեն երեկո, առաջվա պես, ժամերով փակվում ենք խոհանոցում, գարեջուր ու կարմիր գինի խմում, զրուցում, իրար ձեռ անում: Ոչ ոք իրավունք չունի հեռանալ խոհանոցի սեղանից, որը և ծառայում էր որպես ժողովի սեղան, բացի ինձանից: Վերադառնալուց հետո արտոնություններ ունեմ. վեր եմ կենում ու հեռանում, երբ ուզում եմ:

— Գնում ես քնելո՞ւ:

— Այո, Էդիտ: Վաղն առավոտյան պիտի աշխատեմ:

Բողոքը սպասում եմ, որ հիմա հերս կանհիծի:

— Իրավունք ունեմ «հիմարիկ տաղանդավորս», գնա հան-

գրատասցիր: Մի լա՛վ քնիր, որպեսզի կարողանաս գրել: Բարի գիշեր:

Երբեմն ասում են.

— Ես պետք է գնամ, Էդիտ: Ժամադրված եմ:

— Սիրո՞ւն է:

— Հա, ոչինչ:

— Ո՞նց պիտի գնաս:

— Ոտքով կամ մետրոդով:

— Ոչ մի դեպքում:

— Տաքսի կնստեմ:

Վեր է կենում, կանչում է վարորդին, որն իրենից երկու քայլի վրա աթոռակիսն նստած ննջում է, ու հրամայում:

— Գնացե՛ք, շտապ լիքը բեռզին լցրեք մեքենայի մեջ ու հանձնե՛ք պարոն Ծարլին:

— Բայց, Էդի՛տ, ես դրա կարիքը չունեմ,— առարկում եմ ես:

— Ես է՛լ չունեմ: Դու պետք է աղջիկներ գտնես, հաճախ սիրումսարվես, որպեսզի սիրո վշտեր ունենաս, տատապես, հիասթափություն, երջանկություն ապրես. երգեր գրելու համար:

— Դուք իրավացի եք, Էդիտ:

Վերցնում եմ մեքենան ու սլանում դեպի ապագա հուշերս: Անիվները սուլեցնելով, հարյուրի վրա անցնում եմ Փարիզով ու գյուղ մտնելիս միայն քնթացքը դանդաղեցնում՝ գեղեցիկ գրասալքջիկ աղջիկներին լավ տեսնելու համար:

...Կաբարեների փակվելուց հետո, երբ թուր հաճախորդները հեռանում են, մենք մնում ենք՝ Ժան-Լուի Մարկեն, Ռիշար Մարսանն ու ես: Տեղավորվում ենք կամ «Ժենեվկի» մոտ, որին գնահատում ենք որպես հեզահամբույր ու համեղ բիֆշտեքս պատրաստող կին, կամ «Ատիլիոյի» մոտ, որի կաբարեն տաքուկ է, կամ «Երկու Ռեյի» մոտ, որը մեզ հիացնում է իր պատմելու ձիրքով, կամ էլ թե չէ «Պամի» մոտ, որը գիտե ճիշտ ժամանակին բերել մեր սենդվիչները:

Մնում ենք մինչև ուշ գիշեր: Ուշացած անգործները մեզ խրամիչք են հյուրասիրում: Գլուխներս կամաց-կամաց տաքանում է: Խմում եմք, մինչև որ Ֆլորանս Վերանը, որ միացել էր մեզ (նա եկել էր Ռիշարի հավատարմությունը հսկելու), փորձում է մեզ տուն վերադարձնել:

— Գի՞ժ ես, շարունակում եմք...

— Բայց ո՞ր եմք գնում:

— «Կլոշ դ'Օր»:

Լոսաքացին «Կլոշ դ'Օրից» դուրս եկաք գաղիս ու մտնում ինչ-որ գինետուն, մի թեթև նախաճաշելու:

Սուրճը հանգստացնում է ինձ... Զգաստացած, լավ տրամադրության մեջ վազում եմ ծնողներին համբուրելու ու խաղալու Պատրիցիայի հետ:

Զարթնելուն պես Էդիտը հարցնում է.

— Ի՞նչ կասես:

— Ոչինչ, ման էի գաղիս:

— Մտքեր գտա՞ր:

— Հեկոց այդպես չի լինի, Էդիտ: Ես պետք է վերադառնամ այնտեղ: Գիտե՞՞ք, խոսում ես, լսում ու հանկարծ մի բառ մտնում է ուղեղդ, այդ բառի շուրջ մի պատմություն ես ստեղծում, ու ծընվում է երգը...

Հաջորդ երեկոյան ու մյուս բոլոր երեկոները ես թափառում էի այդ վայրերում ու գտնում իմ սերերը: Անհրճապես է տալ նրանց անունները: Կասեմ միայն, որ յուրաքանչյուրից հետո մի նոր երգ էր ծնվում:

Երբեմն Էդիտն ընկերակցում էր ինձ, մի բան, որ մեծապես բարձրացնում էր հեղինակություննս կանանց մոտ և օգնում գրավել նրանց:

Էդիտին անընդհատ թևիցս կախված տեսնելով, կարծում էին, որ նրա սիրելեանն եմ, մանավանդ որ Պիսաֆը հայտնի էր նրանով, որ իր տղամարդկանց ջոկել գիտեր:

Տպավորությունը կարող է այնպիսին լինել, կարծես միայն սիրային արկածներ եմ ունեցել, իսկական սեր չեմ ճանաչել: Բանն այն է, որ ես չեմ ուզում գրել Ազնավուրի սերերի մասին: Իհարկե, հանգստությունը գեղեցիկ կլիներ, բայց մեծ արժեք չէր ներկայացնի: Ես գիտակցաբար մոռացության եմ տալիս այն, ինչ որոշ կանայք կապատեին ինձանից:

Ուրիշներին շատ բան եմ թողնում, որ գրեն իմ մասին, բայց չեմ ուզում ինքս բոլորի առաջ մերկացնել այն հուշերը, որոնք միայն ինձ են պատկանում:

Բացի այդ, ոչ Դոն-ժուան եմ, ոչ էլ Ռոմեո. ունեցել եմ և՛ փոթորկալից սերեր, և՛ անցողիկ կապեր:

— Միտում եմ ձայնդ:

— Միտում եմ մարմինդ:

— Միտում եմ աչքերդ:

— Միտում եմ սիրել:

Էդիտը հաճախ հարցնում էր.



— Էդ ի՞նչ ես անում, որ բողոքիմ որպես քաջիս:

— Ձեռ ու ոտ եմ ընկնում ու երբ ասում եմ. «Գնանք Պիս-Ֆի մոտ», գործերս իսկույն դասավորվում են:

Արկածներս երկար չեմ տևում: Որովհետև Էդիտը միշտ գրու-նում է այն բանը, որը տեղն ու տեղը փչացնում է թովչանքը:

— Լսի՛ր, լավիկն է, բայց նշարդերիս վրա է սագրում:

Նա իմ սերն ընդունում էր միայն այն ժամանակ, երբ ինքն էլ էր սիրահարված լինում: Մի բան, որ վտանգավոր էր. հան-կարժ ընկերությունս ներկայությունը հայտարարում էր.

— Պիտի ամուսնանամ, նույնը խորհուրդ կտայի ձեզ:

Բարեբախտաբար նրա, ինչպես նաև իմ որոշումը չէր իրա-գործվում:

Եթե սկզբում բարեամասնություններս էր շեփոքում ընկերու-հոս. «Կարգին տղա է Շարլը, լավ ամուսին կլինի», ապա մի քանի օր անց, թե. «Գիտե՛ս ինչ, Շարլի հետ դժբախտ կլինես. թեթևամիտ է: Մի գեղեցիկ օր միայնակ կմնաս: Հավատա՛ ինձ: Լավ տղա է, բայց հետևողական չէ: Խանգարվածի մեկն է...»

Այսպես սկզբում ծուղակի մեջ էր գցում ինձ, հետո փըր-կում:

Ինձ միշտ ձգել են կործանիչ սերերը, իրենց ճանապարհին ամեն ինչ ավերող փոթորիկները, անհաստատ, հաճախակի որոտ-ներով յի երջանկությունները, որոնք բնաջնջելով ամեն ինչ, ի վերջո դառնում են թանաք, ապա՝ ակուններ ձայնապնակների վրա:

Ինձ միշտ ձգել են բաց խոստովանությունները, միակ դատա-վորիս ու խոստովանահորս՝ հանդիսատեսի առաջ:

Ոչ մի սեր չեմ ապրել առանց խզումների, ոռնոցների, սպառ-նալիքների ու հաշտությունների:

Բայց երբեք ինքնակենսագրական երգեր չեմ գրել: Երբեք չեմ գրել այն պահին, երբ դժբախտ, հուսալքված եմ եղել...

Իմ տանջանքները, վշտերն ու հիասթափությունները գրի եմ առել միայն այն ժամանակ, երբ վերստին խաղաղվել եմ, երբ մի նոր սեր իմ ալեկոծ հոգուն ներդաշնակություն է պարզել: Երգը մաքրում էր սիրտս անցյալի հետքերից ու ազատագրված՝ նորից էի սրվում սիրո խեղճությունների...

Ահա թե ինչու, ուլքեր ճանաչում են ինձ ու սիրում, զարմա-ցան, երբ ամուսնացա Ուլլայի հետ, որը հանդարտ է՝ ինչպես հյուսիսային լիճը, լոտ՝ ինչպես շվեդական դաշտավայրը ձյան

տակ: Այսուհասկերձ նա հաստատական է, կամակոր, բայց ո՛չ աղմուկ է սիրում, ո՛չ կոփոյ: Ապրում ենք միաձուլ, բայց մեզմից չորաքանչյուրը կարողացավ պահել մի փոքրիկ ազատ գոտի, որը միայն իրեն է պատկանում: Ինձ հետ նա դարձավ նվազ անհոգ ու ավելի աշխույժ: Իր հետ ես դարձա նվազ կովարար, նվազ տաքարյուն:

Ուլլայի հետ ես իրավունք ունեմ թեքվելու անցյալիս վրա, առանց մեր միջև վիճի առաջացնելու:

Ծառերն են պնդում, որ խաղաղ սերս Ուլլայի հետ կամուսնի երևակայությունն: Ես հակառակն ապացուցեցի: «Այսուհետև», «Փարիզը օգոստոս ամսին», «Սակայն», «Ես իմ անկյունում», «Քեզ սիրելու համար», «Դերասանը», «Դեռ երեկ»... այս ու մի շարք այլ երգերը գրել եմ Ուլլային հանդիպելուց հետո:

Երգի վերածեցի կյանքս, սերերս, հույսերս, տենցանքներս, իսկ Ուլլայի մասին ոչինչ չգրեցի, բացի մի քանի տողից.

**Դու ապրում ես միշտ քո լռության մեջ,  
Աստված գիտե, թե ինչ ես խորհում դու:  
Աստված, անշուշտ, բայց դու, հատկապես դու,  
Մտածում ես գեթ փոքր-ինչ իմ մասին:**

Այստեղ երևակայությունն կանգ առավ ու դա բնական է, քանի որ ես կարողացել եմ գրել միայն հիասաթափություններին ու խզումներին մասին:

Այնպես որ Ուլլան ոչինչ չունի անելու այստեղ. այդ բոլորը վերաբերում է իմ անցյալի հուշերին, երբ՝

**Երեկ դեռ քսան տարեկան էի...**

Ռոլան Ավելիար, որին Էդիտը նույնպես իր մոտ էր տեղափորել, որովհետև նա բոլորից լավ էր ծիծաղեցնում իրեն, մի օր ասաց.

— Լաի՛ր, Ծարդ, Կիունում մի երիտասարդ երգչուհու հետ էի աշխատում, հիմա Փարիզ է վերադարձել: Այսօր ժամադրված եմ հետո: Բարի եղիր, արի՛ միասին գնանք: Երկար չի տևի:

Նա եկավ քառորդ ժամ ուշացումով:

— Ահա այն եկողն է,— ասաց Ռոլանը:

**Պետք էր, որ մի օր  
Ցավն ինձ այցելեր,  
Ցավն անակնկալ,  
Որ կոչվում է Սեր:**

Մեր սեղանին մտնեցաւ գրայիչ արտաքինով, ինքնաւստան, հմայիչ շարժումներով երիտասարդ մի կին, որին, չգիտեմ ինչու, հեկնց առաջին հայացքից չհավանեցի, լոտ մնացի ու ձևացրի, թե չեմ լսում նրա շաղակրատությունները: Սակայն շոտով ասիւպ ված էի միջամտել, երբ գեղեցկուհին ակնեց գովեստով խոսել ինչոր դերձակի մասին, որն այդ օրը մարմուխ դրվատանքին էր արժանացել:

— Նա Միացյալ Նահանգների նորընտիր պրեզիդենտ Հարրի Տրումենի համար կոտոյում է կարել, — բացականշեց աղջիկը, որի անունը չէի հիշում, — շատ ուժեղ է, չէ՞:

Փշաքաղվեցի: Որոշեցի փակել նրա բերանը և ի հակադրություն նրա գեղեցիկ խոսելաձևին ու բառապաշարին, կուպիտ ասացի.

— Գիտե՞ք ինչ... Գլուխս տարաք ձեր սոստ լուրերով:

Ծիշտ նշանակետին կպա: Գեղեցկուհին վեր թոռավ:

— Կարիք չկա ճանաչել ձեր դերձակին, պարզ է, նրա արածը ունկլանի հասարակ տրյուն է. մարդունկ ուզում է, որ թերթերն իր սփայը պատկերեն:

Ռոլանը յոթերորդ երկնքում է. նա շատ է սիրում կովող մարդկանց: Գիտե իր ընկերոսնու բնավորությունը, գիտե նաև, թե ինչ աստիճանի զգվելի կարող եմ լինել ես, երբ ուզեման:

— Նա շատ լավ տղա է, — բողոքեց գեղեցկուհին, — գեղեցիկ է, խելացի, աշխատասեր: Նույնիսկ պոեմներ է գրում:

Ծիծաղից գալարվեցի: Աղջիկը զայրույթից կառկարմիր կրտրեց:

Եթե դաստիարակությունը ներեր, ապա ձեռքի բաժակը երեսիս կշիեր: Հազիվ գտալով իրեն, ասաց.

— Նրա տունը այստեղից երկու քայլ է, Մարբըֆ փողոցի վրա, ես էլ ժամադրված եմ նրա հետ: Եթե ներությունն քաշեք և ընկերակցեք ինձ, ապա ձեզ կմնա միայն ներողություն խնդրել ինձանից, եթե իհարկե, ընդունակ եք դրան, պարո՞ն:

Պնդեցի, որ հաշիվը ես փակեմ: Աղջկա մտտ տպավորությունն թողնելու համար մատուցողին մի մեծ գումար էլ թեյափող տվի ու շարժվեցի նք դեպի դերձակի տունը: Ես վստահ էի, որ դերձակը չէր կարող Տրումենի համար կոտոյում կարել առանց նախօրոք նրան տեսնելու: Հասանք Մարբըֆ փողոցը, երկու հարկ բարձրացանք ու դերձակին ներկայացրին ինձ: Մի շատ գեղեցիկ, դուրեկան ու սրտաբաց տղա էր, այսինքն ճիշտ հակառակը, ինչ ես պատկերացնում էի:

«Պարոն Ազնավուր, պարոն Լապիդոս»։ Ծանոթացանք։ Ու  
նախքան Լապիդոսը կբացեր բերանը, վրաս տոյի.

— Ասացե՛ք, ձեր պատմությունը, կապված Տրումբենի կոս-  
տյունի հետ, զուտ ռեկլամի հաշիվ չէ՞:

— Այո՛, — ասաց նա լայն ժպիտով, — բայց խոստովանեք, որ  
լավ միտք է:

Նրա անկեղծությունը դուր եկավ ինձ, մանավանդ որ թշնա-  
մուս անատմանը միավոր շահեցի: Ակսեցի նա խոսել երաժշտու-  
թյան, պոեզիայի մասին ու մեր միջև ստեղծվեց փոխադարձ հա-  
մակրանք: Օրիորդն էլ, ուրախ աղջիկ լինելով, աստիճանաբար  
մոռացավ միրավորանքն ու մի ուրախ երեկո անցկացրի նա:

**Աչքերիդ անկյան ժպիտով,  
Հայացքիդ լեցուն ջերմությամբ  
Թվում է ոսկերչի ձեռքով ես քանդակված:**

Աղջիկը գեղեցիկ է, նրբակազմ, և ինչո՞ւ թաքցնել, ճիշտ և  
ճիշտ իմ ճաշակին է: Խոսակցությունը ընթանում է երգի ու մա-  
նավանդ այն դժվարությունների շուրջ, որոնց հանդիպում եմ կա-  
տարողները լավ երգեր որոնելիս: Օգտվելով առիթից, հաջորդ  
առավոտյան երիտասարդ կնոջը ժամադրեցի Ռատյ Բրետոնի  
գրասենյակում:

— Ես կուզեմայի, որ լսեք իմ երգերից մի քանիսը, եթե,  
իհարկե, դա հետաքրքրում է ձեզ:

Տպավորությունն այնպիսին է, կարծես հեղինակը բաց արտով  
իր ծառայությունն է առաջարկում մի երիտասարդ երգչուհու, այն-  
ինչ, իրականում, տղան ուզում է սիրահետել մի գեղեցիկ աղջկա:  
Ու քանի որ այնքան էլ վատաս չէի, որ նա կգա, համեմատյալ դեպս  
իբր թե իմիջիհարց, վերցրի նրա անունն ու հասցեն, պատճառա-  
բանելով, որ գուցե մի օր ինչ-որ դիրեկտոր երիտասարդ երգչու-  
հու կարիք կունենա: Նա տվեց իր այցետոմսը՝ Էվելին Պլեաիս,  
հոթել «Վերնիկե», փողոց Վերնիկե:

Գնացի Պիաֆի մոտ, շուրթերիս Էվելին մի հատիկ բառը:  
Ռոլանը ուրախ է, բայց Էդիտն անհանգստանում է:

— Ուսում առա՞ծ, ասում ես:

— Այո, — ասաց Ռոլանը:

— Ուրեմն տգեղ է:

— Ո՛չ, ո՛չ, շատ լավիկն է:

— Անկարելի է, ուրեմն հիմարիկ է:

— Ձեի ասի, խելացի է երևում:

— Խելացի, գեղեցիկ և ուսում առած... Սրա տակ մի բան կա: Անպայման ինչ-որ պակասություններ կունենա:

— Եթե ուզում եք իմ կարծիքն իմանալ, նա կատարյալ է:

— Կատարյալ: Դա արդեն վախենալու բան է: Պետք է զգուշանալ այն արարածներից, որոնք այդքան բարեմասնություններ ունեն ու փորձում են շշմեցնել իրենց գիտելիքներով: Ես քո տեղը լինեի, կզգուշանայի:

Էդիտը ճիշտ նշանակետին կպավ: Իրոք որ Էվելինը ճնշում էր ինձ, վախեցնում իր ուսումով: Եթե ես՝ թերուս, կարողանամ հաղթահարել ուսում առածին, ինչպիսի՞ հաղթանակ... Հաջորդ օրը Էդիտն ասաց.

— Վերցրու ավտոմեքենան: Եթե դուրս գալու լինեմ, տաք-սի կնստեմ: Այդպես ավելի լավ տպավորություն կթողնես բալի-կիդ վրա: Ու եթե այս երեկո ազատ է, ճաշի հրավիրիր: Տեսնեմ ինչի է նման: Գիտես, որ հաշտնի գործ դասավորող եմ, երբ ուզեմ: Ապա ինձ նայիր: Չէ, չեղավ, այդ փողկապը լավը չէ, աս կասիր: Իմ կարծիքով լավն ես: Եթե քո երգերով ու քո այս մր-նությամբ նրան դուր չգաս, նշանակում է հիմարի մեկն է: Ու եթե հանկարծ քեզ չուզեց, բանի տեղ մի դիր, իմացի՞ր, որ բավական է մտող ցցես, մեկը մեկից գեղեցիկ հիսուն աղջիկ կվազեն քո ետևից: Հենց մեկն էլ ես, թե ուզում ես:

Բրետոնների մոտ եմ: Հինգ րոպեան մեկ ժամացույցին եմ նայում: Վերջապես եկավ, դարձյալ ուշացումով: Երկչոտություններ ունեց: Սև ակնոցս դրի, նստեցի դաշնամուրի առաջ, իրեն նրստեցրի կողքիս ու առանց գրուխս բարձրացնելու իրար ետևից մի-տասը երգ երգեցի: Ընտրեց երկուսը, պատրաստվում էր գնալ, առաջարկեցի ուղեկցել ու բանի որ դժվար էր տաքսի գտնել, ընդունեց առաջարկս: Մեքենայի մեջ խոսում եմք Ռոլանի մասին: Օգտվելով առիթից, ասացի, որ Ռոլանը իրեն ճաշի է հրավիրում: Առանց խնդրել տալու հրավերն ընդունեց, ու ճանապարհը թեքեցիներ դեպի տուն:

Էդիտը նրան շատ սիրալիկ ընդունեց: Ծուռ եկավ, աչքով արեց ու ատամների արանքից ասաց.

— Լավ ես... Անպետքի մեկը:

Եթե Էվելինը քիչ բան գիտեր իմ մասին, ապա ճաշի ընթացքում իմացավ ավելին, քան պետք էր: Էդիտն այնպիսի շոսալու-թյամբ գովեց իմ տաղանդը, թաքնված արժանիքներս, ինձ սպասող ապագան, որ ամոթից չգիտեի ինչ անել: Աղջկան վերջնականապես ցնցելու համար ինձ նստեցրեց դաշնամուրի առաջ ու

միասնին դռնտուններ երգեցինք: Հանկարծ կանգ առավ, նայեց Ռուսնին ու շատ բարձր, նույնիսկ ջախագանց բարձր ասաց.

— Մի բռնեով գնանք իմ սենյակը, խոսելու բան կա:

Ծուռ գալով դեպի Էվելինը՝ ներողություն խնդրեց ու հրավիրեց այցի գալ, երբ ցանկանա: Ասյա, դավադիր, աչքով արեց ինձ ու հետաքսար, մի պահ մեկնակ թողնելով մեզ: Այդ պահը տևելու էր մոտ յոթ տարի:

— Քեզ պետք է հաճախ տեսնեմ, Ծա՛րլ, որ չմոռանամ մոռալով, — ասաց մի օր Ռատլը:

Նա իրավացի էր: Ես պետք է ցույց տայի ինձ, հնարավորին չափ շատ աչքեր պետք է տեսնեմ ինձ: Քանի որ նրանք չէին գալիս ինձ մոտ, ես պետք է գնայի դեպի իրենց:

Ինչ-որ տեղ «Պակրայի» ելույթու օգտակար եղավ ինձ համար: Եթե ժողովրդին տակն ու վրա չարի, ապա գոնե այդ երեք ելույթներու սկսեցին դեպից-դեպից, փոքր-մոքր պայմանագրեր բերել: Իհարկե թանկ չէի գնահատվում, բայց էլի մի քանի բույե գրադեցնում էի բեմը: Նշանակում է ներկայացումների առաջին մասի համար քավակամին հետաքրքրական էի: Ինչ խոսք, որ ինձ առաջարկած պայմանագրերից պետք է լավն ու վատը ջոկեի, ընտրեի այն, ինչ օգտակար էր ինձ ու դեմ նետելի այն, ինչ սոսկ մի քանի հարյուր ֆրանկ էր բերում: Բայց դեռ մոտիկ անցյալի դատը հիշողությունը, երբ ոչ մի աշխատանք չունեի, մղում էր ինձ ընդունել այն ամենը, ինչ առաջարկում էին:

Այնպես էր պատահում, որ երեկոյան ժամը 10-ից մինչև ուշ գիշեր ելույթ էի ունենում հինգ տարբեր տեղերում: Դրան ավելացրած կինոսեանսների ընդմիջմանը ունեցած կարճ ելույթներու:

Դա մի տանջալի մրցավազք էր. լեզուս կախ գցած վազում էի այն բոլոր տեղերը ժամանակին հասնելու համար: Ծանապարհին աղճատվում, ջնջվում էր գրիմս, բայց ոչինչ. «Պետք է քեզ տեսնեն», ասել է Ռատլը, ես էլ ցույց էի տալիս ինձ:

Հանդիսատեսն իմ բեմ բարձրանալը տհաճությամբ էր ընդունում, այնպես որ, երբ երգերս ամուսրբերությամբ էր լսում, այդ գրեթե հաջողությունն էի համարում: Հաճախ աղում էին:

Մի օր իրար ետևից երգեցի հինգ երգ: Հանդիսատեսը, որ մինչ այդ գրեթե անբաղի էր իմ նկատմամբ, ելույթից հետո սըրիիումֆ ասարեց: Կույիաներում կանգնած ուղքի չէի գալիս: Ողջ զբաղիներ հոտնկայս բղավում էր, վանկարկում անունս. «Մի-երգ-էլ... մի-երգ-էլ...»:

— Ի՞նչ անեմ,— հարցրի դահլիճի տիրոջը:

— Գնացե՛ք, քանի որ ուզում եմ,— ասաց նա, նման ընդունելությունից անհասի զարմացած:

Վարագույրը նորից բարձրացավ, ես վերադարձա, կանգնեցի բեմի կենտրոնում ու չհասցրի բերանս բացել, երբ դահլիճում մի աներևակայելի ծիծաղ պայթեց, որին հաջորդեցին ականջ խըլացնող սուլոցներ... Ինձ վրա շարժում էին այն ամենը, ինչ ընկնում էր նրանց ձեռքը՝ թղթի կտորներ, մետաղադրամ... Մի քանի վայրկյան շվարած, ապշած, կանգնած մնացի տեղացող հարվածների տարափի տակ ու հասկացա վերջապես, որ նրանք ետ էին կանչել ինձ ավելի լավ ոմբակոծելու համար: Արցունքներն աչքերիս, անսահման ստորացած, լուսարձակների թույլ լույսի տակ, անշտապ քայլերով փշա բեմից: Այդ կարծես քիչ էր:

Արտիստական մուտք չլինելու պատճառով ես պետք է դուրս գայի դահլիճի միջով:

Գլխահասկ, առաններս սեղմած, առանց համարձակվելու որևէ մեկին նայել, դուրս եկա փողոց:

Հանդիսատեսի վառ ընդունելությունը միակ հոգսս չէր. ձայն... Երեկոյի սկզբում լավ դիմանում էր, հետո քանի գնում փչանում ու կորչում էր: Այնպես որ օրվա վերջին ելույթս անց էի կացնում առանց ձայնի ու գրեթե ամեն անգամ լսում էի, թե ինչպես մեկը ասում էր սեղանի շուրջը նստած բարեկամներին.

— Բա որ ասում էի... Բողբոլվին ձայն չունի:

Մի օր հարդասենյակում եմ, եթե այդ նեղլիկ խուցը կարելի է հարդասենյակ անվանել, պատրաստ եմ, բայց դեռ ժամանակում եմ. որոշեցի մի հայացք գցել այն մարդկանց վրա, որոնց առջև ելույթ պիտի ունենամ: Մի՞նչ շարունակվում էր կինոնկարի ցուցադրումը, նայեցի ինձ դահլիճից բաժանող պատտառի ճեղքից:

Ահա նա, այն հանդիսատեսը, որի դեմ կոխվ պիտի տամ: Դահլիճում նստած մի գույգ համբուրվում է՝ առանց կինոնկարի ու շրջապատի վրա ուշադրություն հարձնելու: Մեկ ուրիշ անկյունում արևածաղկի սերմեր են չրթոն: Մի խուսքով, ոմանք եկել են արվեստի համար, մյուսները՝ ժամանակ սպանելու, ոմանք էլ պարզապես հյուրանոց չլինելու պատճառով:

Բողբոլ դեպքերում պարզ է մի բան. նրանք չեն եկել ինձ՝ Ծարլ Ազնալուրիս համար:

Ճիղքը վերջացավ: Սկսվեց կինոծրոնադր: Դահլիճում բղավում են, աղմկում... Մեկը սուլում է ինչ-որ քաղաքական գործչի, մյուսը ծիծաղում է վայր ընկնող մի սպորտամեմի վրա: Վերջապես դահլիճը լուսավորվեց:

Գիտեմ, գգում եմ, որ դահլիճը սառն է այնպես, ինչպես թաղային կինոդահլիճը միայն կարող է լինել: Դաշնակահարը, որ համր կինոնկարների երաժիշտ էր հիշեցնում, նստեց դաշնամուր կոչված մի ավերակի առաջ:

Կուլիաներում եմ: Անունս հայտարարեցին. դահլիճում ոչ մի թշնամական ռեակցիա: Դաշնամուրը չոր, տխուր, անկենդան, սկսեց առաջին երգի նախերգը:

Ինչ վարագույրը չբացված, բեմ նետվեցի, նետվեցի մի քիչ կենդանացնելու այն մեռած շրջապատը, արթնացնելու այդ երաժիշտ-արհեստավորին, որն անկենդան նվագում էր իր էսկիմունու կոնֆետը ծծող հանդիսատեսի առաջ:

Ինքս ինձ համոզելով, որ այնուամենայնիվ կկարողանամ հուզել նրանց, թափով սկսեցի առաջին երգս: Այդ հեզոնոտ, թերահավատ ու ձանձրույթից մեռնող անծանոթների հայացքի տակ միայնակ մտածում եմ, որ գուցե նրանք արհեստավոր եմ հիշում այն կոմիկին, որն անցյալ շաբաթ այստեղ, իմ տեղում կանգնած, ծիծաղից մեռցնում էր նրանց: Ես երգում եմ, երգում, իսկ նրանք մտածում են. «Ինչ է գլուխներս տանում...»

Երկրորդ երգս էլ չկարողացալ գերել նրանց: Մինչ կոնֆետի ճմրթովո՞ղ թղթերի զրնգուն ալիքները դեպի ինձ էին հոսում, աստիճանաբար սկսեցի կասկածել ուժերիս վրա:

«Գուցե իրոք լավ երգիչ չեմ... Գուցե իրոք երգերս այնքան էլ չալ չեն, որքան ես կարծում եմ...»:

Դաշնակահարը, որն ինձանից անջատ, իր համար նվագում էր, երգն ավարտեց ինձանից ջուտ ու չհասկանալով կատարվածը, ապուշ-ապուշ ինձ նայեց: Երգն ավարտեցի մենակ ու շտապեցի հայտարարել երրորդը: Ես պետք է շտապեի. ծափահարությունները այնքան էին խղճուկ, որ շունչ չքաշած, լոռություն էր տիրում: Իսկ ես վախեցնում էի լոռությունից. դա ոչ մի լավ բան չէր խոստանում: Դաշնակահարը վախեցնալու բան չոսներ, դրա համար էլ քավական ժամանակ էր անցնում, մինչև նա տեղից պոկում էր հաջորդ երգը: Երգում եմ բարձր, բայց մի պահ հանդիսատեսին հուզելու համար ձայնս ցածրացրի ու ինչ-որ տող մեղմ, ջերմությամբ արտաստեցի:

Դահլիճում մի ձայն թնդաց.

— Այդ բաղիկին սովեք մոր գիրկը:

Ծարոնակում եմ երգել: Մեկ ուրիշ ձայն առաջինից քաջավերված որոտաց.

— Բա եղա՞վ, հը՞... Մեղք եմք, չե՞...

Մյուսները միացան նրան.



— Հերի՛ք է: Հերի՛ք...

— Ծիծաղեցրու մեզ...

Մեկ ուրիշ ձայն արդունս սառեցրեց ու քրտնեցրեց ինձ.

— Պ ո ո ո ո ո՛...

Ծարտնակում եմ երգել ու ինքս ինձ սատում. «Բանի տեղ մի՞ դիր, արսա այնպես, կարծես ոչինչ չես չսել»:

Նայեցի դաշնակահարին՝ պետքը չէ: Ըստ՝ երևույթին սովորական քան էր նրա համար: Երևի առաջին անգամը չէր, որ այս սրահում նման համկարծակի բռնկումներ էին տեղի ունենում:

Մի կերպ վերջացրի երգս ու բեմից դուրս եկա: Բայց գողգոթասս դեռ չէր ավարտվել: Պետք է նորից վերադառնալի բեմ ու երգելի չորրորդ երգը: Պայմանագրի համաձայն, տասնհինգ րոպեից ոչ մի վայրկյան պակաս չպետք է մնալի բեմի վրա: Ետ եկա:

Ինչ-որ մեկը կեղտոտություն շարտեց իմ հասցեին, մյուսները վերջնակաճապես դատարեցին լսել ինձ ու ակեցին բարձրաձայն խոսել: Վերջապես ավարտեցի ելույթս ու դողալով բեմից դուրս եկա: Ամեն օր նույնն էր կրկնվում, բայց ոչ մի կերպ չէի կարողանում ընտելանալ:

Ես պետք է հետաքրքրվեմ նրանց, պետք է կարողանամ լռություն պարտադրել:

Հարդաստեղյակում հանվելիս մտածում եմ, որ վաղը այլ կերպ կմտնեմ նրանց: Ինչպե՞ս, դեռ չգիտեմ, բայց կգտնեմ ձևը:

Վերադարձա ընկերներիս մոտ:

— Ինչպե՞ս անցավ երե՞կ:

— Ծառ լավ: Անհամեմատ ավելի լավ, քան նախորդ օրը: Վերջում մի երգ էլ խնդրեցին, բայց այդ կեղտոտ դաշնակահարի պատճառով ռիսկ չարի. վախենում էի փշացնել ձեռք բերած հաջողությունս:

Հասկացա՞ն, որ ստում եմ... Գուցեև ոչ: Վերջին հաշվով, ես չէի ստում, ինչպես ամեն մի արտիստ, պարզապես ձևափոխում էի ճշմարտությունը:

**Մի գիշերում սերը պոռթկաց մեր սրտերից:  
 Գրկվել էինք մեր իսկ խիճղից ամաչելով:  
 Մեր աչքերում երկչուղի հետք չկար անգամ,  
 Զի մանկության մահը խիճղն է ջահելության:**

Էվելինն ու ես որոշեցինք միասին ապրել ու մեր սերը պա-  
 առնապարել Բերրի փողոցի վրայի «Ակրոպոլիս» հյուրանոցում:  
 Այսպիսով, մեր սեռնյակի չորս պատերի մեջ կարող էինք ուզածիդ  
 չափ սիրել իրար, իրար սիրտ պատահոտել, հաշտվել ու նորից  
 կովել:

Այդտեղ է, որ մի օր Կլոդ Ֆիկուսն եկավ ու մեզ թատրուն  
 հրավիրեց:

Կլոդը գանգոյր մագերով, բարալիկ, փոքր մի տղա էր: Նը-  
 վաստելի կերպով աշխատում էր չափազանց խորատմանկ ու ծակող  
 աչքերին միամիտ արտահայտություն տալ: Նա կեղծում էր ման  
 ֆր ժպիտը, որ փոխանիփոխ մեկ զզվելի էր, մեկ կեղծավոր: Նա  
 դյուրագրգիռ, հետաքրքրական մի տղա էր, և հիվանդագին ձրգ-  
 սում ունեղ դեպի ուշակավոր անունները: Մի անգամ, ներվային  
 փոքրիկ ծիծաղներով ընդհատելով իր խոսքը, ինձ վատահեց իր  
 երազանքը՝ ուզում էր դերասան դառնալ կամ երգիչ, կարևոր չէր  
 ինչ, միայն թե բեմի վրա լինեղ ու արժանանար հանդիսատես-  
 ների հայացքներին ու ծափահարություններին:

Նա վարպետ շողոքորթ էր ու, շնորհիվ իր ծառայականու-  
 թյանը, գիտեղ անհրաժեշտ դարձնել իրեն: Ծնվել էր Բուս-Կոլում-  
 բում, բայց մինչև եղունգների ծայրը, որոնք թեպետ այնքան էլ  
 խնամված չէին, փարիզեցի էր:

Նա շողոքորթում էր Էվելինին, գովում նրա հմայքը, մարմ-  
 նի գեղեցկությունը ու ինձ հետ վարվում էր այնպես, կարծես Ֆր-

րանախիայի ամենամեծ երգիչը լինեի: Էվելինը սիրում էր հաճոյա-  
խոսությունները, իսկ ես՝ շողոքորթությունները: Ավելին պետք  
չէր, որպեսզի նա դառնար Էվելինի մտերիմն ու իմ ատվերը:

— Ա՛հ,— հատաչում էր նա ինձ հանդիպելիս,— եթե կարո-  
ղանայի ասրել Պիաֆի հետ, երդվում եմ, նրանից բացի էլ ոչ մի  
կնոջ չեի նայի:

Էդիտը նրա կիրքն ու երազանքն էր, այն աստիճանի, որ  
հետզհետե սկսեց քայլել, ուտել, խոսել ու երգել նրա պես: Ամեն  
տեղ, ուր գնում էր, չէր կարողանում զսպել իրեն ու Պիաֆին չնը-  
մանովել: Ու միշտ էլ հաջողություն էր ունենում, երբ երգում էր.

**Իմ փոքրիկ կյանքում կա երկու տղա.**

**Մինը՝ մուգ, մյուսը՝ խարտաչ:**

Վերջին հաշվով բոլորը սիրում էին նրան, անկախ նրա նյար-  
դայնացող թերություններից ու հաճախակի անշնորհք արարք-  
ներից:

Մի օր Էվելինն ասաց.

— Դարդ մի՛ արա, աչնքան էլ գեջը չես:

Նա իմ կյանքը մոտոք գործեց ելույթներիցս մեկի ժամանակ:  
Կողմաներում, ուր կարողացել էր խցկվել, հարցրեց.

— Դուք ինձ հիշո՞ւմ եք... Ես ձեզ հանդիպել եմ սրանից վեց,  
ամիս առաջ «Կոլոմբում», Պիաֆի ելույթի ժամանակ:

— Քանի՞ տարեկան էիք այդ ժամանակ:

— Տասներկու:

Հիշեցի: Աչքիս առաջ եկավ կարճ տաբատով, փոքրիկ վեր-  
ցցված քթով ու ցանցառ, անխնամ մազերով փոքր մի տղա: Այդ  
երեկո կինոդահլիճի կողմաներում պատահա՛մ մարդուն պատմում  
էր, թե ինչպես է սիրահարված Պիաֆին: Պիաֆը, որ իմացավ  
այդ մասին, դուրս եկավ հարդասենյակից, նայեց իր երիտասարդ  
սիրահարին ու Սիմոնին ասաց.

— Քեզ եմ տալիս...

— Ինչի՞ս է պետք:

Ուրեմն իմ առաջ կանգնած երիտասարդը այդ տղան էր: Նը-  
րան հաճոյք պատճառելու համար ասացի.

— Ես ձեզ շատ լավ եմ հիշում:

Հիմա արդեն հագին երկար տաբատ էր ու գլանակ գլանակի  
ետևից էր վառում:

— Ինչո՞վ եք զբաղվում:

Ընդգծված հպարտությամբ պատասխանեց.

— Ռեքուսասն եմ:

— Իսկ որտե՞ղ եք ելույթ ունենում:

— Հիմա «Գրամմոն» թատրոնում, «Կաքավ Քրիստոսը» ներկայացման մեջ,— ու տպավորությունն թողնելու համար ավելացրեց,— լվի դերը ես եմ խաղում:

— Օ՛, լավ է:

Ու ձևացրեց, թե հանկարծ բան է մտաբերել, այնինչ, հենց ակզբից այդ մասին էր մտածում:

— Ահա թե ինչ: Եկող հինգշաբթի հրավիրում եմ ձեզ ներկայացման, ես կգամ ձեր ետևից:

Ահա այսպես վերստին գտա Կողմ Ֆիկուսին: Ներկայացումից հետո Էվելինն ինձ ու պիեսի բոլոր մասնակիցներին հրավիրեց անկյունի սրճարանում մի բաժակ բան խմելու: Սեղանները իրար միացրինք, աթոռները քաշեցինք ու նստեցինք: Հարևանս ասաց, որ Կողմն այս երեկո առաջին անգամ խաղաց այդ դերը, մի բան, որ նրան սովորականից ավելի շատախոս ու նշարդային էր դարձրել:

— Լավ էի, չէ՞... Մանավանդ որ խաղացի առանց փորձի... Ինչպե՞ս էր, Ծարլ:

Զգիտեմ ինչ պատասխանել, նեղացնել էլ չեմ ուզում: Կատակի սովի.

— Իհարկե փոքր դեր էր, բայց կարևորը սկիզբն է:

— Սկզբի համար համարձակությունից զուրկ չեք:

— Անզգայությունից,— ձեռ առավ մեկը:

Երեկոյան մեզ ուղեկցեց մինչև հյուրանոց: Այդ օրվանից ամեն երեկո այցելում էր մեզ: Հետո սկսեց երևալ նաև ցերեկները, ի վերջո նույնիսկ առավոտները: Երբ նա մեզ մոտ չէր, ուրեմն թափառում էր «Սեն Ժերմեն դը Պրեյի» կաֆեներում մինչև ազն պահը, երբ բաց թողնելով վերջին ավտոբոսը, վերջին մետրոն, վերջին գնացքը, ոտքով տուն էր վերադառնում: Ես նրան երբեմն փող ու սիգարետներ էի տալիս: Վարձահատույց լինելու համար մի օր նա մեզ տարավ ուեստորան «Լյա Պոլկա դե Մանդիբուլ»: Տիրուհին սքանչելի կին էր: Դաշնամուր էլ կար: Ամենակարևորը դա «ծարավների» մի կատարյալ դրամատ էր. սեղանները խողովակներով միացված էին տակառիկներին ու հանախորդները, առանց մատուցողին սպասելու, սեղանի մեջտեղ դրած ծորակից լցնում էին գինին ու խմում: Ռեստորանից դուրս եկա առկապի հարբած: Ու քանի որ շատ հաճելի տեղ էր, տունս էլ մոտիկ,

սկսեցինք ընկերներով հաճախակի հանդիպել այնուհետ: Ջրուցում էինք, խմում, կատակում, յուրաքանչյուրս հանդես էինք գալիս մեր ռեպերտուարի նորությամբ: Այնուհետ էին Քրիստիան Մերրին, Ֆիլիպ Կլեյը, լինում էր նաև Հյուշ Օֆֆրիլ անունով մի տղա: Հարավամերիկյան ֆոլկլորի մեղեդիներ էր երգում ու ձայնը սվելի էր հանգած, քան իմը:

Միշտ շատ ուշ էինք վերադառնում: Այդ տարի էլ ձմեռը խրատաշունչ էր: Չյունը, անձրևը, սառնամանիքը իրար էին խառնըվել:

— Որտե՞ղ ես քնելու, — հարցրի Ֆիկոսին:

— Որտե՞ղ, պիտի «Բուս-Կոլումբ» վերադառնամ:

— Այս եղանակի՞ն, այն էլ ոտքո՞վ:

— Այո՛:

— Հիմարություններ դուրս մի տուր: Այս գիշեր կտեղավորվես մեր սենյակում:

Երեքով վերադարձանք «Ակրուպոլիս» հյուրանոցը: Գիշերային պահակը հազիվ ուշադրության արժանացրեց մեզ. ինչեր չէր տեսել իր կյանքում... Նա ընդամենը պատվիրեց աղմուկ չբարձրացնել:

— Եղած-չեղածը մի՞ անկողին է, — նկատեց Ֆիկոսը:

— Հա՛:

— Երեքո՞վ պիտի պառկենք:

— Չէ մի: Մի ծածկոց կվերցնես, կփաթաթվես ու մի տեղ կպառկես:

Փորձեց տեղավորվել բազկաթոռիկն, հետո արթոռի վրա, մի քիչ մոթմոթաց ու պառկեց հատակին:

— Կարծես պահապան շուն ունես, — կատակեց Էվելինը:

— Անտեր շուն, — ասացի հորանջելով:

— Անտեր շները ամենախելացիներն են, — վիրավորված բողոքեց Ֆիկոսը:

— Բայց հենց մոտենում ես դրանց, հաչում են, — ասացի, հանգցնելով լույսերը:

Չմեռը երկար էր. Ֆիկոսն հաճախ էր մեզ մոտ մնում: Ծածկոց ուներ, բարձ ու մոխրաման՝ նույնպես...

Մինչ ես քնած էի լինում, գետնին պառկած շատախառտ էր Էվելինի հետ ու ծխում շոգեքարջի նման: Նրանց փափառը սովորաբար քնեցնում էր ինձ, բայց երբեմն էլ արթնացնում էր, ու ես աղմուկ էի բարձրացնում: Էվելինը բողոքում էր. հենց որ իմ շրջապատում մի տարօրինակ, կատակչի տղայի էր հանդիպում, իսկույն օգտվում էր նրանից: Կողը ծեծված շան տեսք էր ընդու-

նում: Խորամանկ էր. շատ շուտ էր հասկացել, որ ինձ մտտ կուր-տիզանի իր տեղը պահպանելու համար պետք է կնոջս սիրաշա-հեր: Երբեք չէր հակաճառում նրան:

Ճլորանը, Ռիշարն ու ես մեկնեցինք Մարտկո հյուրախա-ղերի ու ելույթ ունեցանք գիշերային կարքերներում: Ժամուկես տևող այդ ելույթները կազմված էին հետևյալ կերպ: Ռիշարը բեմ էր մտնում, մի քանի պատմություն անում ու ներկայացնում էր Ճլորանսիին, որը հանդես էր գալիս իր երգերով: Հետո Ճլո-րանը նստում էր դաշնամուրի առաջ, ու Ռիշարը ներկայացնում էր ինձ: Ճլորանսի նվագակցությանը երգում էի, հետո ներկայաց-նում Ռիշարին, նստում էի դաշնամուրի առաջ ու նվագակցում նրա նմանակումներին:

Կասաբլանկա:

Այստեղ է, որ ես ունեցա կյանքիս ամենամեծ հաջողությու-նը: Հաջորդ օրը լրագրիչները անսպաստ գովեստներ էին շոռայում իմ հասցեյին:

Թեպետ շատ էի կարոտել Էվելինին, բայց համաձայնեցի աշ-խատել նաև Ալժիրում ու Թունիսում: Ու ճիշտ վարվեցի. «Մուլեն Ռուժի» այդ ժամանակվա դիրեկտորը՝ Ժան Բոշեն նկատեց ինձ «Կազինո դը Մարսկեզում» և առաջարկեց ելույթ ունենալ իր մտտ որպես գլխավոր արտիստ:

Վերադարձին մի ձեռք զգեստ պատվիրեցի Լապիդուսի մոտ ու ապառիկով գնեցի ամենավերջին մակնիշի ամերիկյան մի սով-տումեքենա:

Գրոհեցի «Մուլեն Ռուժը». հաջողություն: Սկսեցին ջերմորեն խոսել իմ մասին: Պայմանագրերի առաջարկները սկսեցին աշնան տերևների նման թափվել ինձ վրա:

Միգարն արտամեների արանքում, բարակ, մաշված բեղերով, խաղաղ ու կուշտ Բրունո Կոկատրիքան ընդունեց ինձ «Օլիմպիա- շի» վերևի հարկի իր գրասենյակում:

Խոնամ եմք իր հաջորդ ծրագրում կայանալիք իմ ելույթի մա- սին: Գիտեմ, որ սա կարևոր պահ է ինձ համար. հաջողություներ «Օլիմպիաշում» բավական կլինեն, որպեսզի ես ճանաչվեի ու ա- ռաջին քայլն անեի դեպի փառքի գագաթը տա՛նող այդ երկար, խճողված սանդուղքով:

Առանց թափ տալու բաճկոնի վրա ընկնող սիգարի մոխի- րը, Բրունոն ասաց.

— Ձեր երգացանկը, Ծա՛րդ, լավն է, բայց անտիպ մի երգ է ձեզ պակասում, մինչև հիմա չլաված մի բան, որը միայն ձերը լինի:

Վերադարձա Սեւ Ռոստոկի փողոցի № 18 սենյակս, որ նոր էինք տեղափոխվել: Էվելինը տանը չէ: Ուրեմն կարող եմ հան- գիստ նստել դաշնամուրի առաջ և աշխատել: Մատներս խփում եմ ատեղներին, մեքենաբար ինչ-որ ակորդներ եմ վերցնում, քրք- րում ուղեղս: Նյարդայնանում եմ: Ձեւ սիրում պատվերով աշ- խատանքը. մտքերս պետք է իրենք իրենց գան: Նրանք գալիս են, երբ իրենք ին ուզում:

Փնտրում եմ... Արդեւ մի տուփ սիգարետք եմ դատարկել: Աստված իմ, ի՞նչ գրեմ: Վեր ցատկեցի: Ահա մի լավ խորագիր: Բառերն ու նախադասություններն իսկույն սկսեցին հոսել: Գրում եմ, ջնջում, նորից գրում:

Երեք ժամ հետո վեր կացա. նոր երգը ծնված է ու ժողովրդ- դական բույր ունի: Դա կլինի իմ նորությունը:

**Երդվեցի վերջին օրով իմ կյանքի  
Քեզ սիրել մինչև օրը իմ վերջին:**

Ծրագրում հինգերորդն էմ հանդես գալու: Ինձ նվագակցելու է դաշնակահար Ժան Լեցցիան: Բայց և այնպես շքեղություն եմ թույլ տալիս ու իմ հաշվին չորս ուրիշ երաժիշտ հրավիրում: Ստանալիք գումարս ծախսերը չի ծածկում. հեղինակների ընկերություննից կանխավճար եմ վերցնում: Այդ կողմից ապահով եմ:

Քանի մտտեմում է մեծ երեկուն, ավելի ու ավելի եմ ձգվում, լարվում: Ժան-Լուիի բերած լուրն անգամ չի հանգստացնում ինձ:

— Ամառային հյուրախաղերի մի պայմանագիր եմ կնքել քեզ համար: Ելույթ պիտի ունենաս Լեո Մարժանի ու Կրոդ Լութերի հետ: Հանդես կգաս առաջին մասի վերջում, ռեկլամն էլ քավակահին մեծ է:

— Փո՛ղը:

— Վատ չէ: Օրը երեսուն հազար ֆրանկ: Պայմանագիր կընքեցի մարսելցի Ժան Ռանգուլլիի հետ ու քանի որ ոչ մի գրոշ չունենք, որպես կանխավճար վերցրի պայմանագրով հաստատված գումարի կեսը:

Պրեմիերայի օրը ողջ Փարիզը բազմած է դահլիճում: Նըշանավոր հանդիսատեսների մեջ է նաև Ժան Ռանգուլլին: Նա եկել է տեսնելու, թե ով եմ ես: Ինձ հետ պայմանագիր էր կընքել միայն նրա համար, որ իմ մասին խոսում են: Բայց երբեք ինձ երգելիս չէր տեսել:

Ահա բեմի վրա եմ: Դեռ չսկսած, գայլորկայի երիտասարդները քաջավերում են ինձ: Սկսում եմ երգել: Ռանգուլլին գտնում է, որ ձայնս խոպոտ է. «Լարիեզիտ ունի», ասում է ինքն իրեն: Ես շարունակում եմ երգել, իսկ նա ողբաձայն ասում է. «Վա՛՛՛ն ես քո... չի կարող պատահել, որ այս հիվանդի հետ պայմանագիր կնքած լինեմ... եղած, չեղած փողս էլ կանխավճար տվի... Հեկոց որ սրան լսեն Մարսելում, ինձ պատուհանից դուրս կշարտեն»:

Առաջին երգից հետո սկսեցի սաստիկ քրտնել: Բայց ոչ այնպես, ինչպես Ռանգուլլին:

«Ա՛՛՛ քո... Ախր ես պիտի զգուշ լինեի: Ախր Ժորժետը (իդ կիճը) ասում էր. «Վատա՛՛ն ես, որ ճիշտ ես վարվում»: Օ՛, խեղճ իմ գլուխ...»:

Իր ողբով տարված նա չի նկատում, որ հանդիսատեսն ինձ լավ է ընդունում: Միակ բանը, որ նկատում է, այն է, որ երկրորդ երգից հետո ձայնս ավելի է խոպոտվում:



Ռանգուլլին գետնահարված է. «Վա՛խ, վա՛խ: Ելույթը չավարտված, որտեղ որ է կմտնի: Ինչ պիտի անե՞մ: Ինչպե՞ս ետ վերցնեմ փողերս»:

Հարվածը ծանր է: Ահավոր դժբախտ՝ չորս կողմն է նայում ու հանկարծ նկատում, որ հանդիսատեսը գոհ է ու ծափ է տալիս.

«Խանգարված եմ այս փարիզցիները. ում ասես որ ծափ չեմ տալիս»:

Հինգերորդ երգից հետո, տեսնելով, որ դահլիճը օվացիա է սարքել, Ռանգուլլին փորձում է մխիթարել իրեն.

«Վերջին հաշվով, եթե այս մարդը դուր է գալիս սրանց, կարող է դուր գալ նաև մարսելցիներին: Տեսնենք»:

Այդ վայրկյանից մյուսների մեծան ինքն էլ է սկսում ծափ տալ: Կարծես ինքն իրեն համոզվելու համար, որ հավատում է ինձ:

Ընդմիջմանը անհնար է մտնել հարդասենյակս: Ժողովուրդը խոնված է դռան առաջ: Մի բան, որ երբեք չէր պատահել: Համերգի առաջին մասի հայտնագործությունն էմ: Չորս կողմից հաճույսխոսությունների հեղեղ է թափվում գլխիս:

- Շքնեցուցիչ էր:
- Ես վստահ էի...
- Ձեր երգերը հիանալի են:
- Օ՛, ինչպիսի ապագա է ապստում ձեզ:

Հաճելի էր լսել այդ բոլորը, բայց գլուխս չեի կորցնում. ոչինչ չեի մոռացել: Նայում էի այդ շողոթորթող բերաններին, այդ ժպտացող դեմքերին, ու հիշում, որ դրանք նույն դեմքերն ու բերաններն էին, որոնք դեռ երեկ ասում էին.

- Երբեք հաջողության չի հասնի. սաղացնելու ապրանք չէ:
- Հո չի երգում, բղավում է:
- Սա ի՞նչ ձայն է... Ձայն էլ որ չեմ ասում այդ...
- Բղավելով հո չի կարելի իրեն լսել տալ:
- Իսկ երբ մեղմ է երգում, այնտեղ մարդ չկա (բարձր ծիծաղ):

— Այդ մարդը ինձ վրա կեղտոտ, անբարոյականի տպավորություն է թողնում:

- Քիչ է մնում բեմի վրա մի րաբանի:
- Այսպիսի արվեստը ընդունակ է ամեն ինչի: Ամեն ինչ հարմար է հանդիսատեսի վրա տպավորություն թողնելու համար:
- Կտեսնեք, աս մի օր բեմի վրա փուլ կգա:

Այդ երեկո այլ էր: Հանդիսատեսները այնքան լավն էին: Չգիտեմ անկե՞ղծ էին արդյոք: Ձեռն կարծում: Ավելի շուտ կարծում

եմ, որ նրանք վախենում էին սխալվել ու խայտառակվել այն դեպքում, եթե մի օր հաջողության հասնեի: Նրանք բոլորը ուզում էին պատկանել այն մարդկանց թվին, որոնք հենց առաջին երկնային կանխագուշակեցին իմ հաղթանակը:

Ձեռքս եմ սեղմում: Նկատեցի, որ անկախ ինձանից սեղմում եմ նաև նրանց ձեռքը, ովքեր վատաբանում էին ինձ:

— Երգիչը նույնքան դիվանագետ պետք է լինի, որքան դեսպանը, — ասաց ինձ Բրունոն:

Անձամոթ դեմքերի այնպիսի բազմություն էր շրջապատել ինձ, հաճոյախոսությունների այնպիսի հեղեղ է թափվում գլխիս, որ հոգնած ու շշմած, չգիտեմ որ մեկի ձեռքը սեղմել, ո՞ւմ նայել, ո՞ւմ պատասխանել: Մերթ ընդ մերթ նայում եմ ծնողներիս, որոնք անկեղծ հուզված են: Նրանց հրմշտել, հարդասեցյալի անկունն էին բռնել: Վեր կացա ու, ճեղքելով սմոկինգների ու երկար զգեստների պատնեշը, ինքս իմ հերթին հրելով մոտեցա նրանց ու գրկեցի:

Էվելինը հանգիստ մի խմբից մյուսն էր գնում ու իր «սարանքը» գովաբանում: Ես ափսոսում էի երկու հոգու բացակայությունը՝ Աիդայի, որը դեռ Կանադայում է, ու Պիաֆի, որը գտնվում է Նյու-Յորքում: Բրետոնները ուրախ փայլում էին:

Վերջապես հարդասեցյալս դատարկվեց: Մնացի Էվելինի, Ժան-Լուիի, Կլոդ Ֆիկուսի և Ժան Լեցցիայի հետ:

— Ո՞ր ենք գնում:

— Կարծում եմ, որ ի պատիվ Էդիտի պետք է «Կլոշ դ'Օր» գնալ:

Պիաֆը իր պրեմիերաներից հետո այդ ռեստորանն էր առնում մեզ:

Լուրերը շուտ եմ տարածվում: Ինձ դիմավորեցին որպես հաղթողի: Բոլոր բարեկամներս այնտեղ եմ, լսել ու վատ օրերի ընկերներս, նրանք ովքեր հույսով եմ ապրում ու սպասում իրենց օրվան, ինչպես ես՝ մի ժամանակ: Բոլորը, բոլորը ներկա են: Խրմեցիներ, ընթերցիներ ու Էվելինի հետ տուն վերադարձանք:

Ծառ բան չունենք իրար ասելու: Բացի այդ, ես «նոկաուտի» մեջ եմ. շատ եմ հուզված, չեմ կարողանում քնել: Վեր կացա, Աիդային նամակ գրեցի ու նոր միայն քնեցի թարմ դափնիներիս վրա:

Ինչո՞ւ հանկարծ, ինչո՞ւ երկար տարիների դատնություններից ու մերժումներից հետո անսպասելիորեն երկինք բարձրացրին ինձ:

Լրագրողներից մեկը ասում է Ռասուլ Բրետունին:

— Ազնավուրը հաջողության հասավ, որովհետև փոխվեց:

— Ազնավուրը չփոխվեց, դուք փոխվեցիք,— պատասխաս-  
նում է Ռասուլը:

Իրոք որ չէի փոխվել: Չայնս, արտաքինս, հասակս, զգեստ-  
ներս, շարժումներս, երգերս՝ բոլորը, բոլորը նույնն էին:

Գուցե ժամանակ էր պետք, որպեսզի ընտելանային ինձ: Կամ  
գուցե ես պետք է ծայրահեղ հուսահատության մեջ ընկնեի, որ-  
պեսզի նրանք ընդունեին ինձ: Չգիտեմ: Ամեն դեպքում ինչ-որ բան  
էր պատահել, ու այդ բանը հնարավոր չէր վերլուծել. այնքան  
փոքր էր, այնքան անորսալի, որ պարզ չէր ոչ միայն ուրիշների,  
այլև ինձ համար: Իրոք, ի՞նչ կատարվեց... Գուցե այն, որ նրանք  
հանկարծ հասկացան, թե ինչպիսի ջերմեանդությամբ եմ աիրում  
իմ արվեստը: Ով գիտե...

Իրոք որ արվեստի հանդեպ ունեցած սերս ինձ երկար հան-  
գիստ չէր տալիս: Կանանց, օրինակ, աիրում էի, նրանց մեջ միջոտ  
փնտրում այն իդեալական ընկերոջը, որի հետ կկարողանայի  
կյանքս կատել: Բայց երբ հիմա հետադարձ հայացք եմ գցում ու  
մտածում այդ մասին, զգում եմ, որ ինչ-որ բան աղոտ կերպով,  
աւճախուսկարար, պաշքարում էր այդ իդեալական կնոջ պատ-  
կերի դեմ: Կին էի փնտրում ու գտնելուն պես տանել չէի կարո-  
ղանում: Խաղաղ կյանք էի ուզում ու տանել չէի կարողանում:  
Գլխիս մուրճի հարվածների կարիք էի զգում: Հիասթափություն-  
ներս ու հուսախաբություններս հեղինակ-բանաստեղծին տալիս  
էին այն ամենը, ինչ երգիչն էր սպասում նրանից:

Այսպիսով, յուրաքանչյուր սեր, յուրաքանչյուր հոգեմիտնակ  
բանի, նոտաների էր վերածվում:

Ես ինձ միակնասեր էի կարծում: Ասեմք այդպիսին էի, միայն  
սխալվում էի աիրոտս մեջ, քանի որ կնոջ սերը՝ երկրորդը, ծառա-  
յեցնում էի առաջինին՝ արվեստիս:

Կնոջը պաշտում էի մինչև այն ժամանակ, երբ ինձ համակում  
էր գրելու անգոսսայ ցանկությունը: Այդ պահին սովորաբար նա  
ստուովում էր իմ շուրջն ու զզվեցնում.

«Ի՞նչ ես գրում, աիրելիս»:

«Ես քո մուսան եմ: Դու չեիր կարող ոգեշնչվել առանց ինձ...»

Ամեն ինչ երգի թեմա է: Կարելի է երգել ամեն ինչի մասին:  
Այսօր դա նորմալ է թվում: Բայց այն ժամանակ իմ երգերը դժ-  
վար էր ռադիոյով անցկացնել...

Որոշակի մտքեր ունեի. անհիշելի էի գտնում այն, որ կարող

Են լինել «մերկ» կտավներ ու քանդակներ, անամոթ գրքեր, սիրո հանդուգն կիճողկարներ ու արգելվեին «բաց» սիրո երգերը:

Անք էինք անում երկուսով, հետո ուզում էի մեճակ մճալ.

— Լսավ կլիմի դուրս գաս:

— Ինչո՞ւ:

— Ուզում եմ մեճակ մճալ:

**Սիրուց հետո,**

**Երբ մարմիններն են ձուլված,**

**Սիրուց հետո,**

**Երբ շնչատությունն է կարճ:**

Հենց որ ծնվում էր երգը, մի տեսակ ազատագրված էի զգում ինձ ու անմիջապես վերադառնում էի նրան, որին իսկական, առաջնային սերս էի կարծում.

— Ինչո՞ւ ուշացար, որտե՞ղ էիր:

— Բայց չէ՞ որ դո՞ւ ասացիր, որ դուրս գամ:

— Ես քեզ ասացի բացակայել կարճ ժամանակով: Բոլոր պատրվակները լավ են քեզ համար...

Ու սկսվում էր անխոտափելի տեսարանը... Դա մեզ ցավ էր պատճառում, բայց այդ ցավն ինձ անկասկած անհրաժեշտ էր:

«Ես սիրում եմ միայն այն աղջիկներին, որոնց մեջ ինչ-որ մի բան կա,— ասում էի, իսկ այդ «մի բանը» պարզապես բարություններն են. երբեք հանգիստ ու երջանիկ չեմ զգացել ինձ խաղաղ ջրերում:

Ծնողներս հպարտաւնում են ինձանով: Ռադիոն միացրած, անվերջ լսում են ինձ ու չեն հոգնում: Երբեմն մայրս ասում է հորըս.

— Գնանք մի քիչ շրջենք:

Հայրս գիտե, թե ինչ է նշանակում այդ: Գնում ու հանդարտ նայում են աֆիշների, որ ողողել են Փարիզը: Մի հսկա աֆիշ դրված էր մեր տնից ոչ հեռու՝ «Մուլեն Ռուժի» մոտ: Գնում, երկար կանգնում են դրա տակ, նայում, նայում ու կշտացած տուն վերադառնում, հուսով, որ ազատ վայրկյան կգունեն իրենց մոտ անցնելու համար:

Երբ այցելում են նրանց, պետք է ամենայն մանրամասնությամբ պատմեն բոլոր այն լավ բաները, որ տեղի են ունենում իմ կյանքում: Երանք ջերմորեն միանում են իմ ուրախությունների, քանի որ իրենք էլ ինձ նման երկար ապաստեցին իմ վատ օրերի ավարտին:

Պատրիցիան մեծանում է առանց գրկանքների: Նա ունի իր էլեկտրոֆոնն ու ձայնասանկների հարկաբաժն: Այդ թվականների հրանք երեխայի քաշով մեկ ոսկի արժեին: Երբեմն նստում են դաջնամորի առաջ ու նրան սովորեցնում ջազի վերածած «Լուսնի լուսի տակ» երգը: Մայրս իր մոտ է պահում իմ յուսանդկարների փաթեթը, որ նվիրում է մասվաճառին, հացագործին, նպարակաճառին, ընկերոսիս աղջկան, ընկերոջ տղային ու տանտիրոջը, որ միշտ բարի է, անգամ այն ժամանակ, երբ ուշացնում ենք տան վարձը:

Ապագան պայծառ է երևում: Հեղինակային իրավունքներս բարեկեցիկ կյանք են խոստանում: Երբ հորս ասում են. «Պարոն Ազնավուր», նրանց տեղն է նստեցնում, ասելով.

— Ազնավուրը տղաս է, ես Ազնավուրյան եմ:

Իմ փառքով տարված, հայրս ավելի ու ավելի արքայական թելափողեր է բաժանում, բացատրելով.

— Հասկանո՞ւմ ես, տղաս, չեմ ուզում, որ ասեմ, թե դու մեծ փողեր ես վաճառակում ու ծնողներիդ թողնում չքավորության մեջ: Հաչ դերասաններն ինձ հանդիպելիս ասում են.

— Բարև, Վարպե՛տ: Ո՞նց ես, Վարպե՛տ:

Մեր ամենադժգոհ հարևանները կարծես մոռացել են, որ տարիներ շարունակ, գիշեր-ցերեկ ցավացրել եմ նրանց գլուխները՝ խուլի նման խփելով դաշնամորի ստեղծերին:

Ֆրանսիայում սկսում եմ ամուն համել: Փարիզում արդեն ճանաչված եմ: Ու մեր թաղում, հասուկապես մեր փողոցում, մեծ, հրոչակավոր արտիստ եմ:

— Սա նոր կուսոյո՞ւնդ է:

— Հա:

— Լսիր, բարեկամս, զահղեղ չի գնո՞ւմ:

Անհարմար եմ զգում: Փորձելով արդարացնել շքեղ համոզեճանքս, ասում եմ.

— Գիտե՞ք, մեր արհեստում ապրելակերպը կարևոր դեր է խաղում...

— Մի՛ արդարացիր, փոքրիկ, հո չես գողացել: Վատուկել ես:

Առաջին կուսոյումներս կարում էր Տեղ Լապիդուսը: Արդեն սկսում եմ մերժել այն պայմանագրերը, որոնց փողը քիչ է, կամ ռեկլամը պատշաճ բարձրության վրա չի գտնվում: Ժան-Լուիին, որն ընկեց կարճամետրաժ ֆիլմերով զբաղվել, որպես ինսպրեսորի փոխարինեց Ժակ Վերնոնը: Ժակին իր պարի կուրսերից հետո, ամեն երեկո թափառում էր մոդաֆիկ կաքարեներում, թաղի կինոդահլիճներում ու բոլոր այն վայրերում, որտեղ կարելի էր պայմանագիր կնքել ինձ համար: Սկսում եմ ոչ միայն պայմանագրեր ձեռք բերել, այլև՝ բարեկամներ ու կապեր արվեստի ասպարեզում:

Էվելինը հրճվանքի մեջ է: Ապագայի ծրագրեր է կազմում: Արդեն վաչելում է ոստերին գցած ապագա թանկարժեք մուշտակի ջերմությունը: Իրեն տեսնում է շքեղ զգեստով ինձ թեանցուկ արած Կաննի ֆեստիվալի երկար սանդուղքներից իջնելիս:

Նա պատրաստ է, պատրաստ՝ ընդունելու պրեմիերաների, շնորհավորանքների իր բաժինը: Պատրաստ՝ իմ տեղը պատասխանելու լրագրողների հարցերին: Նա արդեն գիտե, թե ինչ պրոֆիլով պետք է կանգնի ինձ, ներողություն, իրեն նկարելու եկած լուսանկարիչների ատաջ:

Սեճ Ռուստիկ փողոցի վրայի իրար վրա դարձած անկողին-  
ներով երեք մետր լայնք ու երեք մետր երկարություն ունեցող  
մեք փոքրիկ սենյակին շուտով փոխարինեց գեղեցիկ թաղամասում  
գտնվող մի շքեղ բնակարան: Նա իրեն տեսնում էր ման աճողիկ-  
վարների մոտ ու պատկերասրահներում:

«Օլիմպիայի» երեք շաբաթ տևող փառավոր ելույթն ավարտ-  
ված է: Կատարում են Ռանգուլլիի հետ կնքած պայմանագիրը:  
Պրովինցիայի հանդիսատեսն էլ իր հերթին ծանոթացավ Փարիզի  
նորելույն արտիստին: Գործերն լավ են գնում: Նույնիսկ շատ լավ:  
Ուսիս են խփում, ժպտում... Բոլորի համար են «Այդ գիլ Ծարլն»  
են: Ժան Ռանգուլլին ձեռքերն է շփում ու ասում.

— Գրողը տանի, ի՞նչ հոտառություն ունենում...

Կաննոն ենք: Տեղավորվեցի շքեղ հյուրանոցի ընդարձակ մի  
սենյակում: Անհանգստություններն սկսվեցին. ի՞նչ թեյադրամ  
պետք է տալ ինձ ուղեկցող տղային: Եթե քիչ տամ, ժառ կկար-  
ծեն: Ծատ տամ՝ չտեսնորելույն: Աչքերն կկոցեցի, ձեռքն անհույս  
մտքի գրպանն ու ինչ ընկալ ափիս մեջ, տվի: Խոր ընդգծված  
ռեպերանան ու ներողամիտ հայացքն ինձ ասացին, որ դեռ շատ  
բան ունեն սովորելու:

Վերջապես սենյակում մեկնակ են: Մոտեցա պատուհանին:  
Ծովի վրա բացվող տեսարանը հիանալի է, բայց և տվածս փողն  
էլ վատ չէ: Գուցե ինչպես առաջ, պետք է բավարարվեի բակ  
դուրս եկող պատուհանով: Դե լավ, գրողի ծոցը կորչի ժառու-  
թունը: Ուսումնասիրեցի լողասենյակը՝ գրեթե երկու անգամ  
ավելի ընդարձակ է Փարիզի այն սենյակից, ուր ասրում ենք էվե-  
լիմի հետ: Ընկալույթն վերցրի ու մի ձայնով, որ կուզենայի վառան  
ու թեթև հնչեր, խնդրեցի ճանապարհներս վերն բերել: Հետո  
տեղավորվեցի բազկաթոռի վրա ու սիգարետը շուրթերիս սպասե-  
ցի: Ծամպրուկներս բերին: Նորից թեյադրամ տվի: Տղայի հա-  
յացքն այս անգամ դժգոհություն, գրեթե արհամարհանք էր ար-  
տահայտում. քիչ են տվել... Պետք է անպայման սովորել ընդուն-  
ված չափը: Ոչինչ, դա էլ կլինի:

Ծամպրուկս բացեցի, հանեցի, կախեցի քեմական զգեստս,  
իրերս դասավորեցի հնարավորին չափ շատ ժամանակ տրա-  
մադրելով, հետո նորից նստեցի բազ-ոցի չափ մեծ բազկաթո-  
ռին ու նորից սկսեցի ծխել: Սպասում են: Բայց ինչի՞ չգիտեն:  
Սկսեցի ձանձրանալ, հետո հանկարձ գայրացա.

«Ուրեմն այսպես, միլիոնատիրոջ մման բազմել են պաշտոնում  
ու ձանձրանում են»: Պետք է գրադվել ինչ-որ բանով: Ծովափ գը-

ճալու մասին խոսք լինել չի կարող, մանավանդ մեճակ: Մեծ կյանքը, առանց գեղեցիկ աղջկա, մեծ չէ: Ինձ պետք է տեսնեն նրա հետ ու հարցնեն. «Ո՞վ է այդ գեղեցկուհին, որ Ազնավուրի հետ է»: Ինչպես Ռոջն էր ասում, «պետք է միացնել օգտակարն ու հաճելին»: Նա ինձ կերջանկացնի, մյուս կողմից էլ ոճկամ կանի:

Ուրեմն: Դե լա՛վ... Նստեցի սեղանի առաջ ու արի աչք, ինչ միջտ արել եմ՝ աշխատեցի: Հանեցի թղթերս, հանգերի բառափանը դրի կողքիս, ուտելն ու խմելը մոռացած, անդադար ծխեցի ու աշխատեցի:

Երբ գլուխս բարձրացրի, արդեն գիշեր էր:

...Հյուրախաղերը շարունակվում են: Զգում եմ, որ արդեն «աստղ» եմ դառնում: Փողոցում տղամարդիկ շուռ են գալիս, նայում ինձ: Կանայք ինքնագրեր են խնդրում, մյուսները ինձ հանդիպելիս, երգերիցս մեկն ու մեկն են քթի տակ երգում, հասկացնելով, որ ճանաչել են ինձ: Բաց ոչ մի բան հեճնց այնպես չի տրվում: Ռեստորաններում հաշիվ փակելիս հերս անիծում են, խանութներում բարձրացնում են անպրանքների գինը:

Ակտում եմ նամակներ ստանալ անծանոթ մարդկանցից, ոքունք փող են խնդրում: Սրանք «աստղ» դառնալու նախանշաններ են:

— Հենց որ սկսեմ քեզից փող ուզել կամ գողանալ,— զգուշացրել էր ինձ Էդիտը,— նշանակում է դու ճիշտ ճանապարհի վրա ես:

Կամաց-կամաց վրա են տալիս շողոքորթ տգրուկները, իմ հաշվին ոստող-խամոլները, նրանք, ովքեր երբեք ձեռքները գրրպանները չեն տարել, նրանք, ովքեր ճանաչում են Փարիզի ամենագեղեցիկ աղջիկներին ու պատրաստ են միջնորդ ծառայել, բողոք սնանկները, ձախողակները, ծուլները, անշնորհները... Մի խոսքով, բոլոր մակաբույծները:

Աստիճանաբար, շոքված ու վարակված փաշայի նման բազմում եմ նրանց մեջ: Ես աքլոր եմ, սիրամարգ, «պիժոն», միամիտ, հիմար: Մոռացած շատ անկեղծ, շատ փափկանկատ իսկական բարեկամներիս, հրճվում եմ, փքվում կուրտիզանների շրջապատում:

**Եվ ես որպես բարիք  
Հայտնում էի կարծիքս,  
Որը ճիշտ էի գտնում,  
Անբռնազբոս կերպով աշխարհը դատելիս:**



Տասնչորս հոգի են նրանք, ովքեր զարթնեցրուս պես ինձ իրենց գիրկն են առնում ու բաց թողնում միայն անկողնում տեղավորելուց հետո: Չեմ չափազանցնում, հաշվել եմ. տասնչորս հոգի են նրանք, ովքեր պատ են կազմում ու իմ հանգիստը սալահովելու պատրվակի տակ շեն թողնում որևէ մեկը մոտենա ինձ:

Նամակներս կարդում են ինձանից շատ ու դիտմամբ տեղյակ չեն պահում, երբ մի բարեկամ, մի հին բարեկամ, իսկական բարեկամ, փորձել է զանգ տալ կամ դուռ թակել:

Ես արդեն սեփական կարծիք չունեմ. իրենք են հուշում պատասխաններս: Էլ երկչուտ չեմ, ոչ էլ վայրենի կամ միայնակ: Նրանց ներկայությունը վատահոսություն է տալիս ինձ: Բռնակալ եմ դառնում: Այդ բողբոջ տնեց մի քանի ամիս, մինչև այն օրը, երբ «Վիլյա դ'Էստի» ելույթից հետո նրանց հետ նստած կաբարեի խոհանոցում, գարեջուր էի խմում: Այդ սովորությունը ժառանգել էի Էդիտից:

Այդ գիշեր, մինչ նրանք գրուցում էին, մի լրագիր ընկավ ձեռքս, որտեղ ինձ վերաբերող հոդված կար: Հոդվածը չար չէր, բայց նրբորեն հասկացնում էր ինձ, որ երես եմ ատել: Այդ ինձ տակն ու վրա արեց. վճռեցի մեծակ տուն վերադառնալ:

Տասնչորսը միանգամից ոտքի կանգնեցին.

— Ի՞նչ պատահեց, Ծա՛րլ: Հիվա՛նդ ես:

— Վիրավորեցի՞նք քեզ:

— Ի սեր սատճո՞ւ, ասա՛. մե՞նք քո բարեկամներն ենք...

— Գիտե՞ս, որ մեզ հետ վախճանալու բան չունես:

Կանգնած եմ դռան շեմին:

— Բան չկա, տղաներ, ձեզ մի տանջեք: Հոգնածությանն նուրբ է... Բարի գիշեր, լավ գվարճացեք:

Արագ դուրս եկա, քանի դեռ չէին առաջարկել ուղեկցել ինձ: Նետվեցի տաքսիի մեջ ու անա տանն եմ: Երկար ժամանակ է, ինչ միայնակ չեմ մնացել: Ու ես, որ հազվադեպ եմ գննում ինձ, նստեցի հանգելու առաջ, երկար նայեցի ինձ ու եկա այն եզրակացության, որ փայլուն չեմ: Սկսեցի ինքս ինձ խոսել, մի բան, որ հաճախ էր պատահում: Ինքս ինձ հարցեր տվի ու պատասխանեցի:

Ա՛յ քեզ բան... Գրիչ վերցրի, որ ուրիշներին դատես, ի վերջո ինքս ինձ դատապարտեցի:

— Ի՞նչ հիմարն եմ:

Երկու գնացքների, երկու նավահանգիստների,  
 Ինձ Նյու-Յորքից Սինգապուր տանող  
 Երկու ինքնաթիռների միջև,  
 Ես մտքով վերադառնում եմ դեպի անցյալը,  
 Անցյալը, որ մերն է  
 Եվ որի ձայնը լսում եմ միշտ:

Էվելինը երգում է Թուրքիայում, ես՝ Պորտուգալիայում: Նա  
 Եգիպտոսում է, ես՝ Մարոկկոյում: Նա վերադառնում է Կիոնից,  
 ես մեկնում եմ Եվելյադիա: Իրեն հետո տանելու միջոցներ չունեն:  
 Ասեմք ինքը չի էլ ուզում:

Այնուամենայնիվ, հաջողեցրի՞նք հանդիպել Մարսելում: Կա-  
 րոտի առաջին պահն անցնելուց հետո սկսեց դժգոհել իր վիճա-  
 կից:

— Ազնավորի սիրուհին եմ ես, Ազնավորի սիրուհին, ահա  
 թե ով եմ ես: Կարծում ես դա մեծ պատի՞վ է կ'նոջ համար:

Նա չի տրտնջում. հարձակվում է:

— Իհարկե, նման բաներ հասկանալը քեզանից վեր է...

Ես ինձ լավ եմ զգում այսպես, ազատ միության մեջ: Սակայն  
 այդ գիշեր նա ասաց այնպիսի խոսքեր, որ հուզեցին ու փափ-  
 կացրին ինձ: Հետո վախճնում էի կորցնել նրան: Վախի այդ ըզ-  
 գացումն ապրում ես, երբ շատ ես սիրում: Ես սիրում էի Էվելինին,  
 սիրում էի նրա արծաթափայլ մազերը, կանաչ հաշացքը, հյութեղ  
 շուրթերը, ներդաշնակ մարմինն ու երկար, հեզանկուն, նշարդաչին  
 սրունքները:

Ամուսնացանք: Սիրող զույգը օրինականացրեց իր հարաբե-  
 րությունները ու անլեզավ անցյալը դարձավ լեզավ ներկա:

Չնայած որան, ոչինչ չփոխվեց. ես իմ հերթին շարունակեցի ճանապարհորդել, Էվելինը՝ իր: Չմեռը նա դիմավորեց Մեծնում, իսկ հիմա Սեն-Տրուպեզի լողափերն ու գիշերային կաբարետներն էր հայտնագործում, ուսումնասիրում: Նա իր հանդիպումներն է բազմապատկում, ես՝ կիրովետրերս:

Գիտեմ, նման վիճակին ոչ մի ընտանիք չի դիմանա: Ոստի, Վիշիյում մի փոքրիկ դերոմ նկարահանվելուց հետո, ուր երգերիցս մեկն էի կատարում, ավտոմեքենայով սլացա «Կոտ դ'Ազյուր»: Ելույթ ունեցա Մանդոնում ու մի քանի օրով ազատ եմ. որոշեցի գնալ Սեն-Տրուպեզ՝ կնոջս մոտ:

Առաջին հարվածը զգացի ձախ կողքիս: Ցա՛վ... Ո՛չ, ցավ չեմ զգում... Մի քիչ շնած եմ: Այդքանը: Մնացածը նորմալ է:

Երբ տեսա բեռնատար մեքենան, արդեն ուշ էր, ինչքան ուժ ունեի, կառչեցի դեկից, չօգնեց. ինչ-որ թրիակոցներ լսեցի, քիթս և ճակատս ուժգին դիպան ապակուն: Ծնկներիս վրա ինչ-որ ծանրություն զգացի, ու մի երկաթալար մխրձվեց ազդրիս մեջ: Հիմարաբար: Հիմարաբար մտածեցի. «Միայն թե քիթս ջարդված չլինի»:

Փորձեցի աջ ձեռքս բարձրացնել. չի լեկթարկվում: Փորձեցի ձախը, ոչ մի շարժում: Հայացքս դանդաղ ցած սահեցրի ու տեսա, որ ժամացույցիս շրթան կախված է դեկից, որի սունին ծոված է: Սարսափած չեմ, գոնե առայժմ: Նկատեցի, որ արմունկիցս առատ արյուն է հոսում: Մեքենայի կառավարման պոլտը ընկել է ազդրերիս վրա: Ահա ծնկներիս ճնշող ծանրության պատճառը: Այստեղ էլ առատ արյուն է հոսում: Վարդագույն մշուշի մեջ նշմարում եմ այն մարդկանց, որոնք շրջապատել են մեքենան: Մեկն ասաց, «Բոլորն էլ մահացել են»: Չայն եմ տալիս. «Ֆիկուս... Լեցիա...» Պատասխանեցին:

- Ի՞նչ վիճակումն եք, — հարցրի:
- Ձեռքս ցավում է, — առաջինը պատասխանեց Լեցիան:
- Իսկ դո՞ւ, Կլոդ:
- Գանգա ճգմված է:

Չնայած վիճակիս, մտածում եմ, որ ըստ սովորության չափազանցնում է: Երևի գլխի վրա ուռուցք է առաջացել:

Արդեն կամավոր օգնություն է կազմակերպվում: Անձանոթ մարդիկ կարողացան ծոված երկաթների միջից դուրս քաշել ու դեկիցներին: Բայց ես դեռ անշարժ մնում եմ կառավարման պոլտի մոտ: Մի քանիսը փորձեցին ինձ էլ դուրս բերել, բայց նրանց յուրաքանչյուր շարժումը ցավի ճիչ էր խլում ինձանից: Հիմա ար-

դեմ գիտեմ, որ երկու ձեռքերս էլ կոտրված են, իսկ ոտքե՛րս, տեսնենք: Առաջժմ պետք է դուրս գալ այստեղից:

Ինչ- որ մեկը գլուխը մտցրեց մեքենայի մեջ: Կրան ասացի.

— Բարձրացե՛ք կապոտի վրա ու կառավարման պուլտը դեպի ձեզ քաշե՛ք: Ուշադիր եղե՛ք, ապակիները չպատահուտեմ ձեք ձեռքերը:

Անձանոթը մի ուսուցանով թոսավ կապոտի վրա, ու պուլտը դեպի իրեն քաշեց: Բայց անհարմար դիրքի պատճառով պուլտը կարողացավ բարձրացնել միայն մի բանի սանտիմետր ու բաց թողեց ազդրերիս վրա: Ռոնացի: Ցավը տարածվեց ողջ մարմնովս մեկ ու ցնցումից ջարդված ձեռքերս սուկալի ցավել սկսեցին: Երկրորդ մարդը բարձրացավ կապոտի վրա: Քրտինքի կաթիլները դանդաղ հոսում են աչքերիս մեջ ու սահում դեպի շուրթերս: Այնպես եմ հեռւմ, որ անկարող եմ արգելել երկու փրկարարներին՝ նորից տանջել ինձ. երկուստով տեղից պոկեցին ինձ ճնշող ծանրությունն ու այս անգամ ավելի բարձրից բաց թողեցին ինձ վրա: Ցավն այնպես է խեղդում ինձ, որ բղավել անգամ չեմ կարողանում: Երևի դիակի նման ապիտակ եմ, բայց դա չի խանգարում, որ Կլոդ Ֆիկոսը կռահու ինձ վրա ու հարցնի.

— Ո՞նց ես, Ծարդ:

«Թշվառական, հիմարի մեկը,— ասացի մտքումս,— չես տեսնո՞ւմ վիճակս»: Ուզում էի մի լավ անպատվել, երբ տեսա, որ այդ երկուսը պատրաստվում են կրկնել իրենց համարը պուլտի հետ: Մի ցանկությունն ունեմ միայն. թող ոչ մի բանի ձեռք չտան, թող մե՛նակ դուրս գամ տակից:— «Ես ինքս», բղավեցի, բայց ձայնս մի կարճ շունչ էր լուկ: Փառք սատճո, այնուամենայնիվ լրեսեցին ինձ, զարմացան, բայց հնազանդվեցին:

Պիտի փորձեմ դուրս պրծնել առանց որևէ մեկի օգնության: Դանդաղ, սանտիմետր առ սանտիմետր, անսահման զգուշությամբ դիմելով միայն մարմնիս օգնությանը (ձեռքերս ջարդված ու խղճուկ կախված են) հաջողեցրի դուրս գալ մեքենայից ու մի կերպ մնալ ճակների վրա:

Հիշում եմ, Լեաիան մի թեթև նվվում էր. մատն էր ցավեցրել: Երևի մտածում էր. արդյո՞ք դեռ կկարողանա դաշնամուր նվագել: Ինչ վերաբերում է Ֆիկոսին, մի խուժք բացթերաններով շրջապատված, որունք խղճահարված մայրւմ էին իրեն, խոտերի մեջ փոխված խոխուացնում էր, կարծես հոգին ավանդելիս լիներ: Հետագայում բժշկական օգնությունը պարզեց, որ ամենաթույլ վրճարվածքը նա է առացել՝ քթի տակ փոքրիկ քերծվածք:

Պատկեցի մեջքիս: Ականջներիս մեջ դեռ վթարի աղմուկն

է, մեքենայի անփութեան անփութեան անփութեան: Լուտ եմ: Զգում եմ, որ ջարդարան-  
չուր եմ եղել, բայց դեռ ունի որ հարկն է չեմ տանջվում, հասկա  
ե՞րբ եմ ուժեղ ցավ զգալու: Չեմ համարձակվում շարժվել: Սչ-  
քերս չորս կողմ եմ ածում ու դիտում ինձ շրջապատող մարդ-  
կանց: Մեկն ինձ ասաց.

— Ուտիկանությունը անազանգված է: Մի մտահոգվեք: Ուր  
որ է շտապ օգնությունը կհասնի:

Սպասում եմ: Ծտապ օգնությունը չի հասնում: Մեկն ասաց.  
«Հո չեմք կարող թողնել, որ այստեղ մեռնի»: Մեկ ուրիշը որոշեց  
ինձ դնել մեքենայի մեջ ու կրիկիկա տեղափոխել:

Վեր կենալն ու ձեռքերս անօգնական կողքերից կախված մե-  
քենա նստելը հեշտ գործ չէ: Ինձ օգնում եմ: Բղավում եմ: Մի տա-  
սը ֆիլոմետր գնացիք: Անձանոթ վարորդս վախենում էր, որ  
շունչս փչեմ հենց իր մեքենայի մեջ ու չոր-չոր անդադար կրկնում  
էր. «Սխալ ուղղությամբ եմք գնում»:

Իրոք որ պահում էիք առանց իմանալու, թե ուր: Հանկարծ  
նանապարհի եզրին կանգնած շտապ օգնության մի մեքենա տե-  
սանք:

Ցավս, որ մինչ այդ գնալով անտանելի էր դառնում, միանգա-  
մից պոռթկաց ու տարածվեց ողջ մարմնովս: Զգիտեմ ինչպես  
հայտնվեցի շտապ օգնության մեքենայի մեջ: Մի քույր ինձ փա-  
թաթեց ծածկոցի մեջ ու վերից վար կապկպեց մարմինս, որպեսզի  
թեքս անօգնական դեսուդեն չնոնվեն: Մեքենայի շշակը միաց-  
րած՝ հակառակ ուղղությամբ 50 կիլոմետր արհնք մինչև հասանք  
Բրիկոյի հիվանդանոցը: Մամուլի ներկայացուցիչները անհամբեր  
ինձ էին սպասում: Մշուշոտ հայացքով նկատեցի լուսանկարիչնե-  
րին ու ժպիտ սարքեցի. մասնագիտությանս պահանջն է: Ընդու-  
նարանում ցավս այնքան սաստկացավ, որ քույրը ստիպված էր  
թմրադեղ սրսկել, բայց չօգնեց: Մինչև անկողին հասնելս ուշա-  
թափվեցի: Մինչ այդ հագիվ հասցրի խնդրել, որ կատարվածի  
մասին տեղեկացնեն ընտանիքիս, որը Կաննում էր գտնվում, ու  
կնոջս, որ Սեն-Տրոպեզում արևի լոգանք էր ընդունում:

Զարթնեցի, և... կզակից մինչև գոտկատեղ գիպսի մեջ եմ:  
Թունքս առաջ պարզած հանգչում եմ ծանր հեղափոխության վրա  
այնպիսի դիրքով, կարծես հենց նոր սիրտ մի երգ եմ երգել-վեր-  
ջացրել:

Անկախ դրանից գրում եմ. կապանքներիցս ազատվելուց հե-  
տոն պետք է անմիջապես փող աշխատել ու մարել բոլոր տեսա-

կի պարտութեան, որ գոյացել էին կրիմիկայում պատկած ժամանակ:

Թևերս դեռ գիպսի մեջ են, բայց արդեն կարող են հեռանաններից վեր բարձրացնել: Խնդրել են անկողնու մեջ նստակապ հիշեցնող մի հարմարանք տեղաւորել, վրան՝ թղթի մի ստվար կապոց: Թևերս պարզած, մատիտը մատներին ծայրին, գրում են: Հարմար չէ: Նույնիսկ շատ հոգնեցուցիչ, բայց վիճակս մոռանալու համար ստիպված են գրել:

«Օլիմպիայի» հետ կնքած պայմանագիրս ինքնըստիներյան չեղյալ է համարված:

Բժիշկներին հարցրի, թե արդյոք թևերս կունենան իրենց նախկին ուժն ու ճկունությունը, պատասխանեցին, որ ոչ: Այդ հայտնությունը մի պահ գետնահարեց ինձ, բայց որոշեցի չհամարձակուիլ...

Երբ սենյակում մեռակ են մնում, բժիշկներից ու հիվանդապահներից թաքուն, վեր են կենում, կախվում են պահարանից ու փորձում են մի թեթև ձգվել, վերակենդանացնելու համար թևերիս մկանները, որոնք թույլ-թույլ կախված են իրենց կապանքների մեջ:

Առօրյա պետքերս հոգալիս մերժում են ուրիշների օգնությունը: Բայց ստամներս մաքրելու ու հագնվելու վրա կորցնում են ստավորովս մի զգալի մասը:

Ֆիկտսն ինձանից ոչ մի քայլ չի հեռանում, պատրաստ՝ կատարելու բոլոր հրամաններս ու քնահաճույքներս: Ես էլ ինձ չեմ գրկում նրա ծառայություններից, քանի որ այդ է նրա կոչումը, ու դա իրեն դուր է գալիս: Նա գիտե, ես՝ նույնպես, որ իր անձնորաց ծառայությամբ ձեռք կբերի իմ երախտապարտությունը ու մի պատվավոր տեղ կստանա բժնողների իմ փոքրիկ դրախտում:

— Ծարս՞ւլ ես, Ծա՛րդ:

— Այո:

Վազում է առաջին հարկի խոհանոցն ու վերադառնում է սկուտեղով: Սկզբում հիվանդապահուհիներն ու սրահի աղջիկները ուզեցին ազատել նրան այդ պարտականություններից, մանավանդ որ դա իրենց գործն էր: Սակայն Կլոդն ընդդիմացավ: Ինքը պետք է հսկի ինձ: Բժիշկներին անընդհատ հարցեր ու խորհուրդներ է տալիս:

— Ահա՛ ջուրդ, Ծա՛րդ:

— Սերսի:

Պատրաստվում է բաժակը ինձ մեկնել, հետո միտքը փոխում է ու ճակատին հպում:

- Հըմ... Ինձ թվում է շատ է սառը:
- Ոչինչ, տո՛ւր:
- Ձեռ վախե՛նում, որ ձայնադարերդ վնասվե՞ն. սառն է:
- Չահլե՛ս մի տար, ծարավ եմ:

Խմում եմ:

- Այդքան արագ մի՛ խմիր, Ծա՛րլ, լավ չէ:
- Ռադդ քաշիր:

Նեղացած գնում նստում է: ՈւՖ, վերջապես մի քանի լույս է կլոխ ու ինձ հանգիստ կթողնի: Քիչ հետո վեր է կենում և առուգում. վտանգավոր միջանցիկ քամի չկա՞ արդյոք: Խնամքով հարդարում է վերմակը, վերցնում խոզանակն ու սկսում է մազերս սանրել...

— Ի՛նչ ատժո՛ղ, Կլո՛ղ, նարիր տեղդ կամ գնա այստեղից:

Վիրավորված դուրս է գալիս: Հանգստացած հոգոց եմ հանում: Ես իհարկե կարող էի հրաժարվել նրանից, բայց նրա ներկայությունը ինչ-որ տեղ հաճելի է: Բացի այդ, ինձ արդեն դուր է գալիս, երբ մեկը հոգում է մանր պետքերս:

- Կլո՛ղ:
- Այո, Ծա՛րլ:
- Քո՞ր է գալիս:
- Հիմա...

Ֆիկուսը վերցնում է հյուսելու շյուղը, սահեցնում է գիպսի ու մաշկիս արանքն ու քորոս:

- Ո՛չ, այդտեղ չէ... Ավելի վեր:
- Այսպե՛ս, Ծա՛րլ:
- Այո, լավ է, շարունակի՛ր:

Ծնողներս, Պատրիցիան ու Էվելինը հաճախ են այցելում ինձ: Արևահար ու քարակած կինս առաջվանից ավելի գեղեցիկ է: Ու ամեն անգամ նրան տեսնելիս ողջ էությանը քնքշության աղիքներ են քարծրանում: Բայց կնոջը կրծքին տեղմելու համար ամուր թևեր են պետք...

Մի օր, հիվանդանոցից դուրս գրվելուց քիչ առաջ, Ֆիկուսը ինձ ներկայացրեց իր ընկերներից մեկին՝ Դեմի Բրունտին:

— Նա քեզ կծառայի որպես վարորդ, մինչև ինքդ վարել կարողանաս:

Դեմին շեկ, երկայնահասակ, չոր ու մկանուտ արծվաքիթ մի տղա էր: Թավ ձայն ուներ և հստակ աչքեր, որունք կարող էին և՛ ժպտալ, և՛ անգութ լինել: Գլուխը իսկական կոիվ անողի գլուխ էր ու չվնասված. մի բան, որ ասպացուցում էր մարտ մղե-

լու նրա վարպետությունը: Նա իսկույն դուր եկավ ինձ, ու ծառայության վերցրի: Ֆիկուսը մի հաշագք գցեց նրան, որը պարզ նշանակում էր. «Զնոռանա, որ իմ շնորհիվ ես այստեղ»:

Վերջապես հիվանդանոցից դուրս եկա: Բայց դեռ գիպսի մեջ եմ: Դեմին նստեց դեմիս, Ֆիկուսը տեղափոխվեց ետևում ու ահա հին, ծամոված «Ռեկոյով» տուն վերադարձանք: Մեկ ջղախանում եմ, մեկ վախեցում. ձեռքերս շարունակում եմ շենթարկվել ինձ: Հիշում եմ բժշկի խոսքերը.

— Նախկին շարժումներիդ նկունությունը չի վերականգնվի:

Հակասակ դրան, նստում եմ դաշնամուրի առաջ ու գիպսի մեջ ձգված, թևերս առաջ պարզած, անշնորհք շարժումներով փորձում եմ նվազել: Հեշտ չէ: Նույնիսկ սուսկայի հոգնեցուցիչ է: Բայց պետք է կարողանամ նվազել առաջվա նման:

Կարոտել եմ աշխատանքին, թեմին, գիշերային թափառումներին: Կարոտել եմ նաև Էվելինին, որը սկսել է ավելի հաճախակի երկարատև բացակայել...

Իրոք, Դեմին հրաշալի տղա է: Միշտ կողքիս է: Նա ինձ ընկերակցում է Բրեստոնների մոտ, ուր հանդիպում եմ ընկերներիս ու փորձում գտնել ինձ:

Խուզած գանգով, գիպսե թևերով, գունատ դեմքով ու փոս ընկած աչքերով, բոլորովին նայելու բան չեմ: Ռեստորաններում ու գիշերային կաբարեներում, որտեղ վթարից հետո չեմ երևացել (վեց անգամ պատկել եմ վիրահատության սեղանին), գրավում եմ մարդկանց ուշադրությունը:

Այդքան սպասված օրը եկավ. գիպսից ազատագրվեցի: Նստում եմ ինձ, աստված իմ, ինչ քարակ եմ թևերս, անուժ, շարժում անելու անկարող ու վարդագույն բծերով ծածկված:

— Իմ խեղճ Ծարլ,— Ֆիկուսը պատրաստ է լաց լինել:

— Մի քիչ մարզանք, ու ամեն ինչ տեղը կընկնի,—ասաց Դեմին, որը շատ հուզվողներից չէր:

Համաձայն եմ նրա հետ. ժամանակը չէ կանգնել ու ողբալ այդ երկու ձող հիշեցնող կմախք-թևերը: Ընդհակառակը, պետք է ձեռքերին ուժ ու կյանք ներարկելու միջոց գտնել, վերականգնել նրանց արտահայտչականությունը: Այո, թևերն անգամ արտահայտչականություն ունեն: Կանչեցի Ժան-Լուի Մարկեին:

— Կարող ես նորից պաշտանագրեր կնքել ինձ համար:

— Կկարողանա՞ս:

— Պարտավոր եմ... Իսկ դա ավելի կարևոր է, քան կարողանալը:

— Ալժիր մեկնելու առաջարկություն ունեմ: Բացի այդ, կա-



քող եւ խոսել նաև Կոկաստրիքսի հետ ու «Օլիմպիայում» ելույթ ծրագրել: Իմ կարծիքով շատ գործ կունենանա:

— Կարծո՞ւմ ես:

— Վստահ եմ: Վթարդ ապացուցեց թո ժողովրդականություն-  
ներ: Լրագրելուն անընդհատ թո մասին էին գրում:

Սկսեցի աշխատել: Դժգոհ չեմ, գործերս արագ լավանում են, քայց անձնական կյանքս օր-օրի վատանում է:

**Կարծում ես ամեն ինչ թուլատրվում է քեզ,  
Եվ վարվում ես ինձ հետ ինչպես խելքդ փչի:—  
Մեկ արարքդ զղջում, մեկ սկսում նորից,  
Սրտիս հետ վարվում ես ինչպես չար երեխա.  
Եվ դու երես առած այն մանկանն ես նման,  
Որ ոչ խաղի համար, այլ ջարդելու համար  
Խաղալիք է խնդրում:**

Կլոդ Ֆիկուսը շարքաչին զինվոր էր, ու զինվորական կշանքը սրտովը չէր: Ուղղագրական սխալներով լեռի-լեցուն երկար նամակներ էր գրում ինձ, ուր բացատրում էր, թե որքան զգվելի է անունդը, անկողինը՝ անհարմար, սպիտակելելներ՝ կեղտոտ, համազգեստը՝ վատ կարված, վերադասները՝ տհաճ ու անկիրթ, ընկերները՝ հիմար ու կեղտոտ... Նամակները անսխալաբար ավարտվում էին հետևյալ նախադասությամբ. «Ի՞նչ բախտավոր ես, որ պատկանում ես այն դասի մարդկանց, որոնք ազատ են զինվորական ծառայությունից»:

Դեռի՛ն, որ նամակները կարդում էր ուսիս վրայով, ուներ իր միակ եզրակացությունը.

— Տեղն է այդ հիմարին:

Փորձում էի պաշտպանել, բայց երբ խոսքը Կլոդին էր վերաբերում, Դեռի՛ն կատաղում էր: Պետք է ասել, որքան Դեռի՛ն տղամարդ էր ու կռվարար, նույնքան իր արդուզարդով անհասգքստացած Կլոդ Ֆիկուսը նուրբ ու կանացի էր երևում:

Ամիսներն անցնում են: Ուրբաթ մի առավոտ ծնողներիս բընակարանի վերևի սենյակում հետախոսք զանգեց: Զանգը Մեմից էր:

— Դո՛ւ ես, Ծա՛րլ... Կլոդն է:

— Ողջո՛ւյն, ի՞նչ ես անում Մեմում, ո՞նց ես:

— Մեր գումարտակը տեղափոխվել է Մեմ: Ինչ վերաբերում է ստողջությանն, վատ չէ, եթե չհաշվենք այն, որ չաղանում եմ: Այդ մեկը վատ է:

— Քիչ կեր: Չեմ կարծում, որ զանգ ես տվել, որպեսզի նիհարելու ուժիմ առաջարկեմ:

— Ծա՛րլ, ինձ քո օգնությունն է հարկավոր:

— Ասա՛:

— Այստեղ ձանձրանում եմ. կուզեմա՞յի արձակուրդ ստանալ ու մի քանի օրով Փարիզ գալ:

— Իսկ ինչո՞ւ կարող եմ օգնել:

— Անհապաղ մի հեռագիր տուր ինձ հետևյալ բովանդակությամբ. «Ծատ հիվանդ եմ, պետք էս՝ մայրդ»: Կարո՞ղ եմ հույս ունենալ, Ծա՛րդ:

— Կարող ես:

Դեմիկն, որ լսում էր խոսակցությունը, կատաղեց.

— Հասկանալի է, իհարկե ես եմ փոստ գնալու:

— Ծիջտ այդպես:

— Կսկսի հեռագրերով, հետո փող կուզի, վերջն էլ խավիարի ծանրոցներ: Չէ՞ որ այդ կեղտոտը շատ նուրբ ստամոքս ունի:

Այս հեռագիրն առաջինն էր տազնասպայից հեռագրերի այն շարքից, որ հետագայում վրա-վրա տալիս էի: Մեկ տառն էր մահանում, մեկ եղբայրն էր վթարի ենթարկվում, մեկ եղբոր աղջիկը ընկնում ոտքն էր ջարդում, մեկ հորեղբայրը անհասներ իրեն էր սպասում հոգին փշելու համար, կամ նշանածը նյարդային նոսր էր ունենում...

Դեմիկն փոստի մշտական այցելուն դարձավ: Ինչ վերաբերում է ինձ, սկսեցի մտածել. եթե Ֆիկուսի նման շատ զինվորներ կան քանակում, ապա մեր ասիմիանները սովորաբար անասպահով են: Գրեթե ամեն շաբաթվա վերջին Ֆիկուսը Փարիզ էր գալիս: Զինվորական կյանքը նրան չէր բուժել կուրտիզանի իր հակումներից:

Երբ առաջին անգամ ներս եկավ, մի դժգոհ հաշտացք նետեց վրաս ու ասաց.

— Մազերդ կեղտոտ են: Տեսնում եմ, որ իմ գնալուց հետո ոչ ոք այդ հարցով չի զբաղվել:

Ֆիկուսը անցավ իր նախկին պարտականություններին, ես էլ թույլ տվի: Վերջին հաշվով, եթե դա հաճելի է իրեն, ինչ կա որ...

— Երբ մի օր հոչակավոր արտիստ դառնամ, ես էլ կունենամ մեկը, որ զբաղվի ինձանով:

Գիշերները քարշ է գալիս կաբարեներում, իսկ ցերեկները ինձնից ու Դեմիկից մի քայլ չի հեռանում, ու զվարճացնում իր զինվորական պատմություններով:

— Զորանոցի կյանքը նույնքան զգվելի է, որքան ուղղիչ տան: Բաց ունի իր առավելությունը: Օրինակ՝ կարող ես փախչել:

— Հաճա՞խ ես փախչում:

— Գրեթե ամեն երեկո:

— Իսկ ո՞ր ես գնում:

— Երգում եմ կայսրանի մոտ գտնվող մի փոքրիկ կաթա-  
քիտում: Այսպիսով երգերս կարգի եմ բերում, մի քիչ էլ փող եմ աշ-  
խատում:

— Լսի՛ր, եթե կարողանում ես գլուխդ պահել, էլ ինչո՞ւ ես  
փնձնից փող ուզում:

— Ծա՛րլ, — ասաց Կլոդը խիստ ձայնով, — ամեն օր չէ, որ  
երգում եմ:

— Իսկ ինչո՞ւ:

— Որովհետև որոշ երեկոններ յիմում եմ «ծակում»:

— Որտե՞ղ:

— Պարզ ասած՝ բանտում:

Զինձառայությունից հետո ես նրան պատճառեցի իր կյանքի  
ամենամեծ ուրախությունը՝ ծանոթացրի Պիաֆի հետ: Կլոդը մի  
հայացքից դուր եկավ Էդիտին ու դարձավ նրա մշտական աջակ-  
լուներից մեկը: Երբ Էդիտի ու ինձ հետ դուրս էր գալիս, փքվում  
էր ու բարձրաձայն ասում, որ անցորդները լսեն.

— Ես աշխարհի ամենաերջանիկ մարդն եմ. գտնվում եմ իմ  
ամենամոտեցած երկու էակների մեջտեղը:

— Վերջ տուր հիմարություններիդ, — ասում էր Էդիտը:

Կլոդը բացարձակ կախարդված է. ինձ լքեց ու տեղափոխվեց  
Պիաֆի մոտ, դարձավ նրա աղախինը, մտերիմը, քարտուղարը,  
չար ոգին: Նրան ալկոհոլ, քնեցնող ու զարթնեցնող հաբեր ու նը-  
ման այլ մթերքներ էր մատակարարում, մի բան, որ Էդիտը օգ-  
տագործում էր վտանգավոր քանակությամբ:

Մի օր ջախջախված եկավ ինձ մոտ: Աչքերը կարծրած էին.  
լաց էր եղել:

— Էդի ի՞նչ է պատահել:

— Հեկեց նոր Էդիտին խնդրեցի ամուսնանալ ինձ հետ:

— Հետո՞:

— Հոհուաց:

Դեմիին խնդրեցի մի քանի օր մսկել Կլոդին. Էդիտի միան-  
գամայն հասկանալի մերժումը վտանգավոր նշարդային վիճակի  
մեջ էր գցել նրան: Գիտեմ, որ պատրաստ է անել ուզածդ հիմա-  
րությունը, և արեց... Էդիտի վշտից ախափվելու համար քարեկա-  
մական կասկ էր հաստատել ուն Ալեկի հետ: Մի օր Ծանգելիզետով  
ճեմելիս, չգիտեմ ինչ պատճառով, կոխվ է ընկնում նրանց մեջ:  
Մարդիկ նայում են. սրտնեղած Ալեկը լքում է Ֆիկուսին՝ ասելով.

— Գնա ձո՛ւ եփիր...

Կլոդը ուզում է հետաքրքրական երևալ: Ուզում է մի այնպի-  
սի արտակարգ բան անել, որ շարժի Ալեկի նախանձը ու գրա-

վի Պիսաֆի ուշադրությունը: Մի թաւառ ու մի ձու է վերցնում, գր-  
նում է դեպի Հաղթական կամարը, ձոսն ջարդում է թաւառի մեջ  
ու դնում «Անհաշտ գինավորի» կրակի վրա:

Չուն չեւիւրած, մի ուստիկան թաթը դնում է նրա վզակողօին...  
Կլոռը զանգ տվեց պահակատունից ու հարցրեց, թե ինչ անի: Ես  
խոստուացա հետաքրքրվել: Զանգ տվի մի ծանոթ փաստաբանի,  
որն ինձ նախագգուշացրեց, որ գործը հասարակ չէ, ու Կլոռ Ֆի-  
կուսը կարող է շատ թանկ վճարել իր ձվածեղի համար: Դատե-  
ցին. երեք ամիս բանտարկեցին:

— Կեղտոտներ, — բացականչեց Ֆիկուսը, — ես կրողութեմ:

Փորձեցի իստ պահել, բացատրելով, որ էծան է պրծել, որ գոր-  
ծը արդեն մեծ աղմուկ է հանել ու կարող է այնպիսի ծավալ ըս-  
տանալ, որ զոջա հետազայում:

Չկարողացա համոզել: Երկրորդ դատի ժամանակ շատ  
մարդ էր հավաքված:

— Նայիր, — ասաց ինձ Կլոռը հիացած, — մամուլի ճերկա-  
յացուցիչներն այստեղ են:

— Հետո՞ ինչ:

— Լավ ռեկլամ կլինի ինձ համար:

— Իմ կարծիքով դա շատ թանկ կնստի քո վրա ու լավ ռեկ-  
լամ էլ չի լինի:

— Բոլոր ռեկլամներն էլ լավ են, Ծա՛րլ, կտեսնես: Ընդհիվ  
այս միջադեպի, մի բեմադրող ռեժիսոր իր Ֆիլմում դեր կառա-  
ջարկի ու պայմանագիր կկնքի ինձ հետ:

Պայմանագիրը կնքվեց ինն ամսով... բանտի հետ: Ինձ նա-  
մակ է գրում, պատասխանում եմ ու ծանրոցներ ուղարկում: Նրա  
դորս գալուց հետո մի տեսակ խորթացել էիք իրար:

**Մեզ անցյալից մնում է  
 Լոկ ասխոսանք ու զղջում:  
 Մի սեր արդեն մեռած:  
 Ինչ էլ անենք հիմա, օտարներ ենք երկու  
 Մի հարկի տակ ապրող:**

Թեպետ կարոտով իրար գիրկ էինք նետվում, բայց կոխվն ան-  
 պակաս էր մեր մեջ: Նա ուզում էր իր կապերը պարտադրել ինձ,  
 թե ուզում էի տանել նրան դեպի իմ բռնեմը: Նա երազում էր իր  
 կարիներացի մասին, թե շարունակում էի ի՞նք: Նա սիրում էր խոր-  
 հուրդներ տալ, թե չէի ընդունում ո՛չ նրա խորհուրդները, ո՛չ էլ  
 քննադատությունը: Ես չէի սիրում նրա ջրջապատը, նա անտեսում  
 էր ինք: Նա ազդեցիկ կապերին էր հավատում, թե՛ աշխատանքին:  
 Նա ուներ ազդեցիկ բարեկամներ, թե՛ ոտախ ընկերներ: Նա հիա-  
 նում էր իմ երգերով, բայց որպես երգչի կամկածանքով էր նայում  
 ու որպես դերասան, անշնորհք համարում: Նա մոդայիկ կաբարե-  
 ներ էր սիրում, թե՛ վատ համբավի կաբարեներ: Ոչ սիրո, ոչ էլ  
 ընդհանրապես կյանքի հարցերում մեր հաշագքները չէին համ-  
 ընկնում: Անցնող տարիները ասրաստեցնում էին նրան, իսկ ինձ  
 ընդհակառակը՝ հանդարտեցնում: Ոչ մի հարցում չէինք զիջում  
 իրար, բայց յուրաքանչյուրս պնդում էր, որ ինքն է միայն զի-  
 ջում: Սիրում էի նրա թունդի զգացողությունը. ծիծաղում էր, երբ  
 կատակում էի:

Մեր բաժանումները հանկարծակի ազատագրումներ էին. եր-  
 ջանիկ էինք զգում, որ վերջապես մեկնակ ենք ու ազատ: Բայց  
 հենց հեռանում էինք իրարից, երկար նամակներ էինք գրում: Բա-  
 ժանումը մեզ համար ազատագրում էր, հանդիպումը՝ կոխվ: Ամեն

ինչ հարմար առիթ էր խանդի համար ու տեսարանները, իհարկե, հաճախակի իրար էին հաջորդում:

Նրա հաշվեհանդեսը հանդարտությունը ինձ համբերություննից դուրս էր հանում, իմ ժողովուրդը կատաղեցնում էին նրան: Կասկածում էր, որ ինձ է գոհաբերել իր կյանքի լավագույն տարիները, ես մեղադրում էի նրան, որ ծաղրում է իմ արվեստը: Նրա բարեկամներն ինձ վայրենի էին համարում, իմ բարեկամները նրան՝ ամբարտապան:

Երեխաների նման զվարճանում էինք ու կռվում հավաքարարների նման: Սիրում էինք իրար ու ստում: Մեր կյանքը ծիծաղից ու արցունքից էր շաղախված:

Մեր ամուսնություննից հետո Սեյ-Տրուպեզում ես նրան մի մոտորանավակ նվիրեցի: Բայց հենց անցավ ուրախության ամառը, ես սկսեց աշխույժ մեղադրել ինձ, որ ամուսնական մատուցի չեմ նվիրել:

Ի վերջո պայթեցի.

— Հեշտ չէ սահել ջրի վրա ադամանդե դահուկներով, — սասցի:

Ես սիրում էի նրա մեջ միայն այն, ինչ իրենն էր: Այսինքն այն ամենը, ինչ անտանելի էր: Իսկ ինչո՞ւ նա սիրեց ինձ, այդպես էլ չիմացա: Այդ երկար պատերազմում մեկն ու մեկը պետք է հաղթեր: Բայց վերջին հաշվով երկուսս էլ պարտված դուրս եկանք: Այդ պարտության հողի վրա, օգտագործելով իրեն գրածորոշ նամակներս, մի գիրք գրեց «Մեր պատմությունը» վերնագրով: Այսպիսով ապացուցեց, որ ինքը լավ հիշողություն ունի, իսկ ես... հուշեր:

Մեր ամուսնական ճաշերույթին, որը պահանջեց «Լա Մուսյեր դը Մոնֆոր-Լամորիում» կազմակերպել, հանկարծ ճչաց.

— Տասներեք հոգի ենք լինելու սեղանի շուրջը, դժբախտություն կրեիրի:

Դժբախտությունը վանելու համար, վերջին թուպեխն, մի հոգու էլ հրավիրեցի:

Երկու տարի անց մեր փաստաբաններն սկսեցին իրենց մըրցույթը:

**Մի երջանկություն, որ մեր սրտին խինդ էր պարզում,  
Մի երջանկություն, որը մեր սրտում աչքա՛ն տեղ ուներ,  
Կարո՞ղ է մեզնից հեռանալ հավետ՝  
Ջնջելով հետքն իսկ սիրո պարզևած նախկին հուշերի:**

**Ես չեմ կարող տունս մտնել,  
Քանզի այնտեղ անցյալն է իմ,  
Որ կանգնում է աչքերիս դեմ  
Եվ քայլ առ քայլ ինձ հետևում:**

Ահա դարձյալ ամուրի եմ: Արդարադատության պալատից վերադառնալուց հետո, ուր ծամաճոռություններ ու դատը խոսքեր փոխանակեցինք, նորից սուզվեցի ամուրիի կյանքի մեջ: Էվելինին Կորցրի: Կարող էի մխիթարվել, մտածելով միայն այն վատ օրերի մասին (նրանք շատ էին), որ անցկացրի նրա հետ ապրելիս: Սակայն հիշում եմ միայն այն լավ օրերը, երբ դեռ սիրող զույգ էինք: Այդ հիշողությունները տաջում են ինձ: Նույնիսկ եթե մեր սերը մահացած էր, միևնույն է, ամուսնալուծությունը խոր վիրավորանք ու վիշտ պատճառեց ինձ. վատը շատ էր՝ զգվելի խոսքեր, զգվելի ժեստեր... Զույգի վերջը տխուր պատկեր է:

Միայնակ եմ: Տառապում եմ: Փորձում եմ հարբեցողության տալ ինձ. նման հոգեվիճակներից դուրս գալու տարածված մի ելք, որը սակայն սուկալի գլխացավից բացի ոչինչ չի տալիս: Փորձում եմ վիշտս մոռանալ ուրիշի գրկում. մի սերը վանում է մյուսին: Սակայն սիրտ չունեմ:

Մի ելք է մնում միայն. նորից սուզվել աշխատանքի մեջ: Դե-  
նի հետ Բելգիա մեկնեցի: Նա հիմա քարտուղար-ադմինիստրա-  
տոր-ռեժիսորի կրկնակի պաշտոն է վարում. ստվերի նման հե-  
տևում է ինձ: Ինձ համար Դենին դարձավ ավելի շատ ընկեր, քան  
ծառայող: Սանաթանդ որ ես չեմ կարող ապրել ու աշխատել մե-  
կի հետ, որի նկատմամբ բարեկամական զգացում չեմ տածում:

Բոլոնելի հսկա «Հին Բելգիա» կարքարեմ, ուր հանդիսատես-  
ները խմում են ներկադացման ընթացքում, բերնեղերան լի է: Դահ-



լինում մի պտույտ կատարելուց հետո Դեմին եկավ ու կայծկլտուցող աչքերով ասաց.

— Սրահը լի է մեկը մեկից միտում աղջիկներով:

Ուրիշ ժամանակ այդ լուրը կոզկորեք ինձ, բայց հիմա... Անցյալի կարոտը դեռ չի փարատվել: Հաջողությամբ երգեցի: Այստեղ էլ չզգացի այն բավարարվածությունը, որ միշտ զգում էի, երբ ականջիս էր հասնում ծափահարությունների որոտը:

Դժբախտ եմ: Ու այդ մի՞նակը հաճելի է ինձ: Սկսում եմ վառուցել ինձ. ինձ արկոհողին եմ սովել:

Եվ այդպես ջարտանակվեց մինչև Բաքուերուն մեկնելը, ուր ելույթ ունեցա գալուս հաջորդ օրը: Այստեղ «մեղքերս» դուրս տրվին...

Հազիվ էի հարդասենյակ մտել, երբ ստաջին ցավեքը ակնեցին գալարել ստամոքսս: Բելգիական օրերը ուրախ էին, իսպանական ութ օրերը՝ տանջալի: Ստամոքսս ու աղիներս անդադար ցավում եմ. թանկ եմ վճարում բրյուսելյան գիշերների համար: Այնքան վատ եմ զգում, այնքան ճիվանդ եմ, որ մի որոշում կայացրի, որը և միշտ հարգեցի:

— Դե՛մի:

— Այո, Ծաղ:

— Այսօրվանից ոչ մի կաթիլ ակոհոլ... Դու հասկանո՞ւմ ես, ես պետք է ընտրեմ կամ ակոհոլը, կամ արվեստը: Ուզում էի հաջողության հասնել, հիմա այդ ճանապարհին եմ: Ծառ հիմար կլինեմի, եթե սուտ հաճույքների համար փչացնեմ ամեն ինչ: Վերջին հաշվով ակոհոլը ոչ մեկին լավ բանի չի հանգեցրել:

— Դու իրավացի ես,—ասաց Դեմին,— համաձայն եմ քո որոշման հետ: Բայց...

— Բայց ի՞նչ:

— Իսկ աղջիկնե՞րը:

— Մի կատակիդ: Սերը երբեք ոչ ոքի չի սպանել:

— Բո երգերում ուրիշ բան ես ասում:

**Հրաշալի է սերը, հեքիաթային է այն**

**Եվ չափազանց բարդ է բացատրելու համար:**

**Այցելում է սրտին, հեռանում է սրտից,**

**Մեր սերը իսկապես լուսնոտի է նման:**

**Ամեն ինչ անցնում է,  
 Ամեն ինչ՝ մեռնում,  
 Ես ստվեր եմ դառնում քո սրտում հիմա:  
 Սրտում, ուր ամեն ինչ նախապատրաստվում է  
 Մի այլ սիրո, մի այլ նվաճման համար:**

Մտածում եմ այն ամենի մասին, ինչ մի քանի ամիս է տե-  
 ղի է ոսնենում իմ կյանքում՝ ձայնագրություն, աղջիկ, նկարահա-  
 նում ֆիլմում, ձայնապնակ, հետո էլի աղջիկ, օր-օրի անող պաշ-  
 մանագրի առաջարկություններ, հետո մեկ ուրիշ աղջիկ, լրագրիչ,  
 որոնք փոքր անախորժություններս վերցնում ու մեծ դրամաներ են  
 դարձնում:

Առատ նամակներ եմ ստանում, լույս է տեսնում «Կլուբ Ազ-  
 նավուրը»: Դրանք իմ անող ժողովրդականության անառարկելի  
 նշաններն են:

Ծարունակում եմ ապրել ծնողներիս բնակարանի վերնի հար-  
 կում: Աիրան, ամուսնուց բաժանված, վերադարձավ Կանադայից  
 ու նշանվեց Ժորժ Կարվարեանց անունով մի երիտասարդ կոմպո-  
 ղիտորի հետ:

Արագ համբուրեցի քրոջս ու մեկնեցի Լիսաբոն համերգի: Վե-  
 րադարձի ճանապարհին ինքնաթիռի մեջ հանդիպեցի մի խումբ  
 ֆրանսիացի արտիստների, որոնք վերադառնում էին «Մար դել  
 Պլատայի» ֆեստիվալից:

Նրանց մեջ նա՛ է: Աստված իմ, ո՛րքան գեղեցիկ է... Ան-  
 կարելի բան է. այդքան հմայք, նման երկար ու շեկ մազեր, նման  
 նուրբ ու սլացիկ կազմվածք... Անթարթ նայում եմ: Սիրտս նորից

է սկսում բարախել այն շուրահատուկ ուրիշով, որ ունենում է նման դեպքերում:

Նա սովորական էակ չէ. նրա կենսագրությունը հարուստ է բազմաթիվ հաջողված ֆիլմերով: Մինչ այդ էլ էի հանդիպել նրան, բայց այն ժամանակ ամուսնացած էի: Հիմա օրի նման ազատ եմ:

Ինքնաթիռը սավառնում է: Վեր եմ կենում, մոտենում եմ Էստելլա Բլեյնին: Նա էլ է վեր կենում ու թեթև քայլերով գալիս է դեպի ինձ: Երկու սիրող սրտերի նման արդեն իրար ենք ձրգտում: Ծակառագիթն այնպես կամեցավ, որ ես նրան երկնքում գտնեմ:

**Ես սեր ունեմ սրտի չափով,  
Ցնծություններ՝ լեցուն ցավով,  
Ուրեմն խիստ բնական է,  
Որ և՛ վիշտը զգամ շատ խոր:**

Օդում մեր մատներն իրար են խառնվում, շուրթերը հավում շուրթերին, միմյանց սեր ենք շնչում: Երկրից հազարավոր մետրեր բարձրության վրա, մեռակ ենք աշխարհում, մեր մոր, անառիպ երջանկության հետ:

Փարիզում իրարից չենք բաժանվում: Ամենուրեք իմ սիրած կարարեներում ու գինեոներում միասին ենք, ես ու Էստելլան: Այստեղ ես իմ հոշակավոր դառնալու մշանները սկսում եմ պրտտեցնել գրուխս ու արբեցնում եմ ինձ: Ուր էլ գնամ, միջոտ մի սեղան կա հատուկ ինձ համար, վիսկիի մի շիշ իմ անունով, ու իմ վերջին ձայնապեակը, որը սկսում եմ նվագել, երբ հայտնում եմ, որ գալիս եմ:

Էստելլան վերջնականապես մտավ իմ կյանքը հեանց այն վայրկյանին, երբ Փարիզի Էկրանների վրա բարձրացավ իմ առաջին լուրջ կինոնկարը՝ «Գլուխը պատերին», որն ինձ «Էստելլադը կրիստալ» մրցանակը բերեց:

Այս անգամ, իրոք որ, փառքի ճանապարհին եմ, ու ոչինչ չի կարող կասեցնել իմ հաղթարշավը:

Օր-օրի շատացող բոլոր ընկերներս այդ եմ պնդում: Իսկ եթե ինձ մի ավելորդ ապացույց էլ էր պետք, ինձ՝ հիմարիս, որի սրճապարծությունը վտանգավոր չափերի էր հասնում, ապա այն տվեց Ժան-Պիեռ Մոքիյն, առաջարկելով Ժակ Ծարիեյի հետ նրկարահանվել «Որոնողներ» ֆիլմում: Էստելլան նույնպես դերաբաշքիման իր բաժինն ուներ: Ու ես նրա հետ ապրեցի մեր սիրո

վերջին գեղեցիկ օրերը: Հետո... Հետո ինչպես հաճախ է լինում, նրան կլանեց կինոդերասանուհու իր կարիերան, իսկ իմ կարիերան շարունակեց ինձ նետել մի քաղաքից մյուսը: Նա ճանաչեց՝ այլ վայրեր... Իմ աչքերը հանդիպեցին այլ աչքերի... Մեր ճանապարհները բաժանվեցին:

Չայնասյանակներս տարածում եմ ձայնս: Հաջողություններս անթիվ եմ՝ «Եկ, գլուխդ դիր ուսիս», «Զահեղություն», «Օ՛հ, մեռնե՛ք ե՛զ համար», «Մեր պատրանքների պալատը», «Սիրոսց հետո» երգերը տարածվում եմ ուղիղով: Միայն ինձ եմ լսում:

Ես՝ երկշոտս, հետզհետե դառնում եմ հպարտ ու ինքնավստահ:

Իմ երգերով հանդես եմ գալիս երգի մեծ վարպետները՝ Ժակ-Լին Ֆրանսուաչից մինչև Էդիտ Պիաֆը: Լրագրողներից մեկը իր հոդվածը վերնագրում է «Ֆրանսիան Ազնավորացված է»: Յոթերորդ երկնքումն եմ: «Դյուկետե Տոմպսոնի» հետ կնքած պայմանագիրս մոտենում է ավարտին: Ոսկե պայմանագիր եմ կնքում Էդդի Բարկլեյի հետ, որն անցյալում ինձ մերժողներից էր: Ժան Կոկտոն ամեն մի հաջողությունիցս հետո ջերմ ու քաջալերող մի փոքրիկ նամակ է գրում:

Այո, ինձ թվում է յուրի մեծան հեջտ ու հանգիստ է գնում: Ամեն ինչ հիանալի է: Ամպերի մեջ սավառնում եմ: Հորիզոնը ամռան օրվա նման կապույտ է, ու ես լողում եմ երանության մեջ:

Այդքան տարիների սպասումից, նվաստացումներից ու ծանր օրերից հետո վերջապես ինչեց փառքի ժամը: Այնքան վստահ եմ՝ ինձ վրա, որ Փարիզ վերադարձա արդեն որպես մեծ արտիստ ու իսկույն որոշեցի համերգային շրջագայության մեկնել պրովինցիա:

— Այդ շրջագայությունն ինձ կտա երեք բան, — առաջի Դեմիին, — նախ հուշակա կամրասյնդի, հետո ռճարավարություն կունենանամ հղկելու երգացանկս, որը պատրաստել եմ «Ալհամբրա» դահլիճում-վճռական ու կարևոր ելույթիս համար, ու վերջապես, փող կաշխատեմ:

— «Ծեֆը» դո՛ւ ես, — լակոնիկ պատասխանեց Դեմին:

Նրա թերահավատությունը մի քիչ նարդայնացնում է ինձ: Նա միակն է ինձ շրջապատող մարդկանցից, որը կարծես կասկածանքով է նայում իմ արժանիքներին: Խոսքը կազմեցի: Հավաքեցի երաժիշտներին ու մի ավտոբոս գնեցի:

Շրջագայությունը ակավում է Մարսելից: Դեռ համերգից առաջ առաջին երկրպագունիներս շրջապատեցին հյուրանոցը: Լույ-

աը չբացված, պատռահանի ետև թաքնված, հետևում եմ նրանց ու անկարող եմ զսպել անապարծ ու ինքնագոհ ժպիտու:

— Ի՞նչ լավ է, ջե՛,— ասացի Դեհիին:

Իհարկե, վատ էր, որ նման ունակցիա էի տալիս այդ բանին, բայց այնքան երկար էի սպասել այս բուսեներին, որ մեղքիս թողություն սովի:

Նայել նրանց պատռահանի ետևից, ահա այն բոլորը, ինչ կարող եմ անել. քիչ առաջ փորձեցի քիթս դուրս հանել, հարձակվեցին վրաս, ճանկեցին, ցնցեցին, գրկեցին, քաշքշեցին, պատռոտեցին. փախա... Փրկվեցի, փակվելով իշուրանոցի սենյակում, ուր ետ ու առաջ եմ քայլում: Անկողնու երկայնքով լողանեցյակ եմ զնում, ետ գալիս, ճամպրուկներից դեպի մագնիտոֆոնն եմ զնում ու դարձյալ մոտենում անդամին՝ աշխատելու:

Համերգի ժամն է: Սովորությանս համաձայն, ելույթից առաջ փակված եմ հարդասենյակում. հանգիստ ու կենտրոնացում է պետք ինձ: Բայց ինձ պետք է նաև կուլիաների աղմուկը՝ ռոնաձայները, իրար ձայն սովող կամ վիճող մարդկանց աղաղակը, չարկող գործիքների աններդաշնակ հնչյունները...

Դեհին եկավ ու ասաց.

— Դահլիճը լեռի-լեցուն է:

Դա ինձ հանգստացրեց... Ոչ միայն բարոյական իմաստով, այլև՝ ֆիզիանաական, քանի որ համերգային ջրջագայության բոլոր ծախսերն իմ հաշվին են: Ինչ ունեի-չունեի, վաճառել էի, նույնիսկ՝ տունս ու դեռ Ռաուլից մի մեծ գոմար պարտք էի վերցրել:

Երգեցի: Միայն Մարսելը իրեն հատուկ խանդավառությամբ կարող էր նման ընդունելություն անել: Մինչ ինքնագոհ, հարդասենյակում առաջին երկրպագուհիներին եմ ընդունում և ինքնագրեք բաժանում, Դեհին թաղանթս պատռելու աստիճան ականջիս փախաց.

— Դրսում խայտառակ վիճակ է. հարյուրավոր մարդիկ քո անունն են գոռում ու քեզ են սպասում: Անհնար է ճեղքել խելագարների այդ պատը: Ի՞նչ պիտի անենք:

Հանկարծ միտք հղացա.

— Զանգ ես տալիս ուսիկանությանը ու խնդրում, որ բանտարկչալ տեղափոխող փակ մեքենայով դուրս հանեն ինձ:

— Բայց, Ծա՛րդ, նման բան երբեք չի եղել:

— Սովեթի լավ: Ես առաջինը կլինեմ:

Պետք է ասեմ, որ մարսելցի հանդիսատեսը չարի զգացում չունի: Երբ մեկին չսիրեց, անտեսում է, ճանաչել չի ուզում, իսկ

երբ սիրեց, այս դեպքում արդեն ոչ թե սեր է, այլ կատաղի մոլորություն: Խանդավառված տեսնել է ուզում, շոշափել, խոսել...

Երբ մոտեցա արտիստական ելքին, ուստիկանական արտոմեքենան արդեն տեղում էր՝ դռները լայն բացած իմ առաջ: Ամրակազմ ուստիկանները երկու շարք կազմած ճանապարհ էին բացել: Ընդամենը հինգ քայլ պետք է անել, որպեսզի մտնեիր վանդակապատ ապաստարանի մեջ:

Մի քայլ արի: Ահմեդի ոռնոց դիմավորեց ինձ: Մարմինս փրշաքաղվեց:

— Ծո՛ւտ,— նետեց ինձ Դեմիր հուզված:

Զհասցրի. ամբոխի ճնշման տակ ուստիկանները կորան, կուզ գնացին:

Փողկապս եմ քաշում, ճզմելու աստիճան սեղմում եմ ձեռքերս, մազերս խառնում: Զգում եմ, որ պիջակիս աջ թևքը կամաց-կամաց լքում է ինձ, ոտքերս կոխկոտում եմ, գրկում, կոճակներս եմ պոկոտում: Կոշիկներիս մեկը կորցրի: Գլուխս բարձրացրի, որ մի քիչ շունչ քաշեմ ու արմունկի մի հարված իջավ աչքիս: Բրդավում եմ, հրում... Դեմիրս արդեն ոչ թե ժպիտ է, այլ ժպիտ հիշեցնող վախեցած ծամածոություն:

Մեքենայի միջից մի ուստիկան իր հսկա ձեռքը մեկնեց ինձ. կառչեցի: Մինչ նրանք անունս եմ բղավում, ցավատանջ ձայներ արձակում, կոկում ու իրար եմ հրմշտում, ես վաչրեջք կատարեցի երկաթյա վանդակի մեջ:

— Բշի՛ր,— բղավեց ուստիկաններից մեկը:

Մեքենայի հատակին ծնկի եմ եկել: Ցնցոտիների մեջ եմ: Ծորթերիցս արցունք է հոսում, զգում եմ, որ աչքս մուռնում է: Հասցրով ամբոխի մեջ Դեմիրին եմ փնտրում՝ ապարդյուն:

Մեքենան ճեղքում է ամբոխը, դանդաղ, բայց անողոր: Ինչոր ձեռքեր ուժեղ խփում եմ մեքենային, սուկայի աղմուկ բարձրացնելով: Ինքս իմ վրա փուլ եկած, թռչնած, ավելի շուտ նման եմ կովի համար ձերբակալված խուլիգանի, քան հաղթանակած արտիստի:

Հյուրանոց վերադառնալուն պես մտա ցնցուղի տակ: Դեմիրն եկավ նույնպես վատ վիճակում:

— Եթե ամեն երեկո նույնը կրկնվի, կենդանի չեմք մնա,— ասացի ես՝ տաք ջրի մեջ թաթախած բամբակը սեղմելով աչքիս, որն արդեն կապտել էր:

Դժբախտաբար ամեն երեկո նույն բանը չկրկնվեց: Բացի Տուլունից, որտեղ ելույթ ունեցանք հաջորդ օրը, ջրջագայության մնացած մասը աղետալի էր: Բորբոռում երկու հազար հինգ հարյուր

տեղանոց թատրոնում կար ընդամենը 800 հանդիսատես: Սա կործանման սկիզբն էր: Անժուռն և մանավանդ Բրետանյում երգեցի բացարձակ դատարկ դահլիճներում:

Դեռ պետք է քառասուն քաղաքներում ելույթ ունենանք: Ու քանի որ ես եմ շրջագայության կազմակերպիչը, բոլոր ծախսերը ես եմ անում, ու օր-օրի արվելի խորն եմ գլորվում դեպի անդունդը:

— Չեղյալ համարիր,— խորհուրդ է տալիս Դենին:

— Չեմ կարող. անազնիվ կրիներ խմբի անդամների նկատմամբ:

— Բայց ուրիշները նման բանից չեն քաշվում:

— Կարող է պատահել: Ես չեմ կարող:

Ամեն օր վազում եմ թատրոնի դրամարկորը, ֆինանսների վիճակը պարզելու: Ու ամեն անգամ էլ վիճակը աղետալի է:

Փորձում եմ մխիթարել ինձ.

— Ամսվա վերջն է, մարդիկ փող չունեն:

— Վատ ռեկլամվեց:

— Այստեղ քեզ ռադիոյով հաճախ չէ, որ լսում են... Ի՞նչ ես ուզում:

— Քեզ նախորդող խմբի ելույթը այնքան խղճուկ էր, որ ժողովուրդը զգված է, էլ չի ուզում տնից դուրս գալ:

Այս բոլոր պատճառաբանությունները պարտությանն իսկական պատճառը թաքցնելու համար են: Իրականում ճշմարտությունն այն էր, որ ես գերագնահատեցի իմ ուժերը, փքվեցի, կարծեցի, որ հասել եմ գագաթին: Էլ երբեք չպետք է թույլ տամ նրման սխալներ: Էլ երբեք չպետք է շրջագայության դուրս գամ, մինչև վատահ շլիճեն բացարձակ հաջողության վրա:

Իսկ մինչ այդ բազմաթիվ տասանյակ միլիոններ կորցրի (հինգ ֆրանկով): Տարիներ են հարկավոր այդ փողերը ետ բերելու համար: Ուստի պետք է աշխատեմ արվելի մեծ եռանդով:

Այս պարտությունը պետք է հաղթանակին ծառայեցնեն: Այս դատարկ դահլիճները պետք է օգտագործել ու մանրամասն մըշակված, պողպատյա մի երգացանկ ստեղծել փարիզյան մուտքիս համար:

Ահա նորից տանն եմ՝ գրպաններս դատարկ, դարակները պարտատոմսերով լի:

— Կտեսնեն:

— Ովքե՞ր,— հարցնում են ինձ:

— Նրանք, ովքեր դեռ չեն եկել ինձ լսելու:

Կդիմանա՞՞ ձայնս:

Այն օրվանից, ինչ ակնել էս երգել, ձեռ եմ առնում ինձ: Գրոնում եմ, որ ձայնս շղարշով է ծածկված, խոստո է: Ոմանք էլ այն կարծիքին եմ, որ ընդհանրապես ձայն չունեմ: Բայց եթե իմ ձայնը ծիծաղ է առաջացնում նրանց մոտ, ովքեր չեն կարողանում լրել ինձ (իսկ նրանք շատ եմ), ապա ինձ անհանգստացնում է:

Երբեմն ձայնս ուժեղ է լինում, բայց հաճախ, հենց համերգի կեսին, լքում է ինձ:

«Ալիսամբրայի» ելույթից մի քանի օր առաջ, որին անհամբեր սպասում եմ ու վախենում, քանի որ գիտեմ՝ այդ երեկո կվճռվի իմ ողջ կարիերայի ճակատագիրը, որոշեցի դիմել բժշկի:

Ծոշափեց կոկորդս, խոշորացույցով զննեց ու, նստելով գրասեղանի առաջ, ափսոսանքով ասաց.

— Ձեր ձայնալարերը գրեթե չեն գործում: Նրանք չեն թըրթըրում, որովհետև մկանոտ չեն, թույլ են: Ձեր բոլոր դժվարությունների աղբյուրն այդ է:

— Իսկ ի՞նչ կարող եմ անել:

— Ոչինչ, աիրելի պարուն, ոչինչ:

— Իսկ վիրահատություն:

— Ծիծաղելի կլինեք, քանի որ առանձնապես աննորմալ բան չկա: Ծառերն եմ ձեր վիճակում:

— Ի՞նչ եմ անում նրանք:

— Ձեռ երգում:

Վճարեցի ու դիմեցի երգի դասատուի: Երեք դասից հետո նա ասաց.

— Ես ձեզ սովորեցրի այնպես շնչել, որ ձայնալարերը քիչ հոգնեն: Ուրիշ ոչինչ անել չեմ կարող: Ձեր տեղը որ լինեի, մասնագիտությունս կփոխեի:



Վճարեցի ու տուն վերադարձա: Ծառին մերունց հայտնեցի երգի դասատունի ու բժշկի կարծիքները: Հայրս, որ ուժեղ, հստակ, ամուր ձայն ունէր, ու երգում էր լավ մտնելուց և խամելուց հետո, հառաչեց.

— Ա՛հ, ինչեք չէի տա, որպէսզի իմ ձայնը քոնը լինէր...

Իսկ ես մտածում եմ, որ վերջին հաշվով իմ ձայնը մեր անբրնդի ձայնն է: Իհարկէ, նվազ գեղեցիկ, բայց կոչված այլ բան ասելու, կոչված կիսաձայն երգելու սիրո գիշերները: Մի ձայն, որ համապատասխանում է իմ գրած երգերին: Լա՛վ, կոնտենէք:

Որոշեցի էլ չզբաղվել դրանով: Կերպեմ իմ ձայնով: Եթէ դիմանա, լա՛վ, իսկ եթէ խզվի, այնպէս կանեմ, որ իբր այդպէս էլ պետք է:

Բացի այդ, նկատեցի, որ վերջերս քանի արհամարհում եմ, չեմ հետևում ձայնիս, այնքան ուժեղանում ու ծախլ է ստանում:

Մեկ ուրիշ մանրուք ևս՝ նկատեցի, որ երբ նվագախումբը խըլացնում է ձայնս ու ինքս ինձ չեմ լսում, ավելի եմ հոգնում: Ու որոշեցի այլևս գործիքների մոտ միկրոֆոններ չդնել:

— Բայց ոչ ոք նման բան չի անում,— աասց Դեմիրն:

— Ավելի լավ, ես առաջինը կլինեմ:

«Ալհամբրաչի» ելույթի համար գնեցի ամերիաժեշտ սարքավորումներն ու տեղավորեցի: Ինքս ինձ լավ լսելու ու քիչ հոգնելու համար երկու «վկա» բարձրախոսներ դրի բեմի վրա՝ իմ ետևովում: Փորձեցի, լսեցի ինձ: Լա՛վ է:

Մեծ երեկոյի օրն եկաւ:

Նյարդայնացած, տագնապահար, վերջին փորձն եմ ղեկավարում ու շտկում լուսավորությունը: Գոռում եմ.

— Ո՛չ: Միացրեք վերևի կարմիր լույսն ու սպիտակ լուսարձակը:

— Բայց, Ծա՛րլ, սպիտակ լույսը ախալ է:

— Ինձ սպիտակն է պետք. իմ երգերը առողջ երգչի համար չեն, այլ դժգույն սիրահարի:

— Այդ կապույտ լույսը շատ բաց է: Տվե՛ք ինձ մուգ կապույտը: Ես սիրո մտերմիկ խոստովանությունն եմ երգում. լույսը պետք է թույլ լինի:

— Չունենք, Ծա՛րլ: Ախր դա այնքան էլ կարևոր չէ:

— Գտե՛ք: Ընդհակառակը, շատ կարևոր է: Ի՞նչ է, դու լույսի տակ ես սիրում:

Փորձն ավարտված է: Ամեն ինչ կարգին է: Գնում, պատրաստվում եմ. հարդասանցակը ինձ համար կարևոր վայր է. այս-

տեղ է, որ պիտի շատ երեկոներ անցկացնեմ: Ուրեմն անհրաժեշտ է, որ ես ինձ լավ զգամ այստեղ: Բազկաթոռներից մեկը տեղափոխում եմ ու տեղավորում իրերս:

— Մի շիրմա բերեք: Չեմ ուզում, որ տեսնեն լվացարանը՝ սուսկալի է:

Կուլուարներում ինչ-որ մեկը փարիզյան ակցեմտով աստանների արանքից ասում է.

— Զգվեցրեց այդ հիմարը: Պատկերացնում եմ ինչե՛ր կանի, եթե մի օր հայտնի արտիստ դառնա...

Ծիրան բերին: Տեղավորեցի: Հարդասենյակում ետ ու առաջ եմ անում: Ինչ-որ բան պետք է անել, ինչ ուզում է յի՛նի, միայն թե մոռանամ սարսափս: Խուճապի եմ մատնված ու մահու չափ վախեցնում եմ:

Ինձ ստիպոյ՜մ եմ հանգիստ ձևանալ, բայց անդադար ծխում եմ: Մտածում եմ, հո ոչինչ չե՛մ մոռացել՝ բեմական զգեստս, շապիկս, կոշիկներս, գուլպաներս... Աստված իմ, ճարմանդներս չըկան: Գծի նման դուրս թուա ու թատրոնով մեկ բղավեցի.

— Տղերք, ո՛վ կարող է ինձ ճարմանդներ տալ:

Ետ դարձա ու տեսա, որ նրանք թևքիս են. արդեն անց էի կացրել, վախեցնալով կորցնել: Նորից դուրս եկա հարդասենյակից ու տղաներին զգուշացրի.

— Գնում եմ մի կտոր սենյակիչ ուտելու: Եթե ինձ հարցնեն, ասեք, որ շուտով կվերադառնամ:

Նշարդեր հո չեն, զուպանակներ են: Վազքով գնացի անկյունի գինեռոտներ: Առաջ, երբ ժամանակ ունեի հանգիստ ճաշելու, միջոցներ չունեի, իսկ հիմա, երբ սկսում եմ միջոցներ ձեռք բերել, ժամանակ չունեմ: Սկսեցի հուպ տալ սենյակիչը, ուտելու ոչ մի ցանկություն. շատ եմ պրկված, շատ եմ հուզված: Յուրաքանչյուր կող տված պատատը արձնի մի գունդ. է դատնում ու գնում թաղվում է ստամոքսիս մեջ:

— Չի գնո՞ւմ,— հարցրեց մատուցող տղան, որն ինձ ճանաչել էր:

— Վաղն ավելի լավ կգնա:

Այո՛, վաղը տազնապը կանցնի: Վաղը կամ հայտնի արտիստ կդառնամ, կամ այլևս ոչինչ: Նայում եմ պատի ժամացույցին՝ 17-ն է: Դեռ չորս ժամ կա: Ահագին ժամանակ ունեմ նշարդերս սողցելու համար: «Ալհամբրայի» տղաներից մեկն եկավ ու ասաց, որ այն երկու լուսանկարիչները, որոնց ժամադրել էի, եկել են: Վազքով գնացի. մամուլը սպասեցնել չեմ տալիս: Պատճառը ոչ թե ժողովրդականությունն ձեռք բերելու ծարավն էր, այլ այն, որ

անցյալում ամեն ինչ կտայի, միայն թե լրագրում մի տող գրեին իմ մասին, մի լուսանկար տպեին:

Լուսանկարիչներին մի լրագրող է ընկերակցում: Նրան առաջին անգամն էմ տեսնում: Բայց նա ինձ «Ծարլ» է անվանում. կարծես հին ընկերներ լինենք: Ստածում եմ, որ այդ մտերմությունը երկակի իմաստ ունի՝ կամ ես բավականին մեծ չեմ, որպեսզի հարգալիք վերաբերվեն ինձ, կամ սկսում եմ հայտնի դառնալ, ու ինքնասիրությունը շոյված լրագրողը մի օր կասի. «Ազնան ընկերս է»:

— Այնպես պահեք ձեզ, կարծես մենք այստեղ չենք, որպեսզի նկարները բնական ստացվեն, — ասաց լուսանկարիչներից մեկը:

Նա մի կողմ քաշեց շիրման ու մագլցեց լվացարանի վրա, որն սկսեց ճռռալ, պատրաստ՝ փուլ գալու: Նրա կոլեգան պատկեց գետնին, ոտքով ակամա մի հարված հասցնելով կիթառին, բացատրեց.

— Այսպես երկուսով մուչն անկյուններից ու մուչն արտահայտությունները նկարելու ուղևից գերծ կլինենք:

— Արե՛ք ի՛նչ ուզում եք, տղաներ, բայց դուք ինձ այնքան էլ բնական չեք թվում:

Բողոքը ծիծաղեցին: Հետո լուսանկարիչները ցանկություն հայտնեցին ինձ փողոցում նկարել՝ «Ալհամբրայի» աֆիշի առաջ, ուր առաջին անգամ թագավորում էր իմ անունը: Դուրս եկանք:

Ահա թատրոնի առաջ եմք: Վեցվածք եմ ընդունում, նորից եմ կրկնում, առաջ եմ գալիս, ետ եմ գնում, գլուխս բարձրացնում եմ, գլուխս իջեցնում եմ, գլուխս թեքում եմ, ձեռքերս գրպանս եմ դնում, ծիտում եմ, պատին եմ հեցվում... Մի խոսքով, ինձ թողնում եմ լուսանկարիչների քմահաճույքին, որոնք վերջապես հագեցած, թողեցին ինձ ու գնացին գինետոսն, էլ եկտրական բիլիարդ խաղալու: Լրագրողի հետ մեծակ մնացինք:

— Միայն մի հարց, Ծարլ, ու ձեզ հանգիստ կթողնեմ:

— Համաձայն եմ:

— Ահա՛, ասում եմ, որ դուք աշխատում եք ստրուկի նման:

— Ինձ թվում է ոմանք ծնվում եմ հանգիստ կյանք վարելու համար: Բայց երբ մի օր կյանքը նրանց ստիպում է աշխատել, ստուկալի դժվարությունների եմ հանդիպում: Ուրիշները ծնվում եմ աշխատելու համար. սրանք երբեք չգիտեն, ինչ բան է հանգիստն ու արձակուրդը: Ես այս վերջիններից եմ: Ես պետք է հանգստանալ սովորեմ. ինձ համար նույնքան դժվար է և հոգնեցուցիչ ոչինչ չանելը, ինչ ոմանց համար աշխատելը:

— Ինչո՞ւ եք այդքան շատ աշխատում:

— Ծիշուն ասած, չգիտեմ: Ինձ մոտ դա ֆիզիկական ու հոգեկան պահանջ է: Ես կարծում եմ, որ աշխատանքը ապացուցում է իմ կենդանի լինելը: Եվ հետո, գիտեմ նաև, որ մի օր (հուսով եմ, որ շատ հեռու է այդ օրը), հանգստանալու շատ ժամանակ կունենեմ:

— Այդ որտե՞ղ, Ծարլ:

— Հավիտենական հանգստում:

**Տառապեցի, սակայն ի՞նչ փույթ,**

**Երբ վշտերս մեռան ամեն.**

**Գիտեմ ինձ քո դուռն է տանում**

**Ճանապարհը հավերժության:**

Ահա արտիստական մոտաքի մոտ եմք: Հրածեղտից առաջ լրագրողը հարցրեց.

— Ի՞նչն է կյանքում ձեզ աջակցել:

— Ա՛յն, որ բախտ չեմ ունեցել. իմ ուժը անշուք արտաքինն է եղել, յուրահատուկ ձայնս, սովորական դեմքս, որի մեջ ուզածդ մարդը կարող է գտնել իրեն: Ասում եմ, որ ես մեման եմ հազարավոր այլ մարդկանց: Դա ինձ չի վիրավորում, ընդհակառակը, ուրախացնում է:

— Ծնորհակալ եմ, Ծարլ: Հաջողություն եմ ցանկանում այս երեկոյի համար:

Նորից մտա հարդասենյակս ու նշարդերս հանդարտեցնելու համար վերցրի շախմատը, շարեցի ֆիգուրներն ու ինքս ինձ հետ մի պարտիա խաղացի:

Հարդաստեղծակի չորս պատերը բանտի նման սեղմում են ինձ: Ժամը 19-ն է: Պետք է ապաստել 120 յոսպե ևս:

Ռեռ հուզված է, գրեթե տեղի մեջ: Բայց սարսափս նրվազել է. ի վերջո լուսանկարվելն ու հարցազրույցը հանգստացրին ինձ, արտիպեցին ուրիշ բանի մասին մտածել:

Դուրը թակեցին: Դոնապանի կինը մի հեռագիր մեկնեց:

— Պիաֆից է:

— Ա՛հ,— ասաց նա ու վազեց ամուսնուն պատմելու:

«Հավատում եմ քո հաղթանակին: Ցավում եմ, որ հեռու եմ: Պիևդ գրկում եմ՝

Էդիտ»:

Այս երեկո նա ներկա չի լինի: Դարձյալ Նյու-Յորքում է: Հիշում եմ, թե ինչպես, մի քանի տարի առաջ, Նյու-Յորքի «Վերաալ» համերգային դահլիճում, երգերս կատարելուց հետո, զբաղվում էի նրա լուսավորությամբ:

Աչքիս առաջ են գալիս Էկրանի և բեմի այն բոլոր մեծանուն մարդիկ, որոնց մասին երագում էի ու որոնք գալիս էին ծափահարելու Էդիտին: Ու երբ համերգից հետո շնորհավորում էին նրան, ինձ վրա մի հաջացք անգամ չէին նետում:

Կանգնում էի հարդաստեղծակի մի անկյունում ու, քանի սեղակը լցվում էր անվանի մարդկանցով, ես աստիճանաբար հըրմըջտվում, մղվում էի դեպի ելքի դուռը:

Բոլորը նրան էին նայում, այդ սևազգեստ, փոքրամարմին տաղանդին: Էդիտը նրանց համար երգում էր մի լեզվով, որ չէին հասկանում, այն զգացմունքների մասին, որ աշխարհի այդ մասում երգի վերածելու սովորություն չունեն:

Աչքիս առաջ են գալիս նրանք՝ հիացած, բանիմաց, ժպտերես: Հիշում եմ, մինչ նրանք ինձ ոտնատակ էին տալիս, հրում, ես մտածում էի. «Արդյոք այնպես կլինի՞, որ մի օր էլ ինձ մոտ գան»:

Տխուր վերադառնում էի իմ փոքրիկ դահլիճը, ուր մոտավոր անգլերենով ճգնում էի կարգի բերել լուսային խաղերը, դիմելով

հույն էլեկտրիկներին, որոնք գիտեին միայն «տիպոդաս»<sup>1</sup> բառը, ինչպես ասում են Աթենքում:

Հիմա, երբ հարդասենյակում նստած սպասում եմ՝ բաց կանգնի՝ ճակատագիրն իր գիրկը, թե՛ կրատապարտի ինձ, Էդիսոն մտափն էմ մտածում:

Նա շատ տանջեց ինձ, բայց եթե հաղթեմ այսօր, նրան եմ պարտավան: Եթե հաղթեմ, նրան կնվիրեմ այս երեկոն. նա իմ ուսուցիչը եղավ. նա ինձ սովորեցրեց ավրել ժողովրդին, հասկանալ նրան, տանել նրա կամայականություններն ու անհավատարմությունները:

Հանկարծ հիշեցի այն օրը, երբ երկչուտ, անհարմար զգալով, օգնություն ասաջարկեցի նրան: Գիտեի, որ նորից դրամական նեղ վիճակի մեջ է: Նա արտասովելով մերժեց ինձ.

— Ո՛չ, Ծա՛րդ, դու ինձ ոչնչով պարտական չես: Դու ինձանցից երբեք ոչինչ չես վերցրել, բացի այն ամենից, ինչ աչքով ես վերցրել: Դու երբեք չես փորձել օգտվել ինձանցից: Եթե մի քանի շաբաթ առաջ գալիք, ստիպված կլինեի ընդունել, թեպետ դա ինձ ցավ կպատճառեր:— Հետո սկսեց ծիծաղել:— Կյանքս վաճառում եմ շաբաթաթերթերին ու թանկ են վճարում: Ասում են, որ սրբիկաներ են դրանք, բայց արի տես, միակն են, որ օգնում են դիմանալ ու խնամում են ինձ, մինչև նորից կկարողանամ երգել:

— Բայց ինչի՞ց եք տառապում, Էդիսոն:

— Լյարդս: Նա գարեջուր չի սիրում, իսկ ես սիրում եմ: Ու անհա վրեժ է լուծում անպիտանը: ?

Հանկարծ հարցրեց.

— Մի փոքրիկ երգ չե՞ս ունենա ինձ համար:

— Էդիսոն, մի՛ նոր երգ ունեմ միայն, այն էլ պահում եմ հաջորդ ելույթիս համար: Բայց եթե ձեզ դուր գա, խնդրեմ, ձերն է:

— Բարի եղիք, նվագի՛ր:

Նստեցի դաշնամուրի ստաջ ու նվագեցի «Տուն չեմ կարող վերադառնալ» երգը:

— Չտեսնված է, Ծա՛րդ: Ստակալի լավ է:

Հետո մտածեց, կնճռոտեց լայն ճակատն ու ասաց.

— Ո՛չ: Ես այդ երգը քեզանցից չեմ վերցնի: Դո՛ւ պետք է երգես: Գիտե՛ս, այդ երգը քո պատմությունն է, քո կյանքը: Ես քեզ բավական լավ եմ ճանաչում հասկանալու համար, որ երգը գրել ես Էվելինից բաժանվելուց հետո: Երգը նման է քեզ:

Հետո ավելացրեց.

<sup>1</sup> Ոչինչ (հունարեն):

— Կեղտոտի մեկը, լավ երգեր ես գրում քեզ համար... Ինձ համար մի կարգին բան չգրեցիր... Ավելի շուտ կասեի, որ քո երգերը ինձ չէին սազում: Դա քո մեղքը չէ. ամկախ քեզանից, առանց քեզ հաշիվ տալու, քեզ համար էիր գրում նույնիսկ այն ժամանակ, երբ դրանք ուրիշներին կամ ինձ էին ուղղված:

Ու եզրակացրեց.

— Մի օր ետ կվերցնես բոլոր այն երգերը, որ ուրիշների համար էիր գրել, ու ժողովուրդը, որ երբեք չի սխալվում, հաղթական կընդունի դրանք:

Էդիտը իրավացի էր. Ռեանոն Ասոյից, Միշել Էմերից, Հանրի Կոնտեյից ու Մարգարիտ Մոննոյից բացի, ոչ ոք չի կարողացել Պիաֆի համար գրել նրա կյանքը, սերերը, ձգտումները, լեզունը:

Միշտ հիշել եմ Պիաֆի վերջին ֆրազը: Նա իրավացի էր: Նա միշտ իրավացի է եղել: Նրա մահից հետո կամաց-կամաց ետ վերցրի ուրիշների համար գրած երգերս:

Նորից արագ թանկեցին դոռս, ու Դեմին ներս եկավ:

— Ո՞նց ես:

— Լավ:

Նա ինձ մեկնեց «Տեղերբջորդ» Հարավային-ծովերի կապույտ մեքենայիս բանալիները (այդպես էր անվանում իմ ավտոմեքենան ռեկամային ընկերությունը), ու ես սուրացի տուն: Վերադարձա մեկ ժամ հետո: Թատրոնի առջևով անցնելիս տեսա ներկյան խոշոր կրակե տառերով գրված հպարտ ու ազրեւիվ անուն: Դա ինձ մեծ հաճույք պատճառեց:

Կուլիսներում հանդիպեցի բարեկամներին՝ Դեմիին, Ժան-Լուի Մարկելին, Վերնոնին, Ֆիլոսոֆին, Անդրյու Էհքալին, Սիդաչին և Կարվարենցին: Բարևեցի, գրկեցի, ձեռքները սեղմեցի ու նորից փակվեցի հարդասենյակում: Սեղանիս վրա աշնան տերևների նրման հեռագրեր են թափվում: Հաջողություն են ցանկանում Ծանտնիեի կոնպանյոնները, Իվ Մոնտանն ու Սիմոնա Սինյորեն, Բրետոնները, Ժակլին Ֆրանսուան, Ժան Կոկտոն, Մարսել Աշարը, Ծարլ Տրենեն, հեռախոսային ցանցի աղջիկները, գործարանների բանվորները... Հեղեղ: Համկարծ նվազախումբը սկսեց համերգի առաջին մասի նախերգանքը: Վախը, որ մինչ այդ թողել էր ինձ, դարձյալ տիրեց ողջ էությունս: Կոկորդս չոր է, սիրտս «տումբայի» աղո է նվագում: Հայացքս գցեցի հայելուն՝ կանաչ եմ... Արագ մի հատը շերտ ֆուն քսեցի դեմքիս. ոչ ոք չսխալեց է իմանա այն, ինչ կատարվում է ինձ հետ: Հագնվեցի: Ու մինչև

հաջողեցրի կարգի բերել փողկապս, երևաք անգամ արձակեցի ու  
նորից կապեցի. մի հիւնգ անգամ էլ՝ կոշիկներին կապեալը:

Ընդմիջում է: Միայն Ռաուլ Բրետտոնը իրավունք ունի մտնել  
իմ հարդասենյակը, ուր Դեմին լուռ ու հանդարտ իրար է անցել:

— Ինչպե՞ս ես, — ժպտադեմ հարցրեց Ռաուլը:

— Պատրաստ՝ բզկտվելու:

— Դո՛ւ պետք է առաջինը հարվածես:

— Չգիտեմ, կկարողանամ, թե՛ չէ:

— Կկարողանաս, լավ իմացիր, կամ դո՛ւ նրանց, կամ նը-  
րա՛նք քեզ: Ընտրի՛ր:

Իմ հերթն է: Վախենում եմ ու դա կատաղեցնում է ինձ: Վա-  
րագույրը բացվեց: Կարիք չկա ներկայացնել ինձ, քանի որ այդ  
օրվա համերգի համար առաջին արտիստն եմ: Ժամ կեսիայի դե-  
կավարած նվագախումբը լավ սկսեց: Տեսալը հիանալի է:

Պետք է բեմ ստնեմ. ինձ այնպես եմ զգում, կարծես պատ-  
րաստվում եմ ջուրը նետվել ու լող տալ չգիտեմ: Խեղդվելու եմ:  
Փրկության օղակներս դահլիճում ցրված բարեկամներս են, որունց  
չեմ տեսնում: Նայում եմ առաջին շարքին՝ անծանոթ դեմքեր, ո-  
րունք թշնամական են թվում ինձ: Տակտերը հաշվելու կարիք չու-  
նեմ. նրանք հաշվվում են բնազդաբար, իրենք իրենց, իմ մեջ:  
Արդեն պետք է գնալ... Ներս մղեցի ինձ, լույսերը կուրացրին աչ-  
քերս, թույլ, քաղաքավարի ծափերը բոլորովին չսրտապնդեցին:

Մոտեցա միկրոֆոնին. հասակովս ջէր: Փորձեցի ուղղել, զգա-  
ցի, որ ձեռքերս խոնավ են: Մարմինս վառվում է: Սրտխառնուք  
եմ զգում... Դրա ժամանակն է հիմա: Գրտնում եմ, խեղդվում:  
Ուզում եմ լաց լինել, գրողի ծոցն ուղարկել ամեն ինչ ու փախչել:

Դե՛, բաց արա բերանդ, հիմարի՛ մեկը, հիմա՛ր, ուզում էիր  
այստեղ լինել, այստեղ ես, էլի՛: Ի՞նչ ես պապանձովել, բա՛ց արա  
բերանդ, երգի՛ր:

Մի ճանն անցավ կողքովս. հանկարծ կուլ չտա՛մ, միայն այդ  
էր պակաս, ամեն ինչ օդ կցնդեր:

Իաց արի բերանս: Առաջին հնչյունը տարիակ է, առանց  
տեմբրի, անգույն: Դա ի՛մ ձայնն է, ի՛մը, ես երգում եմ:

Դահլիճ չեմ տեսնում: Տեսնում եմ հակաչական մի մոյթ փոս  
միայն, ու ավելի շատ զգում եմ, քան լսում, հանդիսատեսի շըն-  
չատությունը:

Լավ գիտեմ, որ միջության մեջ դարանակալ, սատր, բաց ու-  
շադիր հայացքով «ողջ Փարիզը» ինձ է հետևում, պատրաստ՝  
ոչնչացնելու կամ երկինք բարձրացնելու: Նա այստեղ է եկել ներ-  
կա լինելու կուռքի կործանմանը կամ նոր աստղի ծննդյանը:



Չայնս տասիակ է, ջարդված: Մարմնիս դողը չի անցնում:  
Աշխատում եմ զսպել հատկապես այն ոտքիս դողը, զուր ջանքեր:

Այս վիճակում կատարեցի չորս երգ: Հիմնգերորդ երգն էլ ավարտվեց: Տպարկորությունն այնպիսին է, կարծես դատարկության մեջ եմ երգում: Ոչինչ չեմ հասկանում: Այնինչ երգացանկն անթերի է, կազմված այնպիսի երգերից, որոնք հետագայում հաղթական ընդունելությունն պիտի գտնեն: Նվագախումբն ու գործիքավորումը հիանալի են: Բեմադրությունը՝ նոր, մտահղացումներով հարուստ, լուսավորությունը՝ անսովոր: Այսքանից հետո ոչինչ չի ստացվում: Էլ ի՞նչ եմ ուզում ինձանից:

Ինձ եմ հասնում միայն նրանց ծափահարությունները, ովքեր օգնում, սիրում են ինձ:

Վեցերորդ երգն էլ վերջացավ: Մտածեցի, որ ամեն ինչ կորած է: Դեմքս ողողված է քրտինքի խոշոր կաթիլներով: Ծապիկս նըմրրթված է, ամբողջովին թաց:

Բայց դեռ կա յոթերորդ, վերջին երգը՝ ողջ հույս:

Այդ երգի վերջում այնպիսի մի էֆեկտավոր ֆինալ եմ պատրաստել, որն ընդունակ է շշմեցնել, հուզել ամենասանարյուն, ամենասանախիտ հանդիսատեսին անգամ:

Բեմից արագ դուրս եմ գալիս, քանդում եմ փողկապս, հանում բաճկունս ու արձակում շապկիս թևքերը: Բեմ եմ վերադառնում դանդաղ հագնվելով ու սկսում եմ երգել:

**...Իսկ ես ինձ արդեն տեսնում էի աֆիշներում,  
Տասն անգամ ավելի մեծ, քան անունը որևէ մեկի,  
Իշխում էր անունս հանրածանոթ:  
Ես առույգ էի, վստահ և ուժեղ,  
Ես ձայն ունեի, ունեի մտքեր,  
Բայց իմ երգերը լուր ինձ հուզեցին:  
Բայց ես մեղավոր չեմ,  
Մեղավորը նա է, ամբոխը,  
Որն այնպես էլ ոչինչ չհասկացավ:  
Ես շատ մաքուր էի, կամ շատ էի նոր  
Հասկացվելու համար...**

Երգի ավարտի հետ արդեն հագնված, մեջքով կանգնած եմ դեպի դահլիճը: Լույսերն աստիճանաբար հանգչում են, բեմի խորքում վարագույր է բացվում, որտեղից լուսարձակների լույսը ընկնելով դահլիճ՝ հանդիսատեսների վրա, շրացնում է նրանց, յուրաքանչյուրի վրա թողնելով այն տպավորությունը, թե հենց ինքն

է արտփառը: Իսկ ես օրորվում եմ այդ լույսերի սոսկ, մինչ դանդաղ իջնում է նախաքեանի հաստ վարագույրը:

Մի վայրկյան լռություն տիրեց: Հոսափառ մտածեցի. «Այս անգամ արդեն իսկապես վերջ: Մահ»:

Հանկարծ ականջիս հասավ քաղկասթոռների յուրահատուկ աղմուկը. «Գնում եմ»,— անցավ մտքովս ու սիրտս ստակալի ծախեց... Վարագույրը բարձրացավ: Ու ես տեսա նրան՝ պրեմիերաների այդ ահավոր հանդիսատեսին, լուռ կանգնած իմ դեմ... Ու նոր, նոր միայն ծառի տվին, դահլիճը քանդելու սատիճան:

Ակզբում նրանք դեմ էին ինձ, առանց նախօրոք իրար հետ պայմանավորվելու պատ էին կազմել իմ դեմ: Ես բեմ ելա՝ բորնցքամարտիկի նման պայքարելու նրանց դեմ: Վեց ռատուկ, առանց աչք թարթելու դիմացան ինձ: Ես, արդեն ուժասպառ եղած, յոթերորդ ռատուկում հաղթեցի նրանց:

Հիմա, որ հաղթել եմ, գիտեմ, որ կարող եմ երգել նրա հավոր հանդիսատեսը, ու ես: Բայց ես արդեն թողել եմ բոնցքամարտիկի իմ պահելաձևը, ինքը՝ վերապահությունը:

Մի հայացք գցեցի կուլիաները, տեսնելու բարեկամներիս: Տեսա միայն նրան, այն ջահել շիկահեղ աղջկան, որին քիչ առաջ Անդրուշկան էր ներկայացրել ինձ: Այն ժամանակ ուշադրություն չէի դարձրել նրա վրա. այնքան էի զբաղված իմ ելույթով:

Հիմա, որ հաղթել եմ, գիտեմ, որ կարող եմ երգել նրա համար: Վարդագույն այտերով, հիասքանչ, հմայիչ մի աղջիկ էր: Վարագույրը նորից իջավ: Գնացի դեպի նա, վերցրի բարակ ու նուրբ մատներով բռնած սրբիչը ու սրբվեցի: Ուզեցի այտը համբուրել, նա չէր սպասում, գլուխը մի թեթև ետ տարավ ու մեր շուրթերը իրար հպվեցին:

Վերադարձա, կանգնեցի բեմի կենտրոնում ու վերջացրի ելույթս հաճախակի հայացք նետելով կուլիաները, դեպի նա, որի անունը (հետագայում պարզեցի) Կրոդ Մեայաթ էր:

Ելույթս ունեցավ այն ավարտը, ինչ տեւելում ու սպասում էի այդքան տարիների դժվարությունների, նվաստացումների ու բոլոր տեսակի թշնամիների միջով:

Ինձ նորից ու նորից են կանչում: Ես կանգնած եմ, չիմանալով ինչ անել: Մինչ փառքի թևերը գրկում են ինձ, ժողովուրդն ինձ վերցնում է իր սրտի վրա, իսկ իմ սիրտը հալչում է հուզմունքից:

Ես կանգնած եմ ծափերի տարափի տակ, անշարժ, շվարած, արցունքներն աչքերիս:

Այո՛: Այդ երեկո, մինչ կուլիաներում սերն էր սպասում ինձ, ես նվաճեցի Փարիզը:

**ԱԶՆԱՎՈՒՐԸ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՄԱՍԻՆ**

**Азнавур об Азнавуре**

(На армянском языке)

Издательство «Айастан», ул. Теряна, 91.  
Ереван, 1976

---

Խմբագիր՝ Ս. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

\*

Գեղ. խմբագիր՝ Զ. Ե. ԳԱՍՊԱՐՅԱՆ

\*

Տեխ. խմբագիր՝ Լ. Գ. ՓԻՐՈՒԶՅԱՆ

\*

Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

---

Հանձնված է շարվածքի 30/IX 1975 թ.:

Ստորագրված է տպագրության 11/III 1976 թ.:

Թուղթ տպագր. № 1, 60×90<sup>1</sup>/<sub>16</sub>, տպագր. 16,0

մամ., հրատ. 12,1 մամ.+8 ներդիր:

Պատվեր 2523: ՎՖ 08635: Տպաքանակ 50.000:

Գինը՝ 95 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9,

Տեղյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչու-  
թյունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործե-  
րի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի ան-  
վան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տեղյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегаларта Госкомитета  
Сов Мин. Арм. ССР по делам издательств полиграфии  
и книжной торговли. Ереван-9, ул. Теряна, 91.

